

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

**«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ»
ԳԻՏԱՄԵԹՈՂԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀՀ ԿԳՄՍՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

*Հրատարակվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական
խորհրդի երաշխավորությամբ*
Լրատվական գործունեության իրականացնող՝
«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ, գրանցման վկայական
222.210.1449896՝ տրված 04.07.2025թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29
Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,
Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,
Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար
Լ. Դավթյան:
Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ «ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС МВД РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»
научно-методический журнал
«ЗАЩИТНИК ЗАКОНА»**

*Издается по рекомендации Научного совета
Образовательного комплекса МВД Республики Армения*

**СООТВЕТСТВУЕТ ТРЕБОВАНИЯМ, ПРЕДЪЯВЛЯЕМЫМ КОМИТЕТОМ
ПО ВЫСШЕМУ ОБРАЗОВАНИЮ И НАУКЕ МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ И КУЛЬТУРЫ РА К ПУБЛИКАЦИЯМ ОСНОВНЫХ ПОЛОЖЕНИЙ И РЕЗУЛЬТАТОВ
ДИССЕРТАЦИЙ, А ТАКЖЕ РАЗЛИЧНЫМ НАУЧНЫМ ПУБЛИКАЦИЯМ**

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова, 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Лилит Давтян

**FOUNDER AND PUBLISHER
“EDUCATIONAL COMPLEX OF THE MINISTRY OF INTERNAL AFFAIRS
OF THE REPUBLIC OF ARMENIA” STATE NON-PROFIT ORGANIZATION
“BULWARK OF LAW”**

*Scientific and Methodological Journal
Approved by the Scientific Council of the Educational Complex
of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia*

**COMPLIES WITH THE STANDARDS FOR PERIODICAL SCIENTIFIC PUBLICATIONS
APPROVED BY THE HIGHER EDUCATION AND SCIENCE COMMITTEE OF THE RA MINISTRY
OF EDUCATION, SCIENCE, CULTURE, AND SPORT AND MEETS THE CRITERIA
FOR PUBLISHING THE MAIN THESES OF DISSERTATION PAPERS**

Address: 0004, Yerevan, 29 Admiral Isakov Avenue,

Official web-site: www.edupolice.am

E-mail: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary L. Davtyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան**,
Գլխավոր խմբագրի տեղակալ – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտահետազոտական և նորարարությունների գծով աշխատանքները համակարգող պրոռեկտոր **Էմիլ Մարգարյան**,
Պատասխանատու քարտուղար - ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի առաջատար մասնագետ **Լիլիթ Դավթյան**:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան**,

Իրավաբանական գիտությունների դոկտոր **Գրիգոր Բաղիրյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ, ի.գ.թ., դոցենտ, ուստիկանության գնդապետ **Գագիկ Գրիգորյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան**,

ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության պետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան**,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ **Ռաֆիկ Խանդանյան**,

ՀՀ վարչական դատարանի նախագահ, ի.գ.թ. **Կարեն Զարիկյան**,

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Զոն Հայրապետյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ., դոցենտ **Դավիթ Թումասյան**,

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան**,

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.թ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան**,

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան**,

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ուստիկանության գեներալ-մայոր, տ.գ.թ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ուստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով**,

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ուստիկանության գնդապետ, ի.գ.թ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ **Անդրեյ Անիսին**:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - ректор Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян**

Заместитель главного редактора - проректор по научно-исследовательской и инновационной работе Образовательного комплекса МВД РА **Эмиль Маргарян**

Ответственный секретарь - ведущий специалист отдела научных исследований, инноваций и развития образования Образовательного комплекса МВД РА **Лилит Давтян**.

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА

Проректор по координации учебной работы Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян**

Доктор юридических наук **Григор Бадирян**

Начальник полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент, полковник полиции **Гагик Григорян**

Начальник отдела организации, контроля и обеспечения непрерывного образования Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Артак Мнацаканян**

Заместитель начальника полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Артак Ованнисян**

Начальник Юридического управления МВД РА, кандидат юридических наук **Руслан Марандян**

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент **Рафик Ханданян**

Председатель Административного суда РА, кандидат юридических наук **Карен Зарикян**

Судья Уголовного суда общей юрисдикции РА г.Ереван, кандидат юридических наук **Джон Айрапетян**

Преподаватель кафедры уголовного права и уголовного судопроизводства полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА на договорной основе, кандидат юридических наук, доцент **Давид Тумасян**

Советник председателя Конституционного суда РА, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор **Ашот Хачатрян**

Ректор Академии юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян**

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Ованнес Кочарян**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД России, генерал-майор полиции, доктор технических наук, профессор **Олег Булгаков**

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Александр Парадников**

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор **Максим Бавсун**

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философских наук, доцент **Андрей Анисин**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....7

ԲԵԼԼՈՒՅԱՆ ՖԻԼԻԱՆԱ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ.....14

ԳԵՂԱՍՅԱՆ ԷԼԻՆԱ

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ,
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԶՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.....34

ԳԵՂԱՍՅԱՆ ԷԼԻՆԱ

ԽՍԲԱՅԻՆ ՀԱՅՅԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....54

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....69

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ, ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԲՈՒՀԵՐՈՒՄ.....83

ԻՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒԹՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ԿԱՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՎՃԱՐԸ
ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍ.....94

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ
ՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....106

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՓՄԻՄԵ

ԴՊՐՈՑԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....115

ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....126

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԼԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՓԱԿ ՑԱՆԿԸ
ԵՎ ԱՅՆ «ԲԱՅԵԼՈՒ» ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐԸ.....141

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԻՍԱԿ

ՀԵՏԱՍՏԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....155

ՄԱՅԱԿԱՆՑԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ,
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
 ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....169

ՆԱԶԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
 ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.....183

ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐ, ԳԵՆՋՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ, ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐՅԱ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՄԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
 ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....191

ՍԱՂՈՅԱՆ ԵՎԱ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝
 ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ,
 ԵՎ ԴՐԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....206

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ.....222

ՍԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
 ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....232

ARAKELYAN MARIAM, POGHOSYAN LEONARD

CHALLENGES IN MODERN PATROLLING: A LINGUISTIC PERSPECTIVE.....243

ISRAYELYAN GEVORG

PROBLEMS OF IMPROVING THE INSTITUTE OF EXPERTISE
 IN THE ADMINISTRATIVE (SUBSTANTIVE) LEGISLATION
 OF THE REPUBLIC OF ARMENIA.....252

БАЯНДУРЯН ОВАНЕС

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЕ ПРЕДСТАВИТЕЛЬСТВО
 ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ: К ВОПРОСУ О ПРАВОВОМ РЕГУЛИРОВАНИИ
 И ДОКТРИНАЛЬНОМ ОСМЫСЛЕНИИ.....261

**ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԲԱՅԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և

իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,

ՀՀ փաստաբանների պալատի անդամ

DOI: 10.63925/18294847-2026.bl21-01

Ամփոփագիր. Հոդվածում վերլուծվում է անցումային արդարադատության գաղափարի էությունը, դրա նպատակները և կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում: Հեղինակն ընդգծում է, որ անցումային արդարադատությունը հատուկ ձև չէ, այլ միջոց է՝ հասարակությունում օրինականության և արդարության վերականգնման համար: Այն հիմնված է իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության և արդար դատաքննության սկզբունքների վրա:

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է անցումային արդարադատության ներդրման անհրաժեշտությունն ազգային արդարադատության համակարգում և դրա հիմնավորումները:

Անցումային արդարադատության նպատակն է ոչ միայն իրավական գնահատական տալ նախկինում կատարված զանգվածային իրավախախտումներին, այլև հուսալի երաշխիքներ ստեղծել ապագայում դրանց չկրկնման համար:

Հեղինակը նշում է, որ անցումային արդարադատության գործիքակազմը պետք է համապատասխանի ՀՀ Սահմանադրությանը, ազգային օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին՝ միաժամանակ ապահովելով դատաիրավական համակարգի անկախությունը:

Բանալի բառեր. Անցումային արդարադատություն, դատարան, իրավախախտումներ, մարդու իրավունքներ, իրավական գնահատական, արդարության վերականգնում, ՀՀ Սահմանադրություն, ազգային օրենսդրություն:

Ներածություն

Անցումային արդարադատությունը¹ միջոցառումների համալիր է, որը կապված է նախկինում կատարված՝ մարդու իրավունքների համակարգային և զանգվածային

¹ Տե՛ս Անցումային արդարադատության մասին տե՛ս Alex Boraine, President of the International Centre for Transitional Justice, «La justice traditionnelle: un nouveau domaine», Colloquium «Réparer les effets du passé: Réparations et transitions vers la démocratie», Ottawa, March 11, 2004; Տե՛ս www.idrc.ca/uploads/user-S/10899187131, Marc Freeman and Dorothée Marotine, «Qu'est-ce que la justice transitionnelle?», International Centre for Transitional Justice, November 19, 2007, [cm. www.ictj.org/images/content/7/5/752.pdf](http://www.ictj.org/images/content/7/5/752.pdf)

խախտումների հետ, որը գոհերին ապահովում է խախտումների փոխհատուցում, ինչպես նաև ստեղծում է առաջնահերթություններ և օժանդակում քաղաքական համակարգերի, կոնֆլիկտների ու այլ պայմանների ձևափոխմանը, որոնք հնարավոր է, որ ընկած են եղել չարաշահումների հիմքում:

Անցումային արդարադատությունը չի գալիս փոխարինելու արդեն իսկ գոյություն ունեցող դատական համակարգը: Անցումային արդարադատության նպատակն է վեր հանել անցյալի քաղաքական ռեժիմի պայմաններում կատարված զանգվածային իրավախախտումների մեղավորներին՝ կազմակերպիչներին, անմիջական կատարողներին, և նրանց ենթարկել արդարացի պատասխանատվության (քրեական պատիժ, վնասների վերականգնում, այդ թվում՝ բարի համբավի վերականգնում)²:

Այս գործառնությամբ լիազորություններն ի վիճակի է կատարելու միայն անցումային արդարադատությունը, քանի որ գործող դատական համակարգն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չի կարող արդյունավետ և լիարժեք իրականացնել:

Անցումային արդարադատությունն օրենքով սահմանված կոնկրետ կառուցակարգերի և ինստիտուտների միասնական համակարգ է (օրինակ՝ ճշմարտության հանձնաժողովներ, վերականգնող արդարադատություն, լուստրացիա և այլն):

Անցումային արդարադատությունն անցյալ ավտորիտար ռեժիմի համակարգային ու զանգվածային խախտումների բացահայտման տեսանկյունից հետապնդում է երկու նպատակ: Առաջին նպատակն է՝ ժողովրդավարության, հաշտեցման և խաղաղության համար հնարավորությունների ստեղծումը և ամրապնդումը: Երկրորդ նպատակն է՝ համապատասխան քաղաքական և իրավական երաշխիքների հաստատագրումը, որպեսզի այլևս լայնածավալ և համակարգված օրինախախտումները չկրկնվեն: Այս երկու նպատակների ձեռքբերման համար անցումային արդարադատության կառուցակարգերը հաճախ համադրում են քրեական, վերականգնողական և սոցիալական արդարության տարրերին:

² St' u Ювенальная юстиция - охранительная и восстановительная. Учебное пособие / Карнозова Л.М., Мельникова Э.Б. - М.: Проспект, 2002., Воскобитова Л.А. Судебная власть: возникновение, развитие типология; она же; Сущностные характеристики судебной власти; Воскобитова Л.А., Ткачев В.Н., Сачков А.Н. Мировая юстиция и восстановительное правосудие; Научно-практическая конференция «Правовое обеспечение практики восстановительного правосудия: Мировые тенденции и перспективы в России» //Государство и право. 2003, № 9. С. 114-121; № 10. С. 102-112; Место примирения и посредничества в доктрине уголовного правосудия... //Государство и право. 2006, № 9. С. 115-122; № 10. С. 113-119; Морщакова Т.Г. К дискуссии о восстановительном правосудии //Неволя. 2005. № 4, С. 25-34; Карнозова Л.М. Восстановительное правосудие //Судебная реформа: проблемы и перспективы / Отв. ред. Б.Н. Топорнин, И.Л. Петрухин. М., 2001. С. 196-206; Ткачев В.Н. Восстановительное правосудие и ювенальное уголовное право // Российская юстиция. 2002, № 5. С. 13-14; он же: Освобождение несовершеннолетних от уголовной ответственности по Уголовному Кодексу Российской Федерации; Рубинштейн Е.Л. Нормативное регулирование института прекращения уголовных дел в связи с примирением сторон: Автореф. дис...канд. юр. наук. М., 2004; и др.

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Անցումային արդարադատությունն արդարադատության հատուկ ձև է: Այն ավելի շուտ հասարակությունում օրինականության և արդարության վերականգնման արդարադատություն է:

Անցումային արդարադատության մարմիններ սովորաբար ձևավորվում են այն երկրներում, որտեղ հանցագործությունների, այդ թվում՝ զինված բախումների ու նման այլ իրադարձությունների հետևանքով տեղի են ունենում իրավունքների զանգվածային ու բնույթով անվերահսկելի խախտումներ կամ ոտնահարումներ: Այդ դեպքում իրավիճակն առանձնանում է նրանով, որ երկրում, որպես կանոն, հանցավորության դեմ պայքար իրականացնող մարմինները և դատական համակարգերը չեն գործառուր ընդհանրապես կամ ի վիճակի չեն ապահովել հանցավորության դեմ պայքարն ու արդարադատությունը՝ կոնկրետ գործերի առանձնահատկություններով պայմանավորված:

Անցումային արդարադատությունն ինքնին ենթադրում է խախտված իրավունքների վերականգնում անձի իրավունքների պաշտպանության համակարգում: Հետևաբար, չափազանց բարձր են այն չափանիշները, որոնց պարագայում կարելի է գործադրել անցումային արդարադատության համակարգ որևէ երկրում:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգն ընդհանրապես անցումային արդարադատության մարմինների ձևավորման ու գործունեության հարցում խիստ պահանջներ է սահմանում: Այդ պահանջներն են՝ իրավունքի գերակայության և մարդու իրավունքների չափորոշիչների անշեղ պահպանումը, արդար և անաչառ դատաքննության, հասարակական համերաշխության հաստատումը և այլն:

Անցումային արդարադատությունն առաջին անգամ կիրառվել է 1980-ականների վերջին և 1990-ական թթ. սկզբին Լատինական Ամերիկայում և Արևելյան Եվրոպայում քաղաքական վերաձևավորումների և արդարադատության պահանջներին ի պատասխան, որն առաջացել էր այդ վերաձևափոխումների ժամանակ:

Անցումային արդարադատությունն առաջացել է որպես այն գաղափարի ճանաչման պահանջ, որ առաջացած խնդիրների համարժեք լուծումները (որոնք վերաբերում են անցյալում կատարված համակարգային և զանգվածային իրավախախտումներին) պահանջում են հատուկ մեխանիզմներ: Անցումային արդարադատության հիմնական նպատակն է ոչ միայն վնասների վերականգնումը և մեղավորներին պատժելը, այլև հեռանկարում դրանց կանխարգելումը:

Այդ ամենն ամփոփելով՝ հանգել ենք այն եզրակացության, որ մեզանում անցումային արդարադատության իրականացման համար կարելի է ներդնել հետևյալ չորս հիմնական կառուցակարգերը.

1991-2018 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային

խախտումներ՝ զուգակցված համակարգային և քաղաքական կոռուպցիայի երևույթների կայուն առկայությամբ³: Այս հանգամանքն ընդգծվել է մի շարք միջազգային զեկույցներում⁴:

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները հետևանք էին այս երևույթների արդյունքում հասարակության մեջ կուտակված անարդարության զգացման, և ժողովրդի մի ստվար զանգված, այլևս այլ ելք չտեսնելով, բողոքի իր ձայնը բարձրացրեց, որպեսզի հետագայում ունենա այնպիսի Հայաստան, որտեղ մարդու իրավունքները և ազատությունները հիմնարար արժեք են, մարդն իրեն պաշտպանված, ամուր և ուժեղ է զգում: Այս պայմաններում կա երկու ճանապարհ, մոռանալ անցյալը և շարժվել առաջ կամ վերլուծել անցյալը, հավաքել տեղեկություններ իրավունքների խախտման վերաբերյալ, առավելագույնս փորձել վերականգնել տուժողների իրավունքները, գնահատական տալ անցյալին և կատարել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որպեսզի բացառվի հետագայում որևէ իրավիճակում նման երևույթների կրկնությունը:

Որպես իրապես ազատ և արդար գնահատված՝ ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններից հետո⁵ Հայաստանում առկա իրավիճակը ցույց տվեց, որ 2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո Հայաստանը նորից գտնվում է անցումային շրջանում, սակայն եթե ԽՍՀՄ փլուզումից հետո երկիրը գտնվում էր տոտալիտար վարչակարգից ժողովրդավարական վարչակարգի անցման փուլում, ապա այս փուլում կանգնած է իմիտացիոն կամ «կեղծ» ժողովրդավարական վարչակարգից իրական ժողովրդավարության անցնելու շեմին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատական է կիրառել անցումային արդարադատության որոշ գործիքներ⁶, որոնք ուղղված են իրավապահ և արդարադատության համակարգերի գործունեության ընթացքում դրանց սահմանադրական նպատակների տևական խեղաթյուրման հետևանքների վերացմանը և քաղաքացիական համերաշխության վերականգնմանը՝ միաժամանակ ապահովելով այդ

³ Տե՛ս Ներպետական մակարդակում անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունը քննարկվել է 2019 թվականի մայիս 24-ին ԱԾ-ում տեղի ունեցած «Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» խորհրդարանական լսումների ընթացքում, որի շրջանակներում ներկայացվել է նաև Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից պատրաստված «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցը:

⁴ Տե՛ս, օրինակ, Universal Periodic Review Armenia <https://www.ohchr.org/en/hr-bodies/upr/am-index>). Trial Monitoring Project in Armenia (April 2008 - July 2009) - OSCE/ODHIR. The Human Freedom Index (<https://www.cato.org/human-freedom-index-new>). Freedom in the World 2018 (<https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>):.

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարություն. Որոշում N 1441-Լ, 10.10.2019 թ. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019–2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին». հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132923>

⁶ Տե՛ս մասնավորապես ՀՀ կառավարության որոշումը՝ «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019–2023 թվականների ռազմավարությունը»:

գործիքների կիրառման համապատասխանությունն ու համարժեքությունն իրավունքի գերակայության և դատաիրավական համակարգի անկախության սկզբունքներին:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման ղեկավար սկզբունքը լինելու է համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և օրենքներին:

Հետևաբար, կարելի է արձանագրել, որ Հայաստանում անցումային արդարադատության անհրաժեշտության վերաբերյալ փաստարկներն առավել քան բավարար են: Կարծում ենք, անցումային արդարադատության գաղափարն ինքնին չի կարող դրական կամ բացասական գնահատվել, քանի դեռ չեն կանխորոշվել դրա ուղղությունները և համարժեք չեն վերլուծվել անցյալում տեղի ունեցած նմանաբնույթ երևույթները:

Ընդ որում՝ այլ երկրների հետ զուգահեռները կամ հիմնավորումը խոցելի են դարձնում այդ գաղափարի կենսունակությունը, քանի որ խոսքը բնավ համընդհանուր նախադրյալներ ունեցող երկրների մասին չէ: Մեր դիտարկմամբ՝ անցումային արդարադատության առանձին, անգամ անհարկի կոշտ տարրեր նորանկախ Հայաստանում արդեն իսկ կիրառվել են ինչպես դատական, այնպես էլ դատախազության համակարգում, մասնավորապես, դեռևս 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո 1996 թ. Սահմանադրության դրույթների իրացման հենքով կայացան դատավորների և դատախազների նշանակումներ, ինչի արդյունքում գործող կազմի շուրջ 40 տոկոսն ազատվեց զբաղեցրած պաշտոններից: Ըստ էության՝ վերանշանակումներ նախաձեռնվեցին նաև Սահմանադրության 2005 թ. փոփոխությունների արդյունքում, որը դարձյալ ուղեկցվեց կազմի էական վերանայմամբ և կառուցակարգային զգալի փոփոխություններով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վստահաբար կարելի է փաստել, որ, ցավոք, հանրությունը միանշանակ չէր ողջունում այդ նախաձեռնությունները, իսկ մամուլը հեղեղված էր նշանակումների գործընթացում թույլ տված կոռուպցիոն երևույթների մասին տեղեկատվությամբ: Ընդհանրապես հակված ենք կարծելու, որ, քաղաքական ուժերի կտրուկ փոփոխությանը զուգահեռ, դատական իշխանության համակարգում կատարվող փոփոխությունները հանրությունը հակված է ընկալելու առնվազն այդ համակարգը յուրայիններով համարելու անթաքույց փորձ՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

НЕОБХОДИМОСТЬ И ОБОСНОВАНИЯ ВНЕДРЕНИЯ ПЕРЕХОДНОГО ПРАВОСУДИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

БАЯНДУРЯН АРАРАТ

*Аспирант Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения,
Член палаты адвокатов РА*

Аннотация. В статье анализируется сущность идеи переходного правосудия, его цели и необходимость применения в Республике Армения. Автор подчёркивает, что переходное правосудие – это не конкретная форма, а средство восстановления законности и справедливости в обществе. Оно основано на принципах верховенства права, защиты прав человека и справедливого судебного разбирательства.

В статье подробно рассматривается необходимость внедрения переходного правосудия в национальную систему правосудия и её обоснование. Цель переходного правосудия - не только дать правовую оценку совершенным в прошлом массовым правонарушениям, но и создать надежные гарантии того, что они не повторятся в будущем. Автор отмечает, что инструментарий переходного правосудия должен соответствовать Конституции Республики Армения, национальному законодательству и международным обязательствам, обеспечивая при этом независимость судебной системы.

Ключевые слова: переходное правосудие, суд, правонарушения, права человека, правовая оценка, восстановление справедливости, Конституция РА, национальное законодательство.

NECESSITY AND JUSTIFICATION OF TRANSITIONAL JUSTICE IMPLEMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA

BAYANDURYAN ARARAT

*PhD Student at the Institute of Philosophy, Sociology and Law,
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia*

Abstract. The article analyzes the essence of the idea of “transitional justice”, its purpose and the necessity of its application in the Republic of Armenia. The author emphasizes that transitional justice is not a specific form, but a means of restoring legality and justice in society. It is based on the principles of rule of law, protection of human rights and fair trial.

The article examines in detail the necessity of introducing transitional justice into the national justice system and its rationale.

The purpose of transitional justice is not only to give a legal assessment to mass offenses committed in the past, but also to create reliable guarantees of their elimination in the future.

The author notes that the tools of transitional justice must comply with the Constitution of the Republic of Armenia, the national legislation and the international obligations, meanwhile ensuring the independence of the judicial system.

Key words: transitional justice, court, violations of law, human rights, legal assessment, restoration of justice, RA Constitution, national legislation.

Օգտագործված գրականության ցանկ

1. Alex Boraine, La justice traditionnelle: un nouveau domaine // Colloquium «Réparer les effets du passé: Réparations et transitions vers la démocratie». Ottawa, March 11, 2004.
2. Marc Freeman and Dorothée Marotine, «Qu'est-ce que la justice transitionnelle?», International Centre for Transitional Justice, November 19, 2007
3. Universal Periodic Review Armenia (<https://www.ohchr.org/en/hr-bodies/upr/am-index>). Trial Monitoring Project in Armenia (April 2008 - July 2009) - OSCE/ODHIR
4. Ювенальная юстиция - охранительная и восстановительная. Учебное пособие / Карнозова Л.М., Мельникова Э.Б. - М.: Проспект, 2002.
5. ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց
6. ՀՀ Կառավարություն. Որոշում N 1441-Լ, «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019–2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին».

Հոդվածը գրախոսվել է 14.01.2026
Ներկայացվել է տպագրության 16.01.2026

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

ՖԻԼԻՍՍՈՒՄ ԲԵԼԼՈՒՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության

պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ,

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ,

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

DOI: 10.63925/18294847-2026.bl21-02

Համառոտագիր: Հոդվածում ուսումնասիրվել է ազգային անվտանգության ժամանակակից հայեցակարգերի զարգացումը՝ տնտեսական սանկցիաների ազդեցության համատեքստում: Վերլուծության հիմքում դրված է այն միտքը, որ ազգային անվտանգությունն այլևս չի սահմանափակվում ռազմական սպառնալիքներով, այլ ներառում է նաև տնտեսական կայունությունը, տեխնոլոգիական անկախությունը, տեղեկատվական վերահսկողությունը, էներգետիկ ինքնավարությունը: Ուշադրություն է դարձվել այն հարցին, թե ինչպես են տարբեր պետություններ արձագանքում սանկցիաներին: Հոդվածում համեմատվել են Ռուսաստանի, Հայաստանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի անվտանգության ռազմավարությունները՝ ներկայացնելով վերջիններիս մոտեցումները տնտեսական ճնշումներին դիմակայելու ուղղությամբ: Վերլուծվել են նաև միջազգային իրավական նորմերը, որոնք կապված են սանկցիաների իրավաչափության և ազգային ինքնիշխանության սկզբունքների հետ: Հոդվածում ցույց է տրվել սանկցիաների՝ որպես ազգային անվտանգության քաղաքականության ձևավորման առանցքային գործոնի և գլոբալ մրցակցության պայմաններում հարմարվողականության ապահովման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով պետությունների ռազմավարական ծրագրերի միջև առկա կապը:

Բանալի բառեր-տնտեսական սանկցիաներ, ազգային անվտանգություն, հայեցակարգ, համաշխարհային մրցակցություն, սանկցիաների իրավաչափություն, ազգային ինքնիշխանություն, հարմարվողականություն

Ներածություն

Ազգային անվտանգության հիմնահարցը, բացի պետության ռազմական գործառնական պարտականություններից, ներկայումս ներառում է նաև պետական և հասարակական կյանքի այլ ոլորտներ: Եթե XX դարում ազգային անվտանգությունն առավելապես դիտարկվում էր պետության ռազմական հնարավորությունների համատեքստում, ապա ժամանակակից պայմաններում անվտանգության հիմնական բաղադրատարրերից են դարձել *inter alia*, տվյալ երկրի տնտեսական կայունությունը,

տեխնոլոգիական անկախությունը, տեղեկատվական հսկողությունը և էներգետիկ ինքնավարությունը: Նման պայմաններում անվտանգության ազգային հայեցակարգերի վերլուծությունը սանկցիաների ազդեցության համատեքստում առավել մեծ նշանակություն է ստանում, իսկ ազգային անվտանգության ռազմավարության մշակումը ոչ միայն ներքին քաղաքականության առջև դրված խնդիր է դառնում, այլև միջազգային հակամարտությանը դիմակայելու միջոց:

Հետազոտություն

Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը հաղթահարում է ռադիկալ փոփոխություններ, որոնք պայմանավորված են տնտեսական հակասությունների խորացմամբ և պետությունների նկատմամբ սանկցիաների գործադրման աճով:

Ազգային անվտանգությունը նման պայմաններում առավել ճկուն է դառնում՝ հարկադրված հարմարվելու արագորեն փոխվող իրողություններին: Ի տարբերություն դասական պատկերացումներին, գաղափարներին, որոնցում գերակայում էին ռազմական սպառնալիքները, 21-րդ դարում առաջին պլան մղվեցին անվտանգության տնտեսական և տեխնոլոգիական առումները:

Պետական և միջազգային կազմակերպությունների կողմից կիրառվող տնտեսական սանկցիաները ոչ միայն արտաքին քաղաքական ճնշման գործիքի են վերածվում, այլև ազգային ռազմավարությունների վերանայման պատճառ են դառնում: Սանկցիաների կիրառումն ուղեկցվում է տնտեսական հոսքերի վերաբաշխումով, տեխնոլոգիաներին և ֆինանսական ռեսուրսներին հասանելիության սահմանափակումով, ինչը, ի վերջո, պետության կայունության վրա է անդրադառնում: Ինչպես նշվում է Տ. Ռուիսի հետազոտական աշխատանքում՝ սանկցիաները դարձել են «իրավական նորմերի և քաղաքական շահերի միջև հավասարակշռություն ապահովող միջազգային քաղաքականության հիմնական բաղադրատարրը»¹:

Դրա հետ մեկտեղ տնտեսական սանկցիաների իրավական բնույթը վիճելի է մնում: Մի կողմից՝ սանկցիաներ կիրառող պետությունը դրանց անհրաժեշտությունը հիմնավորում է միջազգային իրավակարգի պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, մյուս կողմից՝ սանկցիաների մի շարք միջոցներ, հատկապես նրանք, որոնք կիրառվում են ՄԱԿ-ի մեխանիզմների շրջանցմամբ, դիտարկվում են որպես պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի խախտում:

ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ «կազմակերպությունը գործում է դրա բոլոր անդամների հավասարության սկզբունքի հիման վրա»², մինչդեռ գործնականում

¹ St' u Ruys T. Sanctions, Retorsions and Countermeasures: Concepts and International Legal Framework // Research Handbook on UN Sanctions and International Law / Ed. Larissa van den Herik. – Cheltenham: Edward Elgar Publishing, 2016, էջ 45:

² St' u ՄԱԿ-ի կանոնադրություն, ընդունվել է 1945թ. հունիսի 26-ին, հասանելիությունը՝ справ.-правовая система «КонсультантПлюс»:

սանկցիաները ծառայում են որպես ճնշելու միջոցներ, որոնք հաճախ հետապնդում են ոչ այնքան իրավական, որքան տնտեսական և քաղաքական նպատակներ: Դա հարցադրումների տեղիք է տալիս՝ սանկցիաների իրավաչափության և միջազգային իրավունքին համապատասխանելու տեսանկյունից:

ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Ա. Դուգանի ելույթում ընդգծվում էր, որ միակողմանի սանկցիաները, որոնք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից չեն հաստատվել, կարող են դիտարկվել որպես հարկադրանքի ապօրինի միջոցներ³: Այդ քննարկումն առավել արժեքավոր նշանակություն է ստանում անվտանգության ազգային ռազմավարությունների համատեքստում, երբ սանկցիաները կարող են ընդունվել որպես պատասխան միջոցներ պահանջող արտաքին միջամտություն:

Պետությունների՝ սանկցիաներին ուղղված պատասխանը տարբերվում է՝ կախված տնտեսության, քաղաքական համակարգի և արտաքին տնտեսական կապերի կառուցվածքի զարգացվածության մակարդակներից: Որոշ պետություններ ընտրում են կոշտ առճակատման ռազմավարությունը՝ նախաձեռնելով պատասխան սանկցիաներ և կիրառելով սահմանափակող միջոցներ սանկցիաների քաղաքականություն նախաձեռնածների նկատմամբ: Մյուսները նախընտրում են հարմարվողականությունը՝ մշակելով սանկցիաները շրջանցելու միջոցներ՝ իրականացնելով ֆինանսական այլընտրանքային սխեմաներ, զարգացնելով ներմուծման փոխարինման եղանակները:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը սանկցիաների ճնշումից հետո՝ 2014 թվականից ի վեր, ազգային անվտանգության հայեցակարգը վերանայեց՝ շեշտը դնելով տեխնոլոգիական անկախության և ֆինանսական ինքնավարության վրա: Դրան հակառակ, Հայաստանի Հանրապետությունը, չնայած Ռուսաստանի Դաշնության հետ ունեցած տնտեսական սերտ կապերին, փորձում է դիվերսիֆիկացնել արտաքին տնտեսական գործընկերներին՝ հավասարակշռություն ապահովելով Եվրասիական տնտեսական միության և Եվրոպական միության միջև: Այդ տարբերությունները հավաստում են, որ անվտանգության ազգային կոնցեպցիաները չեն կարող համընդահուր լինել, քանի որ դրանք ձևավորվում են աշխարհաքաղաքական որոշակի կապերի հիման վրա:

Ինչպես նշվել է, ազգային անվտանգության հիմնահարցը վաղուց դուրս է եկել ռազմական սահմաններից՝ ներառելով պետական և հասարակական կյանքի առավել շատ ոլորտներ: ԱՄՆ ազգային անվտանգության դոկտրինայում նշվում է. «Պետության պաշտպանվածությունն անհնարին է՝ առանց կայուն տնտեսության և կենսական կարևորություն ունեցող տեխնոլոգիաներին հասանելիության»⁴: Նույնանման մոտեցում է արտացոլված Եվրոպական միության անվտանգության ռազմավարություններում,

³ Sté u Douhan A., Unilateral Coercive Measures: Notion, Types and Qualification. Report of the Special Rapporteur on the Negative Impact of Unilateral Coercive Measures on the Enjoyment of Human Rights // United Nations General Assembly, Human Rights Council, 48th session, 2021. – A/HRC/48/59, էջ 12:

⁴ Sté u The National Security Strategy of the United States of America, Washington, D.C.: The White House, 2022, էջ 12:

որտեղ անվտանգությունն ուղղակիորեն կապվում է տնտեսական կայունության, ինչպես նաև առավել խիստ կարևորություն ունեցող ենթակառուցվածքների կայունության հետ:

Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ռազմավարությունում, որն ընդունվել է Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանագրով 02.07.2021 թվականին, ևս շեշտվում է տնտեսական անվտանգության և արտաքին մատակարարներից կախվածությունը նվազագույնի հասցնելու առաջնահերթությունը⁵: Դա ընդգծում է ազգային անվտանգության համընդհանուր միտումների վերափոխումը, որտեղ տնտեսությունը և տեխնոլոգիաները ոչ պակաս կարևորություն ունեն, քան զինված ուժերը:

Դրա հետ մեկտեղ, ազգային անվտանգության բնորոշումը վիճելի է մնում: Գիտական աշխատություններում դրա մեկնաբանմանն առնչվող մի քանի մոտեցումներ են ձևավորվել: Դասական մոտեցումը, որը հիշատակվել է 20-րդ դարի աշխատություններում, ազգային անվտանգությունը բնորոշում է որպես «պետության ունակությունն իրեն պաշտպանելու արտաքին սպառնալիքներից, ապահովելու ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը»⁶:

Ժամանակակից պայմաններում անվտանգության հայեցակարգը զգալիորեն ընդլայնվել է՝ իր մեջ ներառելով տնտեսական, պարենային, էներգետիկ, տեղեկատվական և նույնիսկ կենսաբանական անվտանգության ոլորտները: Տնտեսական մոտեցման պայմաններում անվտանգությունը բնորոշվում է որպես «միջոցների համակարգ, որն ուղղված է պետության տնտեսությունն արտաքին ճնշումներից, սանկցիաներից և տնտեսական ճգնաժամներից պաշտպանելուն»⁷:

Այդպիսի մոտեցումը հատկապես արդիական է սանկցիաների քաղաքականության պայմաններում, երբ տնտեսական ճնշումը վերածվում է արտաքին քաղաքական ազդեցության գործիքի: Հենց այդ պատճառով անվտանգության ժամանակակից ծրագրերն իրենց մեջ ներառում են սանկցիաներին հարմարվողականության կառուցակարգեր, ֆինանսական դիվերսիֆիկացիա և առևտրի այլընտրանքային գործընկերությունների զարգացումներ:

Ազգային անվտանգությունը նաև սերտ կապված է միջազգային իրավական նորմերի հետ: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի պաշտպանելու իր տարածքային ամբողջականությունը և

⁵ Стратегия национальной безопасности Российской Федерации: утв. Указом Президента РФ от 02.07.2021 № 400 // Официальный интернет-портал правовой информации. Հղում՝ <http://www.pravo.gov.ru> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):

⁶ Ступа Куличков Б.Д., Соотношение экономических санкций и принципа суверенного государства // International Journal of Humanities and Natural Sciences, 2024, հատոր 5-1 (92), էջ 114-116:

⁷ Stup Douhan A., Unilateral Coercive Measures: Notion, Types and Qualification. Report of the Special Rapporteur on the Negative Impact of Unilateral Coercive Measures on the Enjoyment of Human Rights // United Nations General Assembly, Human Rights Council, 48th session, 2021, A/HRC/48/59, էջ 12:

անկախությունը: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ անվտանգությունը հաճախ օգտագործվում է որպես տնտեսական և քաղաքական ճնշման միջոցներն արդարացնելու փաստարկ:

Որպես օրինակ՝ ԱՄՆ-ն և Եվրոպական միությունը կիրառում են սանկցիաներ՝ կիրառումը հիմնավորելով «ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության» անհրաժեշտությամբ: Ինչպես նշվում է ՄԱԿ-ի զեկույցում. «Միակողմանի սանկցիաները, առանց Անվտանգության խորհրդի հավանության, կարող են խարխլել միջազգային իրավունքի սկզբունքները»⁸: Դա ազգային անվտանգությունը դարձնում է ոչ միայն ներքին քաղաքականության հիմնահարց, այլև միջազգային իրավական քննարկումների առարկա: Նման կերպ ազգային անվտանգության բնորոշումը զարգանում է միջազգային հարաբերությունների գլոբալ համակարգի փոփոխություններին համընթաց: Եթե նախկինում պետության անվտանգությունը դիտարկվում էր միայն ռազմական ագրեսիաներից պաշտպանվելու շրջանակում, ապա ներկայումս այն իր մեջ ներառում է տնտեսական սանկցիաներից պաշտպանվելը, էներգետիկ անկախությունը, կենսականորեն կարևոր տեխնոլոգիաների նկատմամբ հսկողությունը և տեղեկատվական տարածության պաշտպանվածությունը: Ազգային անվտանգության ժամանակակից հայեցակարգերը հարմարվում են նոր մարտահրավերներին՝ ստեղծելով համալիր ռազմավարություններ, որոնցում հաշվի են առնվում ինչպես ավանդական սպառնալիքները, այնպես էլ սանկցիաների ճնշումները, ֆինանսական մեկուսացումը, տեխնոլոգիական մրցակցությունը:

Ակնհայտ է դառնում, որ պետությունները հարկադրված են մշակելու անվտանգության բազմաստիճան համակարգեր, որոնք ներառում են և՛ պաշտպանական ոլորտը, և՛ տնտեսական, և՛ տեխնոլոգիական կայունությունը:

Ազգային անվտանգության հայեցակարգը ձևավորվել է գլոբալ քաղաքական և տնտեսական ազդեցությունների արդյունքում: 20-րդ դարում այն կապված էր ռազմական ոլորտի, պետության պաշտպանության հարցերի հետ: Հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարցերի վրա, ինչը պայմանավորված էր համաշխարհային երկու պատերազմներով, սառը պատերազմով և սպառազինությունների մրցակցությամբ: Պետություններն անվտանգությունը դիտարկում էին ռազմական հավասարությունների պրիզմայով, որում գերակշռում էին միջուկային զսպումները, դաշինքների բլոկավորված համակարգերը, աշխարհաքաղաքական մրցակցությունները: Այդ ժամանակահատվածում առաջ եկան առանցքային հայեցակարգերը, ինչպիսիք են «ազգային շահը» և «ուժերի հավասարակշռությունը», որոնք որոշում էին պետության արտաքին քաղաքական ռազմավարությունները: ԱՄՆ-ի ազգային անվտանգության դոկտրինան, որն առաջին անգամ ամրագրվեց 1947 թվականին, դրույթ ուներ այն մասին, որ ազգային շահերի

⁸ St' u Матьщина Н.П., Пересыпкин Д.Д., Инешин Д.Л. Влияние санкций на экономику Российской Федерации // Международный научный журнал «Символ науки», 2022, № 11-2, էջ 19:

պաշտպանությունը ոչ միայն ռազմական ուժ, այլև տնտեսական կայունություն է պահանջում, ինչը դարձավ անվտանգության լայն մեկնաբանման առաջին օրինակներին մեկը⁹:

20-րդ դարի վերջին ազգային անվտանգության մեկնաբանման ընդլայնում տեղի ունեցավ՝ դրանում տնտեսական, բնապահպանական և տեխնոլոգիական ոլորտներ ներառելու հաշվին: Մառը պատերազմի ավարտից հետո երկրներ համակարգի անկումը հանգեցրեց միջազգային սպառնալիքների կառուցվածքի վերախմաստավորմանը: Պետություններն սկսեցին առավել մեծ ուշադրություն հատկացնել էներգետիկ անկախությանը, ֆինանսական համակարգի կայունությանը, տեղեկատվական անվտանգությանը, ենթակառուցվածքների պաշտպանությանը: ՄԱԿ-ի փաստաթղթերում ընդգծվում է. «Ժամանակակից պայմաններում ազգային անվտանգությունը պետք է հաշվի առնի ոչ միայն ռազմական ռիսկերը, այլև գլոբալ տնտեսական գործընթացները, տեխնոլոգիական զարգացումները և կիբեռանվտանգության սպառնալիքները»¹⁰:

Այդ դրույթն արտացոլում է առաջնահերթությունների փոփոխությունները. եթե նախկինում առավել մեծ վտանգ էին ռազմական սպառնալիքները, ապա 21-րդ դարում պետության անվտանգությունն առավել շատ է կախված իր տնտեսության կայունությունից, ֆինանսական ինքնավարությունից և միջազգային ճգնաժամերին հարմարվելու կարողությունից:

21-րդ դարի սկզբներին ազգային անվտանգությունը վերջնականորեն համալիր բնույթ ձեռք բերեց՝ կանգնելով այնպիսի նոր մարտահրավերների առջև, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, համաճարակները, առևտրային պատերազմները և տնտեսական սանկցիաները:

ՄԱԿ-ը և միջազգային այլ կազմակերպություններ ազգային անվտանգության համընդհանուր պատկերացման առանցքային կերտողները դարձան՝ այդ հասկացությունը ռազմականից վերափոխելով մեծաթիվ սպառնալիքներից պետությանը պաշտպանող բազմաշերտ կառուցվածքի: Անվտանգության խորհուրդը կոնֆլիկտների կանխարգելման ոլորտում ձևավորում է օրակարգ, սակայն խորհրդի որոշումները հազվադեպ են ռազմական ոլորտի շրջանակում մնում, դրանք վերաբերում են տնտեսական սանկցիաներին, անդրազգային սպառնալիքների նկատմամբ հսկողությանը, մարդասիրական գործողությունների համակարգմանը: Արժույթի միջազգային հիմնադրամը և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, չունենալով պաշտպանության վրա անմիջականորեն ազդող գործիքներ, միևնույն է, կարող են ֆինանսական

⁹ Sté u Douhan A., Unilateral Coercive Measures: Notion, Types and Qualification. Report of the Special Rapporteur on the Negative Impact of Unilateral Coercive Measures on the Enjoyment of Human Rights // United Nations General Assembly, Human Rights Council, 48th session, 2021. – A/HRC/48/59, էջ 17:

¹⁰ Sté u Организация Объединенных Наций. Доклад Специального докладчика по вопросу о негативном воздействии односторонних принудительных мер на осуществление прав человека // Совет по правам человека, 48-րդ նստաշրջան, 2021, A/HRC/48/59, էջ 17:

լծակների միջոցով ազդել պետության կայունության վրա՝ սահմանափակելով կամ, հակառակը, ընդլայնելով վերջինիս տնտեսական հնարավորությունները¹¹:

Տարածաշրջանային կազմակերպությունները, ինչպիսիք են Եվրոպական միությունը և Շանհայի համագործակցության կազմակերպությունը, անվտանգությունը մեկնաբանում են սեփական աշխարհաքաղաքական առանձնահատկությունների հաշվառմամբ: Եվրոպական միությունը կենտրոնացած է ինստիտուցիոնալ կայունության և կիրքեռանվտանգության վրա, Շանհայի համագործակցության կազմակերպությունը՝ անդրսահմանային ռիսկերի նկատմամբ հսկողության և ծայրահեղականության դեմ պայքարի վրա: Միջազգային անվտանգության ժամանակակից համակարգը ոչ թե ուժերի հավասարակշռում է, այլ դինամիկ գործընթաց, որում տնտեսական, տեխնոլոգիական և դիվանագիտական գործոնները միահյուսվում են ռազմավարական որոշումների միասնական համալիրում:

Եթե նախկինում միջազգային իրավունքը կառուցվում էր ինքնիշխան հավասարության և գործերին չմիջամտելու գաղափարի վրա, ապա կոլեկտիվ անվտանգության հայեցակարգի զարգացմամբ շեշտը դրվեց պետական և ոչ պետական գործոններից բխող սպառնալիքների կանխարգելման վրա:

Հետզհետե միջազգային իրավական պրակտիկայում ամրագրվեց այն մոտեցումը, որ ազգային անվտանգությունն այլևս բացառապես պետության ներքին գործը չէ, այլ փոխկապակցված է գլոբալ գործընթացների հետ: Արդյունքում՝ ի հայտ եկան նորմեր, որոնք արդարացնում էին տնտեսական և քաղաքական միջոցների կիրառումը՝ առանց ռազմական ուղղակի միջամտության, ինչն իր հերթին իրավական կոլիզիաներ առաջացրեց պետության ինքնիշխանության և միջազգային իրավակարգի պաշտպանության սկզբունքների միջև:

Ժամանակակից միջազգային իրավունքը, հենվելով ավտանգության դոկտրինալ պատկերացումների վրա, հարկադրված է հավասարակշռություն ապահովել պետության ազգային շահերի պաշտպանության և գլոբալ կայունության միջև, որն անխուսափելիորեն հանգեցնում է իրավական ավանդական կառուցակարգերի վերանայմանը:

Տնտեսական անվտանգությունը ցանկացած պետության կայունության հիմքն է: Արդյունաբերական արտադրության պահպանությունը, ազգային ընկերություններին արտաքին ճնշումներից պաշտպանելը, ռազմավարական ճյուղերի նկատմամբ հսկողությունը դառնում են առաջնահերթ խնդիրներ: Որպես արտաքին քաղաքականության գործիք՝ կիրառվող սանկցիաները հարկադրում են պետություններին վերանայել իրենց տնտեսական ռազմավարությունները: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, 2014 թվականին բախվելով լայնամասշտաբ սահմանափակումներին, սկսեց ստեղծել վճարումների անկախ համակարգեր, զարգացնել ներկրումներին

¹¹ См. у Теория экономической безопасности: становление, проблемы, развитие : Монография / К. Х. Зоидов, С. И. Богатырев, Н. Г. Скорик, Е. Н. Зименкова ; Под ред. к.ф.-м.н., доцента К.Х. Зоидова. М.: ФГБУН Институт проблем рынка Российской академии наук, 2020, էջ 53:

փոխարինող աղբյուրները, փնտրել նոր գործընկերների ասիական շուկաներում:

ՉԺՀ-ը ամրապնդում է յուանի դիրքերը միջազգային հաշվարկներում՝ ընդլայնելով համաշխարհային ֆինանսական համակարգում ազդեցությունը:

Ի տարբերություն այս պետությունների՝ Եվրոպական միությունը շեշտը դնում է տնտեսական ինտեգրման, փոխկախվածության վրա՝ իր շուկաների կոլեկտիվ պաշտպանության կառուցակարգեր ստեղծելով¹²:

Էներգետիկ անվտանգությունն ուղիղ ազդեցություն է ունենում տնտեսության կայունության և քաղաքական անկախության վրա: Ռեսուրսներով օժտված պետությունները ձգտում են ոչ թե պարզապես վաճառել նավթը, գազը, այլ վերահսկել նաև դրանց փոխադրման ուղիները, ինչը ճնշումների համար վերջիններիս լրացուցիչ լծակներ է տալիս: Ռուսաստանի Դաշնությունը կառուցում է երկարաժամկետ հարաբերություններ ասիացի գործընկերների հետ, իսկ Եվրոպական միությունը՝ կրճատում է էներգիայի աղբյուրների ռուսական մատակարարներից կախվածությունը՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրներ զարգացնելով: Այն երկրների համար, որոնք չունեն օգտակար հանածոների բավարար պաշարներ, էներգետիկ կայունության ապահովումը դառնում է ռազմավարական մարտահրավեր:

Տեղեկատվական և տեխնոլոգիական անվտանգությունը վերածվում է ռազմավարության պլանավորման առանցքային ուղղությունների: Կիբեռհարձակումները, տվյալների արտահոսքը, օտարերկրյա տեխնոլոգիաներից կախվածությունը կարող են պետության դիրքերը ոչ պակաս թուլացնել, քան, օրինակ, ֆինանսական ճգնաժամերը, սանկցիաների ճնշումները: ԱՄՆ-ն և Եվրոպական միությունը ներդրումներ են կատարում արհեստական ինտելեկտի զարգացման, քվանտային հաշվարկների, ցանցային կապերի մեջ՝ ձգտելով պահպանել տեխնոլոգիական առաջնորդների դիրքերը: Ռուսաստանի Դաշնությունը շեշտը դնում է թվային ինքնիշխանության վրա՝ ստեղծելով իր սեփական հարթակները, պաշտպանված ցանցերը: Տեխնոլոգիաների հսկողությանն առնչվող պայքարը գլոբալ մրցակցության մաս է դարձել, և պետությունների նորարարությունները պաշտպանելու ունակությունից է կախված միջազգային համակարգում իրենց դիրքերը:

Անվտանգության ազգային ռազմավարությունները ձևավորվում են սահմանադրական նորմերի, միջազգային համաձայնագրերի, պետությանը ներքին և արտաքին գործոններից պաշտպանող կառուցակարգեր նախատեսող հատուկ իրավական ակտերի հիման վրա: Պետությունների մեծ մասի սահմանադրություններում ամրագրվում են պետական իշխանության մարմինների՝ անվտանգության ոլորտի լիազորությունները, արտակարգ իրավիճակների իրավական ռեժիմները, պաշտպանական քաղաքականության հիմքերը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության 12.12.1993 թ. սահմանադրության (խմբագրություն՝ 30.03.2024) 79.1-րդ հոդվածի մեջ նշվում է.

¹² St u European Union Security Strategy, Brussels: EU Commission, 2020, էջ 79:

«Ռուսաստանի Դաշնությունը միջոցներ է ձեռնարկում՝ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը պաշտպանելու, պետությունների և ժողովուրդների խաղաղ գոյակցությունն ապահովելու, պետության ներքին գործերին միջամտությունը կանխելու համար»¹³: Իսկ ԱՄՆ-ի՝ 1787 թվականին ընդունված սահմանադրության մեջ ազգային անվտանգությունը կապվում է նախագահի՝ որպես գերագույն գլխավոր հրամանատարի լիազորությունների հետ¹⁴:

ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»:

152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը: Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»:

155-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը: Պաշտպանության նախարարն այդ հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը»:

Ամեն դեպքում սահմանադրական նորմերը զուտ ընդհանուր շրջանակն են գծում, իսկ անվտանգության ապահովման կառուցակարգերը հատուկ իրավական նորմերով են կարգավորվում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որում այդ ոլորտում յուրաքանչյուր մարմնի լիազորություններն ամրագրված են:

Ազգային օրենսդրությունից բացի անվտանգության ռազմավարության վրա էական ազդեցություն ունեն միջազգային նորմերը: ՄԱԿ-ի կանոնադրությունն ստորագրած պետություններն ընդունում են կանոնադրության դրույթները՝ միջազգային խաղաղության և անվտանգության, գլոբալ կայունության վրա ազդող սպառնալիքները կանխելու համար: Եվրասիական տնտեսական միության և Եվրոպական միության շրջանակներում անդամ պետություններն իրենց ռազմավարությունները համապատասխանեցնում են վերազգային նորմատիվ ակտերին:

¹³ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության սահմանադրություն, 12.12.1993 (խմբագրություն՝ 30.03.2024) // Официальный интернет-портал правовой информации, հղում՝ <http://www.pravo.gov.ru> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):

¹⁴ Տե՛ս Constitution of the United States of America: adopted in 1787 (as amended), Washington, D.C.: National Archives, 2024, էջ 72:

Օրինակ՝ Եվրոպական Միությունում գործում է անվտանգության քաղաքականության ընդհանուր ռազմավարություն¹⁵, որով սահմանվում են ճգնաժամերի, կիբեռանվտանգության վտանգների, էներգետիկ ռիսկերին առնչվող կոլեկտիվ արձագանքի կառուցակարգեր: Սանկցիաների ազդեցության տակ գտնվող Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ծրագիրն արտաքին մարտահրավերների աճի պայմաններում հիմնվում է ինքնիշխանության, տնտեսության զարգացման կայունության, ազգային շահերի պաշտպանության սկզբունքների հիման վրա: Ռուսական մոդելի առանցքային բնութագրիչներից է արտաքին և սանկցիաների ճնշումներին հակազդելը, ինչպես նաև աշխարհաքաղաքական զսպվածությունը, արտաքին գործընթացներին միջամտելու ձգտումը: Գիտական աշխատություններում նշվում է, որ ռուսական ռազմավարությունը զարգացում է ապրել՝ ռազմական մոդելից վերափոխվելով անվտանգության բազմաստիճան համակարգի, որում շեշտը դրված է ֆինանսական համակարգի կայունության, տեխնոլոգիական անկախության վրա¹⁶:

ՌԴ-ի ազգային անվտանգության ծրագրում տնտեսական բաղադրիչը կենտրոնական դեր ունի, քանզի տնտեսական կառուցակարգերի՝ սանկցիաների և առևտրային սահմանափակումների եղանակներով են պետության նկատմամբ իրականացվում ճնշումները: ՌԴ-ի նկատմամբ սանկցիաների ճնշումների պայմաններում վերջինս իր ռազմավարությունը հարմարեցնում է ներկրման փոխարինման, ներքին արտադրության զարգացման, անկախ ֆինանսական ինստիտուտների զարգացման միջոցով: Գիտական աշխատանքներում նշվում է նաև, որ ռուսական տնտեսությունը ճեղքելուն ուղղված սանկցիաները խթան դարձան ազգային տնտեսության զարգացման և տեխնոլոգիական առաջընթացի համար, ինչը փոխեց տնտեսության ներքին օրակարգը¹⁷:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ այդպիսի հարմարվողականությունը պահանջում է նաև հսկայածավալ ժամանակ և ներդրումներ, ինչպես նաև արևմտյան տնտեսության կառուցվածքի սահմաններից դուրս միջազգային համագործակցությունների նոր կառուցակարգեր: Սանկցիաներին ի պատասխան՝ Ռուսաստանի Դաշնությունն ամրացնում է իր կապերը ՉԺՀ-ի, ԲԲԻԿՄ-ի¹⁸ անդամ պետությունների, այլ գործընկերների հետ, ինչը հիմք է ստեղծում արևմուտքից կախվածությունը նվազեցնող տնտեսական այլընտրանքային միությունների ձևավորման համար:

Անվտանգության հայեցակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում տեղեկատվական և տեխնոլոգիական պաշտպանությունը: Ժամանակակից սպառնալիքներն

¹⁵ St' u Common Security and Defence Policy of the European Union: adopted in 2003, revised in 2016, Brussels: European Commission, 2024, էջ 64.:

¹⁶ St' u Старженецкий В.В., Бутырина В.А., Курицына К.С. Российское антисанкционное регулирование: современное состояние и пути совершенствования // Журнал российского права, 2023, № 5, էջ 87:

¹⁷ St' u Куличков Б.Д. Соотношение экономических санкций и принципа суверенного государства // International Journal of Humanities and Natural Sciences, 2024, հատոր 5-1 (92), էջ 115:

¹⁸ ԲԲԻԿՄ-ի անդամներ են Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և Հարավաֆրիկյան Հանրապետությունը:

իրենց մեջ ներառում են կրեոհարձակումների եղանակով ապակայունության հասնելու, տեղեկատվական մանիպուլյացիաների, տեխնոլոգիաների նկատմամբ հսկողություն հաստատելու ռիսկերը: Վերջին ժամանակներում ՌԴ-ն զարգացնում է իր թվային ինքնիշխանությունը՝ ստեղծելով ազգային IT հարթակներ, հաղորդակցության պաշտպանված ուղիներ՝ տեխնոլոգիական սեփական որոշումներ կայացնելով: Այդ ամենն անհրաժեշտ է ծրագրային ապահովման օտարերկրյա մատակարարներից կախվածությունը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև արտաքին միջամտությունից պետության տեղեկատվական տարածքը պաշտպանելու համար¹⁹:

Հայաստանի Հանրապետությունը, օժտված չլինելով բնության շատ արժեքավոր ռեսուրսներով, գտնվելով աշխարհաքաղաքական անբարենպաստ իրավիճակում, իր ազգային անվտանգության ռազմավարությունը կառուցում է տնտեսական կայունության, տարածաշրջանային համագործակցության և սոցիալական կայունության վրա: 2014 թվականին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»-ը կենտրոնացած է ազգային տնտեսության երկարաժամկետ ամրապնդման, ենթակառուցվածքների արդիականացման, արտաքին ռիսկերի, այդ թվում՝ օտարերկրյա գործընկերներից ֆինանսական կախվածությունը նվազեցնելու վրա:

Ի տարբերություն ՌԴ ազգային անվտանգության ծրագրի, որում շեշտը դրված է սանկցիաներին հակադրելու, ինքնիշխանությունն ամրապնդելու վրա, Հայաստանի ռազմավարական ծրագիրն ուղղված է միջազգային տնտեսական միջավայրին հարմարվելու և արտաքին քաղաքական ուղղություններում փոխզիջումների որոնման վրա: Պետության քաղաքականությունն ուղղված է Եվրասիական տնտեսական միության հետ տնտեսական համագործակցությունը և Եվրոպական Միության հետ գործընկերային հարաբերությունները պահպանելու միջև հավասարակշռություն ապահովելուն, ինչը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող սանկցիաներին առնչվող հնարավոր հետևանքները: Փաստաթղթում ընդգծվում է արտադրության արդիականացման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, օտարերկրյա ներդրումների ներգրավման անհրաժեշտության մասին: Սակայն արտաքին շուկաներից, այդ թվում՝ ռուսական տնտեսությունից, կախվածությունը լրացուցիչ վտանգներ է ստեղծում: Ռուսաստանի Դաշնության դեմ սանկցիաների ճնշման պայմաններում Հայաստանի Հանրապետությունը միջնորդավորված հետևանքների է բխվում՝ այնպիսիք, ինչպիսիք են առևտրի ոլորտում հնարավոր ընդհատումները, ֆինանսական հաշվարկներում դժվարությունները, էներգետիկ ռեսուրսների շուկայում անորոշության աճը:

ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշվում է

¹⁹ St' u Логиновская П.А., Рукинов М.В. Международные санкции как инструмент влияния на национальную экономическую безопасность // В книге: Стратегические задачи макроэкономического регулирования и пространственного развития. Орел, 2019, էջ 35:

համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններին հարմարվելու, ներքին ինստիտուտների կայունության ամրապնդման անհրաժեշտության մասին²⁰: Փաստաթուղթը կենտրոնացած է արտաքին տնտեսական սպառնալիքների նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու վրա, ինչը հատկապես արդիական է Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող սանկցիաների պայմաններում: Ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության հայեցակարգի, որտեղ սանկցիաների ճնշումը որպես կոշտ պատասխան միջոցներ պահանջող սպառնալիք է դիտարկվում, Հայաստանի ծրագիրը շեշտը դնում է տնտեսական քաղաքականության ճկունության, ենթակառուցվածքների զարգացման, ազգային ոլորտների թվայնացման վրա: Ռուսական ֆինանսական ոլորտի նկատմամբ կիրառվող սահմանափակումներից բխող դժվարությունները հարկադրում են Հայաստանի Հանրապետությանը փնտրել արտաքին տնտեսական նոր կապեր, զարգացնել լոգիստիկ ուղիները, ներքին տնտեսությունը հնարավոր սահմանափակումներին հարմարեցնելը:

ԱՄՆ-ի ազգային անվտանգությունը հիմնվում է համաշխարհային առաջնորդման, ռազմական գերիշխանության, տնտեսական հզորության սկզբունքների վրա: Ամերիկյան հայեցակարգը կենտրոնացած է սպառնալիքների մասին նախազգուշացման, կանխման վրա՝ դեռևս հեռավոր սահմաններին գտնվելիս, ինչը ենթադրում է միջազգային կոնֆլիկտներին, սանկցիաների քաղաքականությանն ակտիվ մասնակցություն, տնտեսական և տեխնոլոգիական առանցքային ռեսուրսների նկատմամբ հսկողություն:

Ի տարբերություն պետությունների մեծ մասի՝ ԱՄՆ-ն իր անվտանգությունը դիտարկում է ոչ թե ազգային սահմանների շրջանակում, այլ աշխարհաքաղաքական ազդեցությունների և գործընկերների պաշտպանվածության պրիզմայով: Տնտեսական սանկցիաներն ազգային ռազմավարության մաս են կազմում, քանի որ հնարավորություն են տալիս մրցակիցներին թուլացնել՝ առանց ռազմական գործողությունների: Գիտական գրականության մեջ նշվում է, որ սանկցիաները դարձել են ամերիկյան արտաքին քաղաքականության հիմնական գործիքը, որը ապահովում է տնտեսական ճնշումը, քաղաքական զսպվածությունը՝ առանց ուժի անմիջական կիրառման²¹:

ԱՄՆ-ն օգտագործում է սանկցիաները ֆինանսական համակարգերին, տեխնոլոգիաներին և շուկաներին իր մրցակիցների հասանելիությունը սահմանափակելու համար, ինչը ավելի է ամրապնդում իր տնտեսական գերիշխանությունը:

Եվրոպական Միությունն անվտանգության իր հայեցակարգը կառուցում է կոլեկտիվ պաշտպանության, տնտեսական կայունության, դիվանագիտական ազդեցության հիման վրա, ինչն արտացոլում է այդ կազմակերպության ինտեգրացման բնույթը: Ի տարբերություն առանձին պետությունների ազգային ռազմավարությունների՝ Եվրոպական Միության քաղաքականությունը կենտրոնացած է անդամ պետությունների ուժերի համակարգման, եվրոպական ինստիտուտների դերի բարձրացման, արտաքին

²¹ Sté u Gaur A., Kumar V., Do Economic Sanctions Work? Evidence from the Russia-Ukraine Conflict // Journal of Management Studies, 2023, Vol. 60, Issue 3, էջ 548:

ուժերից կախվածությունը նվազեցնելու վրա: Ռազմավարական փաստաթղթերում առանձնակի ուշադրություն է հատկացված էներգետիկ անվտանգությանը, կիրճ-սպառնալիքներին, ինչպես նաև կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների պաշտպանվածությանը, որն առաջնահերթություն դարձավ Արևելյան Եվրոպայում աշխարհաքաղաքական լարվածության աճից հետո: Դրա հետ միասին Եվրոպական միությունն ակտիվորեն օգտագործում է սանկցիաների ճնշումները, որը դիտարկվում է որպես միջազգային հակամարտություններին, մարդու իրավունքների խախտումներին, հարևան տարածքներում ապակայանուցմանն ի պատասխան կիրառվող հիմնական գործիք:

Միջազգային տնտեսական սանկցիաները դարձել են ազգային անվտանգության ռազմավարությունների ձևավորման վրա ազդող անբաժանելի գործոն, որը պետություններին հարկադրում է համաշխարհային մրցակցության պայմաններում հարմարվել նոր իրողություններին: Սանկցիաներն ազդում են առանցքային ոլորտների վրա՝ ֆինանսներ, առևտուր, էներգետիկա, տեխնոլոգիաներ, ինչը պետություններին հարկադրում է իրենց քաղաքականության մեջ վերանայել առաջնահերթությունները²²:

Ռուսաստանի Դաշնությունը, բախվելով կապիտալի և առաջադեմ տեխնոլոգիաների շուկաներին հասանելիության սահմանափակումներին, շեշտը դնում է ներկրման փոխարինման և տնտեսական ինքնիշխանության ուժեղացման վրա: ԱՄՆ-ն, լինելով սանկցիաների քաղաքականության նախաձեռնողը, սանկցիաները ներառում է իր ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես մրցակիցների տնտեսական զսպվածության գործիք: Եվրոպական Միությունն օգտագործում է սանկցիաները որպես քաղաքական ճնշման կառուցակարգ՝ հասնելով թիրախային պետությունների կողմից քաղաքականության որոշակի փոփոխությունների: Հայաստանի Հանրապետությունը թեև սանկցիաների օբյեկտ չէ, սակայն հարկադրված է հաշվի առնել դրանց ազդեցությունն իր առանցքային գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության վրա և հարմարեցնել իր տնտեսական ռազմավարությունը՝ հավասարակշռություն ապահովելով տնտեսական տարբեր միությունների միջև²³:

Արդյունքում՝ սանկցիաները ձևավորում են ազգային անվտանգության նոր մոդել, որում ֆինանսական ինքնավարությունը, առևտրային կապերի դիվերսիֆիկացիան և տեխնոլոգիական անկախությունը դառնում են պետության կայունության կարևորագույն գործիքներ:

Պետության տնտեսական անվտանգությունը որոշվում է արտաքին ճնշումներին, այդ թվում՝ սանկցիաներին դիմակայելու իր ունակությամբ: Այդպիսի միջոցներն ապակայունացնում են ազգային տնտեսությունը՝ նվազեցնելով արտահանման հնարավորությունները, թուլացնելով ներդրումների հոսքերը և ստեղծելով արժույթին

²² St' u Национальный суверенитет России в парадигме мобилизационной экономики и цивилизационной безопасности / С. В. Шкодинский, Б. В. Салихов, А. А. Хачатурян, И. А. Продченко. – М.: Русайнс, 2023, էջ 36-37:

²³ St' u աղյուսակ 1:

վերաբերող վտանգներ: Դրա հետ մեկտեղ, սանկցիաները կարող են խթանել պետության հարմարվողականությանը: Առևտրային նոր ուղիների զարգացումը, անկախ ֆինանսական համակարգերի ստեղծումը, կենսական կարևոր նշանակություն ունեցող տեխնոլոգիաների արագացված զարգացումը վերաժվում են առաջնահերթ խնդիրների:

Աղյուսակ 1: Ազգային անվտանգության ռազմավարությունների համեմատական աղյուսակ

Չափանիշ	ՌԴ	ՀՀ	ԱՄՆ	ԵՄ
Հիմնական բնութագրիչները	Ինքնիշխանություն, տնտեսական անկախություն, արտաքին ճնշումների հակազդեցություն	Տնտեսական կայունություն, սոցիալական զարգացում, տարածաշրջանային համագործակցություն	Համաշխարհային առաջնորդություն, տնտեսական և ռազմական գերիշխանություն	Հավաքական անվտանգություն, տնտեսական կայունություն, դիվանագիտական ազդեցություն
Սանկցիաների գործոնը	Դիտվում են որպես ազգային անվտանգության դեմ սպառնալիք	Չեն դիտվում որպես անմիջական սպառնալիք, սակայն հաշվի են առվում տնտեսական անուղղակի սպառնալիքները	Օգտագործվում է որպես աշխարհաքաղաքական ճնշման գործիք	Օգտագործվում է որպես քաղաքական ճնշման և միջազգային հակամարտությունների լուծման գործիք
Տնտեսական ռազմավարությունը	Ներկրման փոխարինումը, ազգային արտադրության զարգացումը	Տնտեսության դիվերսիֆիկացիան, օտարերկրյա ներդրումների ներգրավում	Ազգային շահերի պաշտպանություն, տնտեսության առանցքային ոլորտների նկատմամբ հսկողություն	Տնտեսության միասնական քաղաքականություն, նորարարությունների և կայուն աճի ապահովում
Ֆինանսական անկախությունը	Արտաքին ազդեցության ասիմետրիկումը, այլընտրանքային վճարման համակարգերի ստեղծումը	Շուկաների բաց լինելը, միջին և փոքր բիզնեսի աջակցելը	Դոլարային համակարգի միջոցով համաշխարհային ազդեցությունը, միջազգային ֆինանսների նկատմամբ հսկողությունը	Միասնական բանկային համակարգը, ֆինանսական հոսքերի կանոնակարգումը
Էներգետիկ ռազմավարություն	Էներգետիկ գերիշխանությունը երկարաժամկետ պայմանագրերը,	ՌԴ-ի հետ համագործակցության պահպանումը, էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացումը	Ներկրումներից կախվածության նվազեցումը, այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների զարգացումը	Էներգետիկ դիվերսիֆիկացիան, Ներկրումներից կախվածության նվազեցումը
Արտաքին տնտեսական քաղաքականությունը	Արևմուտքից կախվածության նվազեցումը, Ասիայի և ԲՐԻԿՍ-ի երկրների հետ կապերի ամրապնդումը	Եվրասիական տնտեսական միության և Եվրոպական միության միջև հավասարակշռության ապահովումը	Առևտրի միջազգային ուղիների նկատմամբ հսկողությունը, ռազմավարական դաշինքները	Տնտեսական ազդեցության ընդլայնումը, առևտրային համաձայնագրերը
Տեղեկատվական անվտանգությունը	Թվային ինքնավարության զարգացումը, կենսական կարևոր նշանակություն ունեցող ենթակառուցվածքների զարգացումը	Թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային տնտեսության զարգացումը	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գերիշխանությունը , կիրեռսպառնալիքների դեմ պայքարը	Կիրեռանվտանգությունը, թվային տարածության կանոնակարգումը
Ռազմական ոլորտի ռազմավարությունը	Շեշտադրումը միջուկային զսպվածության, ռազմավարական պաշտպանության վրա	Ռուսաստանի Դաշնության, ՀԱՊԿ-ի հետ պաշտպանության ոլորտի համագործակցությունը	Կարևոր տարածաշրջաններում ռազմական ուժի առկայությունը, զսպվածությունը	ՆԱՏՕ-ի շրջանակում հավաքական պաշտպանությունը, հակամարտությունների դիվանագիտական լուծումները

Տնտեսական անվտանգության վրա սանկցիաների ազդեցությունը ոչ միանշանակ է. մի կողմից՝ դրանք խաթարում են թիրախավորված պետությունների կայունությունը, մյուս կողմից՝ հարկադրում են ամրապնդել կայունությունը և փնտրել նոր հնարավորություններ՝ զարգացումն ապահովելու համար:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային տնտեսական սանկցիաներն զգալի ազդեցություն են ունենում անվտանգության ազգային հայեցակարգերի վրա՝ պետություններին դրդելով հարմարեցնել իրենց ռազմավարությունները տնտեսական կայունության ապահովման համար:

2014 թվականից ի վեր Ռուսաստանի Դաշնության դեմ սանկցիաների կիրառումը հանգեցրեց պատասխան միջոցների կիրառման՝ ներառյալ պարենային էմբարգոն, ինչը շոշափեց Եվրոպական Միության ագրոպարենային ոլորտը: Չնայած դժվարություններին՝ արդեն 2019 թվականին ԵՄ երկրների պետությունների տնտեսությունները հարմարվեցին ռուսական հակընդդեմ սանկցիաներին. դեպի երրորդ երկրներ ագրոպարենային արտահանումն աճեց 14.6 %-ով²⁴:

Դրա հետ մեկտեղ, մի շարք երկրներ վնասներ կրեցին: Այսպես, Լեհաստանը կորցրեց 1,1 մլրդ դոլար, Ավստրիան՝ 852 միլիոն դոլար, Հոլանդիան՝ 794 միլիոն դոլար: Միաժամանակ Ռուսաստանի Դաշնության տնտեսությունը 2024 թվականին ՀՆԱ-ի 3,5-4 % աճ գրանցեց, ինչը մասնակիորեն կապված էր պետության մեծ ծախսերի և արտահանումից բխող եկամուտների աճի հետ²⁵:

Սանկցիաների խիստ ճնշող քաղաքականությունը հարկադրում է պետություններին փնտրել տնտեսական նոր կապեր՝ ստեղծելով առևտրային և ֆինանսական այլընտրանքային միավորումներ: Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության դեմ կիրառված սանկցիաները նպաստեցին Չինաստանի, Հնդկաստանի, ԲՐԻԿՍ-ի երկրների հետ կապերի ընդլայնմանը, ինչը հնարավորություն տվեց ստեղծել անկախ հաշվարկային համակարգեր, զարգացնել լոգիստիկ ուղիներն արևմտյան սահմանափակումների շրջանցմամբ: Փոխադարձ ներդրումները, ազգային արժույթներով հաշվարկների անցումը, տեխնոլոգիաների շուկաների ստեղծումը հարմարվելու առանցքային գործիքներն են դառնում: Մակայն տնտեսական ուղղվածության փոփոխությունը պարտադրում է նաև իրավական պաշտպանություն: Միջազգային իրավական կառուցակարգերի զարգացումն ուղղված է միջազգային դատարաններում միակողմանի սանկցիաների կիրառումը վիճարկելուն, սահմանափակումների շրջանցման հնարավորություն տվող կառուցվածքների ստեղծմանը: ՄԱԿ-ի շրջանակներում բազմիցս առաջադրվել է հարցը՝ կապված Անվտանգության խորհրդի համաձայնության բացակայության պայմաններում սանկցիաների կիրառման ոչ

²⁴ St' u Влияние российских контрсанкций на агропродовольственный сектор ЕС // Европейская комиссия. – 2019, հղում՝ <https://u.to/Gkh0Ig> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):

²⁵ St' u Экономический рост России в 2024 году // Le Monde, 27.09.2024, հղում՝ <https://surl.li/sadbee> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):

իրավաչափ լինելուն, սակայն միասնական իրավական նորմերի բացակայությունն այդպիսի նախաձեռնությունների արդյունավետությունը նվազեցնում է: Ի պատասխան՝ պետությունները ներքին օրենքներ են մշակում, որոնք կապաշտպանեն ազգային ընկերություններին երկրորդային սանկցիաներից, և սանկցիայի ազդեցության տակ գտնվող գործընկերների հետ համագործակցության հնարավորությունները կընդլայնեն:

Եզրակացություն

Անվտանգության ազգային հայեցակարգերի և դրանց՝ սանկցիաների ճնշումներին հարմարվելու վերաբերյալ կատարված հետազոտության արդյունքում կարելի է եզրահանգել, որ տնտեսական կայունությունը, տեխնոլոգիական անկախությունը և միջազգային համագործակցությունը պետության պաշտպանությունն ապահովող առանցքային գործոններն են: Սանկցիաները ոչ միայն վտանգներ են ստեղծում, այլև խթանում են այլընտրանքային ֆինանսական համակարգերի, առևտրային կապերի, ներկրմանը փոխարինող կառուցակարգերի ստեղծումը: Պետությունները սանկցիաներին արձագանքելու տարբեր կառուցակարգեր են մշակում. Ռուսաստանի Դաշնությունն ուժեղացնում է տնտեսական ինքնիշխանությունը, Հայաստանի Հանրապետությունը փորձում է հավասարակշռություն ապահովել ինտեգրացիոն համակարգերի միջև, իսկ Եվրոպական միությունը կիրառվող միջոցները հարմարեցնում է իր աշխարհաքաղաքական շահերին: Դա հաստատում է այն փաստը, որ ազգային անվտանգության ժամանակակից ռազմավարությունները զարգացում են ապրում՝ ընդգրկելով ոչ միայն ռազմական, այլև տնտեսական, տեղեկատվական, իրավական ոլորտները:

Հայաստանի Հանրապետության ներկայիս ազգային անվտանգության ռազմավարությունը²⁶ ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝ պետության կենսական շահերի սահմանում, ներքին և արտաքին սպառնալիքների դասակարգում, անվտանգության ապահովման հիմնական միջոցառումների համակարգում, ռազմավարական գործընկերների և համագործակցության միջազգային ուղղությունների մատնանշում:

Ներկայումս հաշվի առնելով հետպատերազմյան իրողությունները, տարածաշրջանային վերադասավորումները՝ ազգային անվտանգության ռազմավարության վերաբերյալ նոր փաստաթղթի ընդունման անհրաժեշտություն կա, որում հստակ ձևակերպված կլինեն ազգային գործունեության հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները: Այսպես, մեր գնահատմամբ՝ անհրաժեշտ է.

- Նախատեսել դիվանագիտական և իրավական ուղիներ միջազգային հանրության ուշադրությունը պահպանելու համար, օրինակ՝ բնակչության իրավունքների խախտումների փաստագրում և միջազգային հարթակներում բարձրաձայնում (ՄԱԿ, ՄԻԵԴ, ԵԽԽՎ):

²⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն (2020), բաժին 2,4,5,6:

- Ներառել Իրան–ՌԴ–Հնդկաստան և ՀԱՊԿ-ի հետ համագործակցության ձևաչափերը՝ հաշվի առնելով այդ պետությունների, կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետությունը կամ անարդյունավետությունը:
- Արդիականացնել տնտեսական բաղադրիչը՝ շեշտադրումը կատարելով մատակարարման շղթաների անվտանգության, էներգետիկ ու տեխնոլոգիական ինքնավարության վրա:
- Ջարգացնել տեղեկատվական պաշտպանվածությունը՝ խուսափելու համար տեղեկատվական արտահոսքից, կանխելու համար արտաքին միջամտությունը:
- Նոր ռազմավարության մեջ ներառել սոցիալական կամ այլ հարթակներով տարածվող կեղծ տեղեկատվության վտանգների մասին դրույթներ:
- Համակարգային մոտեցում ձևավորել սանկցիաների ազդեցության գնահատման, հակազդման առումով, նախատեսել և ստեղծել միջգերատեսչական մարմին, որը մշտապես կվերլուծի տարածաշրջանային և գլոբալ սանկցիաների ռիսկերը Հայաստանի Հանրապետության համար:
- Միաժամանակ, ռազմավարական փաստաթուղթը պետք է լինի խորհրդարանական վերահսկողության և հանրային քննարկման առարկա:

ГОСУДАРСТВЕННЫЕ НАЦИОНАЛЬНЫЕ КОНЦЕПЦИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА

БЕЛЛУЯН ФИЛИАНА

*Аспирант кафедры международного права
юридического факультета*

Ереванского государственного университета

*Прокурор Управления по защите государственных
интересов Генеральной прокуратуры РА*

Аннотация. В статье рассмотрено развитие современных концепций национальной безопасности в контексте воздействия экономических санкций. В основе анализа лежит идея о том, что национальная безопасность больше не ограничивается исключительно военными угрозами, а также включает экономическую стабильность, технологическую независимость, информационный контроль, энергетическую автономию. Особое внимание уделено стратегиям реагирования различных государств на санкционное давление. посредством сравнительного анализа представлены подходы России, Армении, США и Европейского союза к обеспечению национальной безопасности в условиях экономических ограничений. Кроме того, рассмотрены международные правовые нормы, особенно в аспекте легитимности санкций и принципов государственного суверенитета. В статье показана существующая взаимосвязь между стратегическими планами государств с учетом необходимости санкций как ключевого фактора формирования политики национальной безопасности и обеспечения адаптации в условиях глобальной конкуренции.

Ключевые слова: экономические санкции, национальная безопасность, концепция, глобальная конкуренция, легитимность санкций, национальный суверенитет, адаптивность.

STATE NATIONAL CONCEPTS OF THE NATIONAL SECURITY OF THE STATE

BELLUYAN FILIANA

Prosecutor of the Department of State Interests Protection of the

Prosecutor General's Office of the RA

PhD student at the Chair of International Law,

Law Faculty of Yerevan State University

Abstract. The article explores the development of modern national security concepts in the context of economic sanctions. The analysis is based on the idea that national security is no longer limited to military threats alone but also encompasses economic stability, technological independence, information control, and energy sovereignty. Special attention is paid to how different countries respond to sanction pressures. Through comparative analysis, the national security strategies of Russia, Armenia, the United States, and the European Union are presented, highlighting their approaches to addressing economic constraints. The study also examines the international legal norms, particularly regarding the legitimacy of sanctions and the principle of state sovereignty. The article concludes that sanctions have become a key factor in shaping national security policies, emphasizing the necessity of adaptation and interconnectivity under conditions of global competition.

Key words: economic sanctions, national security, concept, global competition, legitimacy of sanctions, national sovereignty, adaptability.

Օգտագործված գրականության ցանկ

1. Common Security and Defence Policy of the European Union: adopted in 2003, revised in 2016, Brussels: Euro 2. Constitution of the United States of America: adopted in 1787 (as amended), Washington, D.C.: National Archives, European Commission, 2024.
2. **Gaur A., Kumar V.**, Do Economic Sanctions Work? Evidence from the Russia-Ukraine Conflict // Journal of Management Studies, Vol. 60, Issue 3, 2023.
3. **Douhan A.**, Unilateral Coercive Measures: Notion, Types and Qualification. Report of the Special Rapporteur on the Negative Impact of Unilateral Coercive Measures on the Enjoyment of Human Rights // United Nations General Assembly, Human Rights Council, 2021.
4. European Union Security Strategy, Brussels: EU Commission, 2020.
5. **Ruys T.**, Sanctions, Retorsions and Countermeasures: Concepts and International Legal Framework // Research Handbook on UN Sanctions and International Law / Ed. Larissa van den Herik. – Cheltenham: Edward Elgar Publishing, 2016.
6. The National Security Strategy of the United States of America, Washington, D.C.: The White House, 2022.
7. **Богатырев С.И., Скорик Н.Г., Зименкова Е.Н.**, Теория экономической безопасности: становление, проблемы, развитие : Монография / К. Х. Зоидов, Под ред. к.ф.-м.н., доцента К.Х. Зоидова. М.: ФГБУН Институт проблем рынка Российской академии наук, 2020.
8. **Куличков Б.Д.**, Соотношение экономических санкций и принципа суверенного государства // International Journal of Humanities and Natural Sciences, том 5-1 (92), 2024.
9. **Логиновская П.А., Рукинов М.В.**, Международные санкции как инструмент влияния на национальную экономическую безопасность // В книге: Стратегические задачи макроэкономического регулирования и пространственного развития. Орел, 2019.
10. **Матыцина Н.П., Пересыпкин Д.Д., Инешин Д.Л.**, Влияние санкций на экономику Российской Федерации // Международный научный журнал «Символ науки», № 11-2, 2022.
11. Организация Объединенных Наций, Доклад Специального докладчика по вопросу о негативном воздействии односторонних принудительных мер на осуществление прав человека // Совет по правам человека, 48-րդ նստաշրջան, 2021.
12. **Шкодинский С.В., Салихов Б.В., Хачатурян А.А., Продченко И.А.**, Национальный суверенитет России в парадигме мобилизационной экономики и цивилизационной безопасности, М., 2023.
13. **Старженецкий В.В., Бутырина В.А., Курицына К.С.**, Российское антисанкционное регулирование: современное состояние и пути совершенствования // Журнал российского права, 2023.
14. Стратегия национальной безопасности Российской Федерации: утв. Указом Президента РФ от 02.07.2021 № 400 // Официальный интернет-портал правовой информации, հղում՝ <http://www.pravo.gov.ru> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025).
15. Влияние российских контрсанкций на агропродовольственный сектор ЕС // Европейская комиссия. – 2019, հղում՝ <https://u.to/Gkh0Ig> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):
16. Экономический рост России в 2024 году // Le Monde, 27.09.2024, հղում՝ <https://surl.li/sadbee> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):
17. ՄԱԿ-ի կանոնադրություն, ընդունվել է 1945թ. հունիսի 26-ին, հասանելիությունը՝ справ.-правовая система «КонсультантПлюс»:
18. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ.:
19. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 15.11.2017թ.:
20. Ռուսաստանի Դաշնության սահմանադրություն, 12.12.1993 (իսրազրություն՝ 30.03.2024) // Официальный интернет-портал правовой информации, հղում՝ <http://www.pravo.gov.ru> (մուտքի ամսաթիվ՝ 13.03.2025):
21. ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հղում՝ <https://www.gov.am/am/prsp/> (մուտքի ամսաթիվ՝ 22.03.2025):

Հոդվածը գրախոսվել է 20.02.2026
Ներկայացվել է տպագրության 25.02.2026

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ,
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍՏՈՒՎՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

ԳԵՂԱՍՅԱՆ ԷԼԻՆԱ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական

իրավունքի ամբիոնի դասախոս,

«ԹԱՈՒԵՐ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԲՈՆՍՍԱԼԹԱՆՏՍ» ՓԲԸ

իրավաբանական դեպարտամենտի ղեկավար

DOI: 10.63925/18294847-2026.bl21-03

Ամփոփագիր. Սույն հոդվածում քննարկվում են վարչարարության բողոքարկման իրավունքի իրացման շրջանակը և սահմանները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական Միության Արդարադատության դատարանի, համեմատական վարչական իրավունքի՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Թագավորության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի փորձի հիման վրա սույն գիտական հոդվածի շրջանակում առաջ է քաշվում այն գաղափարը, որ վարչական մարմինների՝ բողոքարկման ենթակա գործունեության շրջանակը պետք է որոշվի ոչ թե վարչարարության ձևական դասկարգումից, այլ վարչարարության՝ անհատի իրավունքների վրա ազդեցությունից ելնելով:

Գիտական հոդվածի շրջանակում քննարկման առարկա է դարձվում վարչարարության բողոքարկման համատեքստում դատական վերանայման թույլատրելի ինտենսիվության հարցը: Արդյունքում գիտական հոդվածում առաջ է քաշվում հավասարակշռված մոդել ունենալու անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա երաշխավորել սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը՝ մյուս կողմից ապահովելով իշխանությունների բաժանման սկզբունքի և վարչաիրավական հայեցողության երաշխավորումը: Արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ վարչարարության դատական բողոքարկումը ամբողջական իրավագործության դատարանի կողմից վարչարարության իրավաչափության անհրաժեշտ աստիճանի ստուգումը երաշխավորելուն զուգահեռ պետք է բացառի քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե գործադիր իշխանության իրավասության տիրույթում են:

Բանալի բառեր. վարչարարության բողոքարկում, ամբողջական իրավագործության դատարան, իշխանությունների բաժանում, դատական վերանայման շրջանակ և սահմաններ, վարչարարության բողոքարկման օբյեկտներ:

Վարչական իրավունքը, մի կողմից նպատակ ունենալով կանոնակարգել վարչական մարմինների գործունեության սահմանները, մյուս կողմից՝ հավասարապես միտված է ապահովելու վարչարարության հասցեատերերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ իրենց իրավունքներն ու օրինական շահերը խախտող վարչարարության բողոքարկման հնարավորության ընձեռմամբ: Այս համատեքստում վարչարարության բողոքարկման իրավունքը վարչական իրավունքում անձին տրվող ամենահիմնարար իրավունքներից մեկն է: Եվրոպական ժամանակակից վարչական իրավունքում վարչարարության բողոքարկման իրավունքը դիտարկվում է ոչ թե որպես սովորական վարութային իրավունք, այլ ժողովրդավարական պետության՝ պատշաճ վարչարարության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և իրավական օրինականության սկզբունքների վրա հիմնված կարևորագույն սահմանադրական հանձնառություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)¹ 6-րդ հոդվածը, երաշխավորելով քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների պաշտպանությամբ անկախ դատարանին հասանելիությունը, ներառում է նաև քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների առնչությամբ վարչական մարմինների գործողությունները, անգործությունը և վարչական ակտերը բողոքարկելու իրավունքը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) վարչարարության բողոքարկման իրավունքը համարում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր՝ ընդգծելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երաշխիքները որևէ արժեք չեն ունենա, եթե անձի համար ապահովված չէ դատարան դիմելու հնարավորությունը²:

Վարչարարության բողոքարկման իրավունքի բնորոշման համատեքստում կարևորագույն նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե վարչարարության հատկապես ո՞ր դրսևորումների բողոքարկումն է ներառված այս հիմնարար իրավունքի շրջանակում: Եվրոպական երկրների օրինակելի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքարկման իրավունքի օբյեկտների շրջանակը որոշելու հիմքը ոչ թե վարչարարության կամ վարչական ակտերի ձևական դասակարգումն է, այլ այն իրավական հետևանքները, որն ունենում է վարչական մարմնի կոնկրետ գործունեությունը: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դատարան դիմելու իրավունքը պետք է լինի «պրակտիկ և արդյունավետ»³, իսկ դատարան դիմելու իրավունքի արդյունավետության

¹ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, ECHR), 1950 թ., ETS No. 5, ընդունվել է 4 նոյեմբերի 1950 թ.:

² St u, օրինակ, Golder v. The United Kingdom, Application No. 4451/70, European Court of Human Rights, Judgment of February 21, 1975, para. 35, Malhous v. The Czech Republic, Application No. 33071/96, European Court of Human Rights, Judgment of July 12, 2001, para. 55:

³ St u Bellet v. France, Application No. 23805/94, European Court of Human Rights, Judgment of December 4, 1995, § 38:

ապահովման համար անձը նախևառաջ պետք է ունենա «հստակ, պրակտիկ հնարավորություն՝ բողոքարկելու իր իրավունքներին միջամտող ակտը⁴»: Այդ իրավունքի պրակտիկ ու արդյունավետ բնույթը կարող է կասկածի տակ դրվել այն դեպքերում, երբ վարութային արգելքներն արգելակում կամ սահմանափակում են դատարան դիմելու հնարավորությունը: ՄԻԵԴ-ը, օրինակ, այդպիսի անհամաչափ և դատարան դիմելու իրավունքի արդյունավետության ու պրակտիկության պահանջների հետ անհամատեղելի է համարում այն իրավիճակները, երբ դատարանների կողմից վարութային կանոնների չափազանց խիստ մեկնաբանությունը հանգեցրել է դիմողի՝ դատարան դիմելու իրավունքից զրկվելուն⁵:

Եվրոպական Միության Արդարադատության դատարանը ևս վարչարարության բողոքարկման իրավունքի օբյեկտային սահմանները որոշելիս առաջնորդվում է վարչարարության դրսևորումների ոչ թե ձևական դասակարգմամբ՝ հիմք ընդունելով ԵՄ հիմնարար իրավունքների մասին հռչակագրի 47-րդ հոդվածը, որով սահմանված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը պահանջում է, որ պարտադիր իրավական հետևանք ունեցող բոլոր ակտերը բաց լինեն բողոքարկման համար: Այս նույն սկզբունքն է դրված վերը հիշատակված՝ վարչարարության վերաբերյալ ReNEUAL կանոնների և ԵԽ նախարարների կոմիտեի հիշատակված՝ CM/Rec(2007)7 հանձնարարականի հիմքում, որոնցից ևս ակնհայտորեն բխում է, որ բողոքարկման իրավունքի առկայությունը պետք է որոշվի վարչարարության՝ անհատի վրա ունեցած իրավական ու փաստացի ազդեցությունից ելնելով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վարչարարության բողոքարկման իրավունքն իր ժամանակակից էությամբ ընդգրկում է վարչական մարմինների ցանկացած տեսակի «ձևական» և «ոչ ձևական» արտահայտություն ունեցող ակտերը, հրամանները, գործողություններն ու անգործությունը վիճարկելու իրավունքը՝ պայմանով, որ այն անձի համար առաջացնի ուղղակի և նշանակալից իրավական հետևանքներ, կամ «անձի իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի վրա ազդի՝ անկախ այդպիսի ակտի օրենսդրական դասակարգումից⁶: Այսպիսով՝ ԱՄՆ և Կանադայի պրակտիկայում այժմ արմատավորված է այն գաղափարը, որ դատավարական կամ ընթացակարգային հասկացությունները չեն կարող և

⁴ Տե՛ս, օրինակ, նույն տեղում, § 36; Nunes Dias v. Portugal, Application No. 69829/01, European Court of Human Rights, Judgment of April 10, 2003, § 36:

⁵ Տե՛ս, օրինակ, Pérez de Rada Cavanilles v. Spain, Application No. 116/1997/900/1112, European Court of Human Rights, Judgment of October 28, 1998, § 49; Miragall Escolano and Others V. Spain (Applications nos. 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 and 41509/98), European Court of Human Rights, Judgment of April 25, 2000, § 38; Sotiris and Nikos Koutras ATTEE v. Greece (Application no. 39442/98), European Court of Human Rights, Judgment of February 16, 2001, § 20; Běleš and Others v. the Czech Republic, Application No. 47273/99, European Court of Human Rights, Judgment of February 12, 2003, § 50; RTBF v. Belgium, Application No. 50084/06, European Court of Human Rights, Judgment of September 15, 2011, §§ 71-72, 74:

⁶ Տե՛ս, օրինակ, ԱՄՆ Administrative Procedure Act 5 USC § 704, ԱՄՆ Գերագույն դատարանի՝ *Bennett v Spear* 520 US 154 (1997) 177-78, *Canada (Minister of Citizenship and Immigration) v Vavilov* 2019 SCC 65 [23]-[25].

չպետք է օգտագործվեն բողոքարկման իրավունքի կիրառման շրջանակի նեղացման նպատակով:

Գերմանիայում արմատավորվել է «օրինականության ամբողջական ստուգման» կոնցեպտը, որի համատեքստում բողոքարկման ենթակա են թե՛ անհատական վարչական ակտերը, թե՛ վարչական անգործությունն «իրավաչափության համապարփակ վերահսկողության» (umfassende Rechtmäßigkeitkontrolle) հիմնարար սկզբունքը⁷: Ֆրանսիական վարչական իրավունքում վարչական ակտի՝ իշխանության չարաշահման կամ անօրինականության հիմքով բողոքարկման ընթացակարգի շրջանակում Պետական խորհրդում վիճարկման ենթակա է ցանկացած վարչական ակտ՝ անկախ նրա պարտադիր ուժից՝ պայմանով, որ այն առաջացնում է «իրավական հետևանքներ» կամ զգալիորեն ազդում է անձի իրավական իրավիճակի վրա⁸: Բրիտանական վարչական իրավունքը նույնպես որդեգրել է բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման ոչ թե ձևական, այլ գործառության, բովանդակային մոտեցում՝ դատական վերահսկողության ենթակա համարելով նույնիսկ ոչ օրենսդրական հիմքով ստեղծված կարգավորող մարմնի ակտերը, եթե հիմնավորվում է, որ այդ մարմինն իրականացնում է հանրային իշխանություն:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա՝ կարող ենք եզրակացնել, որ վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշումը թե՛ միջազգային փորձի ուսումնասիրության, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու եվրոպական լավագույն չափանիշների համատեքստում պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով վարչական մարմինների գործունեության արտահայտման կոնկրետ ձևի ունեցած ազդեցությունն անձանց իրավունքների վրա:

Չնայած նրան, որ վարչական իրավունքի ժամանակակից համակարգում վարչարարության առանձին դրսևորումներ պետք է ունենան հստակ ամրագրում՝ վարչական ակտերի, հրամանների և այլ անհատական իրավական ակտերի ձևով, և վարչական մարմինների կողմից ընդունման ենթակա ակտերը կամ կատարվող գործողությունների համար վերջիններս պետք է ուղղակիորեն լիազորված լինեն օրենքով, վարչարարության բողոքարկման իրավունքը չի կարող փոխկապակցվածության կամ կախվածության մեջ դրվել օրենսդրական դասակարգումներից և վարչարարության կոնկրետ ձևական արտահայտությունից: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ **բողոքարկման օբյեկտը վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող և անձի իրավունքներին ու օրինական շահերին վերջինիս բողոքարկման իրավունքով օժտելու համար անհրաժեշտ չափով առնչություն ունեցող որևէ ակտ, գործողություն, անգոր-**

⁷ St' u, օրինակ, Verwaltungsgerichtsordnung (VwGO) 1960, §§ 42–113; Ulrich Stelkens and others (eds), *German Administrative Law: Introduction* (German Law Archive 2018) <https://germanlawarchive.iuscomp.org/?p=353>, հասանելի է 01.02.2026թ. դրությամբ:

⁸ St' u Conseil d'État, *Recours pour excès de pouvoir* doctrine; Jean Rivero and Jean Waline, *Droit administratif* (23rd ed, Dalloz 2006) 288–305; Conseil d'État, *Dame Lamotte* (1950) Rec. 110.:

ծություն կամ հանրային իշխանության իրականացման որևէ այլ ձև է, վարչարարության բողոքարկման իրավունքն առկա է, և այն չի կարող սահմանափակվել կամ բացառվել միայն այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկվող ակտը, փաստաթուղթը կամ գործողությունն օրենսդրությամբ նույնաբնույթ ակտին առաջադրվող ձևին չի համապատասխանում. անձի իրավունքների վրա վարչարարության ազդեցությունը պետք է որոշվի ոչ թե դրա արտահայտման ձևով, այլ բովանդակությամբ:

Հայաստանի Հանրապետությունում վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման հիմքում նախնառաջ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասն է, որի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու **վարչական ակտերը**, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև **վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը**:

Այլ կերպ ասած՝ Օրենքը վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակը պայմանավորում է բացառապես Օրենքի համատեքստում «վարչարարություն» հասկացության նեղ իմաստով՝ այդ օբյեկտների, ըստ էության, սպառիչ ցանկում ներառելով միայն վարչական ակտերը, վարչական մարմնինների գործողությունը և անգործությունը, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, մյուս կողմից, նույն տրամաբանությամբ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական դատարան դիմելու իրավունք է վերապահում այն դեպքում, երբ անձի իրավունքները և ազատությունները խախտվել են, նրա վրա ոչ իրավաչափորեն պարտականություն է դրվել, կամ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն վարչական պատասխանատվության է ենթարկվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի **վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ**⁹ (ընդգծումը մերն է):

Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով 17.12.2021 թ. որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրի կողմից անձին իրավունք է վերապահվել հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտով խախտվում են կամ կարող են խախտվել իր իրավունքները: Այսինքն՝ դատարան վիճարկման հայց ներկայացնելու համար պարտադիր պայման է վարչական ակտի առկայությունը, որն այն վիճարկող անձի համար պետք է ունենա միջամտող ազդեցություն: Այլ կերպ ասած՝ գործող վարչադատավարական կանոնների համաձայն՝ վիճարկման հայցի առարկա կարող է հանդիսանալ բացառապես միջամտող վարչական ակտը: Միաժամանակ, դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյո՞ք

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1, հոդված 3:

այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է, թե՛ ոչ, հետևաբար, վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ:

Չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը վերը հիշատակված որոշման շրջանակներում, ըստ էության, լայն մեկնաբանություն է տվել վարչական ակտ հասկացությանը՝ դրա շրջանակում ներառելով ոչ միայն անձանց համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնող, այլև այդպիսի հետևանքներ առաջացնելուն ուղղված ակտերը, այնուամենայնիվ, գործող օրենսդրության շրջանակներում Վճռաբեկ դատարանը վերահաստատել է այն, որ վարչական դատարանում բողոքարկվել կարող են, հետևաբար՝ դատական կարգով բողոքարկման օբյեկտ են միայն վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունը և անգործությունը: Ընդ որում՝ վիճարկման հայցի քննության ընթացքում պարտադիր պարզման ենթակա է այն, թե արդյո՞ք վիճարկվող ակտը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է, թե՛ ոչ:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով¹⁰ անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում: Դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

ՄԻԵԴ-ն իր հերթին արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը¹¹:

Վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման՝ վերը հիշատակված չափանիշների, Սահմանադրական դատարանի ու ՄԻԵԴ քննարկվող

¹⁰ Տե՛ս 10.12.2013 թվականի թիվ ՄԴՆ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՄԴՆ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՄԴՆ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՄԴՆ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՄԴՆ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՄԴՆ-1257 և այլն:

¹¹ Տե՛ս, Dumitru Gheorghe v. Romania, Application No. 33883/06, European Court of Human Rights, Judgment of April 12, 2016, § 28:

դիրքորոշումների համատեքստում ակնհայտ է, որ անկախ նրանից, թե գործող օրենսդրությամբ վարչարարության դրսևորումների ինչ սահմանափակումներ կամ հասկացություններ են նախատեսված, և թե դատարան դիմելու կամ վարչական կարգով բողոքարկման իրավունքի բնորոշումն օրենսդրական մակարդակով բողոքարկման ինչ օբյեկտների թվարկում է ներառում, վարչարարության բողոքարկման իրավունքը՝ որպես թե՛ դատական պաշտպանության և թե՛ պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, որևէ դեպքում չի կարող սահմանափակվել՝ զուտ այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկման օբյեկտը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված կոնկրետ ձևին: Վարչարարության բողոքարկման իրավունքի առկայությունը չպետք է կապվի ներպետական համակարգում վարչարարություն հասկացության բնորոշման կամ վարչարարության դրսևորման ձևերի՝ օրենսդրորեն սահմանափակված շրջանակի հետ: Ընդ որում՝ նշվածը հավասարապես կիրառելի է այն դեպքում, երբ օրենսդրությամբ սահմանված այդ կոնկրետ ձևին, տվյալ դեպքում՝ վարչական ակտին, առավել լայն մեկնաբանություն է տրվում: Բողոքարկման օբյեկտների շրջանակը պետք է յուրաքանչյուր դեպքում որոշվի վարչական մարմնի գործունեության որևէ դրսևորման՝ անձի իրավունքների վրա ազդեցության և այդ ազդեցության՝ իրավաբանորեն արժևորվող նշանակալիության տեսանկյունից, իսկ բողոքարկման իրավունքի՝ ընթացակարգային սահմանափակ պահանջների հիման վրա սահմանափակումները անհամատեղելի են այդ հիմնարար իրավունքի էության հետ: Հետևաբար՝ վարչական դատավարությունում առանձին հայցատեսակների առկայությամբ և դրանց կիրառման սահմանափակ շրջանակով կամ վարչական վարույթում բողոքարկման օբյեկտների «ձևական» շրջանակով պայմանավորված՝ վարչարարության բողոքարկման սուբյեկտին առաջադրվող պահանջներին բավարարող անձի՝ բողոքարկման իրավունքը ժխտելն անթույլատրելի է, իսկ նշված պահանջները պետք է օրենսդրորեն ամրագրվեն, սակայն գործնականում մեկնաբանվեն որպես բացառապես ընթացակարգային, բողոքարկման իրավունքի իրացումն առավել արդյունավետ դարձնող, և ոչ թե այն որևէ պայմաններում սահմանափակող պահանջներ:

Վերը շարադրվածի հիման վրա ուրվագծվում է վարչարարության բողոքարկման իրավունքի կիրառելիության շրջանակը՝ բողոքարկման օբյեկտներից ելնելով¹², ինչպիսի պայմաններում քննարկման ենթակա է բողոքարկման իրավունքի հաջորդ՝ բողոքարկման իրավունքի իրացման սահմանների հարցը, մասնավորապես՝ վարչական դատարանի կողմից վարչարարության իրավաչափության ստուգման սահմանները կամ, այլ կերպ ասած, վարչարարության բողոքարկման համատեքստում վարչարարության պատշաճության կամ իրավաչափության ստուգման «խորության» աստիճանի որոշումը:

¹² Վարչարարության բողոքարկման օբյեկտների առանձին խումբ են նորմատիվ իրավական ակտերը, որոնց, սույն գիտահետազոտական աշխատանքի ծավալներից ելնելով, անդրադարձ չի կատարվում:

Վարչարարության բողոքարկման իրավունքը, այսպիսով, դատական պաշտպանության և պատշաճ վարչարարության իրավունքների բաղադրատարր հանդիսանալով, ֆիզիկական ու իրավաբանական անձի համար երաշխավորվող **սուբյեկտիվ** իրավունք է, որի իրացման առաջնահերթ նպատակը մասնավոր շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման բոլոր դեպքերում պետք է լինի ոչ թե վարչարարության օրինականության ապրիօրի, ամբողջական ստուգումը, այլ անձի խախտված իրավունքների վերականգնումը: Այս համատեքստում վարչարարության բողոքարկման իրավունքը պետք է մեկնաբանվի որպես ոչ թե վարչարարության՝ օրենքին ամբողջական համապատասխանության՝ վարչական կամ դատական կարգով ստուգման իրավունք, այլ վարչարարությամբ անձի իրավունքների հնարավոր կամ իրական խախտման դեպքում այդպիսի խախտումների շտկում, կանխարգելում կամ խախտված իրավունքների ամբողջական վերականգնում պահանջելու իրավունք: Այսպիսով՝ մասնավոր շահերի պաշտպանությամբ վարչարարության, այդ թվում՝ նորմատիվ վարչարարության, բողոքարկման **նպատակը**, և, հետևաբար, նաև վարչարարության բողոքարկման բովանդակային սահմանը, վարչարարությունը բողոքարկվող անձի խախտված իրավունքների պաշտպանությունն է¹³:

Վարչարարության բողոքարկման իրավունքի՝ վերը հիշատակված նպատակն ինքնին բավարար չէ վարչարարության բողոքարկման իրավունքի սահմանների ամբողջական ուրվագծման համար, քանի որ չի տալիս այն հարցի պատասխանը, թե խախտված իրավունքների պաշտպանության նպատակով վարչարարության դեմ բերված բողոքը քննելիս հատկապես որն է վարչական դատարանի կողմից վարչարարության իրավաչափության ստուգման շրջանակը: Նշվածն առավելապես կարևորվում է, մի կողմից, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի համատեքստում դատարանի՝ բացառապես գործադիր իշխանության իրավասությունը համարվող հարցերին միջամտելը բացառելու անհրաժեշտության, մյուս կողմից՝ վարչարարության բողոքարկման իրավունքի գործնականում արդյունավետության երաշխավորման համատեքստում կենսական նշանակություն ունեցող՝ «ամբողջական իրավագործության դատարանի կողմից» գործի քննության իրավունքի համատեքստում:

Այսպես, վարչական արդարադատության հասկացության շուրջ ծավալված բանավեճում առավել հետաքրքիր ու գործնական բնույթ են կրում գերմանացի հետազոտողների առաջադրած հարցադրումները՝ վարչական արդարադատության հիմնական նպատակաուղղվածությունը պարզելու կապակցությամբ. այն ուղղված է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը, թե՞ օբյեկտիվ իրավակարգի պահպանմանը: Ընդ որում՝ դեռևս չի ձևավորվել մեկ միասնական մոտեցում: Հարկ է նկատել, որ այս դեպքում անխուսափելիորեն ծագում է **սուբյեկտիվ իրավունքների**

¹³ Տե՛ս, Կարինե Զլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը:

պաշտպանության և օրինականության միջև ընտրություն կատարելու, դրանցից մեկին նախապատվություն տալու խնդիր¹⁴:

Մյուս կողմից՝ իրավական պետության կայացման գործընթացը դեռևս լուրջ խոչընդոտների է հանդիպում՝ հենց այն հիմքով, որ դեռևս համարժեք չի երաշխավորված դատական իշխանության հակակշռող դերն իշխանության այլ ճյուղերի առնչությամբ: Ըստ էության, դատական իշխանությունը դեռևս չի ընկալվում որպես իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ հակակշռող ազդեցություն ունեցող ինքնուրույն իշխանության ճյուղ, առավելագույնը քննարկվում է իշխանության մյուս ճյուղերի կողմից դատական իշխանության նկատմամբ միջամտությունները բացառելու հարցադրումները¹⁵: Այսպիսով՝ վարչարարության բողոքարկման իրավունքի իրացման համատեքստում դատարանի լիազորությունների, դատարանի կողմից վարչարարության ստուգման ինտենսիվության հարցի պարզաբանումը զուտ գիտական հարց չէ. այն վարչական արդարադատության էության, իշխանությունների բաժանման սկզբունքի՝ գործնականում պատշաճ իրացման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող հարցադրում է:

Եվրոպայի խորհրդի «Վարչարարությունը և դուք» ձեռնարկում նշվում է, որ վարչարարության բողոքարկման համատեքստում պետք է երաշխավորվի **առնվազն վարչարարության օրինականության ստուգման հնարավորությունը**, ընդգծելով, որ այն դեպքերում, երբ բողոքը քննող մարմնի իրավասությունը սահմանափակվում է վարչարարության օրինականության ստուգմամբ, վերջինս իրավունք չունի քննության առարկա դարձնել վարչական մարմնի **քաղաքականությանն առնչվող** հարցեր, այսինքն՝ այնպիսի հարցեր, որոնց որոշումը վարչական մարմնի իրավասության, հայեցողության տիրույթում է: Մա, սակայն, չի բացառում դատարանի՝ հայեցողության իրացման իրավաչափությունն ու հիմնավորվածությունն ստուգելու, վարչարարության՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքների համատեքստում հիմնավորվածությունն ստուգելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ հայեցողական լիազորությունների իրացման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք տվյալ վարչական մարմնի տվյալ գործելակերպն օրենքով վերջինիս վերապահված լիազորությունների շրջանակում է¹⁶, ոչ թե այն, թե իր գործառության ինքնուրույնության ու գործադիր իշխանության էությունից բխող հայեցողական լիազորությունների շրջանակում գործադիր իշխանությունը կոնկրետ ինչպես պետք է գործեր:

Մյուս կողմից՝ ՄԻԵԴ-ն իր վճիռներում ընդգծել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատական պաշտպանության իրավունքը երաշխավորված է միայն այն դեպքում, երբ անձի համար երաշխավորված է «ամբողջական յուրիսդիկցա»

¹⁶ See u Committee of Ministers, “Recommendation CM/Rec(2007)7 on Good Administration” (ընդունվել է 2007 թվականի հուլիսի 11-ին) 5th Recital, 37-39-րդ պարբերություններ, հասանելի է՝ <https://rm.coe.int/1680700263>, 01.02.2026թ. դրությամբ:

ունեցող տրիբունալի կողմից իր գործի քննության իրավունքը¹⁷: Սա իր հերթին ենթադրում է, որ դատարանը պետք է իրավասու լինի քննարկել իր կողմից քննվող վեճին առնչվող թե՛ փաստին, թե՛ իրավունքին վերաբերող հարցեր¹⁸: Մյուս կողմից՝ հատկապես վարչական ակտերի վիճարկման գործերով, ՄԻԵԴ-ի արձանագրմամբ, իրավունքի որոշ ճյուղերում, ինչպիսին է, օրինակ, քաղաքաշինական պլանավորումը, դատարանն օբյեկտիվորեն պետք է ունենա փաստի հարցերի քննարկման առավել սահմանափակ գործիքակազմ՝ ունենալով, սակայն, վարչական մարմինների այն ակտերն անվավեր ճանաչելու հնարավորություն, որոնք դրանց հիմքում ընկած փաստական հանգամանքներին անհամապատասխան են կամ ոչ ողջամիտ: Սա ՄԻԵԴ-ի կողմից վարչական որոշումների վերանայման շրջանակին առաջադրվող ընդհանուր չափանիշներից է¹⁹:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքում առանձնացվել են «ամբողջական իրավասություն» ունեցող դատարանին բնութագրական չափանիշները²⁰: Որոշելու համար, թե արդյոք վարչարարության դեմ ներկայացված բողոքը քննող դատարանը բավարարում է քննարկվող պահանջին, և իրականացրե՞լ է արդյոք վարչարարության վերանայում՝ անհրաժեշտ աստիճանի խորությամբ՝ ամբողջական իրավասությամբ, ՄԻԵԴ-ը հիմք է ընդունում հետևյալ չափանիշները.

Բողոքարկվող որոշմամբ քննարկվող հարցի բնույթը. այն դեպքերում, երբ վարչարարության բողոքարկման հիմքում ընդհանուր, մասնագիտացված տեխնիկական գիտելիք ենթադրող առանձին ոլորտներին վերաբերող հարցեր չեն, դատարանը պետք է ունենա գործն առավել խորությամբ քննելու իրավասություն.

Այն դեպքերում, երբ դատարանի կողմից գործի քննությանը նախորդել է վարչական այնպիսի ընթացակարգ, որի շրջանակում կողմի համար ապահովվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում բավարար ընթացակարգային երաշխիքներ, դատարանը կարող է կիրառել վերանայման առավել մեղմ ստանդարտ²¹.

Դատարանը պետք է ունենա այնքան իրավասություն, որ կարողանա անդրադառնալ բողոքի բոլոր հիմքերին՝ ըստ էության, կետ առ կետ՝ առանց ժխտելու դրանցից որևէ մեկի քննարկումը, ինչպես նաև իրավասություն և պարտականություն՝ բողոքը ցանկացած հիմքով մերժելու դեպքում այդ մերժումը հիմնավորելու.

Այն դեպքերում, երբ անձը վարչարարությունը բողոքարկում է միայն իրավունքի

¹⁷ Sté u Beaumartin v. France, (Application no. 15287/89), European Court of Human Rights, Judgment of November 24, 1994, § 38:

¹⁸ Sté u -Terra Woningen B.V. v. the Netherlands (Application no. 20641/92), European Court of Human Rights, Judgment of December 17, 1996, § 52:

¹⁹ Sté u Bryan v. the United Kingdom (Application no. 19178/91), Judgement of November 22, 1995, §§ 44-47; Crompton v. the United Kingdom (Application no. 42509/05), Judgement of May 10, 2010, §§ 70-73:

²⁰ Sté u Sigma Radio Television Ltd v. Cyprus (Applications nos. 32181/04 and 35122/05), Judgment of October 21, 2011, §§ 151-157:

²¹ Sté u Bryan v. the United Kingdom (Application no. 19178/91), European Court of Human Rights, §§ 46-47:

հարցերով, չի կարող դատարանից պահանջել քննարկել փաստի հարցեր²².

Դատարանը պետք է իրավասություն ունենա գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ ինքնուրույն դատողություններ անել. նման փաստական հանգամանքների վերաբերյալ ինքնուրույն եզրակացություն անելուց դատարանի հրաժարվելը կարող է դիտարկվել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում²³:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ վարչարարության դեմ բողոքը քննող դատարանը քննարկվող չափանիշին չի բավարարում, օրինակ, այն դեպքում, երբ իրավասություն ունենալով քննել մասնագիտական միավորումների կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների իրավաչափության հարցը, չունի լիազորություն քննելու կիրառված սանկցիայի համաչափությունը թույլ տրված խախտումը²⁴: Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը քննարկվող չափանիշին չբավարարող է համարել Ֆրանսիայի Պետական խորհրդի կողմից իր նախադեպային իրավունքի համատեքստում գործը քննելիս նախարարի կարծիքով պարտադիր առաջնորդվելը՝ առանց հնարավորություն ունենալու կասկածի տակ դնելու այդ կարծիքը կամ այն կողմերի քննարկմանը հանձնելու: Այս համատեքստում նախարարի ներգրավումը գործընթացին վճռորոշ նշանակություն ուներ ու, ըստ էության, կանխատեսում էր բողոքարկման գործընթացում կայացվելիք որոշման բովանդակությունը²⁵:

Այսպիսով՝ ՄԻԵԴ-ի կողմից առանձնացված վերոնշյալ չափանիշների համադրված վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ վարչարարության բողոքարկման իրավունքը երաշխավորված կարող է լինել միայն այն դեպքում, երբ բողոքը քննող մարմինն իրավասու է իրականացնել ներկայացված բողոքի կամ հայցի բոլոր հիմքերի ամբողջական և պատշաճ քննություն, այդ թվում՝ վարչական ակտի կայացման հիմք հանդիսացած փաստական հիմքերի վիճարկման դեպքում ինքնուրույն պարզել այդ հիմքերի առկայության հարցը, պարզել, որպես ընդհանուր կանոն, վարչարարության իրականացման հիմք հանդիսացած՝ իրավասու մարմինների առանձին ակտերի կամ գործողությունների իրավաչափությունը, մյուս կողմից՝ վարչական մարմնի հայեցողական լիազորությունների վերաբերյալ գործեր քննելիս քննարկել հայեցողական առանձին լիազորության ընտրության իրավաչափության, այդ թվում՝ գործի փաստական հանգամանքներին համապատասխանության հարցերը: Սակայն ՄԻԵԴ դիրքորոշումների համատեքստում դատարանի քննության առարկա չպետք է դառնան գործադիր իշխանության բացառիկ լիազորությունը համարվող՝

²² Sté u Potocka and Others v. Poland (Application no. 33776/96), European Court of Human Rights, Judgment of March 27, 2002, § 57:

²³ Sté u Terra Woningen B.V. v. the Netherlands (Application no. 20641/92), European Court of Human Rights, Judgment of December 17, 1996, §§ 53-55:

²⁴ Sté u Zumtobel v. Austria (Application no. 12235/86), European Court of Human Rights, Judgment of September 21, 1993, §§ 29-30:

²⁵ Sté u Chevrol v. France (Application no. 49636/99), European Court of Human Rights, Judgment of May 13, 2003, §§ 81-82:

քաղաքականության հարցերը՝ այն ոլորտներում վարչական մարմինների կայացրած որոշումների հարցերը, որտեղ գործադիր իշխանությունն ինքը, իշխանությունների բաժանման սկզբունքին համահունչ, ազատ է որոշելու իր քաղաքականությունը, չպետք է վերապետական դատարանի կողմից քննության առարկա դառնան: Վերջին դեպքերն առավելապես վերաբերում են նորմատիվ վարչարարության վիճարկմանը, մինչդեռ վերոնշյալ ընդհանուր պահանջները վերաբերում են հավասարապես թե՛ նորմատիվ և թե՛ անհատական ազդեցություն ունեցող վարչարարության բողոքարկմանը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է առանձնացնել անհատական վարչական ակտերի, վարչական մարմինների գործողությունների կամ անգործության կամ անհատական ազդեցություն ունեցող վարչարարության բողոքարկման դեպքում բողոքարկման և վերանայման սահմանների որոշման ընդհանուր կանոնը: Մասնավորապես, **վարչարարության բողոքարկման իրավունքը գործնականում երաշխավորված և արդյունավետ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վարչական բողոքը քննող վարչական մարմինը և դատարանն օրենսդրությամբ և գործնականում օժտված են վարչարարության դեմ ներկայացված բողոքի (հայցի) բոլոր փաստական հիմքերի հիմնավորվածությունն ստուգելու իրական հնարավորությամբ, բողոքարկվող վարչարարության իրավաչափությունը, այդ թվում՝ օրենքի նորմերի ճիշտ մեկնաբանված լինելը, կիրառման ենթակա նորմերը կիրառված լինելը, կիրառված նորմերի՝ վարչարարության փաստական հանգամանքներին համապատասխանությունն ստուգելու իրական և արդյունավետ հնարավորությամբ, բողոքարկվող վարչարարության փաստական հիմքերի առկայությունն ստուգելու հնարավորությամբ, վարչարարության հիմք հանդիսացող՝ առանձին վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերի կամ գործողությունների իրավաչափությունն ստուգելու հնարավորությամբ, վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրացման հիմքով իրականացված վարչարարության իրավաչափության վերաբերյալ գործեր քննելիս՝ ընտրված հայեցողական լիազորության իրավաչափության (այդպիսի լիազորության առկայության) և իրացված լիազորության՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքներին համապատասխանության հարցը:**

Մեկ այլ կողմից՝ մենք համակարծիք ենք հայրենական գիտական աղբյուրներում արտահայտված այն տեսակետին, որ վարչական հայեցողության իրականացման համաչափությունը գնահատելիս վարչական դատարանը չպետք է վարչական մարմնի որոշումներն ու գնահատումները փոխարինի սեփական որոշումներով և գնահատումներով. վարչական դատարանը պարտավոր է հարգանք դրսևորել վարչական մարմնի կողմից համաչափության տարբեր պահանջների գնահատումների նկատմամբ, և որ վարչարարության համաչափության վերանայումն իրականացնելիս դատարանը պարտավոր է հարգանք ցուցաբերել վարչական մարմնի գնահատումների նկատմամբ միայն հարգանքը պայմանավորող հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում՝ ինչպես իրավագիտորեն ընդգծել է Ք. Ալեքսանյանը, եթե դատարանը որոշում է հարգանք դրսևորել վարչական մարմնի գնահատումների և

ընտրության նկատմամբ, նա պետք է հիմնավորի, թե ինչ հիմքերով են պայմանվորված հարգանքի դրսևորումն ու դատական վերանայման սահմանափակումը²⁶:

Ինչ վերաբերում է նորմատիվ վարչարարության բողոքարկմանը, ապա այս համատեքստում, կարծում ենք, վարչարարության նկատմամբ օբյեկտիվ վերահսկողություն - սուբյեկտիվ իրավունքների պաշտպանություն հարաբերակցության, մյուս կողմից՝ վարչարարության բողոքարկման իրավունք-իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք հարաբերակցության հարցերն առավել բազմաշերտ ու խոր դրսևորումներ ունեն: Նշված հարցերն առավել արդիական են նաև Հայաստանի Հանրապետությունում, երբ թե՛ օրենսդրական և թե՛ գործնական մակարդակում հաճախ հանդիպում են նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ դրույթներ ու փորձեր, որոնց հիմքում, օրինակ, ոչ այնքան վարչարարության համապատասխանությունն է օրենսդրական համապատասխան կարգավորումներին կամ դրա արդյունքում անձի կոնկրետ իրավունքի խախտումը, այլ վարչական մարմնի ընտրած քաղաքականության հիմնավորվածությունը կամ նպատակահարմարությունը:

Ասվածի վառ օրինակ է, մասնավորապես, «Հանրության գերակա շահերի պաշտպանության նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որի համաձայն՝ ի թիվս այլնի, որպես հանրության գերակա շահի որոշման սկզբունք, նախատեսվում է հանրության գերակա շահի **առկայության փաստը** դատական կարգով վիճարկվելու հնարավորության առկայությունը: ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Ակնհայտ է, որ Սահմանադրության քննարկվող նորմի համատեքստում օտարվող սեփականության սեփականատիրոջ կամ այլ շահագրգիռ անձանց համար պետք է հնարավոր լինի վիճարկել գերակա շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշումը՝ օրենքով սահմանված բացառիկ դեպքերի առկայությունը հիմնավորված լինելու հիմքով, օրինակ՝ նշված որոշումը վիճարկել՝ օրենքով նախատեսված՝ հանրության գերակա շահի նպատակներից որևէ մեկի չհիմնավորվածության հիմքով: Սակայն նշված նորմը, ըստ էության, ամրագրում է նաև շահագրգիռ անձի իրավունքը՝ դատարանում կառավարության քննարկվող որոշումը վիճարկել, օրինակ, այն հիմքով, որ օրինակ, հիվանդանոցի կառուցումը չի կարող համարվել հանրության գերակա շահ:

Այսպիսով, այս համատեքստում վարչարարության բողոքարկման իրավունքի և գործադիր իշխանության լիազորությունների իրականացմանը դատական իշխանության միջամտության կարևորագույն սահմանը վարչարարության օրինականության, հիմնավորվածության, ընդունման ընթացակարգի պահպանվածության, ենթաօրենսդրական

²⁶ Տե՛ս Բ. Ալեքսանյան, Վարչարարության համաչափության գնահատման արդի հիմնահարցերը վարչական բողոքարկման և դատական վերանայման համատեքստում, Պետություն և իրավունք N 2 (93) 2022, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://u.to/mKF0Ig>:

նորմատիվ իրավական ակտի՝ օրենքին համապատասխան լինելու ստուգումն է՝ առանց քննարկելու այն հարցը, թե իրավաչափ, հիմնավորված ու արդարացի՝ է արդյոք գործադիր իշխանության կողմից կոնկրետ այս և ոչ թե այլ քաղաքականությունն ընտրելը (օրինակ՝ սոցիալական աջակցություն տրամադրելը բնակչության ոչ թե ընտրված, այլ մեկ այլ խմբի): Միաժամանակ, բողոքարկման ինստիտուտի և դատական վերանայման մյուս սահմանագիծը գործադիր իշխանության կողմից ենթաօրենսդրական համապատասխան ակտն ընդունելիս օրենքով սահմանված ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորության շրջանակի պահպանումն է, ինչպիսի հարցի քննարկումը ոչ միայն միջամտություն չի կարող համարվել գործադիր իշխանության լիազորություններին, այլև օրինականության սկզբունքի կարևորագույն երաշխիք է, ինչպես նաև բողոքարկման իրավունքի՝ գործնականում արդյունավետ իրացման երաշխիք:

Հատկանշական է ի սկզբանե դատական վերանայման առավել լայն սահմաններ ճանաչող Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը: Մեծ Բրիտանիայում բյուջետային միջոցների բաշխման համատեքստում վարչարարության բողոքարկման համակարգի հիմքում ընկած կարևորագույն սկզբունքն է՝ դատարանը կարող է պահանջել բյուջեի բաշխման իրականացում պատշաճ հիմնավորմամբ, գործադիր իշխանության լիազորությունների շրջանակում, սակայն որևէ դեպքում չի կարող անվավեր ճանաչել համապատասխան ակտը և ինքն իրականացնել բյուջետային միջոցների վերաբաշխում²⁷: ԱՄՆ-ում չնայած դատարաններն իրավասու են ստուգել քննարկվող ոլորտներում վարչարարության պատճառաբանվածությունը, տարիներ շարունակ գործել է այն մոտեցումը, որ վերջիններս չեն կարող կասկածի տակ առնել և քննարկման առարկա դարձնել քաղաքական առաջնահերթությունների որոշման և ռեսուրսների բաշխման ոլորտում գործադիր իշխանության մասնագիտացվածությունն պահանջող հարցերը²⁸: Ամերիկյան դատարանները տարիներ շարունակ հավատարիմ են մնացել «վարչական պետության» ու գործադիր իշխանության մասնագիտացվածության հարգման սկզբունքներին, ինչը, սակայն, լիովին նոր բովանդակություն ստացավ 2024 թվականին, երբ Գերագույն դատարանն իր նոր որոշմամբ փոխեց մինչ այժմ կիրառվող ստանդարտը ու դատարաններին հնարավորություն տվեց որոշ դեպքերում կասկածի տակ առնել նաև «քաղաքականության ընտրությունները»²⁹: ԱՄՆ Գերագույն դատարանն իր այս որոշմամբ, ըստ էության, համաշխարհային մակարդակով նորմատիվ վարչարարության իրավաչափության ստուգման և դատական իշխանություն – գործադիր իշխանության բացարձակ լիազորության տիրույթում գտնվող հարց հարաբերակցության տեսանկյունից նոր չափանիշ ու սկզբունք է առաջադրում:

²⁷ Տե՛ս *U v Cambridge Health Authority, ex part B* [1995] 1 WLR 898 (CA):

²⁸ Տե՛ս *Johnson, M.* (2025). *An Introduction to Judicial Review of Federal Agency Action*. Congressional Research Service Report R44699, հասանելի է՝ <https://www.congress.gov/crs-product/R44699>, 01.02.2026թ. դրությամբ:

²⁹ Տե՛ս *Loper Bright Enterprises, et al. v. Raimondo, Secretary of Commerce, et al.*, No. 22-451, U.S. Supreme Court (2023), հասանելի է՝ https://www.supremecourt.gov/opinions/23pdf/22-451_7m58.pdf, 01.02.2026թ. դրությամբ:

Այսպիսով, չնայած նրան, որ ժողովրդավարական հասարակությունում վարչարարության բողոքարկման ինստիտուտն իր զարգացման ներկայիս մակարդակում անպայմանորեն ներառում է նաև նորմատիվ վարչարարության բողոքարկման սուբյեկտին առաջադրվող չափանիշներին բավարարող անձի կողմից վարչարարության բողոքարկման իրավունքը, նշված իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես նորմատիվ վարչարարության նկատմամբ ամբողջական և համապարփակ դատական վերահսկողության հնարավորություն: Նորմատիվ վարչարարության դատական վերանայումն իշխանությունների բաժանման սկզբունքի և գործադիր իշխանության գործառույթային ինքնուրույնության համատեքստում պետք է ունենա բացառապես օրենդորությամբ սահմանված շրջանակներում նորմատիվ վարչարարության օրինականության նկատմամբ հսկողության բովանդակություն: Տեղին է հիշատակել Ֆրանսիայի Պետական խորհրդի ձևավորած՝ վարչարարության նկատմամբ դատական վերահսկողության հստակ և խիստ սահմանը, որի համաձայն՝ դատավորը վերահսկում է օրինականությունը, ոչ թե կառավարման արվեստը³⁰:

Այս համատեքստում նորմատիվ վարչարարության նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի սահմանները պետք է հիմնված լինեն երեք հիմնական սկզբունքների վրա, որոնք պայմանականորեն կանվանենք վարչարարության վերահսկողության «դրական» սահմաններ.

Դատարանը կարող է քննարկել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա վիճարկվող դրույթի **օրինականությունը**,՝ դրա համապատասխանությունն առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին:

Դատարանը պետք է իրավասություն ունենա քննարկել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի **ընդունման ընթացակարգի պահպանվածությունը**, այդ թվում՝ հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, հիմնավորվածության և օրենքով սահմանված այլ պարտադիր ընթացակարգերի պահպանվածությունը:

Այն դեպքերում, երբ նորմատիվ իրավական ակտը կոնկրետ սուբյեկտի կողմից բողոքարկվելու հիմքում այդ սուբյեկտի իրավական շահագրգռվածությունն է, դատական վերահսկողությունն ընդարձակվում է և ներառում է նաև քննարկվող նորմով **անձի իրավունքներին անթույլատրելի, ոչ իրավաչափ միջամտության առկայության ստուգումը**:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգման մյուս, «բացասական» սահմանն այն է, որ դատարանները որևէ դեպքում չեն կարող ստուգել նորմատիվ իրավական ակտի արդարացիությունը, նպատակահարմարությունը, գործադիր

³⁰ Տե՛ս, օրինակ, Conseil d'État, *Gomel*, April 4, 1914, Rec. Lebon 308, հասանելի է՝ <https://www.conseil-etat.fr/fr/arianeweb/?q=gomel>, Conseil d'État, *Camino*, January 14, 1916, Rec. Lebon 39, հասանելի է՝ <https://www.conseil-etat.fr/>, Conseil d'État, Ass., *Dahan*, November 13, 2013, n°347704, հասանելի է՝ <https://www.conseil-etat.fr/fr/arianeweb/?q=347704>, հասանելի են 01.02.2026թ. դրությամբ:

իշխանության հայեցողության տիրույթում գտնվող քաղաքական որոշումների հիմնավորվածությունը, քննարկել այն հարցը, թե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իր լիազորությունն իրականացնելիս համապատասխան վարչական մարմինն այն պետք է իրացնէր ոչ թե ընտրված, այլ ուրիշ ձևով՝ ընտրելով այլ քաղաքականություն (օրինակ՝ սոցիալական աջակցություն տրամադրելով այլ խմբի): Այլ կերպ ասած՝ վարչարարության բողոքարկման ինստիտուտը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե գործադիր իշխանության իրավասության տիրույթում են:

Մյուս կողմից՝ չնայած դատարանները «քաղաքական իմաստությունը» քննարկելու լիազորություն չունեն՝ նորմատիվ վարչարարության դեմ բողոք քննող դատարանը որպես վարչարարության բողոքարկման ինստիտուտի համատեքստում «ամբողջական իրավազորություն» ունեցող դատարանի պահանջին կարող է բավարարել միայն այն դեպքում, երբ ունի ամբողջական, օրենսդրորեն երաշխավորված և գործնականում արդյունավետ գործիքակազմ՝ քննարկման առարկա դարձնելու այն հարցը, թե արդյո՞ք համապատասխան վարչական մարմինը գործել է իր լիազորությունների շրջանակում. դատարանին նման գործիքակազմով օժտելը իրավական օրինականության սկզբունքի երաշխավորման կարևորագույն բաղադրատարր է և դրա գործնականում իրացման կառուցակարգ:

Այսպիսով, սույն գիտական հոդվածի շրջանակում վերը շարադրված վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

Վարչարարության բողոքարկման իրավունքը չի կարող փոխկապակցվածության կամ կախվածության մեջ դրվել վարչարարության դրսևորման օրենսդրական դասակարգումներից և վարչարարության կոնկրետ «ձևական» արտահայտությունից: Բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկման օբյեկտը վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող և անձի իրավունքներին ու օրինական շահերին վերջինիս բողոքարկման իրավունքով օժտելու համար անհրաժեշտ չափով առնչություն ունեցող որևէ ակտ, գործողություն, անգործություն կամ վարչարարության (լայն առումով) իրականացման որևէ այլ ձև է, վարչարարության բողոքարկման իրավունքն առկա է, և այն չի կարող սահմանափակվել կամ բացառվել միայն այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկվող ակտը, փաստաթուղթը կամ գործողությունն օրենսդրությամբ նույնաբնույթ ակտին առաջադրվող ձևին չի համապատասխանում. անձի իրավունքների վրա վարչարարության ազդեցությունը պետք է որոշվի ոչ թե դրա արտահայտման ձևով, այլ բովանդակությամբ:

Վարչարարության բողոքարկման ինստիտուտը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե

գործադիր իշխանության իրավասության տիրույթում են: Դատարանները որևէ դեպքում չեն կարող ստուգել նորմատիվ իրավական ակտի արդարացիությունը, նպատակահարմարությունը, գործադիր իշխանության հայեցողության տիրույթում գտնվող քաղաքական որոշումների հիմնավորվածությունը. օրինականության սահմաններում կայացված, վարչական մարմինների սահմանադրական լիազորությունների տիրույթում գտնվող «քաղաքական նախընտրությունները» դատական վերահսկողության առարկա չեն կարող լինել:

**OBJECTS OF APPEAL AND LIMITS OF EXERCISING THE RIGHT
TO APPEAL AND REVIEWING
THE LEGALITY OF ADMINISTRATIVE ACTION**

GEGHAMYAN ELINA

Lecturer at the Chair of Constitutional Law,

Faculty of Law, Yerevan State University,

Head of the Legal Department,

“TOWER INTERNATIONAL CONSULTANTS” CJSC

Abstract. This article examines the scope, and limits of the right to challenge administrative action as a fundamental component of the right to good administration and effective judicial protection. Drawing on the jurisprudence of the European Court of Human Rights, the Court of Justice of the European Union, and comparative administrative law (Germany, France, the United Kingdom, the United States, and Canada), the article demonstrates that the scope of appealable administrative acts must be determined by their legal and factual impact on individual rights rather than by their formal classification.

Furthermore, the article explores the substantive dimension of the right to challenge administrative action, focusing on the permissible intensity of judicial review. It proposes a balanced model that ensures effective protection of subjective rights while respecting the separation of powers and administrative discretion. As a result, the author concludes that judicial review of administrative action by a court of full jurisdiction, while ensuring the necessary level of scrutiny of the lawfulness of administrative actions, must exclude the court's assessment of the substantiation of the policy chosen by the executive in matters involving political decisions and administrative discretion, namely, issues that fall, by their very nature, within the competence of the executive branch.

Keywords: appeal against administrative action, court of full jurisdiction, separation of powers, scope and intensity of judicial review, objects of administrative appeal.

ОБЪЕКТЫ ОБЖАЛОВАНИЯ, ПРЕДЕЛЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА ОБЖАЛОВАНИЕ И ПРОВЕРКИ ЗАКОННОСТИ АДМИНИСТРАТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

ГЕГАМЯН ЭЛИНА

*Преподаватель кафедры конституционного права
юридического факультета Ереванского государственного университета,
начальник юридического отдела
ЗАО «TOWER INTERNATIONAL CONSULTANTS»*

Аннотация. Статья посвящена исследованию содержания и пределов права на обжалование административной деятельности как неотъемлемого элемента права на надлежащее администрирование и эффективную судебную защиту. На основе анализа практики Европейского суда по правам человека, Суда Европейского союза и сравнительного административного права обосновывается вывод о том, что круг обжалуемых актов должен определяться не их формальной квалификацией, а фактическим и юридическим воздействием на права и законные интересы лица.

Отдельная часть статьи посвящена содержательным пределам судебного контроля за административной деятельностью. Предлагается модель судебного пересмотра, обеспечивающая защиту субъективных прав при одновременном соблюдении принципа разделения властей и уважении административного усмотрения. В результате автор приходит к выводу, что судебное обжалование административной деятельности судом с полной юрисдикцией, наряду с обеспечением необходимой степени проверки законности административных актов, должно исключать оценку судом обоснованности политики, избранной исполнительной властью, по вопросам, предполагающим политическое решение и административное усмотрение, то есть по вопросам, которые по своей природе относятся к компетенции исполнительной власти.

Ключевые слова: обжалование административной деятельности, суд полной юрисдикции, разделение властей, объем и степень (интенсивность) судебного контроля», объекты обжалования.

Օգտագործված գրականության ցանկ

1. ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, *Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում* (գիտագործնական հետազոտություն), Երևան, Հայրապետ, 2015, էջ 149, հասանելի է <http://www.old.yso.am/files/Book-Konst.pdf> (08.02.2026թ. դրությամբ):
2. Ալեքսանյան Ք., «Վարչարարության համաչափության գնահատման արդի հիմնահարցերը վարչական բողոքարկման և դատական վերանայման համատեքստում», *Պետություն և իրավունք*, N 2 (93), 2022, հասանելի է <https://artsakhlib.am/en/2024/11/27/> (08.02.2026թ. դրությամբ):
3. Գ. Բ. Դանիելյան, Վարչական արդարադատության հասկացության բնորոշման նախադրյալները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (112), Երևան 2004թ., էջ 7-20, էջ 5, հասանելի է http://www.old.yso.am/files/02G_Danielyan.pdf, (08.02.2026թ. դրությամբ):
4. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ՝ ՍԴՈ-1127 (10.12.2013), ՍԴՈ-1190 (10.02.2015), ՍԴՈ-1192 (03.03.2015), ՍԴՈ-1220 (16.06.2015), ՍԴՈ-1222 (26.06.2015), ՍԴՈ-1257 (10.03.2016):
5. Կարինե Ջլալյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործով Վճռաբեկ դատարանի 08.05.2014թ. թիվ ՎԴ/6403/05/12, վարչական գործով որոշումը:
6. Beaumartin v. France, Application no. 15287/89, European Court of Human Rights, Judgment of 24 November 1994.
7. Bellet v. France, Application no. 23805/94, European Court of Human Rights, Judgment of 4 December 1995.
8. Bennett v. Spear, 520 U.S. 154 (1997).
9. Bryan v. the United Kingdom, Application no. 19178/91, European Court of Human Rights, Judgment of 22 November 1995.
10. Canada (Minister of Citizenship and Immigration) v. Vavilov, 2019 SCC 65.
11. Chevrol v. France, Application no. 49636/99, European Court of Human Rights, Judgment of 13 May 2003.
12. Conseil d'État, Dame Lamotte (1950) Rec. 110.
13. Conseil d'État, Gomel, 4 April 1914, Rec. Lebon 308.
14. Conseil d'État, Camino, 14 January 1916, Rec. Lebon 39.
15. Conseil d'État, Ass., Dahan, 13 November 2013, n°347704.
16. Crompton v. the United Kingdom, Application no. 42509/05, European Court of Human Rights, Judgment of 10 May 2010.
17. Committee of Ministers, 'Recommendation CM/Rec(2007)7 on Good Administration' (11 July 2007), 5th Recital, paras. 37–39, <https://rm.coe.int/1680700263> (01.02.2026թ. դրությամբ):
18. Dumitru Gheorghe v. Romania, Application no. 33883/06, European Court of Human Rights, Judgment of 12 April 2016.
19. Golder v. the United Kingdom, Application no. 4451/70, European Court of Human Rights, Judgment of 21 February 1975.
20. Johnson, M., An Introduction to Judicial Review of Federal Agency Action, Congressional Research Service Report R44699 (2025).
21. Loper Bright Enterprises v. Raimondo, No. 22-451, U.S. Supreme Court (2023).
22. Malhous v. the Czech Republic, Application no. 33071/96, European Court of Human Rights, Judgment of 12 July 2001.
23. Miragall Escolano and Others v. Spain, Applications nos. 38366/97 et al., European Court of Human Rights, Judgment of 25 April 2000.
24. Nunes Dias v. Portugal, Application no. 69829/01, European Court of Human Rights, Judgment of 10 April 2003.
25. Pérez de Rada Cavanilles v. Spain, Application no. 116/1997/900/1112, European Court of Human Rights, Judgment of 28 October 1998.
26. Potocka and Others v. Poland, Application no. 33776/96, European Court of Human Rights, Judgment of 27 March 2002.
27. Rivero, J., Waline, J., *Droit administratif*, 23rd edn, Dalloz, 2006.
28. RTBF v. Belgium, Application no. 50084/06, European Court of Human Rights, Judgment of 15 September 2011.
29. R v Cambridge Health Authority, ex parte B [1995] 1 WLR 898 (CA).
30. Sigma Radio Television Ltd v. Cyprus, Applications nos. 32181/04 and 35122/05, European Court of Human Rights, Judgment of 21 October 2011.
31. Sotiris and Nikos Koutras ATTEE v. Greece, Application no. 39442/98, European Court of Human Rights, Judgment of 16 February 2001.
32. Stelkens, U. et al. (eds), *German Administrative Law: Introduction*, German Law Archive (2018), <https://german-lawarchive.iuscomp.org/?p=353> (01.02.2026թ. դրությամբ):
33. Terra Woningen B.V. v. the Netherlands, Application no. 20641/92, European Court of Human Rights, Judgment of 17 December 1996.
34. Verwaltungsgerichtsordnung (VwGO) 1960, §§ 42–113.
35. Zumtobel v. Austria, Application no. 12235/86, European Court of Human Rights, Judgment of 21 September 1993.

Հոդվածը գրախոսվել է 19.01.2026
Ներկայացվել է տպագրության 22.01.2026

**ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԵՂԱՄՅԱՆ ԷԼԻՆԱ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական

իրավունքի ամբիոնի դասախոս,

«ԹԱՈՒԵՐ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՔՈՆՍՍԱԼԹԱՆՏՍ» ՓԲԸ

իրավաբանական ծառայության ղեկավար

DOI: 10.63925/18294847-2026.bl21-04

Ամփոփագիր. Հոդվածում քննարկվում են վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանության որոշ հիմնահարցեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն մեխանիզմներին, որոնք հնարավորություն են տալիս, մի կողմից, արդյունավետ վերահսկել և հասցեավորել վարչարարության ոչ իրավաչափության կրկնվող և լայնամասշտաբ դրսևորումները, մյուս կողմից՝ ապահովել իրավաբանորեն արժևորվող հանրային շահի վրա ազդեցություն ունեցող վարչարարության բողոքարկման հնարավորությունը նույնիսկ այն դեպքերում, երբ բացակայում է վարչարարության բողոքարկմամբ իրական շահագրգռվածություն ունեցող հասցեատերը կամ այլ սուբյեկտը: Հոդվածում ուսումնասիրվում է խմբային հայցի ինստիտուտը՝ եվրոպական, հյուսիսամերիկյան և ռուսական դոկտրինալ աղբյուրների և համեմատական դատական պրակտիկայի հետազոտմամբ: Հեղինակը եզրահանգում է, որ խմբային հայցը ոչ միայն դատավարական ինստիտուտի միջոց է, այլև վարչարարության ոչ իրավաչափության համակարգային դրսևորումների դեմ պայքարի արդյունավետ գործիք, որը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես վարչարարության բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող պահանջների մեղմացում, վարչարարության բողոքարկման սահմանների լայնացում կամ գործադիր իշխանության գործառույթային ինքնուրույնությունը պահանջող ոլորտներում դատական միջամտության թույլատրելիություն:

Հոդվածում քննարկվում է հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման ինստիտուտը, որի և մի կողմից՝ սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության, մյուս կողմից՝ *actio popularis* հայցատեսակի համադրված վերլուծության արդյունքում հեղինակն առանձնացնում է այս ինստիտուտների սկզբունքային տարբերությունները՝ միաժամանակ առաջադրելով հասարակական միավորումների կողմից հանրային շահի պաշտպանության համատեքստում վարչարարության բողոքարկման նոր՝ վարչարարության բնույթին և բողոքարկող սուբյեկտին առաջադրվող չափանիշները:

Բանալի բառեր. խմբային հայց, հանրային շահ, վարչարարություն, բողոքարկում, հասարակական միավորումներ, *actio popularis*:

Վարչարարության բողոքարկման համակարգում հանրային շահի պաշտպանությունը չպետք է խիստ սահմանափակ մեկնաբանություն ստանա և կապվի միայն հանրային շահի պաշտպանության նպատակով որոշակի սուբյեկտներին վարչական դատարան դիմելու իրավունք վերապահելու կամ, առավել ևս, միայն սոցիալապես խոցելի առանձին խմբերի իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի հետ: Վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությունը պետք է իրականացվի վարչական վարույթի և դատավարության բոլոր փուլերում՝ մի շարք գործիքակազմերի համատեղ կիրառման միջոցով, որոնց շրջանակում, ի թիվս այլնի, առանձնահատուկ նշանակություն ունեն վարչական դատավարությունում խմբային հայցի և հասարակական կազմակերպությունների՝ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու ինստիտուտները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խմբային հայցը և հանրային շահերի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկումը վարչական իրավունքում զարգացել են միևնույն հենասյունի վրա՝ նպատակ ունենալով վարչարարության բողոքարկումն ապահովել այնպիսի հարաբերություններում, որոնցում վարչարարությունը, իր ունեցած ազդեցության բնույթից ելնելով, դուրս է ավանդական՝ վարչական մարմին-վարչարարության հասցեատեր հարաբերությունների համակարգից: Այս երկու ինստիտուտները, առերևույթ միտված լինելով նաև առաջնահերթ վարութային խնայողության ապահովմանը, առաջնահերթ նպատակ են հետապնդում ուղղել վարչարարության համակարգում ոչ իրավաչափ գործելաճի առավել լուրջ ու համակարգային դրսևորումները: Պատահական չէ, որ այս ինստիտուտները, թեև որոշակիորեն տարբերվող դրսևորումներով ու բովանդակությամբ, բայց այժմ լայնորեն ճանաչվում են թե՛ եվրոպական, թե՛ հյուսիսամերիկյան և թե՛ ռուսական դոկտրինալ աղբյուրներում¹:

Խմբային հայցի ինստիտուտի նպատակը նույնանման փաստական և իրավական հանգամանքներ ունեցող հայցերի միավորումն ու քննությունն է մեկ գործում՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով ապահովել դատաքննության խնայողություն, միատեսակ փաստական և իրավական հանգամանքների առնչությամբ դրսևորել միատեսակ մոտեցում և նույն փաստական և իրավական դրությունն ունեցող անձանց համար ապահովել իրենց իրավունքների համատեղ պաշտպանության հնարավորությունը: Խմբային հայցի ներկայացումը նաև ազդակ ու ցուցիչ է առ այն, որ դրա հիմքում ընկած վարչարարության ոչ իրավաչափ իրականացումը կա՛մ համակարգային բնույթ է կրում, կա՛մ առնվազն վարչական մարմինը բազմաթիվ դեպքերում նույն հիմքերով ենթադրյալ ոչ իրավաչափ վարչարարություն է իրականացրել: Այս համատեքստում հանրային շահի պաշտպանության ապահովման համար կարևոր է այն հարցի պատասխանը, թե հնարավո՞ր է արդյոք նույնանման իրավիճակում գտնվող

¹ St' u Sunstein C., *Why Groups Matter in Administrative Law* // Journal of Legal Studies, Vol.39, էջ 431

այլ անձանց անունից դատարան դիմելը կամ առանձին անհատների կողմից միննույն հայցի շրջանակում իրենց իրավունքների նույնաբնույթ խախտման բարձրաձայնման հնարավորություն ունենալը: Ասվածը կարևորվում է նաև նրանով, որ օրենսդրական կարգավորումները, որոնք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պահանջում են առանձին գործի հարուցում, ոչ միայն վատնում են սոցիալական ներուժը, այլև թուլացնում են հայցի հիմքերը², քանի որ միայն մեկ գործով ոչ իրավաչափ վարչարարությունը և կոնկրետ հիմքով դրա համակարգային դրսևորումը միմյանցից էականորեն տարբերվող նշանակություն ու ազդեցություն ունեն: Հենց այս հանգամանքով պայմանավորված՝ մի շարք երկրներում, հատկապես Լատինական Ամերիկայի երկրներում, սոցիալական արդարության ապահովման նպատակով ներդրվել և զարգանում է խմբային հայցի ինստիտուտը:

Խմբային հայցը կարելի է բնորոշել որպես իրավաբանական գործիք, որը երաշխավորում է երկու կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ նրանց բոլորի անունից հանդես գալու իրավասություն ունեցող կազմակերպության կողմից պատասխանողի ոչ իրավաչափ վարքագիծը դադարեցնելու կամ իրավունքների մասսայական խախտման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու նպատակով նախաձեռնվող դատական գործընթաց³:

Խմբային հայցերը դատավարության մեկ կամ մի քանի տեսակներում ճանաչել ու ամրագրել են, օրինակ, Բելգիան, Բուլղարիան, Դանիան, Անգլիան, Ֆրանսիան, Ֆինլանդիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Շվեդիան, Լեհաստանը, Լիտվան, Իտալիան, ԱՄՆ-ն, Կանադան և այլ երկրներ: Պատահական չէ, որ մի շարք աղբյուրներում խմբային հայցի ինստիտուտը բնորոշվում է որպես «իրավաբանական տրանսպլանտ»⁴. Նշված հասկացությունը կիրառվում է իրավաբանական այնպիսի ինստիտուտներ, կանոններ կամ պրակտիկաներ բնորոշելու համար, որոնք, մի երկրում ծագելով, արագ տարածվում են այլ երկրներում⁵:

Չնայած այն հանգամանքին, որ խմբային հայցերը, ծագելով ԱՄՆ-ում, արագ տարածվել են ողջ աշխարհով, և ներկայումս եվրոպական երկրների մեծամասնությունը ևս տարբեր դատավարություններում ճանաչում է խմբային հայցի ինստիտուտը, խմբային հայցի՝ այսպիսի լայն տարածումը միասնական պատճառ և հիմնավորում չունի: Այնուամենայնիվ, խմբային հայցերի ներկայացման հիմքում ընկած ամենակարևոր պատճառներից մեկն իրավունքների մասսայական խախտումների աճն

² St' u Scott, C. and Macklem P., Constitutional Ropes of Sand or Justiciable Guarantees - Social Rights in a New South African Constitution // University of Pennsylvania Law Review, Vol. 141(1), 1992, 1-148, էջ 141

³ St' u Commission Recommendation of June 11, 2013, on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the member states concerning violations of rights granted under Union Law (2013/396/EU), հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013H0396_08.02.2026թ. դրությամբ

⁴ St' u Watson A., Legal Transplants: An Approach to Comparative Law, University Press of Virginia, 1974

⁵ St' u Graziadei M., Comparative Law as the Study of Legal Transplants, in Mathias Reimann & Reinhard Zimmermann (eds.), The Oxford Handbook of Comparative Law, Oxford University Press, 2006

է և այդպիսի խախտումների դեպքում դատարաններում միատեսակ մեծաքանակ հայցերի ներկայացումը կանխելը⁶:

Եվրոպական Միության իրավունքում վարչական իրավունքի համակարգում իրավունքի պաշտպանության խմբային միջոցները կիրառվում են հատկապես սպառողների իրավունքների պաշտպանության և խտրականության դեմ պայքարի ոլորտներում, քանի որ այս ոլորտներում իրականացվող վարչարարությունն օբյեկտիվորեն այնպիսին է, որ ազդում է հանրության լայն շրջանակի վրա⁷: Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին հռչակագրում իրավունքի պաշտպանության խմբային միջոցներն ուղղակի ամրագրում չունեն, ԵՄ Արդարադատության դատարանը շարունակաբար հաստատել է այն դիրքորոշումը, որ նշված հռչակագրի 47-րդ հոդվածի համատեքստում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նաև վարչարարության բողոքարկման՝ վարչարարության համակարգային վերանայումը երաշխավորող գործիքակազմերի առկայություն: Եվրոպական գիտական աղբյուրներում շարունակաբար ընդգծվում է «հանրային» օրինականության երաշխավորման աճող անհրաժեշտությունը՝ հատկապես շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում⁸: Իտալական ու ֆրանսիական աղբյուրներում ընդգծվում է, որ իրավունքի պաշտպանության խմբային միջոցները, այդ թվում՝ խմբային հայցը, կոչված են լրացնելու բողոքարկման այլ թույլ կամ քաղաքական նկատառումներից ելնելով ոչ արդյունավետ համակարգին՝ հատկապես վարչարարության ձգձգումների և վարչական մարմինների անգործության լայն դրևստորումների դեպքում⁹:

Ռուսական գրականությունում ևս աստիճանաբար ընդգծվում է խմբային վարչական հայցերի ինստիտուտի ներդրման հնարավորությունը: Ստարիլովը և Կովալյովան նշում են, որ խմբային հայցի ինստիտուտի ներդրումն անհրաժեշտ է այնպիսի ոլորտներում, որտեղ իրավունքի պաշտպանության անհատական միջոցները չեն կարող արդյունավետ լինել բյուրոկրատական հայեցողության դեմ պայքարի համար, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական բարեկեցության, հանրային ծառայության, հողօգտագործման ոլորտները¹⁰:

Այսպիսով՝ խմբային հայցի ինստիտուտը պարզապես մի քանի անձի հայցերը մեկ հայցում միավորելուն ուղղված գործիք չէ. խմբային հայցի ինստիտուտը վերախնայաբար վերաբերում է վարչարարության իրավաչափության դատական վերահսկողությունը՝ հնարավորություն տալով վարչարարության կոնկրետ հասցեատեր-վարչական մարմին

⁶ St' u Hensler, D. R. The Global Landscape of Collective Litigation. *Class Actions in Context*, 3–20. <https://doi.org/10.4337/9781783470440.00008>, էջ 2, հասանելի է՝ <https://u.to/5aFOIg>, 08.02.2026թ. դրությամբ

⁷ St' u European Commission, *Collective Redress in the EU* (COM(2013) 401 final)

⁸ St' u Case C-583/11 P *Inuit Tapiriit Kanatami v Parliament and Council* EU:C:2013:625

⁹ St' u Sabino Cassese, *Il diritto amministrativo europeo* (Giuffrè 2014) 312–320

¹⁰ St' u, օրինակ, Ю Н Стариков, *Административная юстиция* (Воронежский гос. университет 1999) 245–260, Е А Ковалёва, *Публичные иски в административном судопроизводстве* (2020) 3 Вопросы правосудия.

հարաբերությունների շրջանակից գատ հասցեագրել վարչարարության ոչ իրավաչափության առավել լայնամասշտաբ դրսևորումները: Խմբային հայցը դատարանին հնարավորություն է տալիս հասցեագրել ոչ միայն առանձին գործով ոչ իրավաչափ վարչարարությունը, այլև վարչական մարմինների այնպիսի ոչ իրավաչափ գործունեությունը, որը վերածվել է վարքագծային մոդելի: Խմբային հայցի ինստիտուտի այս մեկնաբանությունը, ծագած լինելով ԱՄՆ-ում, այժմ, ըստ էության, կիրառվում է նաև Ֆրանսիայում ու Գերմանիայում՝ «համակարգային ոչ իրավաչափության» դեմ պայքարի համատեքստում:

Հայաստանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ բազմաթիվ են դեպքերը, երբ վարչական մարմնի՝ նմանատիպ փաստական հանգամանքների վերաբերյալ կայացված վարչական ակտերի հիմքում նաև նույն իրավական հիմքերն են, և այդ վարչական ակտերը վիճարկվում, անվավեր են ճանաչվում նույնական իրավական հիմքերով: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի ամրագրում խմբային հայցի ինստիտուտը՝ այդպիսով հնարավորություն չտալով վարչարարության ոչ իրավաչափության համակարգային դեպքերում խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնել մեկ վարույթի շրջանակում:

Մինչդեռ, խմբային հայցի ներդրումը վարչական դատավարությունում հնարավորություն կտա ոչ միայն մեկ վարույթում միավորել և քննել տասնյակ, եթե ոչ հարյուրավոր առանձին վարչական ակտերի իրավաչափության հարցը, այլև էականորեն կնպաստի նույնաբնույթ վարչական ակտերի հասցեատիրոջ կողմից իրենց իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն: Այսպես, Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական միության անդամ երկրներին ուղղված՝ իրավունքների խմբային պաշտպանության միջոցներ նախատեսելու վերաբերյալ հանձնարարականի շրջանակում ընդգծել է, որ իրավունքների խմբային պաշտպանությանը միտված միջոցները՝ միատեսակ հայցերը միավորելը կամ այդպիսի հայցերը խմբային կերպով ներկայացնելը, էականորեն նպաստում են նաև արդարադատության մատչելիության ապահովմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատական գործով դատարան դիմելու ծախսերն ու պահանջվող ջանքերն էականորեն ավելի շատ են, քան խմբային հայցի համար պահանջվողները¹¹:

Վարչարարություն իրականացնելիս անձանց իրավունքների և օրինական շահերի համակարգային բնույթ կրող խախտումները ոչ միայն հանգեցնում են անձանց՝ իրենց իրավունքների պաշտպանվածության առնչությամբ վստահության խնդիրների, այլև ուղղակի ազդեցություն են ունենում սեփական իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու շարժառիթի վրա: Դատական գործերի երկար տևողությունը, դատավարական բարդ ընթացակարգերը հաճախ հանգեցնում են նրան, որ իրավական

¹¹ St' u Commission Recommendation of June 11, 2013, on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the member states concerning violations of rights granted under Union Law (2013/396/EU), հասանելի է՝ <https://u.to/56F0Ig>, 08.02.2026թ. դրությամբ

հատուկ գիտելիքներ չունեցող քաղաքացին, վստահ լինելով, որ վարչարարության հետևանքով իր իրավունքները խախտվել են, այնուամենայնիվ, նախընտրում է չդիմել դատարան: Մինչդեռ, ակնհայտ է, որ նման իրավիճակում իրավական արժևորման ենթակա առանձին հանրային շահեր են նաև դատարանի նկատմամբ վստահությունն ու ընդհանուր հասարակության համար իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովումը: Խմբային հայցի ինստիտուտն այս համատեքստում ուղղակի հնարավորություն է՝ զգալի քանակ կրող նույնանման փաստական ու իրավական հիմքերով հայցերի միավորման և, օրինակ, խմբային հայցի բավարարման արդյունքում մեկ գործի շրջանակում ունենալ վարչական մարմնի՝ տվյալ ոլորտում իրականացվող քաղաքականության վրա էական ազդեցություն: Ուստի ակնհայտ է, որ խմբային հայցը թե՛ գիտական և թե՛ գործնական մակարդակում կարող է վերածվել գործադիր իշխանության՝ հանրության շահին ոչ համապատասխան քաղաքականության դեմ պայքարի արդյունավետ գործիքակազմի¹²:

Հանրային շահի պաշտպանության համատեքստում խմբային հայցի ինստիտուտի մյուս կարևոր հատկանիշն այն է, որ խմբային հայցի դեպքում որպես դատարան դիմող սուբյեկտ հանդես են գալիս վարչարարությունից տուժող, այսինքն՝ մասնավոր շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման սուբյեկտ համարվող անձինք: Այս տարանջատումը շատ կարևոր է խմբային հայցի ներդրման դեպքում այն համարժեք իրավական գործիքակազմով ապահովելու տեսանկյունից: Խմբային հայցի ներկայացումը չի կարող մեկնաբանվել պարզապես որպես հասարակության մի խումբ անդամների՝ իրենց հուզող հարցերի բարձրաձայնման հնարավորություն. խմբային հայցը պարզապես գործիքակազմ է՝ վարչական դատավարության կարգով քննության ենթակա և համապատասխան պահանջներին բավարարող հայցատեսակները մեկ վարույթում միավորելու, ուստի խմբային հայցի դեպքում պարտադիր է, որ դրա շրջանակում որպես հայցվոր հանդես եկող յուրաքանչյուր անձ բավարարի դատարան դիմելու իրավունքի համար առաջադրվող պահանջներին, այլ կերպ ասած՝ հանդես գա որպես իրավական շահագրգռվածություն ունեցող անձ:

Ի տարբերություն խմբային հայցի, որը մինչ հանրային շահի պաշտպանությանը միտված լինելը նախ խմբային հայցով հայցվորներից յուրաքանչյուրի իրավունքների պաշտպանության ապահովմանն ուղղված գործիք է, այլ է իրավիճակը առանձին սուբյեկտների կողմից հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու այն դեպքերում, երբ վերջիններս չունեն վիճարկվող վարչարարության առնչությամբ անհատական իրավական շահագրգռվածություն: Առանձին անհատի՝ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու հնարավորությունը, առանց իրական շահագրգռվածության առկայության, ներկայումս գրեթե չի հանդիպում ուսումնասիրված

¹² Ընդ որում՝ հատկանշական է, որ, ի տարբերություն վարչական դատավարության, որտեղ ներպետական օրենսդրությունը դեռևս չի ամրագրել խմբային հայցի ինստիտուտը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում ամրագրվել է խմբային հայցի ինստիտուտը:

երկրների իրավական համակարգերում: Նման հնարավորությունը, ըստ էության, կհանգեցնէր *actio popularis* հայցատեսակի ամրագրման, ինչը, սակայն, վարչական դատավարության ժամանակակից համակարգերում իրավունքների պաշտպանության խրախուսելի գործիքակազմ չի համարվում՝ ընդհուպ մեկնաբանվելով որպես իրավական որոշակիության, իրավական կայունության տեսանկյունից խիստ խնդրահարույց: Այս համատեքստում առանձին անհատի կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելն անհատական իրական շահագրգռվածության բացակայության դեպքում համարում ենք անընդունելի:

Ուստի քննարկման ենթակա է այն հարցը, թե արդյո՞ք վարչարարությունը կարող է բողոքարկվել «տուժողի» սուբյեկտիվ իրավական շահագրգռվածությունից զատ որևէ այլ հիմքով, և եթե՝ այո, ապա ի՞նչ շրջանակի սուբյեկտների և ո՞ր դեպքերում պետք է վերապահվի հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման իրավունքը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման իրավունքը ճանաչող երկրներում այդպիսի իրավունքը սովորաբար վերապահվում է միայն առանձին հասարակական միավորումներին: Այս համատեքստում տարբեր մոդելներ կան, և հասարակական միավորումների՝ դատարան դիմելու վերաբերյալ մոտեցումները տարբերվում են՝ այն *actio popularis*¹³ համարելուց և դրա կիրառման հնարավորությունն ամբողջությամբ ժխտելուց մինչև Հնդկաստանի փորձի համատեքստում հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու լայն հնարավորությունն ընձեռելը: Այնուամենայնիվ, որոշ աղբյուրներում ընդգծվում է, որ նույնիսկ հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու այսպիսի լայն հնարավորությունն ընձեռող իրավական համակարգերում ներկայումս արդեն նկատվում է հակառակ միտումը՝ ապագայում հասարակական միավորումների՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումը միայն այն դեպքերով, երբ հանրային շահի պաշտպանության իրացումն այլ գործիքակազմով անհնարին է՝ հաշվի առնելով այն, որ առկա չէ անհատի մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող որևէ սուբյեկտ¹⁴:

Կարծում ենք, որ *հասարակական միավորման՝ իր անդամների որոշակի շրջանակի իրավունքների, այլ կերպ ասած՝ այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքը և հանրային շահի պաշտպանությամբ հասարակական միավոր-*

¹³ Հռոմեական իրավունքից ծագող այս հայցի էությունը, ըստ էության, հասարակության ցանկացած անդամի կողմից իրեն հուզող հարցով դատարան դիմելն է՝ անկախ տվյալ սուբյեկտի իրավունքները փաստացի խախտված լինելուց:

¹⁴ St' u, Mangold A. K., Rainer W. (2015). Das europäisierte deutsche Rechtsschutzkonzept. Die Verwaltung. 48. 1-28. 10.3790/verw.48.1.1, էջ 18, հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/277620698_Das_europaisierte_deutsche_Rechtsschutzkonzept, 08.02.2026թ. դրությամբ

ման կողմից վարչական դատարան դիմելը միմյանցից հիմնովին տարբերվող ինստիտուտներ են: Հասարակական կազմակերպության՝ իր անդամների իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու հիմքում հանրության՝ սույն աշխատանքի շրջանակում որպես վարչարարության բողոքարկման հիմք դիտարկվող շահ կարող է առհասարակ առկա չլինել, և բողոքարկման արդյունքում կայացվող որոշումն ազդեցություն կունենա միայն վարչարարության կոնկրետ, անհատականացված հասցեատերերի վրա: Մինչդեռ՝ հանրության շահի պաշտպանությամբ բողոքարկման դեպքում, անկախ վարչարարության կոնկրետ հասցեատերերի առկայությունից, վարչարարությունն ինքնին, հետևաբար նաև՝ դրա բողոքարկումը, պետք է ուղղակիորեն ազդի հանրության կոնկրետ շահի վրա:

Վերոգրյալի ակնհայտ դրսևորումն է «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայի հիման վրա հասարակական միավորումներին տրվող՝ դատարան դիմելու իրավունքը, որի հիմքում, ըստ ի.գ.դ. պրոֆեսոր Աիդա Իսկոյանի, «օբյեկտիվ իրավական շահ»-ն է, ընդ որում՝ այնպիսի շահը, որն ունի հանրային կարևորություն, ծագում է հանրային բնույթ ու նշանակություն ունեցող հարաբերություններից, և կոնկրետ հասարակական միավորումն ունի տվյալ հարցով «բավարար հետաքրքրվածություն»՝ հիմք ընդունելով վերջինիս կանոնադրական նպատակները¹⁵:

Այսպիսով՝ կարելի է առանձնացնել հասարակական միավորումների կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի տարբերը: Նախ՝ դատարան դիմելու իրավունքի հիմքում, մեր կարծիքով, պետք է լինի ոչ թե պարզապես հասարակական կազմակերպության անդամների շահի պաշտպանությունը, այլ վարչարարության բողոքարկման համատեքստում իրավաբանորեն արժևորվող հանրության շահի պաշտպանությունը, եթե հասարակական կազմակերպությունը հիմնավորում է, որ.

- 1) վիճարկվող վարչարարությամբ խախտվել է այդ համատեքստում հանրային շահը, և
- 2) բացակայում է վարչարարության անհատականացված, կոնկրետ հասցեատերը և/կամ անհատական մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտը, կամ
- 3) չնայած կոնկրետ հասցեատիրոջ առկայությանը՝ օբյեկտիվորեն անհնարին է վերջինիս կողմից հայց ներկայացնելը, կամ
- 4) վարչարարության բողոքարկման հիմքում այնպիսի հանրային շահի ենթադրյալ խախտումն է, որ այդպիսի շահը գերակայում է նաև վարչարարության հասցեատիրոջ վարչական ակտին վստահելու և վարչական ակտի բողոքարկման իրավունքներին:

¹⁵ Տե՛ս Aida Iskoyan, The Issue of Locus Standi of Non-Governmental Organizations in the Sphere of Environmental Protection (Constitutional-Legal Analysis), էջ 6, հասանելի է՝ https://www.old.yasu.am/files/Aida_Iskoyan-1415703186-.pdf, 08.02.2026թ. դրությամբ:

Հատկանշական է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29.3-րդ գլխում ամրագրված՝ հասարակական կազմակերպությունների կողմից դատարան հայց ներկայացնելու հիմքում, ըստ էության, ոչ թե հանրային շահի պաշտպանության չափանիշների նախատեսումն է, այլ միայն առանձին ոլորտներում անձանց իրավունքների պաշտպանությունը, կարծում ենք, այս համատեքստում հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու կոնցեպտուալ հիմքը վերանայման ենթակա է, և օրենսդրական հետագա կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանան հասարակական կազմակերպություններին միայն վերոնշյալ դեպքերում վարչական դատարան դիմելու իրավունք վերապահելու ճանապարհով: Մեր մոտեցումն այն է, որ հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելը պետք է հնարավոր լինի միայն խիստ բացառիկ դեպքերում, և յուրաքանչյուր դեպքում հայցը վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է մանրամասն գնահատականի արժանացնել հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու՝ վերոգրյալ հիմքերի առկայությունը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 29.3-րդ հոդվածով ներկայումս նախատեսված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով ներկայացվող հայցերին, ապա դրանք, կարծում ենք, իրենց էությամբ ոչ թե հանրային շահի, այլ առանձին՝ խոցելի կարգավիճակում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով ներկայացվող հայցեր են, ուստի խմբային հայցի ներդրման դեպքում այդ շահերի պաշտպանության առավել արդյունավետ գործիքակազմ կարող է լինել խմբային հայցի ինստիտուտը:

Ընդ որում՝ ինչպես խմբային հայցի դեպքում, այնպես էլ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու դեպքում այդպիսի իրավունքը չի կարող վերապահվել ցանկացած հասարակական կազմակերպության. հասարակական կազմակերպությունը դատարան դիմելու իրավունք պետք է ունենա միայն այն դեպքում, երբ իր կանոնադրական նպատակներից է տվյալ ոլորտում հանրային շահի և անձանց իրավունքների պաշտպանությունը, և առկա են բավարար ապացույցներն առ այն, որ տվյալ կազմակերպությունը փաստացի գործունեություն է ծավալել վարչարարության համապատասխան ոլորտում անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: Այդպիսի չափանիշների սահմանման հիմքում կարող են դրվել Օրենսգրքում ներկայումս շրջակա միջավայրի պաշտպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու իրավունք վերապահելու հիմքում դրված չափանիշները, որոնք, ըստ էության, հանգում են հետևյալին.

1) հայցադիմումը պետք է բխի կազմակերպության կանոնադրական նպատակներից ու խնդիրներից և ուղղված լինի կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների առումով կոլեկտիվ շահերի կամ համապատասխան ոլորտում հանրային շահի պաշտպանությանը.

2) կազմակերպությունը հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում պետք է գործունեություն ծավալած լինի այն ոլորտում, որին առնչվող վարչարարությունը վիճարկվում է:

Իրավաչափորեն կարող է ծագել այն հարցը, թե արդյո՞ք հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման մոդելը չի նույնանում անձի կողմից ողջ հասարակության շահի պաշտպանության նպատակով ներկայացվող հայցի (*action popularis*) հետ, և եթե՝ ոչ, ապա ի՞նչ սկզբունքային տարբերություններ ունեն այս երկու ինստիտուտները, և նպատակահարմար է արդյո՞ք նաև այդ ինստիտուտի ներդրումը վարչական դատավարությունում: Ինչպես վերն արդեն նշվել է, միջազգային պրակտիկայում վարչարարության բողոքարկման համատեքստում այս հայցատեսակի կիրառելիության մոտեցումները խիստ տարբերվում են՝ դրա կիրառման հնարավորությունն սկզբունքորեն ժխտելուց մինչև դրա լայն կիրառելիություն՝ հատկապես սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության համատեքստում:

Հռոմեական իրավունքից ծագող այս ինստիտուտի նպատակն առանձին անհատի կողմից ողջ հասարակության շահերի պաշտպանության համար հայց ներկայացնելն է: Հատկանշական է, որ ներկայումս այդ ինստիտուտը միայն խիստ բացառիկ դեպքերում է կիրառելի համարվում նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի կողմից, ըստ որի՝ այն դեպքերում, երբ բողոքարկման առանձին որևէ սուբյեկտ չի կարող անհատականացվել, *action popularis*-ը պետք է անթույլատրելի լինի: Միայն խիստ բացառիկ դեպքերում է, որ այն կարող է համարվել թույլատրելի: Մասնավորապես, երբ տուժող անձն անհետացել է կամ դիտավորյալ թաքցվում է, կամ անհնար է պարզել վերջինիս գտնվելու վայրը, վերջինս ձերբակալված է կամ հոգեբուժական հաստատությունում է¹⁶:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս *actio popularis* գանգատներն անընդունելի է համարում: Չնայած դրան՝ դատարանն իր որոշ գործերում ընդգծել է սովյալ գործի քննության շրջանակում իր դիրքորոշման կամ ներկայացված գանգատի վերափոխումը *actio popularis* բողոքի կամ իրավունքի պաշտպանության խմբային միջոցի: Մասնավորապես, մի գործով դատարանն ընդգծել է, որ իր կողմից արձանագրված խախտումներն ազդում են ոչ միայն դիմումատուի, այլև ևս 1850 նմանատիպ բողոքների վրա, որոնք ներկայացվել են ավելի քան 8000 հայցվորների և մի քանի հազար պոտենցիալ հայցվորների անունից¹⁷: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ ժխտելով անհատականացված շահ չունեցող անձանց կողմից այլ անձանց կամ ընդհանուր հասարակության շահերի պաշտպանությամբ ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու իրավունքը, ՄԻԵԴ-ն, այնուամենայնիվ, արձանագրել է, որ կոնկրետ գործով ներկայացված

¹⁶ *St' u Panayote Celal v. Greece* (communication no. 1235/2003); *Juliya Vasilyevna Telitsina v. Russian Federation* (communication no. 888/1999)

¹⁷ *St' u D.H. and Others v. the Czech Republic* գործով ՄԻԵԴ-ի վճիռը

գանգատը կարող է բացի դիմումատուից, ուղղակիորեն վերաբերել նաև անձանց լայն շրջանակի իրավունքներին:

Վենետիկի հանձնաժողովը, մյուս կողմից, բացասական դիրքորոշում ունի *actio popularis*-ի նկատմամբ, և նշել է, որ բողոքարկման իրավունք պետք է ունենան միայն այն անձինք, ում իրավունքների վրա ազդում է բողոքարկվող ակտը. հակառակ դեպքում՝ բողոքը քննող մարմինը չափազանց կծանրաբեռնվի այնպիսի անձանց իրավունքներով, որոնք բողոքարկում են ցանկացած ակտ, որի մասին լսել են¹⁸:

Մեր մոտեցմամբ՝ *actio popularis*-ն իր դասական՝ ցանկացած անձի կողմից հանրային շահի պաշտպանության վարչարարության բողոքարկման իմաստով ընդունելի չի կարող լինել, քանի որ այն կհանգեցնի ոչ միայն իրավունքի գերակայության, իրավական որոշակիության, վարչական ակտի հասցեատերերի իրավաչափ ակնկալիքների, իրավունքների և օրինական շահերի խախտման, այլև իրավական անվտանգության սպառնալիք դառնա և հանգեցնի դատարանների էական ծանրաբեռնմանն այնպիսի հայցերով, որոնք ներկայացնող սուբյեկտները չունեն իրավական որևէ շահագրգռվածություն: Ավելին, հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու՝ մեր կողմից առաջարկվող մոդելը պետք է ձևավորվի որպես ոչ թե *actio popularis*-ի դրսևորում, այլ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի իրացման այնպիսի դրսևորում, որի հիմքում ևս հասարակական համապատասխան կազմակերպության որոշակի, ակնհայտորեն հիմնավորված շահագրգռվածությունն է՝ վերջինիս կողմից դատարան դիմելու՝ մեր առանձնացրած չափանիշների առկայությամբ:

Հատկանշական է, որ առանձին դեպքում «ցանկացած անձի» վերապահված դատարան դիմելու իրավունքը նման մեկնաբանություն է ստացել Իտալիայի դատարանների կողմից, որոնք ևս «յուրաքանչյուր անձ կարող է բողոքարկել» արտահայտությունը մեկնաբանել են որպես «լեզվտիմ շահագրգռվածություն ունեցող յուրաքանչյուր անձ կարող է բողոքարկել»¹⁹:

Այսպիսով.

1. Վարչարարության բողոքարկման համատեքստում խմբային հայցի ինստիտուտը պետք է ունենա իր իրավական ամրագրումն ու ճանաչումը՝ որպես վարչարարության իրավաչափության համակարգային վերանայման, վարչարարության արդյունքում անձանց իրավունքների համակարգային խախտումների հակակշռմանն ուղղված գործիքակազմ, որի նպատակը վարչարարության ոչ իրավաչափության այնպիսի

¹⁸ St' u European Commission for Democracy Through Law (Venice Commission) Opinion on the Draft Constitutional Law on Introducing Amendments and Additions to the Constitutional Law on the Constitutional Chamber of the Supreme Court of the Kyrgyz Republic, Strasbourg, June 16, 2014, Opinion No. 771 / 2014, հասանելի է՝ <https://u.to/9qFOlg>, 08.02.2026թ. Դրությամբ:

¹⁹ St' u Eliantonio M, Backes CW, van Rhee CH, Spronken TNBM and Berlee A, Standing up for your Right(s) in Europe. A Comparative Study on Legal Standing (Locus Standi) before the EU and Member States' Courts, Intersentia, 2013, էջ 72

դրսևորումների շտկումն է, որոնք համակարգային, կրկնվող բնույթ ունեն կամ խոսում են ոչ թե առանձին դեպքում վարչարարության ոչ իրավաչափ դրսևորման, այլ տվյալ ոլորտում իրականացվող մեծածավալ ոչ իրաչափ քաղաքականության մասին:

2. Խմբային հայցի ինստիտուտի ներդրումը չի կարող մեկնաբանվել որպես վարչարարության բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող պահանջների թուլացում, վարչարարության բողոքարկման սահմանների լայնացում կամ գործադիր իշխանության գործառության ինքնուրույնությունը պահանջող ոլորտներում դատական միջամտության թուլատրելիություն. խմբային հայցով յուրաքանչյուր հայցվոր պետք է բավարարի վարչարարության բողոքարկման իրավունք ունենալու համար անհրաժեշտ՝ իրական շահագրգռվածության չափանիշին, և խմբային հայցի ինստիտուտն այս համատեքստում չի կարող մեկնաբանվել որպես նշված չափանիշներից ավելի ցածր աստիճանի շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից վարչարարության խմբային վիճարկման, վարչարարության նպատակահարմարության, վարչական մարմինների քաղաքական որոշումների տիրույթում գտնվող հարցերի վերանայման կամ գործադիր իշխանության իրացմանը դատարանի՝ այլ անթույլատրելի միջամտության հնարավորություն:

3. Առաջարկում ենք սահմանել հասարակական միավորումների կողմից հանրային շահի պաշտպանության համատեքստում վարչարարության բողոքարկման նոր՝ վարչարարության բնույթին և բողոքարկող սուբյեկտին առաջադրվող չափանիշներ: Որպես առաջին խումբ չափանիշներ՝ առաջարկվում է վարչարարության բողոքարկման հիմք դիտարկել ոչ թե պարզապես հասարակական կազմակերպության անդամների շահի պաշտպանությունը, այլ վիճարկվող վարչարարության ոլորտում իրավաբանորեն արժևորվող այնպիսի հանրային շահը, որի պաշտպանությամբ արդարացիորեն շահագրգռված է տվյալ հասարակական կազմակերպությունը: Մյուս կողմից՝ այդպիսի չափանիշ է առանձնացվում վարչարարության անհատականացված, կոնկրետ հասցեատիրոջ և/կամ անհատական մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտի բացակայությունը, չնայած կոնկրետ հասցեատիրոջ առկայությանը, վերջինիս կողմից հայց ներկայացնելն օբյեկտիվորեն անհնարին լինելը կամ վարչարարության բողոքարկման հիմքում այնպիսի հանրային շահի ենթադրյալ խախտումն է, որ այդպիսի շահը գերակայում է նաև վարչարարության հասցեատիրոջ՝ վարչական ակտին վստահելու և վարչական ակտի բողոքարկման իրավունքներին:

3. Հասարակական կազմակերպությունը հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման իրավունք պետք է ունենա միայն այն դեպքում, երբ հիմնավորում է «հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման իրական շահագրգռվածությունը», որը, ի տարբերություն մասնավոր շահի պաշտպանությամբ բողոքարկման շահագրգռվածության թեստի, որոշվում է ոչ թե վարչարարության և այն բողոքարկող սուբյեկտի միջև կապից, այլ բողոքարկվող սուբյեկտի հատկանիշներից ելնելով:

**KEY ISSUES OF CLASS ACTION AND ADMINISTRATIVE REVIEW
FOR THE PROTECTION OF PUBLIC INTEREST
IN ADMINISTRATIVE PROCEEDINGS**

GEGHAMYAN ELINA

Lecturer at the Chair of Constitutional Law,

Faculty of Law, Yerevan State University,

Head of the Legal Department,

“TOWER INTERNATIONAL CONSULTANTS” CJSC

Abstract. This article examines the protection of public interest within administrative review, emphasizing mechanisms that allow both the effective control of systemic and repeated administrative irregularities and the protection of legally recognized public interests, even where no parties with individual locus standi exist. Central to the analysis is the institution of the collective action (class action), explored through European, North American, and Russian doctrinal sources and comparative judicial practice. The author demonstrates that collective actions not only conserve judicial resources but also provide a robust tool against widespread administrative misconduct, without diluting the requirements for standing or expanding the limits of judicial intervention into executive discretion.

Additionally, the article investigates the role and the essence of the institute of challenging administrative actions (by civil society organizations) for the protection of public interest, distinguishing it from protection of vulnerable groups and the traditional *actio popularis*. By analyzing these mechanisms comparatively, the author identifies their conceptual differences and proposes a set of criteria for permitting civil society litigation.

Keywords: class action; public interest; administrative action; judicial review; civil society organizations; *actio popularis*.

КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ КОЛЛЕКТИВНОГО ИСКА И ОБЖАЛОВАНИЯ АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЙСТВИЙ ДЛЯ ЗАЩИТЫ ПУБЛИЧНОГО ИНТЕРЕСА В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

ГЕГАМЯН ЭЛИНА

Преподаватель кафедры конституционного права

юридического факультета

Ереванского государственного университета,

начальник юридического отдела

ЗАО «TOWER INTERNATIONAL CONSULTANTS»

Аннотация. В данной статье рассматривается защита общественных интересов в контексте обжалования административных действий, с акцентом на механизмы, позволяющие как эффективно контролировать системные и повторяющиеся административные нарушения, так и обеспечивать защиту юридически признанных общественных интересов, даже при отсутствии лиц с индивидуальным правом на обжалование. Центральное место в анализе занимает институт коллективного иска, изучаемый на основе европейских, североамериканских и российских доктринальных источников, сравнительной судебной практики. Автор показывает, что коллективные иски не только экономят судебные ресурсы, но и служат эффективным инструментом против широкомасштабных административных злоупотреблений, не ослабляя требования к праву на обращение и не расширяя пределы судебного вмешательства в компетенцию исполнительной власти. Кроме того, в статье исследуется роль и сущность института оспаривания (организациями гражданского общества) административных действий в целях защиты общественных интересов, в отличие от мер защиты, предоставляемых уязвимым группам, и традиционного *actio popularis*. Проводя сравнительный анализ этих механизмов, автор выявляет их концептуальные различия и предлагает набор критериев для разрешения судебных разбирательств в гражданском обществе.

Ключевые слова: коллективный иск; общественный интерес; административная деятельность; судебное обжалование; общественные объединения; *actio popularis*.

Օգտագործված գրականության ցանկ

1. Cassese S, European Administrative Law (transl of Il diritto amministrativo europeo, Milan Giuffrè 2014)
2. Commission Recommendation of June 11, 2013, on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the member states concerning violations of rights granted under Union Law (2013/396/EU), հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013H0396_08.02.2026թ. դրույթով:
3. D.H. and Others v Czech Republic (Application no. 57325/00) (ECtHR, 13 November 2007)
4. Eliantonio M, Backes C, Rhee CH, Spronken TNBM and Berlee A, Eliantonio M, Backes CW, van Rhee CH, Spronken TNBM and Berlee A, Standing up for your Right(s) in Europe. A Comparative Study on Legal Standing (Locus Standi) before the EU and Member States' Courts, Intersentia, 2013, 72.
5. European Commission, Collective Redress in the EU COM (2013) 401
6. European Commission for Democracy Through Law (Venice Commission), Opinion on the Draft Constitutional Law on Introducing Amendments and Additions to the Constitutional Law on the Constitutional Chamber of the Supreme Court of the Kyrgyz Republic (Opinion No 771/2014, June 16, 2014)
7. Graziadei M, Comparative Law as the Study of Legal Transplants in Mathias Reimann and Reinhard Zimmermann (eds), The Oxford Handbook of Comparative Law (OUP 2006).
8. Hensler DR, The Global Landscape of Collective Litigation in Class Actions in Context (Edward Elgar Publishing) 3–20 <https://doi.org/10.4337/9781783470440.00008>, հասանելի է 08.02.2026թ. դրույթով:
9. Inuit Tapiriit Kanatami v Parliament and Council Case C-583/11 P EU:C:2013:625 <https://curia.europa.eu/juris/liste.jsf?num=C-583/11>
10. Iskoyan A, The Issue of Locus Standi of Non-Governmental Organizations in the Sphere of Environmental Protection, Constitutional-Legal Analysis, Yerevan State University, 2014 https://www.old.ysu.am/files/Aida_Iskoyan-1415703186-.pdf, հասանելի է 08.02.2026թ. դրույթով:
11. Mangold A.K. and Wahl R., Das europäisierte deutsche Rechtsschutzkonzept' 48 Die Verwaltung 1, 2015
12. Panayote Celal v Greece Communication No 1235/2003 (UN Human Rights Committee)
13. Scott C., Macklem P., Constitutional Ropes of Sand or Justiciable Guarantees – Social Rights in a New South African Constitution //University of Pennsylvania Law Review, Vol.141(1), 1992
14. Sunstein C., Why Groups Matter in Administrative Law // Journal of Legal Studies, Vol.39, p. 431.
15. Telitsina v Russian Federation Communication No 888/1999 (UN Human Rights Committee)
16. Watson A., Legal Transplants: An Approach to Comparative Law, University Press of Virginia, 1974
17. Е А Ковалёва. Публичные иски в административном судопроизводстве. (2020) 3 Вопросы правосудия.
18. Ю Н Стариков. *Административная юстиция* (Воронежский гос. университет 1999) 245–260.

*Հոդվածը գրախոսվել է 26.01.2026
Ներկայացվել է տպագրության 30.01.2026*

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս,

Հայ-Ռուսական համալսարանի ավագ դասախոս

DOI: 10.63925/18294847-2026.bl21-05

Համառոտագիր: Հոդվածում հեղինակը ներկայացրել է ՀՀ-ում բուժաշխատողի պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական, տեսակները, ընդ որում՝ կարգապահական պատասխանատվությունը տարանջատել է բոլոր աշխատողներին և առանձին կատեգորիայի աշխատողներին վերաբերելի մասերով: Հեղինակը վերլուծել է բուժաշխատողի կարգապահական պատասխանատվության հարցերն աշխատանքային կարգապահության խախտման և մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հիմքերով՝ առաջարկներ ներկայացնելով ժամկետների և բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ:

Բանալի բառեր: բուժաշխատողի պատասխանատվություն, մասնագիտական էթիկա, աշխատանքային կարգապահություն, բողոքարկման ընթացակարգ:

Ա. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻ

Երբ բուժաշխատողն իրավունք է ստանում գործունեություն ծավալել, այդ պահից օրենքի առաջ նա դառնում է հաշվետու, պատասխանատու, պարտականություններով ծանրաբեռնված և իրավաբանորեն կաշկանդված¹:

Առողջապահության ոլորտում պատասխանատվության հարցը քննարկելիս **սուբյեկտների առումով** այն պետք է դիտարկել տարբեր հարթությամբ՝

1. **բուժաշխատողի** (օրինակ՝ **բժիշկ, բուժքույր** և այլն)՝ ֆիզիկական անձի պատասխանատվություն,

2. **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի** (օրինակ՝ **բժշկական կենտրոն** և այլն)՝ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի (հիմնականում՝ ՓԲԸ՝ փակ բաժնետիրական ընկերություն) պատասխանատվություն,

3. **պացիենտի** (բուժառու)՝ ֆիզիկական անձի պատասխանատվություն:

¹ St' u Lewis M., Tamparo C., Medical Law, Ethics, and Bioethics for the Health Professions, 6th ed., USA, F. A. Davis Company, 2007, p. 67

Բուժաշխատողի պատասխանատվությունը բուժաշխատողի դրսևորած ոչ իրավաչափ վարքագծի (գործողության կամ անգործության) պատասխանն է, անցանկալի հետևանքը:

Բ. ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԸ

Ըստ Ջ. Հերրինգի՝ եթե պացիենտի առողջությանը վնաս է պատճառվել, ապա անհրաժեշտ է դիտարկել սույն սուրբեկյունների պատասխանատվության հարցը. **բժշկի՝** որպես անհատի, **համապատասխան բժշկական բաժանմունքի՝** որպես իրավաբանական անձի կառուցվածքային մասի, **բժշկի գործատուի**²: Ավելին, գործատուի՝ որպես իրավաբանական անձի պատասխանատվության մասին կարևորում են նաև հեղինակներ Բրազիերը և Միոլան³:

ՀՀ-ում բուժաշխատողը կարող է ենթարկվել՝

1. **քրեական պատասխանատվության**, որի հիմքը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված **հանցանք**⁴ կատարելն է, օրինակ՝ բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը⁵, **բժշկական գաղտնիքը հրապարակելը**, հղիության ապօրինի արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը և այլն,

2. **վարչական պատասխանատվության**, որի հիմքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված **զանցանք**⁶ կատարելն է, օրինակ՝ մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հիմքով արգելված դեպքերում բուժաշխատողի կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելը⁷, առանց օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության՝ օտարերկրացի բուժաշխատողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը և այլն,

² St' u Herring J., Medical Law and Ethics, 6th ed., Oxford University Press, 2014, p. 133

³ St' u Brazier M. and Miola, J., "Bye-bye Bolam: a Medical Litigation Revolution", Medical Law Review 8, 2000, p. 85

⁴ ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանցանք** է համարվում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուրբեկյունի կողմից մեղավորությամբ կատարված արարքը:

⁵ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը**, եթե նրա անզգուշության հետևանքով հնարավոր չի եղել կանխել հիվանդության հետագա ընթացքը կամ բարդությունների առաջացումը, կամ եթե մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս, կամ առաջացել է սաղմի կամ պտղի վնասում, պատժվում է (...) ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:

⁶ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ **վարչական իրավախախտում (զանցանք)** է համարվում (...) հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգուշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

⁷ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հիմքով օրենքի համաձայն արգելված դեպքերում բուժաշխատողի կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելը** բուժաշխատողի համար առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 150-ապատիկից մինչև 200-ապատիկի չափով:

Այսինքն՝ 150*1000 ՀՀ դրամ, քանի որ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ (...) որպես հաշվարկային հիմք սահմանվում է 1000 դրամը:

3. գույքային (քաղաքացիական) պատասխանատվության, որի հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված վնասից բխող կարգավորումներն են, օրինակ՝ բուժաշխատողի կողմից պացիենտի առողջությանը պատճառված վնասը⁸, բուժաշխատողի սխալի պատճառով մահացած պացիենտի հուղարկավորության ծախսերը հատուցելը և այլն,

4. կարգապահական պատասխանատվության, որն էլ, իր հերթին, կարելի է դիտարկել 2 հարթությամբ.

ԲՈՂՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ՀՀ աշխատանքային օրենսգրքով, գործատուի ներքին իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքային կարգապահության խախտումը, օրինակ՝ աշխատողի կողմից ռզելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելը, անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալը,

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ (սույն դեպքում՝ բուժաշխատողների) ՆԿԱՏՄԱՄԲ: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության՝ 17.02.2022 թվականի թիվ 182-Ն որոշմամբ⁹ հաստատված, գործատուի ներքին իրավական ակտերով նախատեսված՝ բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտումը, օրինակ՝ բուժաշխատողը հարգալից չի վերաբերվել պացիենտի ընտանիքի անդամներին, օրինական ներկայացուցիչներին, կոնտակտային անձին, բուժաշխատողը չի դրսևորել համագործակցային վարքագիծ և փոխվստահություն այլ բուժաշխատողի նկատմամբ:

Գ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽԱՆՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Գ1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի հիմնական կարգավորումները

ՀՀ աշխատանքային օրենսգրքը կարգավորում է բուժաշխատողի՝ որպես աշխատողի աշխատանքային կարգապահական պատասխանատվության հարցը, քանի որ բուժաշխատողն աշխատում է բժշկական կենտրոնում (հիվանդանոց, պոլիկլինիկա և այլն) և այլն, հետևաբար՝ տվյալ հաստատության հետ գտնվում է **աշխատանքային պայմանագրային իրավահարաբերության** մեջ¹⁰: Նման իրավիճակում բուժաշխատողին

⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, (...):

⁹ ՀՀ կառավարության՝ 17 փետրվարի 2022 թվականի 182-Ն որոշում՝ բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնները հաստատելու մասին:

¹⁰ Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրից կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտից:

աշխատանքային կարգապահական պատասխանատվության ենթարկում է **գործատուն (օրինակ՝ «X բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն)**:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է **բարեխղճորեն կատարել** աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, **պահպանել** կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, **կատարել** աշխատանքի սահմանված նորմերը, **պահպանել** աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, արտակարգ դրության կամ կարանտինի ընթացքում գործող՝ ՀՀ-ում վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները, **բարեխղճորեն վերաբերվել** գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես **տեղեկացնել** գործատուին, **իրականացնել** ՀՀ օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով), պաշտոնի անձնագրով, գործատուի ներքին և անհատական իրավական ակտերով իրեն վերապահված գործառույթները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **աշխատանքային կարգապահությունն** աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված **վարքագծի կանոններն են**, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **աշխատանքային կարգապահության խախտում** է համարվում աշխատողի **մեղքով** աշխատանքային պարտականությունները **չկատարելը կամ ոչ պատշաճ** կատարելը կամ սույն օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված **վարքագծի կանոնները որևէ այլ կերպ խախտելը**:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ աշխատանքային կարգապահությունն աշխատանքային (բուն աշխատանքային պարտականություններ) և վարքագծային (էթիկական կանոն) նորմերի համալիր է, որից շեղումը, խախտումը, չկատարելը կամ ոչ պատշաճ (ոչ բարեխիղճ) կատարելը հանգեցնում է անձի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական սանկցիաների (ներգործության միջոցներ) կիրառման:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական **ՏՈՒՅԺԵՐԸ**.

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.

3) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերի¹¹ հիմքերով **աշխատանքային պայմանագրի լուծում:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **առանձին կատեգորիայի աշխատողների** համար օրենքով կարող են սահմանվել նաև **կարգապահական այլ տույժեր:**

Վերը նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ բոլոր աշխատողների աշխատանքային կարգապահությունը խախտելու համար նախատեսված է 3 տեսակի կարգապահական տույժ՝ նկատողություն, խիստ նկատողություն, աշխատանքային պայմանագրի լուծում, իսկ առանձին կատեգորիայի աշխատողների համար, ի թիվս վերը նշված տույժերի, օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր: Բուժաշխատողներն առանձին կատեգորիայի աշխատողներ են, և նրանց նկատմամբ կարող է կիրառվել ևս մեկ սանկցիա (լիցենզիայի կասեցում)՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն:

Դ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԻ ԽԱՆՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Դ1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի հիմնական կարգավորումները

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, ի թիվս այլ

¹¹ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի ւրանալը՝

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները **առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու** դեպքում.

6) աշխատողի նկատմամբ **վատահոսությունը կորցնելու** դեպքում.

8) աշխատողի կողմից **ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ** աշխատավայրում գտնվելու կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառնություններն իրականացնելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ **աշխատանքի չներկայանալու** դեպքում.

10) **պարտադիր բժշկական զննությունից** աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

13) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասը վերաբերում է ՀՀ-ում վարակիչ հիվանդություններով պայմանավորված՝ հայտարարված արտակարգ դրության կամ սահմանված կարանտինի ընթացքում աշխատանքի ներկայանալիս բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված **ՀՀ-ում վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերն աշխատողի կողմից չներկայացվելու** դեպքին:

հարցերի, կարգավորում է բուժաշխատողի **մասնագիտական էթիկայի** կանոնների խախտումները քննելու հարցեր: Մասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնները հաստատում է ՀՀ կառավարությունը, որոնք **չեն սահմանափակում** բուժաշխատողների մասնագիտական հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպության անդամ բուժաշխատողների համար **էթիկայի լրացուցիչ կանոնների կամ կանոնակարգերի ընդունումը**:

Բուժաշխատողի արարքում մասնագիտական էթիկայի խախտման փաստի վերաբերյալ որոշում ընդունում է **էթիկայի հանձնաժողովը, որը կոլեկտիվ մարմին է**: Ընդ որում՝ ՀՀ առողջապահության նախարարի՝ 08 նոյեմբեր 2022 թվականի թիվ 75-ն հրամանով հաստատվել է էթիկայի հանձնաժողովի գործերի քննության կարգը, որի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովը դիմումները քննում է **օրինականության, կողմերի իրավահավասարության, համաչափության** սկզբունքների հիման վրա՝ ապահովելով փաստական **հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի հանգամանքները**¹²:

Մասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովը գործի քննությունից հետո ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) **քրեական կամ վարչական պատասխանատվություն նախատեսող առերևույթ արարքներ հայտնաբերելու դեպքում** կամ **մասնագիտական էթիկայի կանոնների խախտման բացակայության հիմքով՝**

ա. մերժել դիմումը կամ

բ. դադարեցնել գործի քննությունը սեփական նախաձեռնությամբ գործի քննությունն սկսելու դեպքերում.

2) **օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում՝**

ա. լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ առաջին անգամ խախտում կատարած բուժաշխատողին **նկատողություն** տալու վերաբերյալ,

բ. մեկ տարվա ընթացքում կրկին բուժաշխատողի կողմից մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարվելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողին **խիստ նկատողություն** տալու վերաբերյալ,

գ. մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ բուժաշխատողի կողմից մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարվելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ **մեկ ամիս ժամկետով կասեցնել բժշկական օգնություն և սպասար-**

¹² ՀՀ առողջապահության նախարարի՝ 08 նոյեմբեր 2022 թվականի թիվ 75-ն հրաման՝ էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրության կարգը, էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, գործերի քննության կարգը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատելու մասին:

կում իրականացնողի լիցենզիան միայն սովյալ բուժաշխատողի մասով՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը¹³:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված որոշումների հիման վրա **ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ, ըստ անհրաժեշտության, համապատասխան տեղեկատվությունը փոխանցում է** իրավասու մարմիններին՝ համապատասխան բուժաշխատողին կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Վերը նշված իրավանդումների վերլուծությունից բխում է, որ **մասնագիտական էթիկայի կանոնները բուժաշխատողի մասնագիտական գործունեության վարքագծի նորմեր, նմուշային, տիպային, օրինակելի վարքականոններ են, որոնց խախտման փաստը քննվում, հաստատվում (հերքվում), համապատասխան որոշում կայացվում է անկախ կոլեգիալ մարմնի՝ բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի կողմից:**

Եթե էթիկայի հանձնաժողովը բուժաշխատողի վարքագծում քրեական կամ վարչական պատասխանատվություն նախատեսող առերևույթ ԱՐԱՐՔ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ, սպա դադարեցնում է քննությունը կամ մերժում է դիմումը, քանի որ **դրա քննությունն էթիկայի հանձնաժողովի իրավասություններից (լիազորություններից) դուրս է (ենթակա չէ քննության):**

Եթե էթիկայի հանձնաժողովը բուժաշխատողի վարքագծում քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող առերևույթ ԱՐԱՐՔ ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ և եզրահանգում է, որ բուժաշխատողի վարքագծում առկա է էթիկայի կանոնի խախտում, սպա բուժաշխատողին նկատողություն կամ խիստ նկատողություն կամ բուժաշխատողի մասով լիցենզիայի կասեցում տալու համար դիմում է **լիազոր մարմնին: Նշենք, որ լիազոր մարմինը ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն է՝ ՀՀ առողջապահության նախարարությունը:**

Էթիկայի հանձնաժողովի որոշումը **պարտադիր բնույթ չի կրում ՀՀ առողջապահության նախարարության համար, այն ունի առաջարկության ուժ, քանի որ ՀՀ առողջապահության նախարարությունն ըստ անհրաժեշտության է որոշում դրա (նկատողություն և խիստ նկատողություն տույժերի վերաբերյալ) հետագա ճակատագիրը՝ դիմել, թե՛ չդիմել իրավասու մարմնին (օրինակ՝ բուժաշխատողի գործատուին՝ «X» բժշկական կենտրոնին)՝ բուժաշխատողին, կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով:**

Ինչ վերաբերում է **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի լիցենզիան միայն սովյալ բուժաշխատողի մասով՝ մեկ ամիս ժամկետով կասեցնելու տույժին, սպա**

¹³ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել օրենքով նախատեսված այլ դեպքերում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասի (...) 12-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը կասեցվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

համապատասխան լիցենզիան կարող է կասեցնել այդ լիցենզիան տրամադրողը (դատական բողոքարկման դեպքում՝ դատարանը), իսկ **առողջապահության ոլորտում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի լիցենզիան տրամադրող մարմինը՝ լիցենզավորողը, հենց ՀՀ առողջապահության նախարարությունն է:**

Ե. ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊՐԱԿՏԻԿԱ՝ ԸՍՏ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ¹⁴

Ըստ Բուժաշխատողների մասնագիտական Էթիկայի կանոնների խախտումները քննող Էթիկայի հանձնաժողովի (Բուժաշխատողների Էթիկայի հանձնաժողով) 2024 թվականի տարեկան հաշվետվության.

«5) ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշմամբ սահմանված Էթիկայի կանոնների խախտման դեպքերն են.

* **2-րդ կետի 1-ին ենթակետ** (հարգել մարդու արժանապատվությունը),

* **2-րդ կետի 4-րդ ենթակետ** (հարգալից վերաբերվել պացիենտի ընտանիքի անդամներին, օրինական ներկայացուցիչներին, կոնտակտային անձին),

* **3-րդ կետի 1-ին ենթակետ** (դիմել անհրաժեշտ միջոցների՝ պացիենտի առողջությունն ամրապնդելու (բարելավելու) և ցավը մեղմելու համար),

* **3-րդ կետի 2-րդ ենթակետ** (հարգել պացիենտի արժանապատվությունը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, հիմնական իրավունքները և ազատությունները),

* **3-րդ կետի 4-րդ ենթակետ** (ձեռնպահ մնալ պացիենտի վարքի վերաբերյալ դատողություններից և չպարտադրել սեփական մոտեցումներն ու արժեքները),

* **3-րդ կետի 6-րդ ենթակետ** (հոգատար լինել պացիենտի նկատմամբ և գործել նվիրումով՝ պացիենտի առողջությունն ամրապնդելու կամ վերականգնելու, վերջինիս կյանքը և դրա որակը պահպանելու համար),

* **4-րդ կետի 2-րդ ենթակետ** (հարգալից վերաբերմունք և քաղաքավարություն դրսևորել այլ բուժաշխատողների նկատմամբ).

6) Հանձնաժողովի որոշումների հիման վրա **բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կողմից բուժաշխատողի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն ԿԻՐԱՌԵԼՈՒ դեպքերը՝ 2** («Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ).

7) Հանձնաժողովի որոշումների հիման վրա **բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կողմից բուժաշխատողի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն ՉԿԻՐԱՌԵԼՈՒ դեպքերը՝ 2** («Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ)»:

Վերը նշված հաշվետվության վերլուծությունից կարող ենք եզրահանգել, որ Էթիկայի նորմերից ամենաշատը **հարգալից վերաբերմունք** չդրսևորելու դեպքերն են (այսինքն՝

¹⁴ Բուժաշխատողների Էթիկայի հանձնաժողովի կայք՝ <https://www.mec.am/hy/reports> (վերջին մուտքը՝ 10.10.2025)

բուժաշխատողն անհարգալից վերաբերմունք է դրսևորել պացիենտի նկատմամբ):

Ինչ վերաբերում է կարգապահական պատասխանատվության ենթարկելուն, տույժ կիրառելուն, ապա **գործատուները միանշանակ մոտեցում չեն ցուցաբերել: Էթիկայի հանձնաժողովի որոշումը՝ բուժաշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, գործատուն՝ բժշկական կենտրոնը, կարող է չկատարել, քանի որ այն իմպերատիվ չէ, գործատուի համար չունի պարտադիր բնույթ:** Այսինքն՝ էթիկայի հանձնաժողովը կարող է արձանագրել բուժաշխատողի կողմից էթիկայի նորմի խախտում, որոշում կայացնել այդ մասին, տեղեկացնել լիազոր մարմնին, վերջինս էլ՝ բուժաշխատողի գործատուին, իսկ գործատուն որևէ պատճառաբանությամբ (այդ թվում՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի տրամաբանության չարաշահմամբ կամ արհեստականորեն ժամկետի ձգձգմամբ, ինչն էլ կառաջացնի վաղեմության խնդիր) աշխատողին պատասխանատվության չենթարկի:

2. ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

2.1. ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն.

«1. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

2. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավել, քան մեկ տարի:»:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ կարգապահական տույժ կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ (1) ամսվա ընթացքում, սակայն խախտումը կատարելու օրվանից չպետք է անցած լինի վեց (6) ամիս ժամկետը, այսինքն՝ վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է իրավական բացասական հետևանք առաջացնելու համար:

«Խախտում հայտնաբերելու պահ» ասելով անհրաժեշտ է հասկանալ աշխատողի ոչ իրավաչափ արարքը որպես իրավախախտում որակելու պահը, այսինքն՝ հենց այդ պահից է սկսվում հոսել մեկամսյա ժամկետը: Իրավախախտում որակելն ՄԿՄՎՈՒՄ Է ենթադրյալ խախտման մասին գործատուին հայտնի դառնալու պահից (օրինակ՝ պացիենտի կամ այլ բուժաշխատողի բողոք), ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է կարգապահական վարույթ հարուցելու, աշխատողին զեկուցագիր ներկայացնելու հնարավորություն ընձեռելու, փաստեր ստուգելու, ասպացույցներ հավաքելու գործողություններով, ԱՎԱՐՏՎՈՒՄ Է կարգապահական վարույթն ամփոփելով՝ համապատասխան իրավական ակտն ընդունելով: Ընդ որում՝ այդ իրավական ակտով հավաստվում է

իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը և ըստ այդմ էլ՝ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, տույժի տեսակ ընտրելու հարցը:

«Խախտում կատարելու օր» ասելով անհրաժեշտ է հասկանալ աշխատողի ոչ իրավաչափ արարքը փաստացի կատարելու օրը: Սրանով խախտման փաստացի կատարումը տարբերվում է խախտման հայտնի դառնալու, ի հայտ գալու օրվանից: Այսինքն՝ ժամանակային առումով արարքի, խախտման կատարումը նախորդում է արարքի, խախտման հայտնաբերմանը, թեպետև այդ երկուսի համընկնումը չի բացառվում, այսինքն՝ խախտումը հայտնաբերվում է կատարման օրը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասը, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է էթիկայի հանձնաժողովում գործերի քննության կարգին, իսկ ՀՀ առողջապահության նախարարի՝ 08.11.2022 թվականի թիվ 75-Ն հրամանով հաստատվել են էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրության կարգը, էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, գործերի քննության կարգը: Համաձայն սույն հրամանի 3-րդ հավելվածի 7-րդ կետի՝ դիմումները կարող են ներկայացվել, եթե ենթադրյալ խախտման օրվանից չի անցել մեկ օրացուցային տարի:

Ինչպես նկատեցինք, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը կարգապահական խախտման համար երկու եզրույթ է օգտագործում՝ խախտման կատարում և խախտման հայտնաբերում՝ դրանցով պայմանավորում կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետների պահպանումը, մինչդեռ բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի գործերի քննության կարգը չի մասնավորեցնում, թե մեկ օրացուցային տարվա հաշվարկն սկսվում է խախտումը կատարելու, թե՞ խախտումը հայտնաբերելու օրվանից: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել (թեպետև իրավական ակտում կարգավորումը պետք է հստակ, որոշակի լինի), որ խոսքը խախտումը կատարելու մասին է, այսինքն՝ բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովը քննության է առնում բուժաշխատողի դեմ ներկայացված այն ենթադրյալ խախտման գործը, որի կատարումից հետո չի անցել մեկ օրացուցային տարին (365-366 օր):

Համադրելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի և էթիկայի հանձնաժողովի գործերի քննության կարգի ժամկետները՝ կարգապահական խախտումը կատարելու, հայտնաբերելու, պատասխանատվության ենթարկելու մասով, կարելի է արձանագրել, որ այս երկու իրավական ակտի ժամկետները տարբեր են, հետևաբար՝ իրար բացառող: Այսինքն՝ եթե նույնիսկ խախտումը կատարելուց հետո՝ 7-րդ կամ 8-րդ ամսում, էթիկայի հանձնաժողովը խախտում է արձանագրում, ապա այդ խախտման հիմքով գործատուն՝ բժշկական կենտրոնը, չի կարող պատասխանատվության ենթարկել, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը 6-ամսյա ժամկետ է նախատեսել: Սույն դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը՝ որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտ (օրենք, օրենսգիրք), գերակայում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով

հաստատված էթիկայի հանձնաժողովի գործերի քննության կարգին (այլ իրավական՝ ենթաօրենսդրական ակտ)¹⁵:

Առաջացած հակասությունը վերացնելու համար **անհրաժեշտ է ժամկետների միատեսակ, նույնական մոտեցում նախատեսել**, հետևաբար՝ ենթաօրենսդրական իրավական ակտում ամրագրել այն ժամկետները, ինչը նախատեսում է ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

Չ2. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ **կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝** տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով **ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում**:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասը, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է **էթիկայի հանձնաժողովի աշխատակարգին**, իսկ ՀՀ առողջապահության նախարարի՝ 08.11.2022 թվականի թիվ 75-Ն հրամանով հաստատվել են էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրության կարգը, **էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը**, գործերի քննության կարգը: Համաձայն սույն հրամանի 2-րդ հավելվածի **24-րդ կետի՝** էթիկայի հանձնաժողովի որոշումներն **ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմողի կամ բուժաշխատողի կողմից կարող են գրավոր բողոքարկվել էթիկայի հանձնաժողովին**, որի ընթացքում որոշման կատարումը կասեցվում է:

Վերը նշված իրավանդությունների վերլուծությունից բխում է, որ էթիկայի հանձնաժողովի որոշումը, որով արձանագրվել է բուժաշխատողի կողմից էթիկայի կանոնի խախտման առկայությունը կամ բացակայությունը, կարող է բողոքարկվել:

Բողոքարկումն անձի իրավունքն է՝ պահանջելու վերանայել իր նկատմամբ կայացված որոշումը, հետևաբար՝ այն մարմինը, որը բողոքարկման վերաբերյալ որոշում պետք է ընդունի, առնվազն չեզոք պետք է լինի, իսկ այս դեպքում **բուժաշխատողը բողոքարկում է այն նույն հանձնաժողովին, որն էլ հենց կայացրել է այդ որոշումը**: Կարծում ենք՝ որոշակի իմաստով էթիկայի հանձնաժողովը **կաշկանդված կլինի իր սխալն ընդունելու հարցում**: Դժվար է պատկերացնել, թե այդ հանձնաժողովի անդամները, որոնք, ենթադրենք, 20 օր առաջ այլ կարծիք են արտահայտել, իրավական գնահատական տվել, **ինչպես կարող են իրենց իսկ կայացրած որոշումը փոփոխել (ոչ իրավաչափ դիտարկել)**. ստացվում է՝ էթիկայի հանձնաժողովի անդամները պետք է արձանագրեն, որ իրենք սխալվել են: Նման կարգավորումը **բողոքարկման ինստիտուտը դարձնում է ձևական**, քանի որ **բուժաշխատողը գրկված է լինում չկաշկանդված**

¹⁵ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝ 1) **ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը** (...):

մարմնի կողմից գործը, բողոքը լսելու իրավունքից:

Սույն խնդրի լուծման համար հետաքրքրական է դիտարկել **փաստաբանին կարգապահական պատասխանատվության** ենթարկելու ընթացակարգը, մասնավորապես, փաստաբանների պալատի **կարգապահական հանձնաժողովի** որոշումը բողոքարկվում է փաստաբանների **պալատի խորհրդին**, իսկ փաստաբանների պալատի խորհրդի որոշումը՝ **դատական կարգով**: Այսինքն՝ մինչև դատական կարգով բողոքարկելն առնվազն երկու միմյանցից անկախ օղակ կա, որտեղ կարելի է վիճարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Հետևաբար, լավագույն լուծումը կլինի **անկախ մարմնի ստեղծումը**՝ կազմված առողջապահական ոլորտի ծառայություններ մատուցողների, լիազոր մարմնի, հանրային առողջապահության ոլորտի, իրավաբան և առողջապահության ոլորտի գիտնական ներկայացուցիչներից, որն էլ կվերանայի Էթիկայի հանձնաժողովի որոշումը՝ **որպես երկրորդ ատյան**:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ բուժաշխատողի կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելիս առաջանում են որոշակի հակասություններ, ոչ լիակատար՝ ձևական ընթացակարգեր, որոնք էսպես ազդում են իրավաբանական պատասխանատվության, բուժաշխատողի իրավունքների պաշտպանության արդյունավետության վրա:

Վերոնշյալի լույսի ներքո, անհրաժեշտ է նախ՝ Էթիկայի հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իրավունքի արդյունավետության մակարդակը բարձրացնել՝ ստեղծելով անկախ մարմին, որը կվերանայի Էթիկայի հանձնաժողովի որոշումը, ապա՝ ենթաօրենսդրական իրավական ակտի ժամկետները համապատասխանեցնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումներին՝ ժամանակային (ժամկետ) առումով չհամընկնումներից խուսափելու համար:

SOME ISSUES OF LEGAL LIABILITY OF MEDICAL WORKERS

GEVORGYAN ARTAK

PhD in Law,

Senior Lecturer at the Educational Complex of the

Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,

Senior Lecturer at the Armenian-Russian University

Abstract. This article illustrates the main issues related to the legal liability of medical workers in the Republic of Armenia. The study outlines the types of legal liability applicable to medical workers, with particular emphasis on disciplinary liability. Disciplinary liability is differentiated into provisions applicable to all employees and those specific to medical workers as a distinct professional category. The author analyzes the issues of disciplinary liability of medical workers in the light of violation of labor discipline and breach of professional ethics and presents some proposals on terms and procedure for appeal.

Keywords: liability of a medical worker, professional ethics, labor discipline, appeal procedure.

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ЮРИДИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ МЕДИЦИНСКОГО РАБОТНИКА

ГЕВОРГЯН АРТАК

*Старший преподаватель Образовательного комплекса МВД РА,
старший преподаватель Армяно-Российского университета,
кандидат юридических наук*

Аннотация. В статье автор представил виды ответственности медицинского работника в Республике Армения, включая дисциплинарную ответственность, а также разделил дисциплинарную ответственность на части, применимые ко всем сотрудникам и к отдельным категориям сотрудников. Автор проанализировал вопросы дисциплинарной ответственности медицинского работника за нарушение трудовой дисциплины и профессиональной этики, представив предложения по срокам и порядку обжалования.

Ключевые слова: ответственность медицинского работника, профессиональная этика, трудовая дисциплина, апелляционная процедура.

Օգտագործված գրականության ցանկ

Ա. Նորմատիվ-իրավական ակտեր

- 1) ՀՀ աշխատանքային օրենսգիրք
- 2) ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- 3) ՀՀ քրեական օրենսգիրք
- 4) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
- 5) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք
- 6) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- 7) «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- 8) ՀՀ կառավարության՝ 17 փետրվարի 2022 թվականի 182-Ն որոշում՝ բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնները հաստատելու մասին
- 9) ՀՀ առողջապահության նախարարի՝ 08 նոյեմբեր 2022 թվականի թիվ 75-Ն հրաման՝ էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրության կարգը, էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, գործերի քննության կարգը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատելու մասին

11. Բ. Տեսական գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ

- 1) Lewis M., Tamparo C., Medical Law, Ethics, and Bioethics for the Health Professions, 6th ed., USA, F. A. Davis Company, 2007, p. 67
- 2) Herring J., Medical Law and Ethics, 6th ed., Oxford University Press, 2014, p. 133
- 3) Brazier M. and Miola, J., “Bye-bye Bolam: a Medical Litigation Revolution”, Medical Law Review 8, 2000, p. 85
- 4) <https://www.mec.am/hy/reports>

*Հոդվածը գրախոսվել է 19.01.2026
Ներկայացվել է տպագրության 22.01.2026*

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲՈՒՀԵՐՈՒՄ**

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
անգլերենի ամբիոնի վարիչ,
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության
և հանրային կապերի բաժնի գլխավոր մասնագետ,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի Փրկարար ծառայության և
ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման
ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների
ամբիոնի համատեղման կարգով անգլերենի դասախոս
DOI:10.63925/18294847-2026.bl21-06*

Համառոտագիր. Սույն հոդվածում քննության են առնվում «Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագրերում անգլերենի դասավանդման տեսական և գործնական առանձնահատկությունները՝ մասնագիտական բառապաշարի յուրացման, միջազգային իրավական ակտերի և գրականության ընթերցման և իրավաբանական հաղորդակցության մշակույթի ձևավորման համատեքստում:

Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև անգլերենի իմացությունը՝ որպես իրավաբանի համար առօրյա հաղորդակցության և մասնագիտական գործունեության կենսական բաղադրիչ՝ ապահովելով ապագա իրավաբանի ներգրավվածությունը և մասնագիտական աճը միջազգային իրավական գործընթացներում:

Բանալի բառեր. Բարձրագույն կրթություն, իրավագիտություն, օտար լեզուներ, անգլերեն, իրավաբանական տեքստեր, ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ներածություն: Իրավաբանական անգլերենի դասավանդումը պահանջում է նպատակային մեթոդաբանություն, որտեղ առաջնային տեղ է հատկացվում միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի, դատական ակտերի և իրավաբանական փաստաթղթերի ընթերցմանը և վերլուծությանը:

Սույն համատեքստում կարևոր է քննարկել դասավանդման գործընթացում ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը, մասնավորապես՝ իրավական տեքստերի թարգմանության, մասնագիտական զեկույցների պատրաստման և միջազգային դատավարությունների մոդելավորման տեսանկյունից:

Դասավանդման առանձնահատկությունները դիտարկելիս ուսումնասիրվել է միջազգային փորձը, անգլերենը հատուկ նպատակների համար՝ ESP-ի (English for Specific Purposes) տեսական հիմքերը, ինչպես նաև հայաստանյան բուհերում անգլերենի դասավանդման առանձնահատկությունները¹:

Քննության են առնվել տերմինաբանական հենքի խնդիրները, թարգմանական դժվարությունները և իրավաբանական հաղորդակցության կառուցվածքային առանձնահատկությունները:

Ինչպես լեզվի տեսաբան Ջիմ Քումինսն է փաստում՝ մեծ տարբերություն կա խոսակցական լեզվի և մասնագիտական ոլորտներում գործածվող ակադեմիական լեզվի մակարդակների միջև:

Նա ստեղծել է լեզվի ուսուցման երկու հասկացությունների՝ ակադեմիական լեզվի ճանաչողական կարողունակությունների (CALP-cognitive academic language proficiency) և միջանձնային հաղորդակցության հիմնական հմտությունների (BICS-basic interpersonal communication skills) վերաբերյալ տեսություն², որտեղ տարանջատում է լեզվական այս երկու մակարդակներին բնորոշ առանձնահատկությունները:

Թեպետ շատ ուսանողներ կարող են խոսակցական անգլերենի սահուն մակարդակ ապահովել, սակայն նրանք երբեմն դժվարություն են ունենում ակադեմիական անգլերենի ոլորտում: Ուստի հարկավոր է նախ և առաջ ուսանողներին ուսուցանել քննադատական մտածողության՝ դասակարգայնորեն համեմատելու, վերլուծելու, գնահատելու և համադրելու հմտություններ³:

Իրավագիտություն ուսումնասիրող ուսանողներին անգլերեն դասավանդելիս հարկավոր է ցուցաբերել ինտեգրված մոտեցում՝ միավորելով լեզվաբանական, իրավական և գործնական հմտությունները:

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրերում անգլերենի դասավանդումը հարկ է դիտարկել ոչ թե որպես օժանդակ առարկա, այլ որպես մասնագիտական պատրաստվածության հիմնական բաղադրիչ: Անհրաժեշտ է ներմուծել նորարարական մեթոդներ, զարգացնել համատեղ աշխատանքը լեզվաբանների և իրավաբանների միջև, ինչպես նաև ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը միջազգային կրթական ծրագրերում:

Նշված կրթական ծրագրերն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ անգլերենի ուսուցումը՝ որպես օտար լեզու, ՀՀ որոշ բուհերում իրականացվում է հատուկ կրթական ծրագրի շրջանակներում, երբ ուսանողներն ուսումնասիրում են անգլերենի տարբեր

¹ Տե՛ս «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամում, օրինակ, սահմանված է, որ ուսանողը պետք է անգլերենի իմացության B1 մակարդակ ունենա 3-րդ կուրսն ավարտելուց հետո, որը պետք է հավաստված լինի համապատասխան հավաստագրով:

² Տե՛ս մանրամասն Cummins J., Language, Power, and Pedagogy. Bilingual Children in the Crossfire. Multilingual Matters LTD, California, 2000.

³ Տե՛ս Yeghiazaryan G. On Some Problems of Teaching in Content Areas. Foreign Language for Special Purposes// International Journal, Vol.5, Yerevan: Yerevan State University Press, 2005, էջ. 106-115.

մակարդակներ՝ սկսնակ փուլից, մինչև լեզվի իմացության որոշակի մակարդակ, որը սահմանված է տվյալ բուհի կողմից:

Անգլերենի դասավանդման առանձնահատկությունները: Ներկայումս իրավաբանական պրակտիկան նվաճում է միջազգային հարթակներ, ուստի իրավաբանական կրթության որակը հաճախ պայմանավորված է ոչ միայն կոնտենտային մասնագիտական գիտելիքով, այլև միջազգային տվյալների՝ դատավարական և դատական աղբյուրների ճիշտ ընթերցման և կիրառման կարողությամբ:

Իրավագիտության ոլորտում մասնագիտական պատրաստվածության մակարդակն անմիջականորեն առնչվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին: Այս համատեքստում օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի իմացությունը դառնում է ժամանակի հրամայական:

Ժամանակակից իրավագիտությունը գլոբալ բնույթ ունի. իրավական համակարգերը փոխառնչվում են միմյանց հետ, միջազգային իրավունքի նորմերը դառնում են ներպետական օրենսդրության զարգացման առանցքային բաղադրիչ: Հետևաբար, անգլերենի ուսուցումն իրավագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերում ոչ միայն մասնագիտական կարողությունների զարգացման, այլև միջազգային իրավական դաշտում մասնագետների մրցունակության երաշխիք է:

ՀՀ կրթական իրականության մեջ, սակայն, ոչ լեզվաբանական մասնագիտությունների դեպքում օտար լեզվի դասավանդման և ուսուցման մեթոդիկայի գիտական ուսումնասիրությունները երբեմն բավարար ուշադրության չեն արժանացել:

Եթե տեխնոլոգիական ոլորտում օտարալեզու մասնագիտական գրականության հասանելիությունը կարևորում է մասնագիտական գրագիտության զարգացումը, ապա իրավագիտության պարագայում անգլերենի ուսուցումն առաջին հերթին պետք է ուղղված լինի իրավական տեքստերի խորքային ըմբռնմանը, միջազգային իրավունքի սկզբունքների յուրացմանը, համաշխարհային փորձին ծանոթությանը, ազգային և միջազգային իրավագիտական խնդիրների համեմատական վերլուծությանը:

Քանի որ ներկայումս կարևորվում են կիրառական գիտության խնդիրները, անհրաժեշտ է ոչ միայն բացահայտել տվյալ ոլորտում կատարված հանցագործությունները՝ համացանցային խարդախությունների միջոցով դրամներ շորթելու, թմրանյութեր տարածելու գործելաոճը, այլև նման երևույթներին տալ իրավական համաչափ գնահատական: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է իրավաբանական անգլերենի ընթերցանությունը համացանցի միջոցով, որպեսզի հնարավոր լինի կանխել տարատեսակ հանցագործությունների իրականացումը⁴:

Անգլերենի ոլորտային իմացությունն ապագա իրավաբանին նաև հնարավորություն է ընձեռում մասնակցել միջազգային դատական նիստերին, գիտաժողովներին, բանակ-

⁴ Տե՛ս մանրամասն Առաքելյան Մ., Իրավաբանական անգլերեն մեթոդաբանության ընթերցանությունը համացանցի միջոցով, Եր.: Աստղիկ» հրատ., 2025, էջ 42-48:

ցություններին, ինչպես նաև կապ հաստատել արտասահմանյան գործընկերների ու միջազգային կազմակերպությունների հետ:

Անգլերենի դասավանդման արդյունավետ մեթոդաբանությունը: «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերում անգլերենի ուսուցման արդյունավետությունը կախված է մի շարք առանձնահատկություններից:

Նախ՝ ուսումնական պլանով օտար լեզվին հատկացված ժամաքանակը հաճախ սահմանափակ է, ինչը բարդացնում է ուսանողների կողմից թե՛ իրավաբանական տերմինաբանության և թե՛ գործնական հաղորդակցական հմտությունների յուրացումը: Բացի այդ, իրավաբանական տեքստերը լեզվաբանական տեսանկյունից խրթին են, առանձնանում են եզրույթների առատությամբ և իմաստային բազմաշերտությամբ: Արդյունքում՝ դասախոսը կանգնում է բարդ խնդրի առաջ՝ միաժամանակ զարգացնել թե՛ ուսանողների ընդհանուր լեզվական կարողությունները, թե՛ նրանց մասնագիտական բառապաշարը:

Անգլերենի դասավանդման նպատակն իրավագիտության կրթական ծրագրերում ոչ թե առօրյա հաղորդակցական խոսքը զարգացնելն է, այլ իրավաբանական ոլորտում անխոչընդոտ գործելու ունակությունների զարգացումը:

Իրավաբան ուսանողների համար անգլերենի դասավանդման գործընթացում կարևոր է ընտրել այնպիսի դասագրքեր, որոնք ոչ միայն զարգացնում են ընդհանուր լեզվական հմտությունները, այլ նաև ապահովում են հաղորդակցական ակտիվություն: Այդ նպատակով հատկապես արդյունավետ է «Cambridge Interchange» դասագրքի օգտագործումը (հեղինակ՝ Jack C. Richards)⁵:

Այս դասագիրքը միջազգային չափանիշներին համապատասխանող և աշխարհում լայնորեն կիրառվող ուսումնական ձեռնարկ է: Այն ապահովում է անգլերենի չորս հիմնական հմտությունների՝ խոսելու, լսելու, կարդալու և գրելու հավասարաչափ զարգացում: Յուրաքանչյուր բաժին կառուցված է այնպես, որ ուսանողն աստիճանաբար անցնի բառապաշարի յուրացումից և քերականական նյութի ըմբռնումից դեպի հաղորդակցական հմտությունները զարգացնող առաջադրանքներ:

«Cambridge Interchange» դասագրքերի շարքը ներառում է չորս հիմնական մակարդակ, որոնք համապատասխանում են Եվրախորհրդի մշակած Լեզուների իմացության/իրագրելության համաեվրոպական համակարգի (ԼԻՀՀ, CEFR – Common European Framework of Reference for Languages)⁶ A1-ից մինչև B1 մակարդակներին: Իսկ C1 և C2 առաջընթաց մակարդակների համար որպես շարունակություն նպատակահարմար է կիրառել «Cambridge Objective Advanced» և «Cambridge Objective Proficiency» դասագրքերը⁷:

⁵ Տե՛ս մանրամասն Ոսկանյան Ա., «Միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացումը իրավագիտության անգլերենի դասընթացում»: Կրթությունը 21-րդ դարում, Երևան, 2023, էջ 208–216:

⁶ Տե՛ս Լեզուների իմացության/իրագրելության համաեվրոպական համակարգ, Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով: Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, Երևան, 2005:

⁷ Տե՛ս Richards J. C., Hull J., Proctor S., Interchange (Fifth Edition), Cambridge: Cambridge University Press, 2017.

Անհրաժեշտ է առանձնացնել նաև դասագրքին կից տրամադրված ձայնագրությունների (audio recordings) կիրառման կարևորությունը: Դասերի ընթացքում դրանց օգտագործումը նպաստում է լսողական ընկալման հմտությունների զարգացմանը, տարբեր արտասանությունների և ձայներանգների ճանաչմանը, արտասանության և ձայներանգի ճիշտ ձևավորմանը և արդյունքում՝ հաղորդակցական իրական միջավայր ստեղծելու հնարավորությանը:

Այս մոտեցումը հատկապես արժեքավոր է ապագա իրավաբանների համար, քանի որ նրանք պետք է կարողանան լսել, հասկանալ և ճիշտ արձագանքել լսածին՝ տարբեր իրավական համատեքստերում՝ միջազգային գիտաժողովներում, բանակցություններում և դատական գործընթացներում:

Ուսումնական գործընթացում «Cambridge Interchange» դասագրքի և ձայնագրությունների համակարգված կիրառումը հնարավորություն է տալիս ձևավորելու ոչ միայն լեզվական գիտելիքներ, այլ նաև գործնական և մասնագիտական հաղորդակցական պատրաստվածություն, ինչը համապատասխանում է ժամանակակից իրավաբանական կրթության պահանջներին:

Դասավանդման ընթացքում պետք է ձևավորվեն հմտություններ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին կարողալ և մեկնաբանել միջազգային պայմանագրեր, դատական ակտեր, իրավաբանական փաստաթղթեր, ազատ արտահայտվել բանավեճերում, պատրաստել գիտական հոդվածներ և իրավական եզրակացություններ, ինչպես նաև մասնակցել միջազգային իրավական նախագծերի մշակմանը:

Դասավանդման մեթոդաբանության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել փուլային մոտեցում: Մկզբնական փուլում շեշտը դրվում է լեզվական ընդհանուր հիմքերի ամրապնդման վրա՝ ներգրավելով իրավաբանական բառապաշարի տարրական շերտը:

Հաջորդ փուլերում աստիճանաբար ավելացվում են մասնագիտական բարդ տեքստեր, օրենսդրական ակտերի և միջազգային իրավունքի նորմերի վերլուծությանը միտված վարժություններ: Տեքստերի ընտրության ժամանակ առաջնային է ուսանողների մասնագիտական կողմնորոշումը. դրանք պետք է համապատասխանեն ուսուցման նպատակներին և ուսանողների պատրաստվածության մակարդակին:

Ուսուցման առանձնահատուկ ուղղություններից է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, որը ոչ միայն նպաստում է լեզվական գիտելիքների ամրապնդմանը, այլև ձևավորում է քննադատական մտածողություն և իրավական տեքստերի վերլուծության ունակություն:

Արտալսարանային առաջադրանքները կարող են ներառել միջազգային իրավական փաստաթղթերի թարգմանություններ, դատական գործերի համեմատական ուսումնասիրություններ, իրավաբանական տերմինների բառարանային աշխատանքներ: Այս ամենը նպաստում է մասնագիտական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Իրավաբանական կրթության առանձնահատկություններից է նաև այն, որ ուսանող-

ները պետք է ունենան ոչ միայն գրավոր, այլև բանավոր հաղորդակցման բարձր մակարդակ: Հատուկ ուշադրություն է պահանջում մենախոսության և երկխոսության հմտությունների ձևավորումը: Մենախոսության շրջանակում ուսանողը պետք է կարողանա իրավական թեմայի շուրջ հանդես գալ վերլուծական զեկույցով, հիմնավորել սեփական կարծիքը և ներկայացնել իրավական դիրքորոշում:

Երկխոսության մեջ ուսանողը պետք է ունակ լինի իրավաբանական բանավեճի, կարողանա հարցաքննության կամ բանակցության ձևաչափում հստակ արտահայտել իր մտքերը, արձագանքել ընդդիմադիր կողմի փաստարկներին:

Անգլերենի դասավանդման գործընթացում անփոխարինելի դեր ունեն ժամանակակից տեխնոլոգիաները: Իրավաբանական ուղղվածությամբ ֆիլմերի դիտումը, միջազգային դատավարությունների ձայնագրությունների ունկնդրումը, առցանց հարթակներում իրավաբանական հոդվածների ընթերցումն ստեղծում են լեզվական իրական միջավայր: Բացի այդ, դերային խաղերը («դատական նիստ», «բանակցություն», «պաշտպանություն և մեղադրանք») նպաստում են ուսանողների մասնագիտական հաղորդակցական հմտությունների զարգացմանը: Այս մեթոդները ոչ միայն հետաքրքիր են, այլև խթանում են ուսանողների հետաքրքրվածությունը և ինքնավստահությունը:

Չպետք է անտեսել նաև ուսանողների հոգեբանական առանձնահատկությունները: Առաջին կուրսի ուսանողները հաճախ դժվարանում են ինքնուրույն աշխատել իրավաբանական բարդ տեքստերի հետ: Այդ իսկ պատճառով դասախոսը պետք է ստեղծի պայմաններ, որտեղ ուսանողներն աստիճանաբար ընտելանան իրավաբանական լեզվին և կարճ ժամանակում ձեռք բերեն վստահություն սեփական կարողությունների նկատմամբ: Պրակտիկ փորձը ցույց է տալիս, որ թիմային աշխատանքը, փոխադարձ ուղղումները և քննարկումները նպաստում են լեզվական ազատության և ստեղծագործական մտածողության ձևավորմանը:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ իրավագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերում անգլերենի դասավանդման հիմնական առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ մասնագիտական տերմինաբանության և իրավաբանական տեքստերի բարդությամբ, իսկ մյուս կողմից՝ միջազգային իրավական դաշտում հաղորդակցվելու անհրաժեշտությամբ:

Ուսուցման արդյունավետությունն ապահովվում է ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների, ինքնուրույն աշխատանքի և հաղորդակցական գործնական վարժությունների համադրմամբ: Այս ամենի նպատակն է պատրաստել այնպիսի իրավաբաններ, որոնք կկարողանան մրցունակ լինել ոչ միայն ազգային, այլև միջազգային իրավական հարթակում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

«Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագրեր իրականացնող բուհերում անգլերենի դասավանդումն առանձնանում է որոշակի բարդությամբ և պահանջում է բազմաշերտ մոտեցում: Հիմնական խնդիրը ոչ միայն ընդհանուր լեզվական կարողությունների զարգացումն է, այլև իրավաբանական մասնագիտական բառապաշարի իմացությունը և միջազգային իրավական տեքստերի խորքային ըմբռնումը:

Անգլերենի դասավանդումը դառնում է գործիք՝ ապագա իրավաբանին միջազգային իրավական համակարգում լիարժեք ներգրավվելու, մրցունակ մասնագետ դառնալու և արդի իրավական գործընթացներին համընթաց գործելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնական ծրագրերի կատարելագործում. անհրաժեշտ է ավելացնել օտար լեզվի դասավանդման ժամաքանակը և ինտեգրել իրավաբանական առարկաների հետ, օրինակ՝ «Legal English» առանձին մոդուլների ներդրում:

Տերմինաբանական բառարանների ստեղծում և օգտագործում. յուրաքանչյուր ուսանող պետք է հնարավորություն ունենա աշխատելու ժամանակակից իրավաբանական բառարաններով, որոնք կներառեն միջազգային իրավունքի և համեմատական իրավագիտության հիմնական հասկացությունները:

Դերային մոդելների կիրառում. «մոդելավորված դատավարություններ» (moot courts), բանակցությունների սիմուլյացիաներ և քննարկումներ միջազգային պայմանագրերի շուրջ: Այս մեթոդները ոչ միայն զարգացնում են բանավոր խոսքը, այլև ձևավորում են իրավաբանական մտածողություն՝ օտար լեզվով:

Ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավում. առցանց հարթակներ, միջազգային իրավաբանական բազաներ, վեբինարներ և առցանց դատական նիստերի դիտումներ, որոնք ուսանողին անմիջականորեն ներգրավում են համաշխարհային իրավական գործընթացներին:

Ինքնուրույն աշխատանքի խթանում. ուսանողներին տրամադրել կոնկրետ իրավաբանական առաջադրանքներ՝ միջազգային փաստաթղթերի վերլուծություն, իրավական եզրակացությունների պատրաստում անգլերենով, դատական ակտերի համեմատական ուսումնասիրություն: Սա ոչ միայն զարգացնում է լեզվական կարողությունները, այլև՝ քննադատական մտածողությունը:

Հոգեբանական և մեթոդաբանական աջակցություն. դասախոսները պետք է օգնեն ուսանողներին հաղթահարել օտարալեզու հաղորդակցության կաշկանդվածությունը՝ կիրառելով թիմային աշխատանք, փոխադարձ ուղղումներ և գործընկերային քննարկումներ:

Միջազգային համագործակցության խթանում. հարկ է ուսանողներին ներգրավել

միջազգային իրավաբանական ծրագրերի, ուսանողական փոխանակման ծրագրերի և համատեղ գիտաժողովների գործընթացին: Սա կապահովի լեզվական միջավայրի ստեղծումը և մասնագիտական հմտությունների ամրապնդումն իրական պայմաններում:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են անգլերենի դասավանդման առանձնահատկություններն «Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագրեր իրականացնող բուհերում:

Նշվում է, որ իրավաբանական անգլերենի ուսուցումը տարբերվում է լեզվի ընդհանուր դասընթացներից, քանի որ այն ուղղված է մասնագիտական մտածողության ձևավորմանը, իրավաբանական փաստաթղթերի վերլուծությանը և ոլորտային տերմինաբանության ճշգրիտ կիրառմանը:

Հոդվածում շեշտադրվում է իրավական եզրույթների ճիշտ թարգմանության և համարժեքների ընտրության, ինչպես նաև անգլերենով հաղորդակցության ընթացքում իրավական փաստարկումների մշակույթի կարևորությունը:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ իրավագիտություն ուսումնառողների համար անգլերենի դասավանդումն առավել արդյունավետ է, երբ այն ներառում է գործնական վարժություններ՝ դատական գործերի վերլուծություն, իրավական գրագրության ձևավորում և բանավոր բանավեճեր:

Որպես եզրահանգում՝ նշվում է, որ իրավաբանական անգլերենի դասավանդումը հարկ է կազմակերպել միջմշակութային և ոլորտային համատեքստում՝ զարգացնելով ուսանողների լեզվամտածողությունն ու իրավական հարցերի շուրջ հաղորդակցական հմտությունները:

PECULIARITIES OF TEACHING ENGLISH IN HIGHER EDUCATION INSTITUTIONS OFFERING LAW PROGRAMS

YEGHIAZARYAN GAYANE

*Brusov State University, Head of the Chair of English,
Doctor of Philological Sciences, Professor*

POGHOSYAN LEONARD

*Chief Specialist of the International Cooperation and Public Relations Department,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
Lecturer at the Chair of General Humanities and Socioeconomic Disciplines,
Rescue Service and Crisis Management Educational Unit*

Abstract. The article analyzes the distinctive aspects of legal English instruction in higher educational institutions offering degree programs in law.

It is noted that the teaching of legal English differs substantially from general language courses, as it is aimed at the formation of professional thinking, the analysis of legal documents and the accurate use of special terminology.

The article emphasizes the importance of accurate translation of legal terms and the choice of equivalents, as well as the culture of legal argumentation during communication in English.

The results prove that teaching English for law students is most effective when it includes practical exercises: analysis of court cases, development of legal writing and oral debates.

It is concluded that the teaching of legal English should be organized in an intercultural and sectoral context, developing students' linguistic thinking and legal communicative skills.

Keywords: higher education, law, foreign languages, English, legal texts, modern technologies.

**ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА
В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ, РЕАЛИЗУЮЩИХ
ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ПРОГРАММЫ
ПО СПЕЦИАЛЬНОСТИ «ЮРИСПРУДЕНЦИЯ»**

ЕГИАЗАРЯН ГАЯНЕ

*Заведующая кафедрой английского языка ГУ им. В. Брюсова,
Д. филол. наук, профессор*

ПОГОСЯН ЛЕОНАРД

*Главный специалист отдела международного сотрудничества и
связям с общественностью Образовательного комплекса МВД РА,
по совместительству преподаватель английского языка кафедры
общих гуманитарных и социально-экономических дисциплин
Образовательного комплекса МВД РА*

Аннотация. В данной статье рассматриваются теоретические и практические особенности преподавания английского языка в образовательных программах по специальности «юриспруденция» в контексте овладения профессиональной лексикой, чтения международно-правовых актов и литературы, формирования культуры юридического общения. В статье также рассматривается знание английского языка как жизненно важного компонента повседневного общения и профессиональной деятельности юриста, обеспечивающего профессиональный рост и вовлечение будущего юриста в международные правовые процессы.

Ключевые слова: высшее образование, юриспруденция, иностранные языки, английский язык, юридические тексты, современные технологии.

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Մ., Իրավաբանական անգլերեն մեդիատեքստերի ընթերցանությունը համացանցի միջոցով, Երևան, 2025, էջ 42–48:
2. Ոսկանյան Ա., Միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացումը իրավագիտության անգլերենի դասընթացում, «Կրթությունը 21-րդ դարում», Երևան, 2023, էջ 208–216:
3. Լեզուների իմացության/իրագրելության համակարգային համակարգ. Ուսուցում, դասավանդում, գնահատում, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ–Երևան, 2005:
4. Yeghiazaryan G., On Some Problems of Teaching in Content Areas, Foreign Language for Special Purposes // International Journal, Vol.5, Yerevan: Yerevan State University Press, 2005, pp 106-115.
5. Cummins, J., Language, Power, and Pedagogy: Bilingual Children in the Crossfire, California, Multilingual Matters LTD, California, 2000:
6. Richards, J. C., Hull, J., Proctor, S., Interchange (Fifth Edition), Cambridge: Cambridge University Press, 2017:

*Հոդվածը գրախոսվել է 26.01.2026
Ներկայացվել է տպագրության 30.01.2026*

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ԿԱՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՎՃԱՐԸ ՈՐՊԵՍ
ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍ**

ԻՄԱՀԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային

ծառայության վարչական գործերի և դատական

պաշտպանության վարչության դատական պաշտպանության

բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ

DOI:10.63925/18294847-2026.bl21-07

Ամփոփագիր. Հոդվածում անդրադարձ է կատարվում «վարչական ծախսեր» հասկացության բովանդակությանը և նշանակությանն ըստ ՀՀ օրենսդրության: Քննարկվում է վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը վարչական ծախս դիտարկելու, ինչպես նաև այդպիսի ծախսերի հատուցման հնարավորությունը: Համեմատական է տարվում ՀՀ և արտասահմանյան երկրների նույնաբնույթ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի հետ՝ վեր հանելով դրական լուծումները, նախանշելով կարգավորման արդյունավետ ուղիներ:

Քննարկվում է ՀՀ վարչական դատարանի դիրքորոշումը վարչական ծախսերի շրջանակի և հատուցման հարցի վերաբերյալ՝ ի ցույց դնելով նշված հարցերի կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան, մեր դիտարկմամբ՝ ոչ միշտ միատեսակ ու արդյունավետ:

Կատարված հետազոտության արդյունքում հեղինակն արձանագրում է վարչական ծախսերի և վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարի՝ տարբեր հարթություններում գտնվելու փաստը, ինչպես նաև այդ վճարի փոխհատուցման հնարավորության բացակայությունը վարչական վարույթում:

Հիմնաբառեր. Վարչական ծախսեր, վարչական վարույթում ծախսեր, ներկայացուցչի վճար, իրավաբանական օգնության վճար, փաստաբանի վճար, վարչական ծախսերի հատուցում:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է յուրաքանչյուր անձի պատշաճ վարչարարության իրավունքը¹, ինչից բխում է վարչական մարմնի կողմից իր լիազորությունների պատշաճ իրականացման անհրաժեշտությունը: Վարչարարություն իրականացնելիս կատարվում են որոշակի ծախսեր, որոնք միտված են գործերի

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118 (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), 50-րդ հոդվածը, էլ. աղբյուր՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=102510>, 25.12.2024թ. ժ.12:26:

անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննությանը:

1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԻՎՕ) որևէ կերպ չի բնորոշում վարչական ծախս հասկացությունը, սակայն առկա է դրույթ՝ համաձայն որի վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմնի կողմից տուժողներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին հնարավորություն է վերապահված հատուցվելու այն ծախսերի համար, որոնք կապված են տվյալ վարչական վարույթին վերջիններիս ներկայանալու հետ², և որոնք ենթակա են հատուցման վարչական մարմնի կողմից: Ստացվում է, որ նույնիսկ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի կարճման պարագայում ենթադրյալ իրավախախտի կողմից վարչական մարմին ներկայանալուն վերաբերող ծախսերը ՎԻՎՕ-ով կարգավորված չեն³: Ավելին՝ ՎԻՎՕ-ն ընդհանրապես չի նախատեսում ենթադրյալ իրավախախտին որևէ ծախսի հատուցման հնարավորություն: Ինչ վերաբերում է վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարին, ապա այն ՎԻՎՕ-ում նախատեսված չէ որպես վարչական ծախս, և, հետևաբար, ՎԻՎՕ-ն չի նախատեսում այդպիսի վճարի հատուցման հնարավորություն:

Անհերքելի է այն փաստը, որ ՀՀ վարչական իրավունքի վրա իր խոր հետքն է թողել ԽՍՀՄ վարչական իրավունքը: Այս համատեքստում նշենք, որ Ռուսաստանի Դաշնության ՎԻՎ օրենսգիրքը ևս որպես վարչական ծախս չի նախատեսում վարչական վարույթի մասնակցի, այդ թվում՝ ենթադրյալ իրավախախտի կողմից կատարված ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը⁴, հետևաբար, չի նախատեսում նաև դրա հատուցման հնարավորություն: Նույն օրենսգրքով սահմանված է, որ տուժողին, նրա օրինական ներկայացուցիչներին, վկային, մասնագետին, փորձագետին և թարգմանիչին փոխհատուցվում են այն ծախսերը, որոնք կապված են վերջիններիս կողմից համապատասխան վարչական մարմին, դատարան կամ իրավասու անձին ներկայանալու հետ⁵:

Համանման մոտեցում է առկա Թուրքմենստանի Հանրապետության ՎԻՎ օրենսգրքում, որով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ծախսերի շրջանակը չի ներառում ինչպես ենթադրյալ իրավախախտի կատարած ծախսերը⁶, այնպես էլ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության և

² Տե՛ս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք ՀՍՄՀԳՍ 1985/23, 274-րդ հոդվածը: Էլ. աղբյուր՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=186486>, 25.12.2024թ. ժ.12:30:

³ Վարչական մարմին ներկայանալու հետ կապված ծախսերը ներառված չեն վարչական մարմնի կողմից հատուցման ենթակա ծախսերի ցանկում:

⁴ Տե՛ս Кодекс Российской Федерации об административных правонарушениях от 30 декабря 2001 г. N 195-ФЗ, հոդված 24.7: Էլ. աղբյուր՝ <https://base.garant.ru/12125267/6be2d17d1f68853d8ca0afc174d241ad/>, 25.12.2024թ. ժ.12:30:

⁵ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 25.14:

⁶ Кодекс Туркменистана Об административных правонарушениях (с изменениями и дополнениями по состоянию на 01.12.2018 г.) հոդված 437: Էլ. աղբյուր՝ <http://www.parliament.am/library/varchakaniravaxaxtum19/turqmenstan.pdf>, 25.12.2024թ. ժ.12:30:

իրավաբանական օգնության վճարները, իսկ ինչ վերաբերում է վարչական ծախսերի հատուցմանը, ապա հատուցման ենթակա են միայն տուժողի, վկայի, մասնագետի, փորձագետի և թարգմանչի՝ վարչական մարմին ներկայանալուն վերաբերող ծախսերը⁷:

2004թ. փետրվարի 18-ին ընդունված՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) կոչված էր կանոնակարգելու վարչարարության ընթացքում առաջացող հարաբերությունները, այդ թվում՝ վարչական ծախսերին վերաբերող մասը:

Հատկանշական է, որ Օրենքում մի ամբողջ բաժին նվիրվեց վարչական ծախսերին, սակայն, այնուամենայնիվ, մեր կողմից հետազոտվող հարցին Օրենքն անդրադարձ է կատարել մակերեսորեն: Ավելին՝ օրենքի կարգավորման առարկայի շրջանակներում ներառված չեն վարչական ծախսերի հատուցմանն առնչվող՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները⁸: Առկա չեն առանձին իրավանորմեր վարչական ծախսերի հատուցման վերաբերյալ, մինչդեռ, օրինակ՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող հարաբերություններն ունեն հստակ կարգավորում⁹: Հարց է առաջանում՝ արդյո՞ք Օրենքը կարգավորում է վարչական ծախսերի հատուցմանն առնչվող հարաբերությունները:

Վարչական ծախսերի վերաբերությամբ Օրենքի կարգավորումներն ավելի ընդհանրական բնույթ ունեն: Օրենքի «Վարչական ծախսեր» վերնագրով 6-րդ բաժնում առկա չէ որևէ դրույթ վարչական ծախսերի հատուցման վերաբերյալ: Օրենքի կարգավորմամբ՝ վարչական ծախսը կատարվում է, ոչ թե հատուցվում, այսինքն՝ կատարված վարչական ծախսի հատուցում Օրենքը չի նախատեսում: Այս մեկնաբանությունը դեռևս չի նշանակում, որ Օրենքում չենք կարող հանդիպել վարչական ծախսերի հատուցման վերաբերյալ որոշակի դրսևորումների, օրինակ՝ նախատեսված է պետական և տեղական տուրքը վերադարձնելու մեխանիզմ¹⁰: Չնայած, այս դեպքում խոսքը ոչ թե հատուցման, այլ վերադարձման մասին է, մեր կարծիքով՝ վերադարձնելը տվյալ դեպքում դիտարկվում է որպես հատուցման ձև:

Եթե ՎԻՎՕ-ի պարագայում անհերքելի է, որ վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը չի համարվում վարչական ծախս և ենթակա չէ հատուցման, ապա նշված հարցի շուրջ Օրենքի կարգավորումները միանշանակ չեն մեկնաբանվում իրավակիրառ պրակտիկայում, ինչն արտացոլվում է նաև ստորև ներկայացված դատական գործերում:

Մասնավորապես՝ ՎԴ/6256/05/23 գործով «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ ՀՀ վարչական դատարանն արձանագրել է. «Տվյալ դեպքում հայցվորը խնդրել է պարտավորեցնել վարչական մարմնին ընդունել ոչ իրավաչափ վարչարարությամբ

⁷ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 438, 2-րդ մաս:

⁸ Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ՀՀՊՏ 2004.04.14/21(320) Հոդ.413, 1-ին հոդվածը: Էլ. աղբյուր՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=165294>, 25.12.2024թ. ժ.13:00:

⁹ «Տե՛ս նույն տեղում՝ բաժին 7:

¹⁰ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 91, 2-րդ մաս:

պատճառված 10.380 ՀՀ դրամի նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ: Այսինքն՝ հայցվորը ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայց՝ հայցապահանջի հիմքում դնելով այն հանգամանքը, որ պատասխանողի կողմից հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը բեկանվել է վարչական կարգով, ուստի հայցվորի ներկայացուցիչը դիմել է պատասխանողին ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված նյութական վնասը, այն է՝ հիշատակված որոշման շրջանակներում փաստաբանի մատուցած ծառայությունների դիմաց վճարված գումարը փոխհատուցելու պահանջով, որը պատասխանողի կողմից, ըստ էության, մերժվել է:

Դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը չի կարող քննվել պարտավորեցման հայցի շրջանակներում, քանի որ վարչական վարույթի ընթացքում փաստաբանի մատուցած ծառայությունների համար վճարված գումարը չի կարող դիտարկվել որպես ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնաս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հանդիսանում է վարչական վարույթի ընթացքում կատարված ծախս:»¹¹:

Սույն գործով ՀՀ վարչական դատարանը գտել է, որ փաստաբանի մատուցած ծառայությունների համար վճարված գումարը վարչական ծախս է՝ որոշմամբ չանդրադառնալով, թե այն Օրենքով նախատեսված որ վաչական ծախսերի մեջ է ընդգրկված:

Մեկ այլ՝ ՎԴ/1790/05/23 գործով կայացված վճռով ՀՀ վարչական դատարանն արձանագրել է հետևյալը. «Հաշվի առնելով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներով առաջադրված տուգանքների չափերը և 25.11.2022 թվականին կնքված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը՝ Դատարանը գտնում է, որ խախտված իրավունքների վերականգնման համար պիտանի և անհրաժեշտ ծախսերի չափը կազմել է յուրաքանչյուր Հայցվորի համար 15.000-ական ՀՀ դրամ:

Դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ դատաքննությամբ հիմնավորված ծախսերն իրականացվել են ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով խախտված իրավունքները վերականգնելու նպատակով, ... :»¹²:

Ստացվում է, որ սույն գործով ՀՀ վարչական դատարանն արտահայտել է ՎԴ/6256/05/23 գործով կայացված որոշմանը հակասող դիրքորոշում և վարչական վարույթի ընթացքում իրավաբանական ծառայությունների մատուցման վճարը դիտարկել է ոչ թե որպես վարչական ծախս, այլ որպես ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնաս: Տվյալ դեպքում ՀՀ վարչական դատարանն արձանագրել է, որ իրավաբանական ծառայությունների մատուցման վճարը վարչական ծախս չի համարվում:

¹¹ Էլ. աղբյուր՝ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809985934, 25.12.2024թ. ժ.13:10:

¹² Էլ. աղբյուր՝ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809980700, 25.12.2024 թ. ժ.13:10:

Պետք է արձանագրել, որ, ի տարբերություն ՎԻՎՕ-ի, Օրենքը նախատեսում է վարչական ծախսերի ավելի լայն շրջանակ, մասնավորապես՝ «վարչական ծախսերն են վարչական վարույթում գործի քննարկման համար օրենքով սահմանված դեպքերում և կարգով վճարվող պետական կամ տեղական տուրքը, ինչպես նաև սույն գլխով սահմանված այլ ծախսեր»¹³: Ակնհայտ է, որ վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը չի կարող նույնանալ պետական կամ տեղական տուրքի հետ, հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրել «այլ ծախսեր» հասկացության բովանդակությունը՝ պարզելու համար՝ արդյո՞ք վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը համարվում է այլ ծախս:

Այսպես, վարչական վարույթի ընթացքում կատարվող այլ ծախսերն այն ծախսերն են, որոնք կապված են՝

ա) վարչական ակտը կամ այլ փաստաթղթեր դրանց հասցեատերերին հանձնելու, ինչպես նաև վկաներ, փորձագետներ և թարգմանիչներ հրավիրելու հետ.

բ) հրապարակային հայտարարություններ անելու, վարչական ակտը հրապարակելու հետ.

գ) վարչական ակտի կամ վարույթի հետ առնչություն ունեցող այլ փաստաթղթերի լրացուցիչ օրինակներ տրամադրելու, այդ փաստաթղթերից պատճեններ (լուսապատճեններ) կամ քաղվածքներ կատարելու և տրամադրելու հետ.

դ) վարույթին մասնակցություն ապահովելու կամ վարույթի վերաբերյալ այլ նպատակով հեռագրեր և միջազգային հեռախոսազանգեր ուղարկելու և հղելու հետ.

ե) գործուղումների առնչությամբ առաջացող ճանապարհածախսը հոգալու հետ.

զ) այլ վարչական մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ կատարելու հետ.

է) իրեր տեղափոխելու կամ պահպանելու հետ.

ը) վարչական մարմնի կողմից կատարողական վարույթ իրականացնելու հետ.

թ) վարչական վարույթի ընթացքում փորձագետներին և թարգմանիչներին վարձատրելու հետ¹⁴:

Վերոնշյալը այլ ծախսերը կատարում է վարչական վարույթն իրականացնող մարմինը¹⁵, իսկ եթե փորձագետին կամ թարգմանչին հրավիրել է վարչական վարույթի որևէ մասնակից, ապա համապատասխան ծախսերը կրում է այդ մասնակիցը¹⁶: Այսինքն՝ փորձագետ և թարգմանիչ հրավիրելու ծախսերը հրավիրող մասնակցի կողմից կատարված լինելու պարագայում ևս հատուցման հնարավորություն նախատեսված չէ:

Վարչական ծախսերի տեսակներն սպառիչ կերպով թվարկված են Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասում՝ բացառությամբ նույն մասի «գ» կետի՝ «այլ վարչական

¹⁴ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 92, 1-ին մաս:

¹⁵ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 92, 2-րդ մաս:

¹⁶ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 93, 2-րդ մաս:

մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ կատարելու հետ կապված վարչական ծախս», ուստի վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը որպես վարչական ծախս դիտարկելու հարցը կարելի է քննարկել միայն նշված կետի շրջանակներում:

Պարզելու համար, թե արդյո՞ք վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը կարող է համարվել «այլ վարչական մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ կատարելու հետ կապված վարչական ծախս», անհրաժեշտ է վեր հանել այն ընդհանուր հատկանիշը, որը բնորոշ է վարչական ծախսերի հստակ թվարկված բոլոր տեսակներին և այնուհետև պարզել այդ հատկանիշի առկայությունը «ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարի» մեջ:

Քննարկվող հարցի կապակցությամբ մեր կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ վարչական ծախսերի թվարկված տեսակներն անխտիր ուղղված են վարչական մարմնի պարտականությունների և գործառնությունների պատշաճ կատարմանը, դրանք ծախսեր են, որոնք ապահովում են պատշաճ վարչարարության իրականացումը:

Ակնհայտ է, որ օրենքով սահմանված պետական կամ տեղական տուրքն սպասարկում է վարչական մարմնին: Այդ գումարը մուտք է արվում պետական կամ տեղական բյուջե, որից, ըստ էության, գոյանում է վարչական մարմնի աշխատակիցների աշխատավարձը և այլ ծախսերի համար անհրաժեշտ գումարը, որը, ընդհանուր առմամբ, ուղղվում է վարչական մարմնի պարտականությունների պատշաճ կատարմանը:

Վարչական ակտը կամ այլ փաստաթղթերը դրանց հասցեատերերին հանձնելու, փորձագետներ և թարգմանիչներ հրավիրելու, ինչպես նաև վարչական վարույթի ընթացքում փորձագետներին և թարգմանիչներին վարձատրելու ծախսերի կատարումը բխում է վարչական մարմնի պարտականություններից, մասնավորապես՝ վարչական մարմինը պարտավոր է պատշաճ վարչարարություն իրականացնել, վարչական ակտը կամ այլ փաստաթղթերը հանձնել հասցեատերերին¹⁷, անհրաժեշտության դեպքում վկա¹⁸ կամ փորձագետ¹⁹ հրավիրել, ինչպես նաև վարչական վարույթն իրականացնել²⁰ հայերենով:

Հրապարակային հայտարարություններ անելու, վարչական ակտը հրապարակելու²¹, վարչական ակտի կամ վարույթի հետ առնչություն ունեցող այլ փաստաթղթերի լրացուցիչ օրինակներ տրամադրելու, այդ փաստաթղթերից պատճեններ (լուսապատճեններ) կամ քաղվածքներ կատարելու և տրամադրելու²², ինչպես նաև վարույթին մասնակցություն ապահովելու կամ վարույթի առնչությամբ այլ նպատակով հեռագրեր

¹⁷ Տե՛ս նույն տեղում՝ 29.1-ին և 59-րդ հոդվածներ:

¹⁸ Տե՛ս նույն տեղում՝ 44-րդ հոդված:

¹⁹ Տե՛ս նույն տեղում՝ 45-րդ հոդված:

²⁰ Տե՛ս նույն տեղում՝ 27-րդ հոդված:

²¹ Տե՛ս նույն տեղում՝ 59-րդ և 68-րդ հոդվածներ:

²² Տե՛ս նույն տեղում՝ 39-րդ հոդված:

և միջքաղաքային հեռախոսագանգեր ուղարկելու և հղելու, իրեր տեղափոխելու կամ պահպանելու, ինչպես նաև վարչական մարմնի կողմից կատարողական վարույթ իրականացնելու ծախսերը ևս բխում են վարչական մարմնի պարտականությունների կատարումից, միտված են ապահովելու պատշաճ վարչարարության իրականացումը:

Վերոնշյալ վերլուծության պարագայում, կարծում եմ, կասկած չի հարուցում այն փաստը, որ վարչական ծախսերն ունեն մեկ նպատակ՝ ապահովել վարչական մարմնի պարտականությունների՝ վարչարարության պատշաճ իրականացումը:

Ինչ վերաբերում է այլ վարչական մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ կատարելու ծախսերին, ապա այս ծախսի տեսակը չի կարող մեկնաբանվել ընդհանուր բաժնի և գլխի մյուս դրույթների վերոնշյալ մենկանաբանություններին հակառակ:

Այսինքն՝ Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը՝ այլ վարչական մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ կատարելու ծախսերը, ևս պետք է մեկնաբանել որպես այնպիսի ծախսեր, որոնք ուղղված են վարչական մարմնի պարտականությունների պատշաճ կատարմանը, և այս համատեքստում «այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ» հասկացությունը չի կարող ներառել վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը, քանի որ վարչական վարույթի մասնակցի կողմից վարչական վարույթում ներկայացուցչի, այդ թվում՝ փաստաբանի միջոցով հանդես գալը կամ իրավաբանական օգնություն ստանալը որևէ առնչություն չունի վարչական մարմնի պարտականությունների պատշաճ կատարման հետ, մինևույն ժամանակ, դա չի նշանակում, որ վարչական մարմինը կարող է արգելել ներկայացուցչի միջոցով հանդես գալը կամ իրավաբանական օգնություն ստանալը, քանի որ դրանք վարույթի մասնակցի իրավունքներն են: Վարչական վարույթում վարչական մարմինը պարտականություն չի կրում վարույթի մասնակցին փաստաբանով ապահովելու կամ իրավաբանական օգնություն տրամադրելու, հետևաբար այդպիսի ծախսերը չեն կարող դրվել վարչական մարմնի վրա, քանի որ դրանք, ըստ էության, վարչական ծախսեր չեն: Հատկանշական է, որ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը՝ որպես այդպիսին, ուղղակիորեն նախատեսված չէ որպես վարչական ծախս, և տրամաբանական չէ «այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ» հասկացության բովանդակությունն անհիմն տարածել նաև ներկայացուցչի կամ իրավաբանական օգնության վճարի վրա: Տրամաբանական չէ, որ Օրենքը հստակ նախատեսեր վկայի, փորձագետի և թարգմանչի վարձատրության ծախսերը, իսկ ներկայացուցչի կամ իրավաբանական օգնության վճարը նախատեսեր ընդհանրական հասկացության տակ:

Վերոգրյալից բխում է, որ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը վարչական ծախս չէ, քանի որ այն նշված չէ վարչական ծախսերի տեսակների մեջ, ավելին՝ չի բխում «վարչական ծախս»

հասկացության էությունից և գաղափարից: Այս առումով կարող է հարց առաջանալ, թե այդ դեպքում ո՞ր ծախսերն են համարվում «այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ»։ Պատասխանը միանշանակ է, որ այս դրույթի տակ ևս օրենսդիրը նկատի է ունեցել այն ծախսերը, որոնք ուղղված են վարչական մարմնի պարտականությունների և լիազորությունների պատշաճ կատարմանը, այդ ծախսերը կատարվում են վարչական մարմնի նախաձեռնությամբ: Այս դրույթի տակ կարելի է հասկանալ այնպիսի ծախսեր, որոնք կատարվում են վարչարարության ընթացքում որևէ գործունեությամբ զբաղվող կամ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձի՝ վարչական մարմնին ցույց տված օգնության կամ վարչական մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում որոշակի ծառայություններից օգտվելու համար: Այս առումով Վրաստանի Հանրապետության ընդհանուր վարչական օրենսգրքը սահմանում է, որ իրավաբանական օգնության համար դիմած վարչական մարմինը պարտավոր է փոխհատուցել իրավաբանական օգնություն ստանալու ծախսերը, եթե դրանք գերազանցում են 50 լարին²³: «Այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների» հասկացության տակ Վրաստանի Հանրապետության օրենսդրությամբ հստակ սահմանված է վարչական մարմնի կողմից իրավաբանական օգնություն ստանալու ծառայության վճարը որպես վարչական ծախս:

Այսինքն՝ «այլ ծառայություններից օգտվել» ասելով պետք է հասկանալ ոչ թե ենթադրյալ իրավախախտի, այլ վարչական մարմնի կողմից անհրաժեշտ ծառայությունից օգտվելը: Որպես ակնառու օրինակ կարելի է նշել այն դեպքը, երբ վարչական մարմնին ապօրինի կառուցված շինությունն ապամոնտաժելու համար դիմում է համապատասխան տեխնիկաներ ունեցող որևէ ընկերությանը: Քննարկվող դրույթը վերաբերում է վարչական մարմնի կողմից որևէ անձի օգնությանը դիմելու կամ ծառայությունից օգտվելու արդյունքում առաջացած ծախսերին, և երբեք վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը չի կարող լինել վարչական ծախս:

Վրաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մասնավորապես՝ Վրաստանի Հանրապետության ընդհանուր վարչական օրենսգրքի համաձայն՝ վարչական վարույթի կողմերից յուրաքանչյուրն ինքն է կրում վարչական վարույթի այն ծախսերը, որոնք կատարվել են իր նախաձեռնությամբ կամ իր օգտին²⁴, իսկ վկա կամ փորձագետ հրավիրելու ծախսերն իրականացնում է հրավիրող կողմը²⁵: Բոլորովին այլ կարգավորում է առկա վարչական բողոքարկման վարույթում կատարված ծախսերի դեպքում, մասնավորապես՝ կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կատարած ծախսերը²⁶, սակայն բողոքի բավարարման դեպքում վարչական մարմինը փոխհատուցում է կողմի՝

²³ Տե՛ս Օբщий административный кодекс Грузии 25/06/1999, հոդված 19, 1-ին մաս:

Էլ. աղբյուր՝ <https://matsne.gov.ge/ru/document/view/16270?publication=43>, 25.12.2024թ. ժ.16:40:

²⁴ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 91:

²⁵ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 109, 5-րդ մաս:

²⁶ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 204, 2-րդ մաս:

ներկայացուցիչ կամ փաստաբան ներգրավելու ծախսերը միայն այն դեպքում, եթե կողմն անվճարունակ է²⁷:

ՀՀ օրենսդրությանն սկզբունքորեն հակառակ դրույթ է պարունակում Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, մասնավորապես՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործում պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի վերաբերյալ, որոնց պարագայում եթե վարչական պատասխանատվության ենթակա անձի, նրա ներկայացուցիչ կամ այլ անձանց կողմից պաշտպան չի հրավիրվում, ապա վարչական մարմինն է պարտավոր ապահովել փաստաբանի մասնակցությունը²⁸, բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը պարտավոր է ազատել անձին իրավաբանական օգնություն ստանալու համար կատարված ծախսերից, որոնք պետք է կատարվեն պետական բյուջեի հաշվին²⁹:

Վերոգրյալից բխում է, որ այն երկրներում, որտեղ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը համարվում է վարչական ծախս և որոշ պայմանների առկայության պարագայում ենթակա է հատուցման, օրենսդրությամբ հստակ նախատեսված է նման հնարավորությունը: Վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը որպես վարչական ծախս դիտարկելն ուղղակիորեն արտացոլում է տվյալ պետության օրենսդրի կամքը: Ինչպես նկատեցինք, ՀՀ օրենսդրությամբ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը չի համարվում վարչական ծախս և ենթակա չէ հատուցման, հակառակ պարագայում՝ այդ հնարավորությունը հստակ ամրագրված կլիներ ՀՀ նորմատիվ իրավական ակտերում:

Եզրահանգում

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ օրենսդրությամբ.

1. վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարը նախատեսված չէ որպես վարչական ծախս.
2. վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու վճարի հատուցման հնարավորություն նախատեսված չէ.
3. վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու ծախսերի կատարումը չի կարող դրվել վարչական մարմնի վրա.
4. վարչական վարույթում մասնակցի ներկայացուցչության կամ իրավաբանական օգնություն ստանալու ծախսերը որևէ պարագայում ենթակա չեն հատուցման վարչական մարմնի կողմից:

²⁷ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 204, 3-րդ մաս:

²⁸ Տե՛ս КОДЕКС РЕСПУБЛИКИ КАЗАХСТАН ОБ АДМИНИСТРАТИВНЫХ ПРАВОНАРУШЕНИЯХ (с изменениями и дополнениями по состоянию на 03.02.2019 г.) հոդված 749: Էլ. արբյուր՝ https://kodeksy-kz.com/ka/ob_administrativnyh_pravonarusheniyah/749.htm Законодательство Республики Казахстан 2026 год, 25.12.2024թ. ժ.17:00:

²⁹ Տե՛ս նույն տեղում՝ հոդված 750, 5-րդ մաս:

LEGAL ASSISTANCE OR REPRESENTATION FEES IN ADMINISTRATIVE PROCEEDINGS OUTSIDE THE SCOPE OF ADMINISTRATIVE COSTS

HARUTYUN ISAHAKYAN

Head of the Judicial Protection Division,

Department of Administrative Proceedings and Judicial Protection

Patrol Service of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,

Police Lieutenant Colonel

Abstract. The content and the meaning of the concept of “administrative expenses” in accordance with the legislation of the Republic of Armenia are discussed in the article. It illustrates whether payments for legal representation or assistance of participants in administrative proceedings can be included in administrative expenses, as well as the possibility of reimbursement of such costs. A comparative analysis of legal acts regulating similar relations in the Republic of Armenia and foreign countries is conducted, highlighting some positive solutions and identifying effective approaches to regulating these legal relations.

The position of the RA Administrative Court regarding the framework and procedure for reimbursement of administrative expenses is considered, demonstrating that the judicial practice formed on the specified issues, in our opinion, is not always uniform and effective.

As a result of the research, the author concludes that administrative expenses and fees for representation or legal assistance of a participant in administrative proceedings are on different grounds, as well as confirms the absence of possibility of reimbursement of these costs in administrative proceedings.

Key words: administrative expenses, expenses in the administrative process, representative’s fee, legal assistance fee, attorney’s fee, reimbursement of administrative expenses.

**ПЛАТА ЗА ПРЕДСТАВИТЕЛЬСТВО УЧАСТНИКА
АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА ИЛИ ЗА ПОЛУЧЕНИЕ
ЮРИДИЧЕСКОЙ ПОМОЩИ КАК РАСХОД, ПРОИЗВЕДЁННЫЙ
ВНЕ РАМОК АДМИНИСТРАТИВНЫХ РАСХОДОВ**

АРУТЮН ИСААКЯН

Начальник отдела судебной защиты

Управления по административным делам и судебной защите

Патрульной службы Полиции

Министерства внутренних дел Республики Армения,

подполковник полиции

Аннотация. В статье рассматривается содержание и значение понятия «административные расходы» в соответствии с законодательством Республики Армения. Обсуждается возможность рассмотрения платы за представительство или юридическую помощь участника административного производства в качестве административных расходов, а также возможность возмещения таких расходов. Проводится сравнение правовых актов, регулирующих аналогичные отношения в Республике Армения и зарубежных странах, с выделением позитивных решений и обозначением эффективных путей регулирования обозначенных правоотношений.

Обсуждается позиция административного суда РА по вопросу объема административных расходов и компенсации, демонстрирующая судебную практику, сложившуюся в связи с указанными вопросами, которая, по нашему мнению, не всегда единообразна и эффективна.

В результате проведенного исследования автор отмечает, что административные расходы и плата за представительство или юридическую помощь участника административного разбирательства находятся на разных уровнях, а также отмечает отсутствие возможности возмещения этих расходов в административном разбирательстве.

Ключевые слова: административные расходы, расходы в административном процессе, гонорар представителя, гонорар юридической помощи, гонорар адвоката, возмещение административных расходов.

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118 (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=102510>
2. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք ՀՍՍՀԳՍ 1985/23, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=186486>,
3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ՀՀՊՏ 2004.04.14/21(320) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=165294>,
4. Кодекс Российской Федерации об административных правонарушениях от 30 декабря 2001 г. N 195-ФЗ, <https://base.garant.ru/12125267/6be2d17d1f68853d8ca0afc174d241ad/>
5. Кодекс Туркменистана Об административных правонарушениях (с изменениями и дополнениями по состоянию на 01.12.2018 г.) <http://www.parliament.am/library/varchakaniravaaxatum19/turqmenstan.pdf>,
6. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809985934
7. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809980700
8. Общий административный кодекс Грузии 25/06/1999
<https://matsne.gov.ge/ru/document/view/16270?publication=43>
9. Кодекс Республики Казахстан об административных правонарушениях (с изменениями и дополнениями по состоянию на 03.02.2019 г.)
https://kodeksy-kz.com/ka/ob_administrativnyh_pravonarusheniyah

Հոդվածը գրախոսվել է 02.02.2026
Ներկայացվել է տպագրության 06.02.2026

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ
ՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԻՄՐԱՅԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

*իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ գիտությունների ազգային ակադեմիայի
Փորձաքննությունների ազգային բյուրոյի Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության,
քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս
DOI:10.63925/18294847-2026.bl21-08*

Համառոտագիր: Հոդվածում հեղինակը բացահայտել է համակարգչային հափշտակությունները պայմանավորող ընդհանուր և հատուկ բնույթի գործոնները, դրանց լատենտայնությունը և անհատական հանցավոր վարքը բնորոշող գործոնները:

Հեղինակը համակարգչային հափշտակությունները պայմանավորող ընդհանուր գործոններին է դասել հանցավորության պատճառական համալիրում ընդգրկված սոցիալական, տնտեսական և այլ բնույթի գործոնները:

Քննարկվող հանցագործությունները պայմանավորող հատուկ գործոնների շարքին հեղինակը դասել է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը և լայնորեն կիրառումը, նոր տեխնոլոգիաների, օրինակ՝ արհեստական բանականության ծագումը և տարածումը, առցանց եղանակով բանկային գործառնությունների կատարման հնարավորությունը, իրավապահ մարմինների տեխնիկական սուղ հնարավորությունները:

Հեղինակի կարծիքով՝ համակարգչային հափշտակությունների լատենտայնությունը պայմանավորում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հանցավոր արարքների բարդ, քողարկված բնույթը, ինչը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հանցագործության կատարման փաստի հայտնաբերումը, տուժողի, վկայի թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի, տուժողի, վկայի անվստահությունն իրավապահների նկատմամբ, իրավագիտակցության թերությունները, դատավարական կարգավիճակ ստանալուց խուսափելը և այլն:

Ինչ վերաբերում է դրդապատճառային ոլորտին, ապա, հեղինակի կարծիքով, համակարգչային հափշտակությունները մեծ մասամբ կատարվում են շահադիտական դրդապատճառով: Երբեմն հանցանքը կատարվում է ինքնահաստատման շարժառիթով, սեփական հմտությունների կատարելագործման ձգտմամբ, հետաքրքրասիրությունից ելնելով:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել համակարգչային հափշտակությունների ընդհանուր, հատուկ, անհատական, ինչպես նաև լատենտայնության կանխարգելման կազմակերպման գործընթացում:

Բանալի բառեր՝ համակարգչային հափշտակություն, պատճառական համալիր, գործոններ:

Ներածություն

Վիճակագրական տվյալները վկայում են, որ վերջին տարիներին քրեաբանական կայուն բացասական միտում՝ լայն տարածում են ստացել համակարգչային հափշտակությունների դեպքերը: Այսպես, 2021 թվականին արձանագրվել է 181, 2022 թվականին՝ 461 (154.7%-ով աճ), 2023 թվականին՝ 630 (36.7%-ով աճ), 2024 թվականին՝ 788 դեպք (25.1%-ով աճ)¹: Նշվածը խոսում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության մասին:

Համակարգչային հափշտակությունների նկատմամբ կանխարգելիչ ներգործության ապահովման համար հարկավոր է նշված հանցատեսակների քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ պատճառական համալիրի հետազոտության իրականացում:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է համակարգչային հափշտակությունների պատճառական համալիրի բացահայտումը: Հետազոտության խնդիրն է նշված հանցատեսակները պայմանավորող ընդհանուր և հատուկ բնույթի, լատենտայնությունը պայմանավորող գործոնների և դրոպապատճառների բացահայտումը:

Հետազոտությունը կատարվել է վիճակագրական, համեմատական, վերլուծության, հարցման և այլ գիտական մեթոդների կիրառմամբ:

Հիմնական հետազոտությունը

Մասնագիտական գրականության մեջ հանցավորության գոյությունը պայմանավորող գործոնների ամբողջության բնութագրման համար հաճախ օգտագործվում է «հանցավորության պատճառական համալիր» արտահայտությունը: Համակարգչային հափշտակությունների պատճառական համալիրը ներառում է դրանք դետերմինավորող գործոնների բարդ ամբողջությունը՝ պատճառները, որոնք անմիջականորեն ծնում են այդ հանցանքները, և պայմանները, որոնք հնարավորություն են ստեղծում դրանց կատարման համար: Պատճառական համալիրը և համակարգչային հափշտակությունները գտնվում են ոչ թե ձևական, այլ կորելիացիոն (փոխադարձ, փոխպայմանավորված) կապի

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, էջ 19 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf,

Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 16-17 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf, Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 8, 16 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4340020891.pdf (վերջին մուտք՝ 07.11.2025 թ.):

մեջ: Այդ պատճառով համակարգչային հափշտակությունների պատճառական համալիրն ստեղծում է միայն դրանց կատարման պատճառական հնարավորությունը, այլ ոչ թե կանխորոշվածությունը, ուստի և ենթակա է կանխարգելիչ ներգործության²:

Ստորև անդրադարձ է կատարվում համակարգչային հափշտակությունները պայմանավորող ընդհանուր և հատուկ բնույթի գործոններին, դրանց լատենտայնությունը պայմանավորող գործոններին, ինչպես նաև անհատական հանցավոր վարքի պատճառներին:

Համակարգչային հափշտակությունների պատճառական համալիրը բովանդակային առումով ներառում է հետևյալ ընդհանուր բնույթի գործոնները՝ հասարակության բևեռացումը (սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների անբավարար լինելը, աղքատության մակարդակը և այլն), ուրբանացումը՝ քաղաքաբնակների աճը (Հայաստանի Հանրապետությունում բարձր ուրբանացման մակարդակի հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների (հատկապես մայրաքաղաքի) միջև աշխատանքի շուկայի, կրթական հնարավորությունների, կյանքի որակի անհամաչափությունն է) և սոցիալական բնույթի այլ գործոնները, ընդհանուր տնտեսական ճգնաժամը, բնակչության տնտեսական պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև օբյեկտիվ հակասությունները, երկրում գործազրկությունը, ըստ եկամուտների մակարդակի՝ բնակչության բևեռացումը և տնտեսական բնույթի այլ գործոնները, ինչպես նաև հանցավորությունն ընդհանուր առմամբ պայմանավորող այլ գործոնները³:

Մեր հետազոտության արդյունքները փաստում են, որ խնդրո առարկա հանցագործությունները պայմանավորող հատուկ գործոններն են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը և լայնորեն կիրառումը, նոր տեխնոլոգիաների, օրինակ՝ արհեստական բանականության ծագումը և տարածումը (այս միջոցով հանցավորները կատարում են ներդրումային խարդախություններ՝ կեղծելով հայտնի անձանց կերպարը, ձայնը, որոնք իբր կոչ են անում կատարել ներդրումներ որոշակի կայքերում)⁴, առցանց եղանակով բանկային գործառնությունների կատարման հնարավորությունը⁵, իրավապահ մարմինների տեխնիկական սուղ հնարավորությունները⁶:

² Տե՛ս Сторубленкова Е. Г. Использование статистических методов в исследовании криминогенных факторов: Учебное пособие. Е. Г. Сторубленкова. – М.: Московский университет МВД России, 2007, էջեր 26-27:

³ Տե՛ս Բարայեյան Գ. Վ., Գիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործական ձեռնարկ / Գ. Վ. Բարայեյան. – Եր.: Հեղ. հրատ., 2019, էջեր 46-49:

⁴ Տե՛ս Մամուլի ասուլիս՝ կիրեռականացման գործոնների դրսևորումները սոցիալական ցանցերում // <https://www.youtube.com/watch?v=cXs3crC6IXQ> (վերջին մուտք՝ 07.11.2025 թ.):

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf (վերջին մուտք՝ 07.11.2025 թ.):

⁶ Տե՛ս Բարայեյան Գ., Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և իրացումը տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (քրեաբանական տեսանկյուն) // Իրավունքի արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու / ՀՀ ՆԳՆ կրթահամալիր: – Եր., ՄՈԱՎ ՊՐԻՆՏ, 2024, էջ 36:

Համակարգչային հափշտակությունների լատենտայնության կանխարգելման համար կարևոր նշանակություն ունի լատենտայնությունը պայմանավորող գործոնների բացահայտումը: Մեր կատարած հետազոտությունների արդյունքների հիման վրա ի հայտ են բերվել համակարգչային հափշտակությունների լատենտայնությունը պայմանավորող հետևյալ գործոնները.

1) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հանցավոր արարքների բարդ, քողարկված բնույթը, ինչը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հանցագործության կատարման փաստի հայտնաբերումը,

2) տուժողի, վկայի թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի, կամ պետությունը կարող է ապահովել իր անվտանգությունը,

3) տուժողի, վկայի անվստահությունն իրավապահների նկատմամբ, մտավախությունն առ այն, որ փոխանցված տեղեկատվությունը կմնա անհետևանք,

4) իրավագիտակցության թերությունները. երբեմն տուժողը, վկան կարծում են, որ արարքը հանցավոր չէ կամ հանցագործությունն էական վնաս չի պատճառել, որ դրա մասին հայտնեն,

5) հետագա վարության թաքցումից, դատավարական կարգավիճակ ստանալուց խուսափելը և այլն⁷:

Ինչ վերաբերում է անհատական հանցավոր վարքը պայմանավորող գործոններին, ապա նշենք հետևյալը: Կոնկրետ հանցագործության պատճառը միշտ կապված է անհատի հակահասարակական հայացքների, ձգտումների հետ և հանդես է գալիս մոտիվների (դրդապատճառների, շարժառիթների) ձևով⁸: Ծագելով լատիներեն «motum» եզրույթից՝ «մոտիվ» նշանակում է շարժիչ, այսինքն՝ գործոն, որն առաջնորդում է մարդուն իր գործունեության (այդ թվում՝ հանցավոր) մեջ: Դրդապատճառը ներքին մղումներն են, որոնք առաջացնում են անձի՝ որոշակի գործողություն կատարելու վճռականություն և ղեկավարում են նրան այդ գործողությունը կատարելիս: Փաստորեն, դրդապատճառը վարքի շարժիչն է, որը կարգավորում է մարդու կամային ակտիվությունը⁹:

Մեր իրականացրած հետազոտության արդյունքները վկայում են, որ խնդրո առարկա հանցագործությունները կատարվում են մի քանի դրդապատճառներով:

Համակարգչային հափշտակությունների դրդապատճառներն առավելապես ուղղված են անձի նյութական հետաքրքրությանը՝ գումար, այլ արժեքներ ապօրինի ձեռք բերելուն: Ըստ այդմ՝ գերակշռող է շահադիտական դրդապատճառը¹⁰:

⁷ Տե՛ս Բարայեյան Գ. Վ., Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ / Գ. Վ. Բարայեյան. – Եր.: Հեղ. հրատ., 2019, էջեր 62-64:

⁸ Տե՛ս Лекарь А. Г. Профилактика преступлений. М., Юрид. лит., 1972, էջ 42:

⁹ Տե՛ս Петелин Б. Я. Установление мотива и цели преступления. М., изд. ВНИИ МВД СССР, 1978, էջ 12:

¹⁰ Տե՛ս Բարայեյան Գ., Համակարգչային հափշտակություն կատարող անձի քրեաբանական պատկերը Հայաստանի Հանրապետությունում // Օրենքի պատվար, № 19, 2025, էջ 31:

Երբեմն համակարգչային համակարգ կամ ցանց ներթափանցելը, հափշտակություն կատարելը կապված է տարբեր տեսակի դեստրուկտիվ դրդապատճառների հետ: Այդպիսին է մոտ շրջապատում իրեն հաստատելը որպես սոցիալական և կենսաբանական էակ: Նշվածից ելնելով՝ շահադիտական շարժառիթից բացի հանդիպում է նաև ինքնահաստատումը: Երբեմն վերոհիշյալ շարժառիթները համադրվում են: Հաշվի առնելով հանցավորների տարիքային առանձնահատկությունները՝ շահադիտական և ինքնահաստատման շարժառիթների համադրությունը լիովին օրինաչափ է¹¹:

Հանցանքի կատարման շարժառիթներից են նաև ձգտումը սեփական հմտությունների կատարելագործմանը, հետաքրքրասիրությունը¹²:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերը ներկայացված տվյալները կարող են օգտագործվել համակարգչային հափշտակությունների ընդհանուր, հատուկ և անհատական կանխարգելման, ինչպես նաև լատենտայնության կանխման կազմակերպման գործընթացում:

Եզրակացություն

Կատարված հետազոտությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ եզրահանգումները.

1. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում լայն տարածում են գտել համակարգչային հափշտակությունները: Ուստի անհրաժեշտություն է առաջացել ակտիվացնել նշված հանցատեսակների կանխարգելման գործընթացը, ինչի հիմնաքարը դրանք պայմանավորող գործոնների բացահայտումն է:

2. Համակարգչային հափշտակությունները պայմանավորող ընդհանուր բնույթի գործոններն են սոցիալական գործոնները՝ հասարակության բնեռացումը, ուրբանացումը և այլն, տնտեսական բնույթի գործոնները՝ ընդհանուր տնտեսական ճգնաժամը, բնակչության տնտեսական պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև օբյեկտիվ հակասությունները, երկրում գործազրկությունը և այլն, ինչպես նաև հանցավորությունն ընդհանուր առմամբ պայմանավորող այլ գործոնները:

3. Քննարկվող հանցագործությունները պայմանավորող հատուկ գործոններն են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը և լայնորեն կիրառումը, նոր տեխնոլոգիաների, օրինակ՝ արհեստական բանականության ծագումը և տարածումը, առցանց եղանակով բանկային գործառնությունների կատարման հնարավորությունը, իրավապահ մարմինների տեխնիկական սուղ հնարավորությունները:

4. Համակարգչային հափշտակությունների լատենտայնությունը պայմանավորում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրա-

¹¹ Ст' у Шапошников А. А. Криминологическая характеристика личности киберпреступника // <https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer> (վերջին մուտք՝ 07.11.2025 թ.):

¹² Ст' у Белевитина Ю. В. Криминологический портрет личности киберпреступника в современной России // Международный практический журнал «Инновационная наука», 12-2 / 2022, էջ 63:

կանացվող հանցավոր արարքների բարդ, քողարկված բնույթը, ինչը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հանցագործության կատարման փաստի հայտնաբերումը, տուժողի, վկայի թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի, կամ պետությունը կարող է ապահովել իր անվտանգությունը, տուժողի, վկայի անվստահությունն իրավապահների նկատմամբ, մտավախությունն առ այն, որ փոխանցված տեղեկատվությունը կմնա անհետևանք, իրավագիտակցության թերությունները, հետագա վարության թաշառուկից, դատավարական կարգավիճակ ստանալուց խուսափելը և այլն:

5. Համակարգչային հափշտակությունները մեծ մասամբ կատարվում են շահադիտական դրդապատճառով: Երբեմն հանցանքը կատարվում է ինքնահաստատման շարժառիթով, սեփական հմտությունների կատարելագործման ձգտմամբ, հետաքրքրասիրությունից ելնելով:

THE CAUSAL FRAMEWORK OF COMPUTER THEFT IN THE REPUBLIC OF ARMENIA

ISRAYELYAN GEVORG

Doctor of Law, Associate Professor, Head of the Scientific

Research Center of Applied Problems in Criminology,

National Bureau of Expertise of RA National Academy of Sciences

Lecturer at the Chair of Law, Political Science and International Relations,

Eurasia International University

Abstract. The article covers the causal framework of computer theft in the Republic of Armenia by means of identifying the general and specific factors that contribute to its commission, latency, and individual criminal behavior. General factors include social, economic, and other circumstances that influence crime as a whole. Specific factors are associated with the rapid development and widespread use of information and communication technologies, the emergence of new technologies such as the artificial intelligence, the expansion of online banking services, and the limited technical capacities of law enforcement agencies.

Particular attention is paid to the factors determining the latency of computer theft, including the concealed and technologically complex nature of such offenses, which complicates their detection, as well as victims' and witnesses' skepticism regarding crime disclosure, distrust of law enforcement agencies, insufficient legal awareness, and reluctance to acquire a procedural status.

The analysis of the motivational sphere indicates that computer theft is predominantly driven by self-interest, however, motives such as self-actualization, desire to enhance personal skills, and curiosity are also observed. The findings of the study may be applied in the development and the implementation of general, special, and individual measures aimed at preventing computer theft and reducing its latency.

Keywords: computer theft, causal framework, factors.

ПРИЧИННЫЙ КОМПЛЕКС КОМПЬЮТЕРНЫХ ХИЩЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

Начальник Научно-исследовательского центра

прикладных проблем криминологии

Национального бюро экспертиз

Национальной академии наук Республики Армения

преподаватель кафедры правоведения, политологии

и международных отношений

Международного университета «Евразия»

доктор юридических наук, доцент

Аннотация. В статье автор выявил общие и специфические факторы, определяющие компьютерные хищения, их латентность, а также факторы, обуславливающие индивидуальное преступное поведение. К общим факторам автор отнес социальные, экономические и другие факторы, включенные в причинно-следственный комплекс преступности. В качестве специфических факторов автор выделил развитие и широкое применение информационных и коммуникационных технологий, появление и распространение новых технологий, таких как искусственный интеллект, возможность совершения банковских операций онлайн, ограниченные технические возможности правоохранительных органов.

По мнению автора, факторами, определяющими латентность компьютерных хищений, являются: сложный, скрытый характер преступных действий, совершаемых с использованием информационно-коммуникационных технологий, что затрудняет выявление правоохранительными органами факта совершения преступления, вызывает скептицизм потерпевшего и свидетеля в отношении того, что преступление будет раскрыто, недоверие потерпевшего и свидетеля к правоохранительным органам, недостатки правосознания, уклонение от получения процессуального статуса и т.д. Что касается мотивационной сферы, то, по мнению автора, компьютерные хищения, по большей части, совершаются из корыстных побуждений. Иногда преступление совершается из-за самоутверждения, стремления улучшить свои навыки, любопытства.

Результаты исследования могут быть использованы в процессе организации общего, специального, индивидуального предупреждения компьютерных хищений, а также их латентности.

Ключевые слова: компьютерное хищение, причинный комплекс, факторы.

Օգտագործված գրականության ցանկ

1. Իսրայելյան Գ. Վ., Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ / Գ. Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ., 2019. – 192 էջ:
2. Իսրայելյան Գ., Համակարգչային հափշտակություն կատարող անձի քրեաբանական պատկերը Հայաստանի Հանրապետությունում // Օրենքի պատվար, № 19, 2025, էջեր 29-35:
3. Իսրայելյան Գ., Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և իրացումը տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (քրեաբանական տեսանկյուն) // Իրավունքի արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու / ՀՀ ՆԳՆ կրթահամալիր: - Եր., ՄՌԱՎ ՊՐԻՆՏ, 2024, էջեր 34-44:
4. Белевитина Ю. В. Криминологический портрет личности киберпреступника в современной России // Международный практический журнал «Инновационная наука», 12-2 / 2022. С. 61-64.
5. Лекарь А. Г. Профилактика преступлений. М., Юрид. лит., 1972. – 104 с.
6. Петелин Б. Я. Установление мотива и цели преступления. М., изд. ВНИИ МВД СССР, 1978. – 128 с.
7. Сторубленкова Е. Г. Использование статистических методов в исследовании криминогенных факторов: Учебное пособие. Е. Г. Сторубленкова. – М.: Московский университет МВД России, 2007. – 90 с.
8. Шапошников А. А. Криминологическая характеристика личности киберпреступника // <https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer>

*Հոդվածը գրախոսվել է 05.02.2026
Ներկայացվել է տպագրության 11.02.2026*

ԴՊՐՈՑԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՌԻՓՄԻՄԵ

Ի.գ.թ., դոցենտ, ուստիկանության փոխգնդապետ,

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման
բազային և սպայական կրթության ղեկավարամենտի պետ*

DOI: 10.63925/18294847-2026.bl21-09

Ամփոփագիր. Սույն հոդվածում ուսումնասիրվում է դպրոցի դերն անչափահասների հանցավորության կանխարգելման գործընթացում՝ որպես սոցիալական և կրթական ինստիտուտ: Վերլուծվում են անչափահասների հանցավոր վարքագծի ձևավորման հիմնական գործոնները և ընդգծվում է դպրոցական միջավայրի նշանակությունը վարքային շեղումների վաղ փուլում բացահայտման և կանխարգելման գործում: Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում դպրոցում իրականացվող դաստիարակչական, սոցիալ-հոգեբանական և կրթական աշխատանքի համակարգված մոտեցման անհրաժեշտությանը: Միջազգային փորձի և ՄԱԿ-ի փաստաթղթերի վերլուծության հիման վրա առաջարկվում է դպրոցը դիտարկել ոչ միայն որպես կրթական հաստատություն, այլ որպես անչափահասների հանցավորության վաղ կանխարգելման ինստիտուցիոնալ հարթակ: Աշխատանքի շրջանակում հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի՝ դպրոցում իրականացվող կանխարգելիչ գործունեությունը կարող է հանդես գալ որպես միասնական հակաքրեաձին մեխանիզմ:

Բանալի բառեր. դպրոց, անչափահասների հանցավորություն, կանխարգելում, վաղ միջամտություն, հակաքրեաձին միջավայր:

Անչափահասների հանցավորության կանխարգելման ընդհանուր-սոցիալական միջոցները պետք է ուղղված լինեն առաջին հերթին բարելավելու դեռահասների դաստիարակությունն ընտանիքում, դպրոցում, ձևավորելու նրանց ժամանցը:

Սույն աշխատանքում մենք կանգ կառնենք դպրոցի դերի և նշանակության վրա անչափահասների սոցիալականացման գործընթացում՝ մինևույն ժամանակ շեշտադրում կատարելով կանխարգելիչ բնույթին:

Անձի սոցիալականացման գործընթացում ընտանիքից հետո կարևոր դերակատարություն ունի դպրոցը, որտեղ երեխաներն անցկացնում են իրենց կյանքի նշանակալի մասը: Այն Էական դեր է կատարում երեխայի դաստիարակման, բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորման գործում: Երեխան հենց այստեղ է ձեռք բերում ոչ միայն գիտելիքներ, այլև սոցիալական վարքագծի հմտություններ: Դպրոցում սովորեցնում են կարգապահություն, ազնվություն, աշխատասիրություն, ընկերասիրություն, վատ

սովորություններից՝ կոպտությունից, դաժանությունից, անտարբերությունից և եսասիրությունից ձերբազատում¹: Եվ ինչպես արդարացիորեն նշում է Ն.Ռ. Կոսիչը՝ այնպիսի ինստիտուտներում, ինչպիսիք են ընտանիքը, ուսումնական հաստատությունները, ընկերական խմբերը, տեղի են ունենում դեռահասների կողմից շրջապատող միջավայրի արժեքների և նորմերի յուրացման, անչափահասի անձի ձևավորման գործընթացները, իսկ անբարենպաստ ընտանիքի պարագայում՝ անչափահասի համար դպրոցը սոցիալականացման հիմնական ինստիտուտն է²:

Ինչպես ցույց են տալիս, նախկինում մեր իրականացրած³ վերլուծության արդյունքները, հանցանք կատարած անչափահասների 24.8%-ը, ըստ միջինացված ցուցանիշի, եղել են դպրոցի սովորողներ: Եվ այստեղ հարց է առաջանում. ինչպե՞ս դա կարող է տեղի ունենալ, դպրոցի աշխատանքներում ինչպիսի՞ հանգամանքներ կարող են հիմք ստեղծել անձի «ոչ ճիշտ» զարգացման համար:

Այդ հանգամանքները պայմանավորված են մի շարք թերություններով, որոնք ունեն կազմակերպչական բնույթ: Դրանք կապված են սովորողների հանդեպ մանկավարժական մոտեցման, որոշ մանկավարժների ոչ բարձր պրոֆեսիոնալիզմի, սահմանված վարքագծի կարգն ու կանոնը խախտելու հակման ձևավորման հետ:

Ըստ հետազոտողների՝ դպրոցում երեխաների դաստիարակությանը նպաստող կազմակերպչական բնույթի հանգամանքներից են ուսումնական ծրագրերի անկատարությունը, դպրոցի թույլ նյութական բազան, մանկավարժական կադրերի պակասը, դժվար դաստիարակվող երեխաների հետ աշխատելու անկարողությունը և այլն⁴: Հայաստանի Հանրապետությունում այս խնդիրը հատկապես մեծ է մարզերում, և դրանց կավելացնենք նաև մանկավարժների ցածր աշխատավարձը (թեպետ ատեստավորման գործընթացով պայմանավորված՝ այս հարցում կա որոշակի դրական տեղաշարժ, սակայն այն համատարած չէ և մասնավոր բնույթ է կրում): Արդյունքում՝ այսօր դպրոցում բացասական առումով լուրջ փոփոխության են ենթարկվել ուսուցիչաշակերտ հարաբերությունները. ուսուցչի և աշակերտի միջև անկեղծ, իրական հուզական կապերի ձևավորման փոխարեն՝ ի հայտ են գալիս «մասնավոր ուսուցիչ-պոտենցիալ աշակերտ» հարաբերությունները, ուսուցչի կողմից երեխային քաջալերելը, աջակցելը, նրա կյանքով և խնդիրներով հետաքրքրվելն առանձին դեպքերում մարդկային հարաբերությունների հարթությունից տեղափոխվում են ֆինանսական դաշտ: Մինչդեռ, ինչպես և ընտանիքում, ուսուցչի և աշակերտի միջև հուզական ջերմ հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն երեխայի զարգացման, ինքնա-

¹ Տե՛ս Դադովա Զալինա Իսմելովնա. Роль школы в социализации подростков // Теория и практика общественного развития. 2014. №17, էջ 199: URL: <https://cyberleninka.ru/article/n/rol-shkoly-v-sotsializatsii-podrostkov-1> (վերջին այցելություն՝ 10.07.2025):

² Տե՛ս Կոսեվիչ Կ.Պ., նշվ. աշխ. - էջ 109:

³ Տե՛ս օրինակ՝ Հ.Մ. Խաչատրյան, «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում», թեկ. Ատենախոսություն, էջեր 78-82:

⁴ Տե՛ս Իգոշև Կ.Է., Миньковский Г.М., Семья, дети, школа., էջեր 179-180:

գնահատականի ձևավորման, որպես անհատ կայացման համար: Ուսուցչի անձով է հաճախ պայմանավորված դպրոցում երեխայի առաջադիմությունը. առարկայով երեխայի հետաքրքրվածությունը մեծանում է, եթե այն դասավանդող ուսուցչի և երեխայի միջև կա փոխադարձ հարգանք, համակրանք, դրական տրամադրվածություն⁵:

Ներկայումս դպրոցներում ավելի հաճախ կարելի է հանդիպել երեխաների հանդեպ ուսուցչի անտարբերության, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ խտրական մոտեցման, ուսուցչական կազմի մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի, տարրական հոգեբանական գիտելիքներ չունենալու, դյուրագրգռության, ագրեսիայի դրսևորման, աշակերտի հանդեպ հոգեբանական և նույնիսկ ֆիզիկական բռնության գործադրման⁶: Հասկանալի է, որ այս բոլորն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում երեխայի ինչպես արժեհամակարգի, հոգեբանական առանձնահատկությունների, իրավագիտակցության, այնպես էլ վարքագծային մոդելների ձևավորման վրա: Վերջիվերջո, կտրվում է ուսուցիչ-աշակերտ հոգեբանական կապը:

Դեռահասի դպրոցից օտարացմանը նպաստում է նաև շատ դասարաններում աշակերտական կոլեկտիվի բացակայությունը, որն անձի սոցիալականացման կարևոր գործոն է: Դա կարող է հետևանք լինել աշակերտների միջև դրական հուզական կապերի բացակայության: Եթե դասարանում շփում չի ձևավորվում, եթե չկա աշակերտների միջև ազատ փոխներգործություն, ապա այդպիսի դասարանում կոլեկտիվ չի առաջանում: Հետևաբար, դպրոցում անչափահասը համատեղ գործունեությունից բավարարվածություն չի ստանում, ինչը պատճառ է դառնում նրա հաղորդակցման պասիվության: Այդպիսով՝ կրթական համակարգը կորցնում է հակաքրեաձին պոտենցիալը, քանի որ նրա ներսում առկա խնդիրները հանգեցնում են անչափահասի հոգեբանական օտարացմանը, և վերջինս սկսում է որոնել սոցիալական կապեր փողոցում՝ հակահասարակական խումբ մտնելու ճանապարհով:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ դպրոցը վաղուց այլևս չի ընկալվում միայն որպես գիտելիք փոխանցող հաստատություն, այլ դիտարկվում է որպես անչափահասների հանցավորության վաղ կանխարգելման կարևոր ինստիտուցիոնալ միջավայր, որտեղ հնարավոր է վաղ փուլում բացահայտել անչափահասների վարքային շեղումները և կանխել դրանց հետագա զարգացումը: Մասնավորապես՝ եվրոպական մի շարք երկրներում դպրոցը հանդես է գալիս որպես ընտանիքի, համայնքի և սոցիալական ծառայությունների միջև կապող օղակ, որտեղ կանխարգելիչ աշխատանքը կառուցվում է ոչ թե պատժի, այլ աջակցության և ներառման սկզբունքի վրա: Բացի այդ, ՄԱԿ-ի անչափահասների հանցավորության կանխարգելման վերաբերյալ Ռիադի ուղեցույցների համաձայն՝ կրթական հաստատությունները պետք է

⁵ Տե՛ս այս խնդրի շուրջ առավել մանրամասն վերլուծություն՝ Մարգարյան Ա.Ռ., նշվ. աշխ., էջ 128:

⁶ Տե՛ս օրինակ՝ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=34339947158703395 (վերջին այցելություն 07.11.2024թ.):

ապահովեն այնպիսի սոցիալական և դաստիարակչական միջավայր, որը նպաստում է երեխաների լիարժեք սոցիալական ինտեգրմանը և շեղվող վարքագծի կանխմանը՝ մինչև իրավական միջամտության անհրաժեշտության առաջացումը: Մինչդեռ, ինչպես արդարացիորեն նշում է Տ. Սիմոնյանը՝ ուսումնական հաստատությունները չեն իրականացնում վաղ պրոֆիլակտիկա՝ հատկապես շեղվող վարքով անչափահասների խմբերի անդամների բաժանման և վերակողմնորոշման դեպքում⁷:

Անչափահասների հանցավորության կանխարգելումը և անչափահասների հակահասարակական, այդ թվում՝ հանցավոր վարքագծի ուղղումը և դրա նկատմամբ վերահսկողությունը հնարավոր է իրականացնել ոստիկանության և մյուս շահագրգիռ մարմինների (դպրոց, մշակույթի կենտրոններ, երեխաների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ և այլն) հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ: Իսկ այդպիսի համագործակցության բացակայությունն արդեն իսկ բարդացնում է հանցավորության կանխարգելման գործընթացը:

Մեր կարծիքով, ընդհանուր-սոցիալական կանխարգելման՝ տնտեսական, սոցիալական, դաստիարակչական, կրթական, մշակութային, կազմակերպչական բնույթի միջոցառումները պետք է ուղղված լինեն նաև դպրոցի հեղինակության բարձրացմանը, դեռահասների համար դրական ուղղվածությամբ ժամանցի կազմակերպմանը, նրանց ընթերցանության, սպորտի և մշակութային պարապմունքներում ընդգրկելուն:

ՀՀ սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք և ներդաշնակ զարգացման մասին: Անհրաժեշտ է, որ հասարակությունը կենտրոնանա այս խնդրի լուծման վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների հայրենասիրական և բարոյական դաստիարակությանը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև նրանց կողմից հանցանքների կատարմանը: Հատկապես կարևորվում են ընտանիքի ամրապնդման քաղաքականությունը, ավանդական ընտանեկան արժեքների վերականգնումը՝ մեծ տեղ հատկացնելով երեխաների դաստիարակությանը, դպրոցի դերի և հեղինակության բարձրացմանը և արժևորմանը՝ խթանելով սերնդի կրթական մակարդակի բարձրացմանը, անչափահասների ժամանցի ճիշտ կազմակերպմանը, որոնք էլ կլինեն անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնական ուղղությունները և կնպաստեն նաև Սահմանադրությամբ ամրագրված՝ ծնողների պարտականությունների իրականացմանը:

Ուսումնական հաստատությունների արդյունավետ աշխատանքն անչափահասների հանցավորության կանխարգելման գործընթացում կարևորագույն գործոն է: Ուսումնական հաստատության գործունեությունն անչափահասի վրա ունենում է դաստի-

⁷ Տե՛ս՝ Սիմոնյան Գ.Վ. Молодежная преступность в Республике Армения: Монография / Под ред. докт. юрид. Наук А.А. Габузяна. Ереван, 2011, էջեր 94-95:

արակչական ներգործություն: Ուսումնառության ընթացքում անչափահասները պետք է յուրացնեն հասարակության մեջ ընդունված վարքագծի նորմերը, բարոյական և էթիկական մտածողության փորձը, իրականության հանդեպ բարոյական և էթիկական վերաբերմունքը, գաղափարների, հայացքների համակարգը: Դպրոցում պետք է ձևավորվի սովորողների հմտությունները՝ հասարակության մեջ ճիշտ կողմնորոշվելու, հարաբերություններում կառուցողական մոտեցումներ ցուցաբերելու, գիտակցական մակարդակը զարգացնելու համար: Միջազգային մոտեցումները վկայում են, որ հենց դպրոցում իրականացվող հետևողական սոցիալ-հոգեբանական աշխատանքն է թույլ տալիս կանխել հանցավոր վարքագծի արմատավորումը դեռևս մինչև իրավական միջամտության անհրաժեշտության առաջացումը⁸:

Ներկայումս դպրոցում դաստիարակչական գործունեության կազմակերպման և իրականացման գործընթացում առկա են մի շարք բացասական գործոններ՝ կրթության և դաստիարակության թույլ փոխկապակցվածությունը, դասարանի առջև աշակերտի ձևական պատասխանատվությունը, կրթության որակի նվազումը, դպրոցի և իրավապահ մարմինների, ինչպես նաև (որն ամենակարևորն է) դպրոցի և ծնողների միջև փոխհամագործակցության ցածր մակարդակը: Այս ամենը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում անչափահասի սոցիալականացման գործընթացի վրա:

Դպրոցն այն վայրն է, որտեղ ձևավորվում և մշակվում է դպրոցականի սոցիալական փորձը: Աշակերտը դպրոց է հաճախում ոչ միայն սովորելու սոցիումում ապրել, այլև սոցիալականացման ճանապարհ անցնելու համար, ճանապարհ՝ մանկությունից դեպի չափահասություն: Եվ այստեղ դպրոցի առաքելությունն է ուսումնառության հետ մեկտեղ անչափահասների գիտելիքները համալրել այնպիսի հմտություններով, որոնք անհրաժեշտ են ողջ կյանքի և հասարակության մյուս անդամների հետ հարաբերակցվելու համար:

Որպեսզի ուսումնական հաստատություններում աշակերտների հետ աշխատանքը լինի արդյունավետ, անհրաժեշտ է անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի հանդեպ: Դպրոցում իրականացվում է վերահսկողություն անչափահասների կրթություն ստանալու նկատմամբ: Խիստ վերլուծվում է աշակերտների հաճախելիությունը, հաշվի են առնվում բաց թողնված դասերը, անհարգելի բացակայության պատճառները, այդ մասին իրազեկվում է ծնողներին, անհրաժեշտության դեպքում՝ նաև ոստիկանությանը:

Դպրոցում կարևորում ենք պրոֆիլակտիկ աշխատանքների դերը, որի անցկացման համար պետք է մշակվեն պլաններ, որոնք կներառեն միջոցառումներ՝ իրավական և հայրենասիրական դաստիարակության, վատ սովորություններից ձերբազատվելու, առողջ ապրելակերպի քարոզչության վերաբերյալ: Ուսուցիչը, որն ամեն օր ուսումնական պարապմունքերի ժամանակ հանդիպում է աշակերտների հետ, կարող է ճիշտ ժամանակին ուշադրություն դարձնել հասակակիցների, ուսուցիչների, ուսման նկատմամբ

⁸ Sté u` World Health Organization. *Preventing Youth Violence: an Overview of the Evidence*, 2015

անչափահասների՝ նույնիսկ աննշան վարքային շեղումներին, որոնք ոչ միշտ են նկատելի: Հատկապես ընտանիքում, որպես կանոն, անչափահասների վարքագիծն էականորեն տարբերվում է այլ միջավայրում դրսևորած վարքագծից: Եթե նույնիսկ վարքագծային շեղումներն արտահայտվում են նաև ընտանիքի ներսում, ապա շատ ծնողներ այնքան կուրորեն են սիրում իրենց երեխաներին, որ ուղղակի ընդունակ չեն նկատելու նրանց վարքագծի շեղումները: Մինչդեռ հմուտ ուսուցիչը, որի համար բոլոր աշակերտները մինևույն հարթության վրա են, ունակ է նկատելու ցանկացած աշակերտի վարքագծի փոփոխությունները: Հետևաբար, վաղ կանխարգելումը հնարավոր է արդյունավետ իրականացնել դպրոցում, քանի որ ուսումնական հաստատության ազդեցությունն անչափահասի վրա բավականին մեծ է, որովհետև սա այն միջավայրն է, որին անչափահասն առնչվում է գրեթե ամեն օր: Դպրոցում անչափահասի վարքային շեղումը ժամանակին նկատելն էականորեն կնպաստի դրա վրա արդյունավետ ներազդմանը:

Դասարանն էլ իր հերթին կարող է անչափահասի վրա ունենալ դրական ազդեցություն, օգնել ինքնահաստատվելու, ներգործելու բացասական ազդեցության աղբյուրների վրա:

Անչափահասի հաջող սոցիալականացումը հնարավոր է ծնողների և մանկավարժների համագործակցության պայմաններում: Դպրոցն այն միակ հասարակական ինստիտուտն է, որն ունի ազատ մուտք անչափահասի ընտանիք, ինչը կարևոր հանգամանք է խնդիրներ ունեցող անչափահասների վարքագիծը վերահսկելու և շեղումները կանխարգելելու համար:

Անչափահասների հանցավորության կանխարգելման արդյունավետությանը կնպաստեն նաև այն միջոցները, որոնք կուղղվեն ուսումնական հաստատությունների գործունեության կատարելագործմանը: Մասնավորապես, կարող ենք առանձնացնել այն միջոցները, որոնք նպատակաուղղված են դպրոցի հեղինակության բարձրացմանը, գիտելիքի արժևորմանը, դպրոցից աշակերտի դուրս մնալը կանխելուն, մանկավարժների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը, ուսումնական հաստատության դաստիարակչական գործառույթի իրականացմանը, մանկավարժների կողմից անհրաժեշտության դեպքում աշակերտներին և նրանց ծնողներին սոցիալական ծառայությունների և իրավապահ մարմինների հետ համագործակցելու համար ուղղորդելուն և այլն:

Կարևոր ենք համարում մանկավարժների մասնագիտական որակները, որոնց շնորհիվ նրանք ունակ կլինեն իրացնելու նաև դաստիարակչական գործառույթը:

Դպրոցի դերը հատկապես այս հարցում կարևորվում է նաև այն առումով, որ անչափահասների հանցավոր խմբերի մի մասը ձևավորվում է ուսումնական հաստատություններում: Հենց այստեղ էլ պետք է միջոցներ ձեռնարկվեն դպրոցում աշակերտների սոցիալական շփման առողջացման ուղղությամբ: Անչափահասների ասոցիալ խմբերի կազմալուծման կամ վերակողմնորոշման աշխատանքների արդյունավետության հնարավորությունը բարձր է ուսումնական հաստատություններում, որտեղ հնարավոր է դրական ազդեցություն ունենալ աշակերտների միջև ձևավորված

հարաբերությունների ենթամշակույթի վրա՝ միմյանց միջև, նաև մանկավարժների հետ տարաձայնությունները հարթելու նպատակով: Այս աշխատանքներում մեծ դերակատարում պետք է ունենան ոչ միայն մանկավարժները, այլ նաև հոգեբանները, սոցիալական աշխատողները, ոստիկանության ծառայողները:

Իհարկե, ցանկալի չէ անչափահասի վարքային շեղման դեպքում վաղ շփումը ոստիկանության ծառայողի հետ, սակայն, կարծում ենք, վաղ պրոֆիլակտիկայի առումով դա անհրաժեշտ է, բայց ընդհանուր մակարդակով՝ ոչ թե անհատական, այլ խմբային պրոֆիլակտիկայի շրջանակում:

Ուսումնական հաստատություններում եթե չկան, անհրաժեշտ է ստեղծել, կամ եթե կան, ապա՝ ակտիվացնել մշակութային, գեղագիտական, սպորտային խմբակները, ապահովել դրանցում երեխաների ներգրավվածությունը, բացել երկարօրյա դասարաններ բոլոր աշակերտների համար:

Այստեղ կկարևորենք և կխրախուսենք արտադպրոցական կրթությունը, որի նպատակը սովորողների ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը նպաստելը: Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով: Սա ևս բացառիկ հնարավորություն է անչափահասների խմբային շփման պահանջմունքը բավարարելու համար: Հատկապես արտադպրոցական կրթությունը հանրապետությունում իրականացվում է գրեթե անվճար, որի մասին տեղեկատվությունը գետեղված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքում⁹: Սակայն մեր բանավոր հարցումը ցույց տվեց, որ բնակչության ճնշող մեծամասնությունը տեղյակ չէր դրա մասին: Ուստի, կարծում ենք, որ անհրաժեշտ է կիրառել բնակչությանն իրազեկելու առավել արդյունավետ մեխանիզմներ:

Տնտեսական արմատական փոփոխությունները հանգեցնում են աճող սերնդին ուղղված անհատական հատկանիշների նոր պահանջների՝ տնտեսական ակտիվության, շահույթ ստանալու ձգտման, խոհեմության, աշխատունակության խթանմանը: Հետևաբար, հանցավորության ընդհանուր կանխարգելման համատեքստում հատուկ նշանակություն է ստանում անչափահասների և երիտասարդների աշխատանքային դաստիարակության նոր համակարգի ներդրումը, որը կներառի նրանց մասնագիտական կողմնորոշման աջակցությունը, աշխատանքի տեղավորվելու համար օգնության ցուցաբերումը, աշխատանքային տեղերի ստեղծումը: Ժամանակակից

⁹ Տե՛ս <http://edu.am/index.php/am/about/view/108> (վերջին այցելություն 17.02.2025թ.):

պայմաններում կարևորագույն խնդիր է աճող սերնդի մասնագիտական ճիշտ կողմնորոշումը, որի հիմքերը պետք է դրվեն դպրոցում կամ հանրակրթություն իրականացնող մյուս հաստատություններում:

Այսպիսով, այսօր դպրոցը պետք է դիտարկել ոչ միայն որպես կրթական և դաստիարակչական հաստատություն, այլ որպես անչափահասների հանցավորության վաղ կանխարգելման ինստիտուցիոնալ հարթակ, միասնական հակաքրեաձին մեխանիզմ: Եվ կարծում ենք, որ դպրոցի՝ որպես հանցավորության կանխարգելման սուբյեկտի գործունեությունը պետք է ներառել հանցավորության վաղ կանխարգելման փուլում, երբ վարքային շեղումները դեռևս չեն ստացել հանցավոր բնույթ, և շնորհիվ կրթական, սոցիալական և հոգեբանական ազդեցությունների՝ կարող ենք ներգործել շեղվող վարքագծի վրա՝ կանխելով դրա հանցավոր զարգացումը:

THE SIGNIFICANCE OF SCHOOLS IN JUVENILE DELINQUENCY PREVENTION

KHACHATRYAN HRIPSIME

*PhD in Law, Associate Professor, Police Lieutenant Colonel
Head of the Department of Basic and Officer Education,
Police Educational Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs
of the Republic of Armenia*

Abstract. The article examines the role of schools in the prevention of juvenile delinquency considering them as social and educational institutions. It analyzes the main factors contributing to the formation of deviant behavior among minors and emphasizes the importance of the school environment in the early identification and prevention of behavioral deviations. Particular attention is paid to the need for a comprehensive approach to educational, social, and psychological activities within schools. Based on an analysis of international practices and United Nations documents, the article proposes considering schools not only as educational institutions but also as institutional platforms for the early prevention of juvenile delinquency. It argues that preventive activities implemented within the school environment can function as an integrated anti-criminogenic mechanism.

Keywords: school, juvenile delinquency, prevention, early intervention, anti-criminogenic environment.

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ШКОЛЫ В ПРЕДОТВРАЩЕНИИ ПРЕСТУПНОСТИ СРЕДИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

ХАЧАТРЯН РИПСИМЕ

*Начальник Департамента базового и офицерского образования
полицейского учебного подразделения
Образовательного комплекса МВД Республики Армения,
кандидат юридических наук, доцент, подполковник полиции*

Аннотация. В статье исследуется роль школы в системе профилактики преступности несовершеннолетних как социального и образовательного института. Анализируются основные факторы формирования девиантного поведения несовершеннолетних и подчеркивается значение школьной среды в раннем выявлении и предупреждении поведенческих отклонений. Особое внимание уделяется необходимости комплексного подхода к воспитательной, социально-психологической и образовательной работе в школе. На основе анализа международного опыта и документов Организации Объединённых Наций обосновывается подход, согласно которому школа рассматривается не только как образовательное учреждение, но и как институциональная платформа ранней профилактики преступности несовершеннолетних. Делается вывод о том, что профилактическая деятельность, реализуемая в школьной среде, может выступать в качестве единого анти-криминогенного механизма.

Ключевые слова: школа, преступность несовершеннолетних, профилактика, раннее вмешательство, антикриминогенная среда.

Օգտագործված գրականության ցանկ

1. Անչափահասների շրջանում հանցագործությունների կանխելու վերաբերյալ 1990թ. դեկտեմբերի 14-ի ուղենիշներ (Ռիադի ուղենիշներ):
2. ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («Պեկինյան կանոններ»), ընդունվել է 1985թ. նոյեմբերի 13-ին, թիվ 40/33 բանաձևով:
3. ՀՀ սահմանադրություն, ընդունված է 06.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում:
4. Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / խմբագիր՝ իրավ.գիտ.դոկտոր, դոցենտ Ա. Գաբուզյան- Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 104 էջ:
5. Մարգարյան Ա.Ռ., Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ - Եր.:–Հայրապետ հրատ., 2017, 256 էջ :
6. Ս. Խուրոյան, Անձի զարգացման ճգնաժամային տարիքները.- Եր.: Զանգակ- 97, 2004, 248 էջ:
7. Андреева Г.М. Социальная психология. - М., 1999, 480 էջ:
8. Антонян Ю.М. Социальная среда и формирование личности преступника. - М., 1975, 160 էջ:
9. Беличева С. А. Превентивная психология в подготовке социальных педагогов и психосоциальных работников: Учебное пособие, Питер, 2012- 336 էջ:
10. Возрастная и педагогическая психология / Под ред. А.В. Петровского. -М., 1973, 288 էջ:
11. Игошев К.Е., Миньковский Г.М Семья. Дети Школа. М., 1989, 448 էջ:
12. Игошев К.Е. Опыт социально-психологического анализа личности несовершеннолетних правонарушителей. - М, 1967, 79 էջ:
13. Кон И. Психология старшеклассника. М., 1980, 192 էջ:
14. Реан А.А., Коломинский Я.Л. Социальная педагогическая психология. — СПб., 1999.- 416 էջ:
15. Шнбутани Т. Социальная психология. - Ростов-на-Дону, 1999, 537 էջ:
16. Шнейдер Л. Б. Семейная психология. – М.: Академический Проект, 2011, 736 էջ:
17. Дадова Залина Исмеловна Роль школы в социализации подростков // Теория и практика общественного развития. 2014. №17, 199-201 էջեր:

Հոդվածը գրախոսվել է 11.02.2026
Ներկայացվել է տպագրության 14.02.2026

ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱԳԻԿ

«Երևանի «Հայրուսակ» Համալսարան»

Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի

Մասնավոր և հանրային ամբիոնի դասախոս,

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի հայցորդ,

DOI: 10.63925/18294847-2026.bl21-10

Ամփոփագիր. Սույն գիտական հոդվածում հանգամանորեն քննարկվում են իրավահասկացման տիպաբանության տեսակները, չափանիշները, դրանց տեսական և գործնական նշանակությունը:

Իրավահասկացման տիպաբանությունը գիտական դասակարգում է, այսինքն՝ ըստ էական հատկանիշների իրականացված դասակարգում, ընդ որում՝ ըստ կառուցվածքի առանձնացվում են տիպաբանության երկու հիմնական տեսակ՝ էմպիրիկ (փորձառարական) և տեսական:

Իրավահասկացման էմպիրիկ տիպաբանությունը կառուցվում է իրավահասկացման տարբեր սուբյեկտների իրավական ընկալումների մասին փորձնական տվյալների մշակման և մեկնաբանման հիման վրա, իսկ իրավահասկացման տեսական տիպաբանությունը ենթադրում է որոշակի իդեալական մոդելի կառուցում՝ հիմնավորված տեսական մտքի և տարբեր հայեցակարգերի քննական վերլուծության վրա:

Բանալի բառեր. տիպաբանություն, իրավահասկացում, էմպիրիկ և տեսական տիպաբանություն, իրավունքի էություն, օբյեկտիվ-իդեալիստական և սուբյեկտիվ իրեալիստական մոտեցումներ:

Ներածություն

Իրավունքի տեսության և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից խիստ արդիական է իրավահասկացման տիպաբանության հիմնախնդիրների գիտական հետազոտումը:

Իրավահասկացման տիպականացումը գիտական-ճանաչողական գործընթաց է, որի շնորհիվ բացահայտվում է իրավունքի և կոնկրետ իրավահասկացման էությունը, բովանդակությունը և գաղափարական-տեսական ակունքները:

Հիմնական հետազոտություն

Իրավահասկացման տիպաբանությունը գիտական դասակարգում է, այսինքն՝ ըստ էական հատկանիշերի իրականացված դասակարգում, ընդ որում՝ ըստ կառուցվածքի՝ առանձնացնում են տիպաբանության երկու հիմնական տեսակ՝ էմպիրիկ և տեսական¹: Իրավահասկացման տիպաբանության առումով տիպաբանության այս երկու տեսակները կարող են բնութագրվել հետևյալ կերպ: Իրավահասկացման էմպիրիկ տիպաբանությունը կառուցվում է իրավահասկացման տարբեր սուբյեկտների իրավական ընկալումների, պատկերացումների, հասկացությունների մասին փորձնական տվյալների քանակական մշակման և ընդհանրացման, իրավական տարբեր պատկերների միջև նմանության, տարբերության հաստատուն հատկանիշների ֆիքսման, տիպաբանական նկարագրման ու համեմատման արդյունքների համակարգման ու համապատասխան գիտական մեկնաբանման հիման վրա: Որպես էմպիրիկ տիպաբանության օրինակ՝ առաջարկում ենք փիլիսոփա-իրավական ուղղությունների հետևյալ տիպերը. 1) աստվածաբանական, որի կողմնակիցներն իրավունքի էությունը կապում են Աստծո կամքի հետ, 2) բնապաշտական, որի հետևորդներն իրավունքի էությունը տեսնում են բնական բանականության, իշխող տիեզերքի մեջ, 3) օբյեկտիվ իդեալիստական, որի կողմնակիցներն իրավունքի էությունը դուրս են բերում օբյեկտիվ ոգուց՝ գերզգայական գերագույն հոգևոր սկզբից, 4) սուբյեկտիվ իդեալիստական, որն իրավունքի էությունը որոնում է մարդու բանականության, գիտակցության, հոգեբանության մեջ, 5) միստիկական, որի կողմնակիցները բացատրում են իրավունքի էությունն առեղծվածային, գերզգայական հոգևոր ինչ-ինչ ուժերի մեջ, 6) տնտեսական, որի շրջանակներում իրավունքի էությունը բացատրվում է տնտեսական հարաբերություններով, 7) քաղաքագիտական, որը կապում է իրավունքի էությունը քաղաքական հարաբերությունների, քաղաքական գործունեության հետ, 8) սոցիալական (նեղ իմաստով), որի ջատագովները մեկնաբանում են իրավունքը՝ հենվելով սոցիալական հարբերությունների վրա, 9) ձևական-դոգմատիկ, որն իրավունքի էությունը հանգեցնում է գործող օրենսդրությանը:

Ձգտելով ընդգրկել փիլիսոփա-իրավական տիպերի ողջ բազմազանությունը՝ առանձնացված բնորոշ գծերի հիման վրա, հեղինակը ցույց չի տալիս նրանց միջև եղած փոխկապակցությունները: Տիպերից յուրաքանչյուրն առանձնացված է զուտ էմպիրիկ կերպով և հանդես է գալիս կարծես թե ինքնին, առանց այլ տիպերի հետ կապերի, միասնական համակարգից դուրս:

Նման տեսակի տիպաբանության էական թերությունն է սահմանված օրինաչափության բացակայությունը՝ օրինաչափություն, որը կարող էր վերիստիկ բնույթ տալ իրավահասկացման տիպաբանության տիպերին: Թերևս ինքը՝ Գ. Գ. Բերնացկին, նշում է, որ տվյալ տիպաբանությունն ունի մի շարք թերություններ: Այն, ըստ երևույթին, երբեք չի կարող ամբողջական լինել: Բավականաչափ ուշադիր հետազոտության դեպքում այս

¹ Sté u Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.

կամ այն մտածողների գործերում միշտ կարելի է գտնել գոյի որևէ ոլորտ, որին հանգեցվում է իրավունքը, և որը չի մտել ելային տիպաբանության մեջ:

Մեկ այլ թերություն կարելի է համարել այն, որ, ասենք, իրավական տարբեր պատմության մեջ այնքան հայտնի բնական իրավունքի տարբեր հայեցակարգերը պետք է, ըստ նոր տիպաբանության, վերաբերեն տարբեր տիպերին՝ մեկ բնապաշտական, մեկ օբյեկտիվ-իդեալիստական, մեկ սուբյեկտիվ-իդեալիստական:

Նշելով էմպիրիկ տիպաբանության թերությունները՝ հարկ է համաձայնել նաև, որ տիպաբանական համակարգեր կառուցելիս այն անհրաժեշտ քայլ (փուլ) է օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտման ճանապարհին: Մեր կարծիքով՝ կարևորագույն պայմանն է փոխկապակցությունների բացահայտման և դրանց համապատասխան տեսական տիպաբանության կառուցման համար:

Իրավահասկացման տեսական տիպաբանությունը ենթադրում է որոշակի իդեալական մոդելի կառուցում, որը հանդես կգա որպես բազում առանձին կոնկրետ իրավական պատկերների հետազոտման և տաքսոնոմիկ նկարագրությունների արդյունքում հայտնաբերված հատկանիշների ամբողջականության ընդհանրացված ամբողջականություն: Տեսական տիպաբանության սկզբունքն է իրավահասկացման համակարգային ընկալումը, ինչը ենթադրում է առանձին տիպերի միջև գոյություն ունեցող համակարգաստեղծ կապերի, օրինաչափությունների առանձնացում: Կարծում ենք՝ հենց այդպիսի տիպաբանությունն է առավել արդյունավետ կոգնիտիվ իմաստով՝ ծառայելով որպես օբյեկտի բացատրման և դրա տեսության կառուցման գլխավոր միջոցներից մեկը:

Որպես օրինակ կարելի է բերել նորմագոյացման տիպաբանությունը՝ ըստ օբյեկտի: Դրա իմաստն այն է, որ վերլուծված նյութի դիտարկման ու ամփոփման հիման վրա առանձնացվում են սուբյեկտներ, որոնք իրավական տարբեր տեսությունների շրջանակներում դիտարկվում են որպես իրավաստեղծության աղբյուրներ: Դրա հիման վրա առանձնացվում են իրավահասկացման հիմնական տիպերը, օրինակ՝ աստվածաբանականը, բնական-իրավականը, պատմականը (ազգային-պահպանողական ֆորմացիոնը), պոզիտիվ-իրավաբանականը:

«Այնտեղ, որտեղ ամենագոր նորմատու է հանդիսանում Աստվածը, մենք գործ ունենք աստվածաբանական (տեոլոգիական՝ լատինական theos-աստված բառից) իրավահասկացման հետ: Մարդու բնությունից (էությունից), նրա բանականությունից և խղճից է ածանցվում բնական իրավունքը: Ազգային-պահպանողական իրավահասկացման աղբյուր է ազգի մենթալիտետը, նրա վաղնջական թագին, որն աղբյուրի պես սնում է ժողովրդի սովորությանի իրավունքը և նրա էթնո-ազգային իրավական ավանդույթը: Իրավունքի ֆորմացիոն հասկացումը կապում է այն հասարակության պատմության որոշակի փուլին՝ ստրկատիրական, ավատատիրական, բուրժուական, սոցիալիստական և այլն: Այն հիմնված է հասարակական կարգի հանդեպ իրավունքի ծառայողական դերի վերլուծության, առաջնային արժեքների նրա կախվածության, պատմական տվյալ դարաշրջանի համար իրավական կարգավորման համակարգա-

ստեղծ հիմնավորումների վրա: Պոզիտիվ-իրավական տեսակետից իրավունքի աղբյուր է հանդիսանում պետական իշխանությունը»²:

Տեսական տիպաբանության օրինակ կարող է ծառայել «արտահայտման ձև-հասարակական գիտակցություն-իրավական հասարակական հարաբերություններ» չափանիշի վրա հենվող տիպաբանությունը: Այս չափանիշը, որն առաջարկվել է դեռ անցյալ դարում (Ն. Ն. Ալեքսեն), իսկ գուցեև ավելի վաղ, սակայն առավել լայն տարածում է գտել մեր օրերում: Դրան համապատասխան, տարբերակում են իրավահասկացման երեք հիմնական տիպ՝ նորմատիվային, բնական-իրավական (բարոյական) և սոցիոլոգիական³:

Հատկանշական է, որ նշված դասակարգման կողմնակիցներն ամենատարբեր կարծիքներ ունեն իրավահասկացման նշված տիպերի սոցիալական նշանակության վերաբերյալ: Առավել հաճախ համաձայնում են, որ իրավահասկացման բոլոր տիպերը (նորմատիվային, բնական-իրավական և սոցիոլոգիականը) «ունեն իրենց հիմքերը» և իրավական ֆենոմենի այս կամ այն կողմի արտացոլումն են: Այս կապակցությամբ՝ հատկանշական է Օ. է. Լեստի տեսակետը. «Հայեցակարգերից յուրաքանչյուրն արտահայտում է իրավունքի իրական կողմը և ծառայում է նրա իրականացմանը: Այսպես, իրավունքի բարոյական ընկալումը կարևոր է ինչպես իրավական դաստիարակության, այնպես էլ գործող իրավունքի զարգացման համար: Առանց իրավունքի նորմատիվային հասկացման՝ գործնականում անհասանելի են իրավական հարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը, ինչպես նաև օրինակա-նությունը՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մեջ: Վերջապես, միայն սոցիալական հասկացման միջոցով է իրավունքը ձեռք բերում կոնկրետություն և գործնական իրագործում. առանց դրա այն մնում է դեկլարացիա, տեքստերի կամ բարոյական մաղթանքների համակարգ»⁴:

Որպես տնտեսական տիպաբանության օրինակ կարելի է բերել նաև Յու. Ա. Բասկինի առաջարկած տիպաբանությունը: Գիտնականն առանձնացնում է իրավահասկացման հետևյալ հիմնական տիպերը. 1) մետաֆիզիկական, որը տեսնում է իրավունքի հիմքն ու նրա ծագման պատճառները սոցիալական գործոններից դուրս (և վեր), 2) մարդաբանական, որն իրավունքի հիմք է ճանաչում մարդու (անհատի) բնությունը, 3) սոցիոլոգիական, որի կողմնակիցները համարում են, որ իրավունքը հասարակական կապերի և հարաբերությունների արդյունք է⁵: Այստեղ հեղինակը ոչ միայն ֆիքսում է իրավական տարբեր պատկերների հաստատուն հատկանիշները, դրանց միջև եղած

² Տե՛ս **Баранов П. П. Швак В. Ю. Несмеянов Е. Е. Лукьянов А. И. Конгарев А. А.** Философия права: Учебное пособие. - Ростов-на-Дону. - 2002. - С. 12.

³ Տե՛ս օրինակ, **Лившиц Р.З.** Государство и право в современном обществе: необходимость новых подходов //Советское государство и право. - 1990. - № 10. - С. 18-19, **Лейст О. Э.** Три концепции права Государства и право. - 1991. - № 12. - С. 3-11; **Честнов Л.И.** Типы правовопонимания / Проблемы теории права и государства. Под ред. В.П. Сальникова. СПб. - 1999 С. 65-72. **Поляков А.В.** Общая теория права. Курс лекций. СПб. - 2001.Ц37; **Назаренко Г.В.** Теория права и государства. М. - 2001. - С. 11-12.

⁴ Տե՛ս **Лейст О.Э.** Три концепции права //Государство и право. - № 1991. - № 12. - С.7.

⁵ Տե՛ս **Баскин Ю.Я.** Очерки философии права. Сыктывкар. - 1996 С.4.

նմանություններն ու տարբերությունները, ոչ միայն թվարկում է որոշակի հատկություններով օժտված բազմապիսի տիպեր, այլև սահմանում է դասակարգիչ որոշակի չափանիշ, մեր կարծիքով՝ որպես հիմք ընդունելով «բնություն-մարդ-հասարակություն» համակարգաստեղծ փոխկապակցությունը:

Տեսական տիպաբանություն է առաջարկում նաև Վ. Ս. Ներսեսյանցը: Իր՝ զարգացվող ազատական-իրավաբանական տեսության մեջ նա առանձնացնում է իրավահասկացության երկու հիմնական տիպ՝ իրավաբանական և լեգիստական: Գիտնականի կարծիքով. «Իրավական մտքի և իրավաբանության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման երկու հակադարձ տիպերի պայքարով: Իրավունքի հասկացման և իրավունքի հասկացության մեկնաբանման երկու տիպերը կարելի է անվանել որպես իրավաբանական («իրավունք» բառից) և լեգիստական (լատինական *Lex` օրենք բառից*)»⁶: Այս տիպաբանության հիմքում դրված է «իրավունքի և օրենքի նույնացման կամ տարբերակման պահը»⁷:

Իրավաբանական իրավահասկացման համար իրավունքը ոչ միայն կամայական և սուբյեկտիվ հրահանգ է, այլ օբյեկտիվ և ինքնուրույն, սեփական (օրենսդրի կամքից անկախ) բնույթ, էություն, յուրահատկություն, մի խոսքով՝ իր սկզբունքն ունեցող որոշակի բան: Իրավունքի այդ սկզբունքը ձևական հավասարության սկզբունքն է, որն «արտահայտում է իրավունքի էությունն ու առանձնահատկությունը, կազմում իրավունքի տարբերակությունը սոցիալական այլ կարգավորիչներից, նորմերից և երևույթներից»⁸: Իրավաբանական իրավահասկացման շրջանակներում Վ. Ս. Ներսեսյանցն առանձնացնում է ազատական-իրավաբանական տիպը՝ համաձայն որի իրավունքը «մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է»⁹:

Ինչպես և Վ. Ս. Ներսեսյանցը, իրավահասկացման երկու հիմնական ձև է նշում նաև Վ. Ս. Չետվերնինը: Սակայն օգտագործելով տիպաբանության նոր չափանիշը՝ «իրավունքի և օրենքի տարբերակման կամ նույնացման» սկզբունքը, գիտնականը տիպաբանությանը տալիս է տերմինաբանական նոր ձևավորում՝ առանձնացնելով պոզիտիվիստական և ոչ պոզիտիվիստական տիպերը: Ըստ գիտնականի կարծիքի՝ իրավահասկացման պոզիտիվիստական տիպը հանգում է իրավունքի և օրենքի նույնացմանը (լայն իմաստով): Իրավունքի տակ պոզիտիվիստները հասկանում են «ցանկացած օրենքներ, վարչական ակտեր, դատական որոշումներ և ընդհանրապես պետական իշխանության բոլոր հրամանները՝ անկախ դրանց բովանդակությունից»¹⁰:

⁶ Տե՛ս **Нерсесянц В. С.** Философия права Гегеля. М. - 1998. - С. 133. Нерсесянц В. С. Философия права: Учебник для вузов. М. - 2006. - С. 32. Различие и соответствие права и закона как междисциплинарная проблема. Вопросы философии права. М. - 1973. Из истории правовых учений: два типа правовопонимания. Политические и правовые учения проблемы исследования и преподавания. М. - 1978. - Право и закон. - М. - 1983.

⁷ Տե՛ս **Нерсесянц В. С.** Философия права. Учебник для вузов. - М. - 2006. - С. 32.

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Տե՛ս **Четвергин В.А.** Понятия права и государства. Введение в курс теории права и государства. - М. - 1997. - С. 11.

Իրավահասկացման այս տիպի ներսում տարբերակվում են իրավունքի երկու տեսակի հասկացում՝ լեգիստական և սոցիոլոգիական¹¹:

Իրավահասկացման ոչ պոզիտիվիստական տիպը ներառում է քաղաքական-իրավական մտքի տարբեր ուղղություններ, որոնցում «անց է կացվում իրավունքի և օրենքի տարբերակում, բացատրվում է իրավունքի գերակայությունն օրենքի հանդեպ»: Ոչ պոզիտիվիստական տեսակետից «իրավունքն իրավացի է ոչ այն պատճառով, որ այն գրված է օրենքում և գոյություն ունի պաշտոնական ձևով, այլ՝ բովանդակությամբ: Օրենքները պետք է լինեն իրավական, պետք է պարունակեն իրավական նորմեր, սակայն իրականում օրենքներն իրենց բովանդակությամբ կարող են լինել ոչ իրավական, կամայական»¹²: Իրավահասկացման այս տիպին է դասում Վ. Ս. Չետվերնինն իրավունքի էթիկական և իրավաբանական հասկացումը¹³: Միննույն ժամանակ, գիտնականն իրեն համարում է ազատական-իրավաբանական տիպի իրավահասկացման կողմնակից, իսկ այդ տիպը (ինչպես կարելի է հասկանալ հեղինակի դատողություններից) վերաբերում է ոչ պոզիտիվիստական տիպի տարատեսակին, որի շրջանակներում էլ տրվում է «իրավունքի բուն իրավաբանական հասկացությունը, այսինքն՝ այն հասկացությունը, որը համապատասխանում է «իրավունք» տերմինին և բառին»¹⁴:

Կարծում ենք, որ Վ. Ս. Ներսեսյանցի և Վ. Ա. Չետվերնինի կողմից առաջարկված՝ իրավունքի և օրենքի հարաբերակցության չափանիշն ընդհանուր առմամբ արժանի է ուշադրության, քանի որ, անշուշտ, բացահայտում է որոշակի հաստատուն կապը՝ օրինաչափությունը, որը թույլ է տալիս առանձնացնել իրավահասկացման համապատասխան տիպերը: Դրա հետ մեկտեղ որոշակի կասկածներ է հարուցում դրա աստիճանավորման ճշտությունը: Այսպես օրինակ՝ դժվար է համաձայնել Վ. Ա. Չետվերնինի այն կարծիքին, թե իրավունքի սոցիալական հասկացումը հանգում է միայն վերջինիս մեկնաբանման՝ որպես սոսկ «ցանկացած դատական որոշումների», առավել ևս «պետական իշխանության հրամանների՝ անկախ դրանց բովանդակությունից»: Ինչպես մենք ցույց կտանք հետագա շարադրանքում, սոցիոլոգիական իրավահասկացման տեսակետից իրավունքն առաջին հերթին «կենդանի» հասարակական հարաբերություններն են, որոնք միայն ձևակերպվում են դատական որոշումներով: Իրավունքը բխում է բուն կյանքից, այլ ոչ պետական իշխանությունից:

Ոչ այնքան հիմնավոր ենք կարծում նաև ազատական-իրավաբանական հայեցակարգի կողմնակիցների կողմից պաշտպանվող այն դրույքը՝ համաձայն որի իրավունքի իրավաբանական հասկացությունը հնարավոր է ձևակերպել միայն ոչ պոզիտիվիստական իրավահասկացման շրջանակներում, իսկ մյուս բոլոր հասկա-

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

¹² Նույն տեղում, էջ 12:

¹³ Նույն տեղում, էջ 37:

¹⁴ Նույն տեղում, էջ 20:

ցությունները (լեզիստական, սոցիոլոգիական, էթիկական) իրավաբանական չեն՝ այս բառի բուն իմաստով: Ակնհայտ է, որ լիբերտարական (ազատական) հայեցակարգի կողմնակիցները չափից ավել են նեղացնում «իրավաբանական» հասկացության սահմանները՝ գործածելով այն միայն ազատության գաղափարի վերաբերյալ: Ընդ որում՝ դա արվում է արհեստականորեն, քանի որ ժամանակակից իրավական գիտության մեջ «իրավաբանական» հասկացությունն ընկալվում է այլ կերպ, քան անտիկ աղբյուրներում: Այդ իսկ պատճառով չարժե դիմել **jus** լատինական բառի արխայիկ մեկնաբանություններին, առավել ևս բացարձակացնել դրա անտիկ ժամանակների իմաստը ժամանակակից գիտական հայեցակարգեր կառուցելիս¹⁵:

Հակառակ դեպքում, հետևելով նման տրամաբանությանը, անհրաժեշտ կլինի վերանայել ժամանակակից իրավական գիտության հասկացողական ողջ ապարատը համապատասխանեցնելու համար այն պատմականորեն ավելի վաղ և, հետևաբար, տերմինների ավելի ճշտիվ մեկնություններին¹⁶:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է դուալիստական դասակարգում, որի շրջանակներում առանձնացվում են իրավունքի հասկացության վերաբերյալ երկու մոտեցում՝ լայն և նեղ¹⁷: Այս դասակարգման հիմքում ընկած է նորմատիվայնության չափանիշը: Եթե իրավունքը մեկնաբանվում է որպես պետության կողմից ապահովվող նորմերի համակարգ, ապա դա իրավահասկացման այսպես կոչված «նեղ» կամ նորմատիվային իրավահասկացումն է: Իսկ եթե նորմատիվայնության հատկանիշի հետ իրավունքի հասկացության մեջ մտնում են նաև իրավահարաբերությունները, իրավագիտակցությունը, ապա նման իրավահասկացումը տվյալ դասակարգման շրջանակներում համարվում է «լայն»: Իր առանձնահատկության պատճառով (որպես չափանիշ՝ նորմատիվայնության հատկանիշի ընդունումը) տվյալ տիպաբանությունը կիրառվում է գլխավորապես և առաջին հերթին իրավունքի նորմատիվ հասկացման շրջանակներում: Ինչպես նշում է «իրավունքի ժամանակակից նորմատիվային հասկացման» ջատագով Մ. Բ. Բայտինը՝ տվյալ հարցի վերաբերյալ «տարբեր գիտնականների առավել ուշադրության արժանի հայացքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք չեն հերքում եզրակացությունն առ այն, որ հայրենական իրավագիտության զարգացման ընթացքում ձևավորվեց իրավահասկացման երկու ուղղություն՝ նորմատիվային և լայն»¹⁸: Ընդ որում՝ լայն մոտեցմանը, «ի տարբերություն նորմատիվայինի, հատուկ է իրավունքի տակ հասկանալ ոչ միայն նրա նորմերը, այլ և իրավական երևույթները՝ ընդհուպ իրավունքի նույնացումը հասարակության

¹⁵ См. у **Нерсесянц В. С.** *Философия права Гегеля*. М., - 1998. - С. 169-170.

¹⁶ Հարկ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը հենց ազատական-իրավաբանական հայեցակարգի շրջանակներում կառուցված իրավահասկացման տիպաբանության մասին է, ոչ թե ընդհանուր առմամբ հեղինակի սկզբունքային պահերի մեծ մասի հետ համաձայն լինելը:

¹⁷ О понимании советского права. «Круглый стол // Советское государство и право. - 1979. - № 7. - С. 56-74; -1979. - N 8. - С. 48-77.

¹⁸ См. у **Байтин М. И.** *Сущность права (Современное нормативное право понимание на грани двух веков)*. М., 2005, с. 54.

համակարգի հետ, մինչև իրավունքի պոկումը պետությունից, բնական իրավունքի հակադրումը պոզիտիվայինի, այսինքն՝ պետության մեջ պաշտոնապես գործող իրավունքին, իրավունքի և օրենքի «իրավական» և «ոչ իրավական» (հակաիրավական) օրենքի տարբերակում և այլն»¹⁹:

Մ. Ի. Բայտինը նորմատիվային իրավըմբռնման դիրքերից քննադատորեն է գնահատում Վ. Ս. Ներսեսյանցի՝ ավելի վաղ առաջարկված տիպաբանությունը, որի շրջանակներում առանձնացվում է երեք հիմնական մոտեցում՝ նորմատիվային, լայն և այն մոտեցումը, «որի ներկայացուցիչները հիմնավորում են այնպիսի ըմբռնում (հասկացություն), որը ելնում է իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգից»²⁰:

Մ. Ի. Բայտինը, մասնավորապես, նշում է. «Չկան համոզիչ հիմքեր նորմատիվային և լայն մոտեցումների հետ մեկտեղ առանձնացնելու նաև երրորդ՝ որպես ինքնուրույն մոտեցում, քանի որ Վ. Ս. Ներսեսյանցի կողմից դրա հետևորդների թվին դասվող՝ իրավունքի և օրենքի տարբերակման կողմնակիցներն օգտագործում են տվյալ հայեցակարգը՝ որպես իրավունքի լայն ըմբռնման այս կամ այն տարբերակի հիմնական ապացույցներից մեկը»²¹: Համաձայն Մ. Ի. Բայտինի կարծիքի՝ դա ամբողջովին վերաբերում է նաև հենց Վ. Ս. Ներսեսյանցի հայեցակարգին:²²

Հարկ է նշել, որ որպես ունիվերսալ դասակարգիչ չափանիշ վերցված իրավունքի նորմատիվայնության հատկանիշը, որը թույլ է տալիս բնորոշել այս կամ այն

¹⁹ Նույն տեղում, էջ 5:

²⁰ Տե՛ս **Нерсесянц В. С.** 1) *Право: многообразие определений и единство понятия* (Советское государство и право. - 1983. - № 10. - С. 27: 2) *Право и закон*. М. - 1983. - С. 351-356.

²¹ Տե՛ս **Байтин М. И.** *Сущность права* (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов. - 200. - С. 44.

²² Բանավեճի մեջ մտնելով Վ. Ս. Ներսեսյանցի հետ և քննադատորեն գնահատելով նրա հայացքները, հատկապես կապված իրավահասկացման տիպաբանության հիմնահարցին՝ Մ. Ի. Բայտինը նկատում է. «թեև, նա (Վ. Ս. Ներսեսյանցը) չի համարում իրեն իրավունքի լայն հասկացման ներկայացուցիչ և նույնիսկ ճանաչում է «իրավունքի բնորոշման մեջ նորմի հետ մեկտեղ նաև դրա ածանցյալները» օրինակ՝ իրավահարաբերության, իրավագիտության, սուբյեկտիվ իրավունքի թվարկման ակներև տրամաբանական անհեթեթությունը: Մակայն երբ նա, հակառակ հենց նոր մեջբերված միանգամայն ճիշտ, մեր կարծիքով, պնդմանը, գալիս է այն եզրակացության, որ «իրավական ձևերը, իրավական հարաբերությունները և այլն, իրավունքի միասնական հասկացության բաղադրիչ մասերը» են, նա ակնհայտորեն հանդես է գալիս իրավունքի լայն հասկացման դիրքերից:

Դրա հետ մեկտեղ, ուշադրություն է դարձնում տվյալ հարցի վերաբերյալ Վ. Ս. Ներսեսյանցի դիրքորոշումը: Արժանին հատուցելով իրավունքի լայն հասկացման կողմնակիցների ջանքերին՝ նա միաժամանակ կարծում է, որ «իրավունքի և օրենքի հարաբերակցության տեսակետից բանավեճն այսօր տարածված իրավունքի հասկացության դեմ կրում է ոչ սկզբունքային բնույթ», քանի որ և սրանք, և նրանք իրենց տեսական կոնստրուկցիաներում մտում են, ըստ էության, օրենսդրության սահմաններում»: Նա առաջարկում է արմատապես վերանայել իրավունքի նորմի և ընդհանրապես իրավունքի մասին այդ, իր խոսքերով ասած, «տարածված» պատկերացումները: Մակայն այն, ինչը Վ. Ս. Ներսեսյանցը համարում է իրավունքի նորմ և մտցնում է իրավունքի հասկացության մեջ, իրական կյանքում ուզում է նա թե ոչ, ոչ այլ ինչ են, քան սովորույթներ, ավանդույթներ, սկզբունքներ մարդկանց վարքի բարոյական կորպորատիվ, կրոնական և այլ կանոններ: Իսկ դա ոչ այլ ինչ է, քան իրավունքի լայն (չափազանց լայն հասկացման տարբերակ, երբ դրա մեջ առաջարկվում է մտցնել ըստ էության ոչ իրավական երևույթներ և հ տարբերություն լայն իրավահասկացման այլ կողմնակիցների, դա կոչ է արմատապես վերանայել իրավական գիտության մեջ ձևավորված պատկերացումն իրավական նորմի մասին» (Байтин М.И. *Сущность права* Современное нормативное правопонимание на грани двух веков Саратов, 2001. С. 45-46):

իրավահասկացման «լայնությունը», այնքան էլ ակներև չէ, որքան թվում է նորմատիվային մոտեցման կողմնակիցներին²³: Որպես ելակետ՝ Ս. Ի. Բալտինն առաջարկում է ընդունել իր իսկ կողմից որպես հիմնական պարտադրվող նորմատիվայնության հատկանիշը: Սակայն եթե ժամանակակից հայրենական իրավական գիտության մեջ այդ հատկանիշն իսկապես այդքան հաճախ առաջ է քաշվում որպես հիմնական, դա ամենևին չի նշանակում, որ այն ունիվերսալ է՝ որպես իրավահասկացման տիպերի դասակարգման չափանիշ, և ընդունելի է իրավունքի ընդհանուր տեսության համար:

Հայտնի է, որ իրավական ոչ բոլոր ուսմունքներն են վերլուծում իրավունքը որպես նորմերի համակարգ: Այսպես, իրավաբանական նորմն առասպել, պատրանք, ֆիկցիա հայտարարած ծայրահեղ ռեալիստների համար²⁴ «նեղ» իրավահասկացումը կլինի այն, որի շրջանակներում իրավունքը մեկնաբանվում է որպես դատական որոշում՝ կոնկրետ գործով, կամ էլ նույնիսկ որպես բուն սոցիալական հարաբերություն (Դ. Ֆրենկ): Իսկ «կենդանի իրավունքի» հասկացությանը նորմատիվայնության պես հատկանիշի ավելացումը, ըստ էության, կնշանակի այդ հասկացության «լայնացում»:

Իրավագիտական գրականության մեջ առաջարկվում է իրավահասկացման տիպաբանական դասակարգում՝ ըստ «տեսություն-պրակտիկա» չափանիշի, ինչն ընդհանուր առմամբ համապատասխանում է մեր առաջարկված մակարդակային աստիճանավորմանը: Այսպես, Ս. Վ. Պոլյակովն առանձնացնում է իրավահասկացման տիպերի դասակարգման երկու հիմք, որոնց համապատասխան՝ առանձնացվում են պրակտիկ և տեսական տիպերը: «Իրավահասկացման պրակտիկ (գործնական) տիպը, - գրում է հեղինակը, - արտացոլվում է հասարակական իրավական գիտակցության մեջ որպես առավել ընդհանուր հատկանիշ, որը բնութագրում է հասարակության վերաբերմունքն իրավունքի հանդեպ, նրա հատուկ «իրավատեսողությունը» և «իրավագագողությունը»: Ամեն քաղաքակրթություն ունի իրավահասկացման իր սեփական տիպը: Կարելի է առանձնացնել նաև ավելի ընդհանուր խմբեր, օրինակ՝ Արևելքի և Արևմուտքի իրավահասկացումը»:

Ի տարբերություն պրակտիկ իրավահասկացման՝ երկրորդ՝ տեսական տիպը «ձևակերպված է հայեցակարգորեն, իսկ արժեքային պահերը նրանում գաղափարայնացված են և հաճախ քողարկված»: Տեսական իր զարգացման ընթացքում արևմտյան իրավական միտքը ձևակերպել է իրավունքի հասկացման վերաբերյալ **երեք հիմնական տեսական մոտեցում** (իրավահասկացման երեք տեսակ)՝ **բնական-իրավական, էտատիկ** (ազատական) և **սոցիոլոգիական**²⁵:

²³ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե նորմատիվայնության, որպես այդպիսին, ճշտիվության, այլ որպես իրավահասկացման տիպերի դասակարգման չափանիշ օգտագործելու բուն հնարավորության մասին է: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, նորմատիվայնությունը, անշուշտ, պետք է դիտվի որպես իրավունքի հատկանիշներից մեկը:

²⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Յորկին В. Д. Социологическая юриспруденция// История политических и правовых учений / Под ред. В. С. Нерсисянца М. - 1981. - С. 613-614.

²⁵ Տե՛ս Պոլյակով А. В. Общая теория права. Курс лекций. - СПб. - 2001. - С. 37.

Հիմնարար և գիտական-ճանաչողական առումով բավականաչափ հետաքրքիր է Ի. Լ. Չեստնովի առաջարկած իրավահասկացման տիպերի դասակարգումը՝ ելնելով «գիտականության չափանիշը ձևավորող ռացիոնալության երեք տիպերից»²⁶, գիտնականն առանձնացնում է դասակարգման երեք չափանիշ՝ փիլիսոփայական, **սոցիոլոգիական**, **պատմամշակութային**:

Փիլիսոփայական չափանիշը ենթադրում է իրավահասկացման տարաբաժանումը տիպերի՝ ըստ որոշակի փիլիսոփայական հայեցակարգին նրանց պատկանելիության սկզբունքի: Փիլիսոփայական չափանիշի շրջանակներում Լ. Ի. Չեստնովը որպես դասակարգիչ հիմքեր է դիտարկում փիլիսոփայական գույգ կատեգորիաներ՝ «նյութական» և «իդեալական» (համապատասխանաբար առանձնացնելով իրավահասկացման մատերիալիստական և իդեալիստական տիպերը), ինչպես նաև «բնական» և «արհեստական» կատեգորիաները: Ընդ որում, համաձայն գիտնականի՝ բնականության չափանիշին համապատասխանում են իրավունքի պատմական դպրոցը, Մ. Մ. Կովալևսկու իրավունքի գենետիկական սոցիոլոգիան, հեգելյան իրավունքի փիլիսոփայությունը, աուտենտիկ մարքսիզմը: Արհեստականության չափանիշին են համապատասխանում XIX և XX դարերի իրավաբանական պոզիտիվիզմը, ԱՄՆ-ի ժամանակակից գործիքայնությունը (ինստրումենտալիզմ), ինչպես նաև իրավունքի

²⁶ Տե՛ս Լ. Ի. Չեստնովի՝ ռացիոնալության պատմական երեք տիպերի գաղափարը, անշուշտ, արժանի է հատուկ ուշադրության, քանի որ իրավահասկացման հիմնահարցի առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Հեղինակն իր հայեցակարգը հիմնավորում է հետևյալ կերպ. (պատմականորեն կարելի է առանձնացնել գիտականության չափանիշը ձևավորող երեք տիպ Նոր ժամանակի դարաշրջանում, դա դասական ռացիոնալությունն է՝ հիմնված բանականության վրա: XIX դարում դրան փոխարինելու եկավ պոզիտիվիստական ռացիոնալությունը, որը հենվում է փորձի արդյունքում ստացված գիտելիքի և տրամաբանության վրա: XX դարի կեսից ձևավորվում է ռացիոնալության երրորդ տիպը՝ սոցիոմշակութայինը, Գիտականության առաջին երկու չափանիշները համապատասխանում էին իրավունքի փիլիսոփայությանը (նոր ժամանակի դարաշրջանում ներկայացված բնական իրավունքի տեսությամբ) և իրավաբանական պոզիտիվիզմին: Սակայն այսօր նրանք արդեն սպառել են իրենց գիտական ներուժը: Դրանց փոխարինելու եկավ իրավունքի զանազան տեսությունների բավականին խայտաբղետ մի փունջ, որոնք այս կամ այն չափով համապատասխանում էին ժամանակի առավել տարածում գտած փիլիսոփայական հոսանքներին. վերլուծական իրավաբանություն, իրավունքի ֆենոմենոլոգիա և հերմենևտիկա, իրավական էկզիստենցիալիզմ, իրավունքի մարդաբանություն և այլն: Դրանցից յուրաքանչյուրն առաջ է քաշում գիտահետազոտական ծրագրի իր չափանիշները: Հետևաբար, իրավական տեսությունները պետք է համապատասխանեն աշխարհայեցողական էլային սկզբունքներին, ինչպես նաև մեթոդաբանական բնույթի ավելի կոնկրետ նորմատիվների (այսպես, իրավունքի ֆենոմենոլոգիայի և հերմենևտիկայի համար դա հրաժարումն է «բնական դրույթից», այսինքն՝ օբյեկտի հետ մենախոսությունից և դրա փոխարինումը հասկացում երկխոսությամբ): Սակայն գոյություն ունեն նաև որոշակի ընդհանուր սկզբունքներ, որոնք ճանաչվում են գիտական ողջ հանրության կողմից: Դրանք բավականին ընդհանուր սկզբունքներ են. շարադրանքի պարզություն, պրակտիկայում գիտելիքների կիրառման (իրական կամ պոտենցիալ) հնարավորություն, համապատասխանությունն առողջ դատողության ինքնին հասկանալի ժամանակակից մարդկանց մեծամասնության համար) պահանջներին, գիտական արդյունքների ստուգման հնարավորությունն: Այնուհետև Լ. Ի. Չեստնովը նշում է, որ «աշխարհայեցողական (փիլիսոփայական) սկզբունքները բնորոշում են հետազոտման առարկան և ճանաչման մեթոդները, իրավունքի տեսության կառուցվածքը, պրակտիկայի հետ դրա փոխգործակցությունն իրավունքի տեսության տեղը այլ գիտությունների համակարգում, ինչպես նաև գիտելիքների ֆիքսման և փոխանցման այս կամ այն եղանակները: Այս պարամետրերը կարելի է համարել իրավունքի տեսության գիտականության չափանիշներ»./Постклассическая теория права.СПб. - С.22-23/

սոցիոլոգիայի որոշ տարբերակները²⁷: Լ.Ի.Չեստնովի առաջարկած տիպաբանության համաձայն՝ **սոցիոլոգիական չափանիշը կապված է «գիտության սոցիոլոգիայի հետ, որը հիմնական ուշադրությունը դարձնում է ոչ թե կոգնիտիվ (մեթոդաբանական կամ իմացաբանական) ինստիտուտացմանը, այլ նրա «արտաքին» սոցիալական գործոններին»:** Այդ չափանիշին համապատասխան՝ առանձնացնում են իրավահասկացման այնպիսի տիպեր, ինչպիսիք են՝ իրավաբանական պոզիտիվիզմը (դոգմատիզմը), բնական իրավունքի արդի տեսությունները, իրավունքի սոցիոլոգիական ուսմունքները²⁸:

Պատմա-մշակութային չափանիշը Լ. Ի. Չեստնովը կապում է տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների իրավահասկացման տարբերությունների հետ (փաստորեն ըստ կրոնական սկզբունքի): Այս տարաբաժանման շրջանակներում առանձնացվում են իրավահասկացման հետևյալ տիպերը՝ մերձավոր-արևելյան քաղաքակրթության իրավահասկացում (պայմանավորված իսլամական ավանդույթի ազդեցությամբ), իրավահասկացություն, հնդկական-բուդդիստական չինական-կոնֆուցիական քաղաքակրթության քաղաքակրթության իրավահասկացում, ճապոնական քաղաքակրթության իրավահասկացում, արևմտյան (քրիստոնեական) քաղաքակրթության իրավահասկացում, ռուսաստանյան իրավահասկացում²⁹:

Առաջարկելով դասակարգել իրավահասկացման տիպերը՝ ըստ փիլիսոփայական, սոցիոլոգիական և պատմամշակութային չափանիշների՝ Ի. Չեստնովը նշում է, որ «իրավահասկացման տիպերի ադեկվատ նկարագրման համար դասակարգման այս երեք չափանիշները պետք է ցույց տրվեն որպես մեկը մյուսին փոխլրացնող, քանի որ դրանցից ոչ մեկը չի տալիս իրավահասկացման ամբողջական պատկերը: Այսպես, փիլիսոփայական չափանիշը տառապում է մտահայեցողությամբ, սոցիալականին, ընդհակառակը, պակասում հայեցողականությունը՝ իրերի դրության փաստական բացատրման առումով, իսկ պատմամշակութային չափանիշները թեև կարծես զերծ են այս թերություններից, սակայն սահմանափակված են կոնկրետ քաղաքակրթության նեղ սահմաններով: Եվ միայն երեքը միասին կարող են այս կամ այն չափով ճշտիվ արտացոլել իրավահասկացումը»³⁰:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է արձանագրել, որ ժամանակակից իրավաբանական գիտության մեջ նկատելի է իրավահասկացման տեսական տիպաբանությունների կառուցման ընդհանուր միտում: Դրա հետ մեկտեղ, տարբեր մոտեցումների հեղինակներն աշխատում են ոչ միայն բացահայտել իրավահասկացման

²⁷ См. у Честнов Л. И. նշվ. Աշխ., էջ 24-25: Քիչ առաջ ընկնելով՝ նշենք, որ Չեստնովը միանգամայն ճիշտ նշել իրավահասկացման տիպաբանության ամենահիմնական ու կարևորագույն չափանիշը. «Բնականի» և «արհեստականի» հիմնախնդրի լուծումն իրավունքի մեջ վերջնական հաշվով բերում է ոչ միայն իրավահասկացման գլոբալ երկու ուղղությունների վաղնջական հակամարտության էության, այլև բուն իրավունքի էության հասկացումի:

²⁸ Նույն տեղում, էջ 27-28:

²⁹ Նույն տեղում, էջ 30-31:

³⁰ См. у Честнов Л.И. նշվ. աշխ., էջ 29-30:

տարբեր տիպերը դրանց բազմազանության մեջ, այլև կառուցել դրանց համակարգը՝ համապատասխան իրենց հայեցակարգերին բնորոշ կամ, առնվազն, իրենց մոտ կիրառվող դասակարգման չափանիշներին: Այդ չափանիշների բացահայտումը, մեր կարծիքով, անհրաժեշտաբար բերում է իրավունքի մոնոպատկերից դեպի նրա բազմապիստության ընկալման, դեպի գիտակցման այն բանի, որ իրավունքը սոցիալական բարդ ֆենոմեն է, որը կարող է դրսևորվել տարբեր կերպ: Այսպիսով՝ գիտական տարբեր հայեցակարգերի կողմնակիցները տարբեր ճանապարհներով գալիս են այն ընդհանուր գաղափարին, որ անհրաժեշտ է ինտեգրալ, միասնական որոշակի իրավահասկացում: Այստեղ, սակայն, ծագում է հարցերի մի ամբողջ համալիր՝ կապված հենց ինտեգրման սկզբունքների վերաբերյալ տարբեր մոտեցումների, միասնական համակարգի մասին խոսելու հնարավորություն տվող օրինաչափությունների, փոխկապակցությունների ոչ միանման ընկալման հետ: Իրավահասկացման հիմնահարցն աստիճանաբար տեղափոխվում է այդ նոր հարթություն, որտեղ հիմնական է դառնում փիլիսոփայական հենքի մասին հարցը. հենքի, որը թույլ կտա դիտարկել իրավունքն ինչպես իր տարբեր դրսևորումներում, այնպես էլ իր միասնության մեջ:

Եզրակացություն

Իրավահասկացման տիպաբանությունը գիտականորեն հիմնավորված և ըստ էական հատկանիշների դասակարգում է: Ըստ իրավահասկացման բովանդակային կառուցվածքի՝ տարբերակվում են էմպիրիկ (փորձարարական) և տեսական:

Իրավահասկացման էմպիրիկ տիպաբանությունը հիմնվում է փորձնական տվյալների (նյութերի) մշակման և ընդհանրացման արդյունքների վրա, իսկ իրավահասկացման տեսական տիպաբանությունը ենթադրում է որոշակի իդեալական մոդելի կառուցում՝ իրավունքի վերաբերյալ կոնկրետ հայեցակարգային մոտեցումների հիման վրա:

TYPES AND CRITERIA OF LEGAL UNDERSTANDING TYPOLOGY

HAMBARDZUMYAN GAGIK

Yerevan “Haybusak” University,

Institute of Law and International Relations,

Lecturer at the Chair of Private and Public Law,

Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law

of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Abstract. This scientific article is an in-depth examination of the types and criteria of the typology of legal understanding, as well as their theoretical and practical significance. The typology of legal understanding is a scientific classification, that is, a classification premised on essential characteristics. From a structural perspective, typology falls under two main categories: empirical and theoretical.

The empirical typology of legal understanding is based on the processing and the interpretation of experimental data concerning the legal perceptions of various subjects of legal understanding. In contrast, the theoretical typology presupposes the construction of a certain ideal model, based on theoretical reasoning and critical analysis of various concepts.

Keywords: typology, legal understanding, empirical and theoretical typology, essence of law, objective-idealist and subjective-realist approaches.

ТИПОЛОГИЯ ПРАВОПОНИМАНИЯ: ВИДЫ И КРИТЕРИИ

АМБАРЦУМЯН ГАГИК

преподаватель кафедры частного и публичного права

Института юриспруденции и международных отношений

Ереванского университета «Айбусак»

соискатель Института философии, социологии и права НАН РА

Аннотация. В настоящей научной статье подробно рассматриваются виды и критерии типологии правопонимания, а также их теоретическое и практическое значение. Типология правопонимания представляет собой научную классификацию, то есть классификацию, осуществлённую по существенным признакам. При этом по структуре выделяются два основных вида типологии: эмпирическая (экспериментальная) и теоретическая. Эмпирическая типология правопонимания строится на основе обработки и интерпретации экспериментальных данных о правовых восприятиях различных субъектов правопонимания, тогда как теоретическая типология правопонимания предполагает построение определённой идеальной модели, основанной на обоснованной теоретической мысли и критическом анализе различных концепций.

Ключевые слова: типология, правопонимание, эмпирическая и теоретическая типология, сущность права, объективно-идеалистические и субъективно-реалистические подходы.

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՓԱԿ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՅՆ «ԲԱՑԵԼՈՒ» ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐԸ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
DOI: 10.63925/18294847-2026.bl21-11*

Ամփոփագիր. Հոդվածում քննության է առնվում քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի օրենսդրական փակ ցանկի (numerus clausus) բնույթը, դրա «բացման» հնարավորությունը և նոր հիմքերի ներառման ստրատեգիաները: Վերլուծվում է ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված ցանկի սպառիչ լինելը և դրանից բխող օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը, որն արգելում է ցանկում չնախատեսված որևէ հանգամանք դիտարկել որպես հետապնդումը դադարեցնելու հիմք:

Հեղինակը քննարկում է իրավակիրառ պրակտիկայում ծագող այնպիսի իրավիճակներ, երբ օբյեկտիվորեն անհրաժեշտ է դառնում ընդլայնել այդ ցանկը: Այդ նպատակով դիտարկվում են երկու հիմնական ստրատեգիաներ՝ contra legem և extra legem իրավունքի զարգացման դոկտրինաները: Վերլուծության համար հիմք են ծառայում ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, մասնավորապես՝ անձեռնմխելիության օժտված անձանց նկատմամբ քրեական հետապնդմանն առնչվող գործերով ձևավորված իրավական դիրքորոշումները:

Հոդվածում առանձնակի ուշադրություն է դարձվում այն դեպքերին, երբ քրեական վարույթը նախաձեռնվել է ոչ իրավասու սուբյեկտի կողմից կամ բացակայում է վարույթ նախաձեռնելու արձանագրությունը: Քննարկվում են նման խախտումների դատավարական հետևանքները և հաղթահարման ուղիները՝ ապացույցների անթույլատրելի ճանաչումից, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկի «բացում» և նոր հիմքի սահմանում:

Հիմնաբառեր. Քրեական հետապնդման դադարեցում, փակ ցանկ, numerus clausus, contra legem, extra legem, օրենսդրի գիտակցված լռություն, իրավունքի զարգացում, անձեռնմխելիություն, վարույթ նախաձեռնելու արձանագրություն, իրավասության սահմանազատում:

Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը) թվարկված են ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում: ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ցանկը լիարժեք օրենսդրական փակ

(սպառիչ) ցանկ է (numerus clausus), քանի որ այն սկսվում է «եթե՝» պայմանով, թվարկում է հետապնդումը դադարեցնելու տասնչորս հիմք, և նախադասությունն ավարտվում է առանց «և այլ դեպքերում» կամ նման այլ բաց թվարկում ենթադրող արտահայտությունների: Իրավական տեխնիկայի տեսանկյունից հետապնդումը դադարեցնելու փակ ցանկը լիարժեք է, քանի որ այն պարունակում է բոլոր հիմքերը մեկ կոնկրետ հոդվածում՝ առանց հղում կատարելու այլ հոդվածներում առկա հիմքերին:

Նկատի ունենալով «expressio unius est exclusio alterius» իրավական մաքսիմը՝ ըստ որի մեկի հիշատակումը բացառում է մյուսին, կարելի է եզրակացնել, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկը բացառում է այդ ցանկում չնախատեսված որևէ հանգամանք համարել որպես հետապնդումը դադարեցնելու հիմք: Այլ կերպ ասած՝ այդ փակ ցանկը պարունակում է իմպլիցիտ արգելք, որը դատախազին արգելում է քրեական հետապնդումը դադարեցնել ցանկում չնախատեսված որևէ հանգամանքի հիման վրա:

Արդյո՞ք ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ցանկը կարելի է համարել փակ՝ հաշվի առնելով ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը («Հայեցողական քրեական հետապնդումը»), որը սահմանում է, որ հսկող դատախազն իրավասու է չհարուցել կամ դադարեցնել քրեական հետապնդումը, եթե առկա են ՀՀ ՔրԴՕ 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները (գործուն զոջալ): Առաջին հայացքից կարող է թվալ, որ ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը պարունակում է քրեական հետապնդումը դադարեցնելու ինքնուրույն հիմք, որը դուրս է ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի ցանկից, ուստի այդ ցանկը չի կարող համարվել փակ:

Իրականում ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածում քրեական հետապնդումը դադարեցնելու ինքնուրույն հիմք նախատեսված չէ: Քրեական հետապնդումը դադարեցնելու գործուն զոջալու հիմքը (ՀՀ ՔրԴՕ 81-րդ հոդված) ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով (բլանկետային նորմով) նախատեսված հիմքերից մեկն է: ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը սահմանում է ոչ թե քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք, այլ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և ՀՀ ՔրԴՕ 81-րդ հոդվածով նախատեսված կոնկրետ հիմքի կիրառման ընթացակարգը: Այլ կերպ ասած՝ ՀՀ ՔրԴՕ 197-րդ հոդվածը վերաբերում է գործուն զոջման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դատախազի լիազորությանը և դրա իրականացման կարգին:

Հնարավոր են իրավիճակներ, երբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի օրենսդրական փակ ցանկում որևէ հանգամանք նախատեսված չէ, սակայն այն օբյեկտիվորեն և անխուսափելիորեն պետք է համարվի հետապնդումը դադարեցնելու հիմք: Արդյո՞ք իրավակիրառողը կարող է այդ հանգամանքը ներառել քրեական հետապնդումը դադարեցնելու փակ ցանկում: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել, թե կոնկրետ հանգամանքն այդ ցանկում չնախատեսելն օրենսդրի բացթողման (օրենսդրական սխալի), թե՞ զիտակցված լռության արդյունք է: Հիմք ընդունելով օրենսդրական փակ ցանկերի տեսությունը՝ կարելի է նշել, որ քրեական

հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում որևէ հանգամանքի բացակայությունը (օրենսդրական բացը՝ որպես նեգատիվ փաստ) ոչ թե օրենսդրի բացթողման (օրենսդրական սխալի) արդյունք է, այլ օրենսդրի գիտակցված լռության հետևանք է: Փակ ցանկերի պարագայում գործում է օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը, այսինքն՝ ենթադրվում է, որ այդ հանգամանքը քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի ցանկում չներառելն օրենսդրի գիտակցված որոշումն է¹: Այս թեզի հիման վրա հնարավոր է որոշել, թե քրեական հետապնդումը դադարեցնելու օրենսդրական փակ ցանկում հետապնդումը դադարեցնելու նոր հիմք ներառելու անհրաժեշտության դեպքում դատախազը և դատարաններն իրավունքի զարգացման ո՞ր ստրատեգիայով են առաջնորդվելու՝ *extra legem* իրավունքի զարգացման դոկտրինով, թե՞ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով²:

Եթե կոնկրետ փաստական տվյալներով չի հերքվում օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը, այսինքն՝ չի հաստատվում, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում անհրաժեշտ հանգամանքը չներառելն օրենսդրական սխալի արդյունք է, ապա այդ ցանկն իրավունքի սկզբունքների թելադրանքով կարող է «բացվել» և դրանում նոր տարր ավելացվել *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա³: Այս պարագայում դատարանը գործում է օրենքին հակառակ, քանի որ, ինչպես նշվեց, օրենսդրական փակ ցանկի փաստից բխեցվում է այդ ցանկում չներառված տարրերի հետ իրավաբանական գործողություններ կատարելու իմպլիցիտ իրավական արգելքը:

ՀՀ դատական պրակտիկայում հանդիպել են իրավիճակներ, երբ դատարանները քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի օրենսդրական փակ ցանկում կոնկրետ հանգամանք ներառված չլինելը որակել են իրավունքի սկզբունքների հետ աղաղակող հակասություն և «բացել են» այդ ցանկը՝ դրանում ներառելով քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք: Օրինակ՝ ՀՀ դատարանները 1998 թ. ՀՀ ՔրԴՕ գործողության ժամանակ հակադրվել են քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական վարույթը կարճելու) հիմքերի փակ ցանկին. նրանք օրենսդրական այդ փակ ցանկը «բացել են» և դատավորի անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելը (դատավորի անձեռնմխելիությունը չհաղթահարելը) որակել են որպես հետապնդումը դադարեցնելու հիմք: Այս դեպքերում ՀՀ դատարանները, ելնելով իրավունքի որևէ սկզբունքից, քրեադատավարական իրավունքը զարգացրել են *contra legem*⁴:

¹ Մանրամասն տե՛ս Գամбарյան Ա.Ս., Даллакян Л. Г. Закрытые законодательные перечни (доктрина, техника и правоприменительная практика): монография. М.: Юрлитинформ, 2025.

² Տե՛ս Գամбарյան Ա. Ս. Развитие права *extra legem* и *contra legem* в случае закрытых законодательных перечней // Lex Russica. 2026. Т. 79, № 1 (230). С. 19-36.

³ Տե՛ս Գամбарյան Ա.Ս. Доктрина развития права вопреки закону (*contra legem*): монография. М.: Юрлитинформ, 2026.

⁴ Տե՛ս Գամбарյան Ա. Ս. Развитие уголовно-процессуального права Армении вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*) // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2024. Т. 15, № 1. С. 220-221.

Այս օրինակը ներկայացնենք ավելի մանրամասն: Այսպես՝ 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված էր, որ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե մեղադրյալը (...) օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից: Այս նորմից բխում էր, որ եթե քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունը հաղթահարված չէ, ապա քրեական վարույթը պետք է կասեցվի: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԳԴ5/0022/01/10 գործով 20.10.2011 թ. որոշմամբ սահմանել է, որ դատավորին քրեական հետապնդման (պատասխանատվության) ենթարկելու թույլտվություն ստանալու մասին իրավասու մարմնի միջնորդությունը մերժելու դեպքում քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կարճել քրեական վարույթը: Ստացվում է, որ 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում էր դատավորին քրեական հետապնդման անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելու դեպքում կասեցնել վարույթը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը, փաստացի գործելով օրենսդրական այս կարգավորմանը հակառակ (*contra legem*), նշել է, որ այդ դեպքում վարույթը ոչ թե պետք է կասեցնել, այլ պետք է՝ կարճել (քրեական հետապնդումը դադարեցնել):

ՀՀ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշման հիմքում ընկած է **կոշտ** *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը, քանի որ՝

1) օրենքն իրավասու մարմնից հստակ պահանջում է համապատասխան փաստակազմի դեպքում (անձեռնմխելիության առկայության դեպքում) կատարել «A» գործողությունը՝ կասեցնել վարույթը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է կատարի «B» գործողությունը՝ դադարեցնել քրեական հետապնդումը: Օրենսդիրը միևնույն փաստը (դատավորին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելը) չէր կարող միաժամանակ համարել և՛ վարույթը կասեցնելու հիմք, և՛ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք:

2) այդ դիրքորոշման սուբստանցիոնալ հիմքը դատական իշխանության անկախության և անձեռնմխելիության հիմնարար սկզբունքներն են (տե՛ս նշված որոշման 47-րդ կետ):

Թիվ ԳԴ5/0022/01/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկել է ՀՀ առաջին ատյանի դատարան, որը պետք է կարճեր քրեական վարույթը: Հարց էր ծագում՝ ՀՀ առաջին ատյանի դատարանն ի՞նչ հիմքով պետք է կարճեր վարույթը, և անձն արդյո՞ք պետք է ձեռք բերեր ռեաբիլիտացիայի իրավունք: ՀՀ առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, որով դատավորի նկատմամբ քրեական հետապնդման իրականացումը դառնում է անհնարին, 17.05.2012 թ. որոշմամբ քրեական վարույթը կարճել է և քրեական հետապնդումը դադարեցրել է **ռեաբիլիտացնող հիմքով**: Այդ որոշումը կայացնելիս ՀՀ առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածով՝ առանց հստակեցնելու, թե այդ հոդվածի ո՞ր մասով կամ ո՞ր կետով է ղեկավարվում, քանի որ, ինչպես նշվեց, 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածում

նախատեսված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի ցանկում նման հանգամանք նախատեսված չէր: Ուստի բաց է մնում քրեական հետապնդումը հենց ռեաբիլիտացնող «հիմքով» դադարեցնելու դիրքորոշման պոզիտիվ-իրավական հիմնավորումը: Փաստն այն է, որ ՀՀ առաջին ատյանի դատարանը ոչ միայն «բացել է» քրեական հետապնդումը դադարեցնելու փակ ցանկը և այդ ցանկում ներառել է քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք, այլ նաև այդ հիմքը համարել է ռեաբիլիտացնող:

Առաջին ատյանի դատարանի կողմից քրեական հետապնդումը ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու որոշման հիմքում ընկած է դատավարական իրավունքի *մեղմ contra legem* զարգացման դոկտրինը, քանի որ նա գործել է ոչ թե էքսպլիցիտ արգելքին (ուղիղ պարտականությանը) հակառակ, այլ փակ ցանկից բխող իմպլիցիտ արգելքին հակառակ:

Քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը հաղթահարելու գործի շրջանակում: ՀՀ սահմանադրական դատարանը, 04.09.2019 թ. ՍԴՈ-1476 որոշմամբ, 1998թ. ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածը՝ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառությանին անձեռնմխելիությունը՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով, ձանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Շեղվելով բուն հարցից՝ փաստենք, որ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում կոնկրետ հանգամանք նախատեսված չլինելու հարցը դարձել է և՛ ՀՀ վճռաբեկ դատարանի, և՛ ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարկան: ՀՀ վճռաբեկ դատարանը հարցը լուծել է *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի քողի ներքո, իսկ ՀՀ սահմանադրական դատարանը՝ սահմանադրական արդարադատության դոկտրինի հիման վրա: Ստացվում է, որ նույն բնույթի հարցի լուծումը գտնվել է և՛ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասության, և՛ ՀՀ սահմանադրական դատարանի իրավասության տիրույթում: Սա հակասում է պետական մարմինների գործառույթների և լիազորությունների կրկնման անթույլատրելիության սկզբունքին: Նման օրինակները ցույց են տալիս, որ ՀՀ սահմանադրական դատարանի և մյուս դատարանների գործառույթների սահմանազատման գծերը դառնում են էլ ավելի մշուշոտ: Ավելին՝ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հետևողական իրականացման պարագայում կվերանան ՀՀ սահմանադրական դատարանի գոյաբանական հիմքերը: Այս հոդվածում միայն նշենք, որ վերջին շրջանում վերացական նորմավերահսկողության քննադատությունն ուժեղացել է: Մեղադրանքները հիմնվում են այն փաստի վրա, որ սահմանադրական դատարանը Քելզենի՝ նորմատիվիզմին և պոզիտիվիզմին մոտ կանգնած իրավունքի հայեցակարգի շրջանակներում ստեղծված և դրանով սահմանափակված ինստիտուտ է, ինչն օբյեկտիվորեն սահմանափակում է հիմնական իրավունքների և ազատությունների

պաշտպանության ոլորտում այդ համակարգի արդյունավետությունը⁵:

Առնվազն ՀՀ սահմանադրական դատարանի վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ քելզենյան մոդելի սահմանադրական արդարադատությունն ընտրել է «սեփական մայրամուտի» ճանապարհը: Հնարավոր է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր տեղը զիջի նոր տեսական ինստիտուտին՝ այսպես կոչված «Իրավունքի փիլիսոփայության դատարանին», որի հիմնական խնդիրը կլինի ոչ թե կոնկրետ օրենսդրական դրույթի սահմանադրականությունը որոշելը, այլ իրավափիլիսոփայական (վերպոզիտիվ) հիմնավորումներով ռազմավարական իրավադրույթ: Իրավունքի փիլիսոփայության դատարանի իրավասության մեջ կարող են մտնել քաղաքական իշխանության մարմինների միջև իրավա-քաղաքական վեճերի լուծումը, եթե դրանք հնարավոր չէ կարգավորել քաղաքական կառուցակարգերով, պետության ինքնիշխանության էական սահմանափակումներ ենթադրող հարցերի (օրինակ՝ ինքնիշխանության ծավալի վրա էապես ազդող միջազգային պայմանագրերի վավերացման) վերաբերյալ որոշումների կայացումը, սահմանադրական փոփոխությունների հարցերը, ճգնաժամային իրավիճակներում վերպոզիտիվի իրավական և պետականազդիտական սկզբունքների հիման վրա այլ որոշումներ կայացնելը:

Բանն այն է, որ պետության կողմից ստեղծված և ձևավորված համալսարաններում, որտեղ գերակայում է պոզիտիվիզմը և էտատիզմը, կրթություն ստացած դատավորը հաճախ ունակ չէ վերպոզիտիվ սկզբունքների հիման վրա լուծելու՝ քաղաքական իշխանության մարմինների միջև վեճերը, որոնց կողմերից մեկն իշխող քաղաքական ուժն է, կամ հասարակության համար մասշտաբային նշանակություն ունեցող այլ հարցեր: Մասնավորապես, հետխորհրդային դատավորը հաճախ անկարող է իրավական վեճը լուծելիս դուրս գալ պոզիտիվ իրավունքի նեղ շրջանակից, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է քաղաքական ինստիտուտների միջև վեճերի կամ հասարակության համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցերի լուծմանը: Եթե այդ տեսակի դատավորը նույնիսկ հակադրվում է պոզիտիվ իրավունքին, ապա դա պայմանավորված է հիմնականում ոչ թե վերպոզիտիվ իրավական սկզբունքներով, այլ թելադրված է քաղաքական նպատակահարմարությամբ: Մինչդեռ նման բնույթի հարցերը պահանջում են իրավական և պետականազդիտական սկզբունքների վրա հիմնված լուծումներ:

Այս խնդիրները հաղթահարելու նպատակով «Իրավունքի փիլիսոփայության դատարան» ձևավորելիս տրամաբանական կլիներ դրա կազմում ներառել գործող քաղաքական իշխանությունից անկախ անձանց, օրինակ՝ նախկին նախագահներին ու բարձրագույն դատարանների նախագահներին, ովքեր ավարտել են իրենց քաղաքական և մասնազդիտական կարիերան, ստանում են բարձր կենսաթոշակ, և նրանց լեգիտիմությունն իրավաբանական ընթացակարգերով (օրինակ՝ պաշտոնան-

⁵Տե՛ս Дедов Д. И. Методология права 2.0. М.: Дело, 2023. С. 53.

կություն կամ քրեական հետապնդում հարուցել) կասկածի տակ չի դրվել:

Բարձրագույն դատարանների նախկին նախագահները, ի տարբերություն այլ ատյանի դատարանների, իրենց պրակտիկայում, ամենայն հավանականությամբ, բախվել են իրավունքի զարգացման այնպիսի իրավական հարցերի, որոնք լուծվել են իրավունքի սկզբունքների հիման վրա: Բոլոր դեպքերում, բարձր դատարանների դատավորների լեգիստական մտածողությունը համեմատաբար մեղմ է արտահայտված:

Ինչ վերաբերում է պաշտոնաթող նախագահներին, ապա նրանց՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում պետությունը կառավարելու համար անհրաժեշտ ռազմավարական մտածողությունն իր էությամբ իմաստասիրական մտածողության ձև է, որը կոչված է գտնելու հավասարակշռություն և սահմանելու երկարաժամկետ նպատակներ: Նրանց հասարակական կարգավիճակն ու փորձը հնարավորություն կտան գործել՝ ելնելով պետության ու հասարակության երկարաժամկետ շահերից, ոչ թե նեղ քաղաքական պահանջներից:

Իրավունքի փիլիսոփայության դատարանը «վետերանների ակումբ» չէ, այլ նպատակային մեխանիզմ՝ փոխհատուցելու սովորական դատարանների անկարողությունը՝ դիմակայելու քաղաքական ճնշմանը և առաջնորդվելու վերպոզիտիվ սկզբունքներով: Իհարկե, դատական համակարգի այսքան արմատական վերաձևումը պահանջում է խոր միջառարկայական քննարկում:

Վերադառնանք բուն հարցին: ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներից հետո անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի խնդիրն օրենսդրական հարթությունում լուծվեց 2021թ. ՀՀ ՔրԴՕ-ով: Նոր օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի ցանկում նախատեսվեցին անձեռնմխելիությանը վերաբերող երկու նոր հիմք:

Այնուամենայնիվ, չի բացառվում, որ ապագայում ևս կարող է ծագել քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկը *contra legem* տրամաբանությամբ «բացելու» անհրաժեշտություն: Նման իրավիճակներ կարող են ծագել, եթե դատարանում պարզվում է, որ քրեական հետապնդում հարուցելու որոշումը կայացրել է նման իրավասություն չունեցող անձը, օրինակ՝ այդ որոշումը կայացրել է դատախազների խմբի անդամը, մինչդեռ քրեական հետապնդումը հարուցելը խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունն է: Դատարանը, բացահայտելով, որ քրեական հետապնդումն հարուցել է ոչ իրավասու անձը, պետք է համարի, որ տվյալ պարագայում քրեական մեղադրանքն իրավաբանորեն բացակայում է, որի պարագայում քրեական դատավարությունը չի կարող շարունակվել. չկա քրեական արդարադատություն՝ առանց քրեական մեղադրանքի: Այս իրավիճակում պաշտոնական քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ քրեական հետապնդումն իրավաբանորեն համարվում է գոյություն չունեցող: Սակայն կարող է ծագել փաստացի քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտություն, որի պարագայում մարդը

կապաշտպանվի կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքով: Բացի այդ, քննարկվող դեպքում անխուսափելիորեն ծագում է քրեական վարույթը կարճելու անհրաժեշտություն, մինչդեռ ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական վարույթը կարճելու հիմքերի փակ ցանկում օրինական քրեական մեղադրանքի բացակայությունը (մեղադրանքի անվավերությունը) նույնպես նախատեսված չէ: Այս իրավիճակում ՀՀ դատարանները, ղեկավարվելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով, պետք է «բացեն» քրեական վարույթը կարճելու հիմքերի փակ ցանկը և ներառեն նոր հիմք՝ օրինական քրեական մեղադրանքի բացակայությունը (մեղադրանքի անվավերությունը):

Ռուսական դատական պրակտիկայում քննարկվել է վերը նշված դեպքից փոքր-ինչ տարբերվող մեկ այլ հարց, սակայն ի տարբերություն մեր առաջարկած լուծման՝ ռուս տեսաբաններն այն որակել են ոչ թե *contra legem*, այլ իրավունքի անալոգիայի հիման վրա *extra legem* իրավունքի զարգացում: Այսպես՝ Ա. Վ. Սմիռնովը դատական պրակտիկայից բերում է օրինակ, երբ հանցագործության հատուկ սուբյեկտին որպես մեղադրյալ է ներգրավել ոչ պատշաճ պաշտոնատար անձը (ով չուներ տվյալ սուբյեկտին որպես մեղադրյալ ներգրավելու լիազորություն): Խախտումը բացահայտվել է նախնական դատական լուսման ընթացքում: Մրցակցության սկզբունքի տեսանկյունից տվյալ գործով արդարադատություն չէր կարող իրականացվել, քանի որ օրենքի խախտմամբ առաջադրված մեղադրանքն իրավաբանորեն անվավեր էր, հետևաբար, արդարադատության առարկան բացակայում էր: Մյուս կողմից՝ օրենսգրքով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի սպառիչ ցանկում մեղադրանքի անվավերությունը (բացակայությունը)՝ որպես քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք, նախատեսված չէ: Տվյալ գործով դատարանը, այնուամենայնիվ, որոշել է դադարեցնել քրեական հետապնդումը՝ *մեղադրանքի բացակայության հիմքով*: Ա. Վ. Սմիռնովը դատարանի կողմից քրեական հետապնդման դադարեցումը որակել է որպես իրավունքի անալոգիայի կիրառում, այսինքն՝ դատավորն օրենսդրական բացը լրացրել է մրցակցության սկզբունքի հիման վրա⁶:

Քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու հիմքերի օրենսդրական փակ ցանկը «բացելու» անհրաժեշտություն կարող է ծագել նաև այն դեպքում, երբ նյութերում բացակայում է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը: Օրինակ՝ նախաքննության ընթացքում բացահայտված նոր դեպքի (այլ ենթադրյալ հանցանքի) կապակցությամբ քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու փոխարեն քննությունն իրականացնում է դրա հետ *in rem* կապ չունեցող քրեական վարույթի սահմաններում: Այս դեպքում քննիչը խախտում է ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի պահանջները: Այս նորմերն անուղղակիորեն կանխորոշում են նախաքննության *in rem հորիզոնական* սահմանը, և դրանք քննիչին իմպլիցիտ

⁶ См. у Смирнов А. В., Манукян А. Г. Толкование норм права: учебно-практическое пособие. М.: Проспект, 2008. С. 124-126.

արգելում են նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված արարքի հետ ակնհայտ առնչություն չունեցող նոր դեպքեր: Այս խախտումն ինչ ղատավարական հետևանքներ կարող է առաջացնել:

Նկարագրված իրավիճակում քննիչը նոր դեպքի կապակցությամբ քրեական վարույթ, փաստորեն, չի նախաձեռնել, սակայն օրենքով նախատեսված չէ, թե քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության դեպքում այդ մասով վարույթի «ճակատագիրը» ինչպես պետք է լուծել, օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 12-րդ և 13-րդ հոդվածներում նախատեսված չէ վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը որպես քրեական հետապնդում չհարուցելու (հետապնդումը դադարեցնելու) և վարույթը կարճելու ինքնուրույն հիմք: Այս բացը բարդացնում է քննարկվող հարցի լուծումը, ուստի դրա կապակցությամբ հնարավոր են մի քանի ստրատեգիաներ (ճանապարհներ):

Այդ ստրատեգիաներից մեկը կարող է լինել քրեական հետապնդումը բացառող հանգամանքների սպառիչ (փակ) ցանկը *contra legem* տրամաբանությամբ «բացելու» և այդ ցանկում քրեական վարույթի արձանագրության բացակայությունը ներառելու ստրատեգիան: Սա նշանակում է, որ ՀՀ դատարանները հաստատում են, որ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանքների փակ ցանկ, ուստի գործում է օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը: Այնուհետև դատարանը, ղեկավարվելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով և հիմք ընդունելով քրեական վարույթի հանրայնության սկզբունքը ու դրանից անմիջապես բխող «վարույթի հանրային գործունեությունն իրականացվում է բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից» կանոնը, «բացում է» ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասում առկա փակ ցանկը և ճանաչում է քրեական հետապնդումը բացառող ևս մեկ հանգամանք՝ նախաքննությունը կատարվել է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության պայմաններում:

Առկա խնդրի լուծման մյուս ճանապարհը կարող է լինել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության պայմաններում հավաքված ապացույցները ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ձեռք բերված լինելու հիմքով անթույլատրելի ճանաչելու և «անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը» հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու ստրատեգիան: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝ տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող անձի կողմից: Այս դեպքում, եթե հնարավոր չէ հավաքել նոր ապացույցներ, ապա քրեական հետապնդումը կդադարեցվի ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Նմանատիպ իրավիճակ է, երբ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը թեև փաստացի առկա է, սակայն պարզվում է, որ քրեական վարույթը

նախաձեռնել է ոչ իրավասու սուբյեկտը: Քրեական վարույթ նախաձեռնելու լիազորության միակ կրողը քննիչն է: Եթե քրեական վարույթը նախաձեռնվել է ոչ պատշաճ սուբյեկտի, օրինակ՝ հետաքննիչի կամ դատախազի կողմից, ապա դա նշանակում է, որ կատարվել է *ultra vires* գործողություն:

Ի տարբերություն քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկը «բացելու» ստրատեգիայի՝ ապացույցներն անթույլատրելի ճանաչելու և «անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը» հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու ճանապարհը քրեադատավարական մտածողությանն առավել «հոգեհարազատ է»: Բացի այդ, այն կարող է օգտագործվել ոչ միայն դատարանների, այլ նաև քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից:

Մինչդեռ այս ստրատեգիան կիրառելի չէ, եթե ապացուցողական գործողությունները կրկին կատարելով հնարավոր է հավաքել ապացույցներ, քանի որ այս դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու՝ «անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը» հիմքը կբացակայի: Այնուամենայնիվ, նույնիսկ նոր ապացույցներ հավաքելու պարագայում ծագելու է քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու հարցը, քանի որ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ լիազորություն չունեցող անձի կողմից վարույթ նախաձեռնելն այնպիսի խախտումներ են, որոնք չեն կարող անհետևանք մնալ: Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ *ultra vires* քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը չեն կարող փաստել նախաքննության սկիզբը, իսկ եթե փաստացի կատարվել է նախաքննություն, ապա նման նախաքննությունն ի սկզբանե կհամարվի «վիրուսով վարակված», որի հանգրվանը լինելու է քրեական հետապնդման դադարեցումը և քրեական վարույթի կարճումը:

Նման դեպքում այլ բան չի մնում, քան քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մաս) և քրեական վարույթը կարճելու հիմքերի (ՔրԴՕ 13-րդ հոդվածի 1-ին մաս) օրենսդրական փակ ցանկերը «բացել» *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա և այն լրացնել քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմքերով՝ վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ լիազորություն չունեցող անձի կողմից վարույթը նախաձեռնվելը:

Այսպիսով՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդված) փակ ցանկը սպառիչ է (*numerus clausus*), ինչը նշանակում է, որ դրանում չնախատեսված որևէ հանգամանք չի կարող հիմք լինել քրեական հետապնդումը դադարեցնելու համար: Չնայած դրան, իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ իրավունքի հիմնարար սկզբունքների գերակայությունն ապահովելու անհրաժեշտությունը երբեմն ստիպում է դատարաններին «բացել» այդ փակ ցանկը և ներառել քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմքեր: Դա տեղի է ունենում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի շրջանակներում:

Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը կամ վարույթը ոչ իրավասու սուբյեկտի կողմից նախաձեռնելը հիմնարար խախտումներ են,

որոնց դեպքում քրեական վարույթը չի կարող ունենալ ապագա, սակայն այս հանգամանքները նախատեսված չեն քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի փակ ցանկում: Նման դեպքերում հնարավոր են երկու ստրատեգիաներ՝ ապացույցներն անթույլատրելի ճանաչելը և «անձը չի կատարել արարքը» հիմքով հետապնդումը դադարեցնելը, կամ փակ ցանկը «բացել» *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա և ճանաչել հետապնդումը դադարեցնելու նոր հիմք:

THE CLOSED LIST OF GROUNDS FOR TERMINATING CRIMINAL PROSECUTION AND THE STRATEGIES FOR ITS “OPENING”

GHAMBARYAN ARTHUR

Head of the Chair of Theory of Law and Constitutional Law,

Russian-Armenian University,

Professor at the Public Administration Academy of the Republic of Armenia,

Doctor of Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia

Abstract. The article examines the nature of the legislative closed list (*numerus clausus*) of grounds for terminating criminal prosecution, the possibility of its “opening,” and the strategies for incorporating new grounds. The exhaustive nature of the list enshrined in Part 1 of Article 12 of the RA Criminal Procedure Code is analyzed, along with the resulting presumption of the legislator’s conscious silence, which prohibits considering any circumstance not expressly provided in the list as a basis for terminating prosecution.

The author discusses situations arising in law enforcement practice where there is an objective need to expand this list. For this purpose, two main strategies are considered: the doctrines of *contra legem* and *extra legem* development of law. The analysis is based on the decisions of the RA Court of Cassation and the RA Constitutional Court, particularly the legal positions formed in cases related to criminal prosecution of persons entitled to immunity.

Special attention is paid to cases where criminal proceedings were initiated by an unauthorized subject or where the record of initiating proceedings is absent. The procedural consequences of such violations and the ways to overcome them are discussed, ranging from recognizing the evidence as inadmissible to “opening” the closed list of grounds for terminating criminal prosecution and establishing a new ground.

Key words: termination of criminal prosecution, closed list, *numerus clausus*, *contra legem*, *extra legem*, legislator’s conscious silence, development of law, immunity, record of initiating proceedings, delimitation of jurisdiction.

ЗАКРЫТЫЙ ПЕРЕЧЕНЬ ОСНОВАНИЙ ПРЕКРАЩЕНИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И СТРАТЕГИИ ЕГО «ОТКРЫТИЯ»

ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления Республики Армения, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Аннотация: В статье исследуется природа законодательного закрытого перечня (*numerus clausus*) оснований прекращения уголовного преследования, возможность его «открытия» и стратегии включения новых оснований. Анализируется исчерпывающий характер перечня, закрепленного в части 1 статьи 12 УПК РА, и вытекающая из него презумпция сознательного умолчания законодателя, которая запрещает рассматривать любое обстоятельство, не предусмотренное перечнем, в качестве основания для прекращения преследования.

Автор рассматривает ситуации, возникающие в правоприменительной практике, когда объективно возникает необходимость расширения этого перечня. С этой целью рассматриваются две основные стратегии: доктрины развития права *contra legem* и *extra legem*. Основой для анализа служат решения Кассационного суда РА и Конституционного суда РА, в частности, правовые позиции, сформированные по делам, связанным с уголовным преследованием лиц, обладающих неприкосновенностью.

Особое внимание уделяется случаям, когда уголовное производство было инициировано неуполномоченным субъектом или когда отсутствует протокол о инициировании уголовного производства. Обсуждаются процессуальные последствия таких нарушений и пути их преодоления, начиная от признания доказательств недопустимыми и заканчивая «открытием» закрытого перечня оснований прекращения уголовного преследования и установлением нового основания.

Ключевые слова: прекращение уголовного преследования, закрытый перечень, *numerus clausus*, *contra legem*, *extra legem*, сознательное умолчание законодателя, развитие права, неприкосновенность, протокол инициирования уголовного производства, разграничение компетенции.

Գրականության ցանկ

1. Гамбарян А. С. Развитие права *extra legem* и *contra legem* в случае закрытых законодательных перечней // Lex Russica. 2026. Т. 79, № 1 (230). С. 19-36.
2. Гамбарян А. С. Развитие уголовно-процессуального права Армении вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*) // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2024. Т. 15, № 1. С. 206–224.
3. Гамбарян А. С. Доктрина развития права вопреки закону (*contra legem*): монография. М.: Юрлитинформ, 2026. 235 с.
4. Гамбарян А. С., Даллакян Л. Г. Закрытые законодательные перечни (доктрина, техника и правоприменительная практика): монография. М.: Юрлитинформ, 2025. 168 с.
5. Дедов Д. И. Методология права 2.0. М.: Дело, 2023. 752 с.
6. Смирнов А. В., Манукян А. Г. Толкование норм права: учебно-практическое пособие. М.: Проспект, 2008. 144 с.

Հոդվածը գրախոսվել է 16.01.2026
Ներկայացվել է տպագրության 21.01.2026

ՀԵՏԱՄՏԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԻՍԱԿ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները
համակարգող պրոռեկտոր, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ
DOI: 10.63925/18294847-2026.bl21-12

Ամփոփագիր. Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքի 196.1-ին հոդվածով նախատեսված հանցանքի՝ հետամտելու (ստալկինգի) քրեաիրավական բնութագրի համակողմանի վերլուծությանը:

Հեղինակը վերլուծում է հետամտելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, մեկնաբանում է օրենսդրի կողմից գործածված առանձին եզրույթներ: Առանձին քննարկման առարկա են դառնում հետամտելն այլ հանցանքների հետ համակցությամբ որակելու հարցերը, պարզաբանվում են հետամտելու ծանրացնող հանգամանքները:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով հեղինակը ներկայացնում է օրենսդրական առաջարկություն, ինչպես նաև հետամտելու որակման առանձին հարցերին վերաբերող սեփական դիրքորոշումները:

Բանալի բառեր. Հետամտելը, ընտանեկան և կենցաղային բռնություն, հոգեբանական բռնություն, պարբերաբար, ստալկինգ, կիբերստալկինգ, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ:

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 12-ին ընդունված և հուլիսի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փաթեթով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ քր. օր.) լրացվել է 196.1-ին հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է սահմանվել հետամտելու համար: Նույն օրենսդրական փաթեթով հետամտելը նախատեսվել է նաև որպես ընտանեկան և կենցաղային բռնության դրսևորում: Այսպես, “Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին” օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում հետամտելը նշված է որպես հոգեբանական բռնության առանձին դրսևորում¹:

Օրենսդրական փաթեթի ընդունման հիմնավորման մեջ նշվել է՝ “Ընտանեկան բռնության տարածված դրսևորումներից է նաև վերահսկող վարքագծի կիրառումը կամ

¹ Հետամտելը կհամարվի ընտանեկան և կենցաղային բռնության դրսևորում, եթե այն կատարվի ընտանիքի անդամների կամ գուզընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին գուզընկերների միջև:

հետամտումը, որը ՄԱԿ-ի կողմից ևս սահմանվում է որպես ընտանեկան բռնության տեսակ, իսկ Եվրոպայի խորհուրդն այն առաջարկում է քրեականացնել որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Սակայն այս հասկացությունը՝ որպես բռնության տեսակ և հանցակազմ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, ինչի հետևանքով բռնության տվյալ դրսևորումը որևէ իրավական հետևանք չի ենթադրում: Չկան նաև նախատեսված պաշտպանական անհրաժեշտ իրավական հիմքեր՝ վերը նշված բռնության տեսակից գոհերին պաշտպանելու համար²: Հետամտելը քրեականացնելու անհրաժեշտությունը նշված է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 34-րդ հոդվածում³:

Հետամտելը՝ որպես հակաիրավական վարքագծի դրսևորման ձև, միջազգային ասպարեզում առավել հայտնի է որպես «ստալկինգ» և «կիբերստալկինգ»: Քեմբրիջի բառարանում ստալկինգը (stalking) բնորոշվում է որպես հանցագործություն, որը դրսևորվում է որոշակի ժամանակահատվածում որևէ մեկին ապօրինաբար հետևելու և հսկելու ձևով⁴:

Հետամտելու քրեականացումը վկայում է օրենսդրի կողմից տվյալ արարքի հանրային վտանգավորության գնահատման և մարդու դեմ ուղղված հանցագործությունների արդեն սահմանված տեսակներից դրա տարբերության մասին: Մինևույն ժամանակ, հետամտելու քրեականացումն արդիական է դարձնում այդ հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների մեկնաբանմանը և հանցանքի որակման առանձնահատկություններին առնչվող հարցերը: Նշված հարցերի վերաբերյալ գիտականորեն մշակված մոտեցումների բացակայությունը կարող է հանգեցնել ինչպես հանցավոր չհամարվող միջանձնային կոնֆլիկտների դեպքում անհիմն քրեական հետապնդումների, այնպես էլ իրապես հանցավոր արարքներից տուժածների անբավարար քրեաիրավական պաշտպանության:

Սույն աշխատանքի նպատակն է վերլուծել հետամտելու հիմնական հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, այդ հանցանքը ծանրացնող հանգամանքները, քննարկել հետամտելու որակման առանձին հարցերն ու ներկայացնել առաջարկություններ հետամտելու որակման և այդ հանցակազմի օրենսդրական ձևակերպման կատարելագործման վերաբերյալ:

2. Հետամտելու հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները:

2.1. Հետամտելու օբյեկտը: Քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում հետամտելը սահմանվել է հետևյալ կերպ՝ «Հետամտելը՝ անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ

² Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14679&Reading=0> (վերջին այցելության ամսաթիվ 09.02.2026 թ.):

³ Տե՛ս <https://rm.coe.int/168046246d> (վերջին այցելության ամսաթիվ 09.02.2026 թ.):

⁴ Տե՛ս <https://dictionary.cambridge.org/dictionary/english/stalking> (վերջին այցելության ամսաթիվ 09.02.2026 թ.):

կատարելը, անձնական իրերի վրա հետքեր թողնելը, անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելն է, եթե այդ արարքը կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար կամ ստիպել է էապես փոխել իր կենսակերպը, կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել”:

Հանցագործության տեսակային օբյեկտն անձի ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն անձի հոգեկան անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հանցագործությունը կարող է ունենալ նաև լրացուցիչ օբյեկտներ՝ պատվի ու արժանապատվության, ֆիզիկական անձեռնմխելիության, սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

2.2. Հետամտելու օբյեկտիվ կողմը:

2.2.1. Երկրնտրելի արարքները: Հետամտելու օբյեկտիվ կողմը երկրնտրելի է. հանցանքը դրսևորվում է հետևյալ արարքներից առնվազն մեկի պարբերաբար կատարմամբ՝

1. անձին հետևելը,
2. անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը,
3. անձնական իրերի վրա հետքեր թողնելը,
4. անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը:

Հետամտելու առաջին դրսևորումն անձին հետևելն է, որն արտահայտվում է առանց նրա համաձայնության նրա տեղաշարժերի, կենսակերպի, սոցիալական շրջապատի կամ առօրյա գործունեության դիտարկմամբ, որի արդյունքում տուժածն ունենում է մշտական հսկողության և անձնական ինքնավարության կորստի զգացողություն: Անձին հետևելը դրսևորվում է նրա կողքով քայլելով կամ ավտոմեքենայով հետապնդելով, ուղեկցելով, առանց նրա համաձայնության տեղաշարժը կամ առօրյան լուսանկարահանելով, տեսաձայնագրելով, տարբեր սարքերի կամ հավելվածների միջոցով տեղաշարժը հսկելով կամ արձանագրելով: Եթե հետևելը զուգորդվել է տուժածի անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելով կամ տուժածի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը խախտելով, ապա հանցավորի արարքը համակցությամբ պետք է որակել նաև քր.օր-ի համապատասխանաբար 204-րդ կամ 206-րդ հոդվածներով:

Հետամտելու երկրորդ դրսևորումն անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելն է կամ ներգրավելու փորձ կատարելը: Այս դեպքում օրենսդիրը որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նախատեսել նաև հանցանքի կատարման երկրնտրելի եղանակները՝ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելը, տուժածի բնակության, աշխատանքի կամ ուսման,

զբաղմունքի վայր այցելելը կամ այլ եղանակը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (Information and Communication Technologies, ICT) մեթոդների, միջոցների և համակարգերի ամբողջություն են, որոնք նախատեսված են տեղեկատվության տարբեր տեսակների հավաքման, ստեղծման, մշակման, փոխանցման, տարածման, պահպանման, օգտագործման, ներկայացման և պաշտպանության համար⁵: Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը կարող է դրսևորվել, օրինակ, տարբեր սոցիալական ցանցերի, բջջային հավելվածների, էլեկտրոնային փոստի միջոցով անձին հաղորդագրություններ ուղարկելու, մեկնաբանություններ թողնելու կամ պարզապես նրան զանգահարելու, կարճ հաղորդագրություններ գրելու ձևով: Հաղորդագրությունների բովանդակությունը կարող է տարբեր լինել: Պարտադիր չէ, որ դրանք սպառնալիքներ կամ այլ բացասական վերաբերմունք պարունակող բովանդակություն ունենան, կարևորն այն է, որ դրանք ստացողի համար լինեն անցանկալի: Ընդ որում՝ օրենսդիրը նշված արարքն ավարտված է համարում ոչ միայն այն դեպքում, երբ տուժածը ներգրավվել է իր համար անցանկալի հաղորդակցության մեջ (օրինակ՝ խնդրել է, պահանջել է իրեն չանհանգստացնել), այնպես էլ այն դեպքում, երբ տուժածը հաղորդակցության փորձերը թողել է անպատասխան:

Տուժածի բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելով անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը կարող է դրսևորվել, օրինակ, նշված վայրերում տուժածին մոտենալու և նրան ներկայանալու, տարբեր թեմաներով նրա հետ խոսելու (ծանոթության առաջարկ անել, որևէ տեղ հրավիրել, սեր խոստովանել, հեռախոսահամար կամ այլ կոնտակտային տվյալներ ուզել), նշված վայրերում ներկա անձանց (համակուրսեցիներ, աշխատակիցներ) մոտ որպես տուժածի ընկեր կամ ամուսին ներկայանալու և նրանց միջոցով տուժածին որևէ տեղեկատվություն փոխանցելու և այլ ձևերով: Ընդ որում՝ քրեաիրավական առումով նշանակություն ունի ոչ թե հաղորդակցության բուն բովանդակությունը (հաղորդակցությունը կարող է նաև չստացվել), այլ տուժածի անձնական տարածք ներխուժման բուն փաստը:

Եթե հանցավորը տուժածի բնակության վայր այցելելիս, վերջինիս կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, նաև ապօրինի մուտք է գործում նրա բնակարան, ապա հանցավորի արարքն անհրաժեշտ է համակցությամբ որակել նաև քր. օր-ի 207-րդ հոդվածով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը):

Հետամտելու հանցակազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է տուժածին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելու կամ ներգրավելու փորձ կատարելու եղանակների բաց ցանկ՝ օգտագործելով «կամ այլ եղանակով» ձևա-

⁵ Տե՛ս **Орлянская Н.П., Нагоев А.В.** Проблемы проектирования и внедрения информационной системы // Научный электронный журнал КубГАУ. № 01(9), 2014, էջ 4:

կերպումը: Այլ եղանակով տուժածին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը կարող է դրսևորվել, օրինակ, տուժածի ընկերների, բարեկամների միջոցով նրան նամակներ, բացիկներ ուղարկելով, տուժածի տեսադաշտում գտնվող վայրերում (օրինակ՝ տուժածի բնակարանի պատուհանից երևացող շենքի պատին, տուժածի աշխատավայրին մոտ գտնվող կանգառի վրա) նրան հասցեագրված գրառումներ կատարելով, թռուցիկներ թողնելով, տուժածի մերձավոր ազգականների աշխատանքի կամ ուսման վայր այցելելով և այնտեղ նրան փնտրելով: Օրինակ, ըստ ՇԴ/0027/01/25 դատական գործով դատավճռի՝ Գ.Մ.-ն, ով Լ.Ա.-ին հետամտելու համար դատապարտվել է քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասով, այցելել էր ոչ միայն Լ.Ա.-ի բնակության վայր, այլև նրա երեխաների դպրոց, ինչն առաջացրել էր Լ.Ա.-ի վախը նաև իր երեխաների անվտանգության համար⁶:

Եթե հանցավորը տուժածին որևէ եղանակով հաղորդակցության մեջ ներգրավելիս կամ դրա փորձ կատարելիս նրա հասցեին հնչեցրել է սպառնալիքներ կամ վնաս է պատճառել նրա առողջությանը, ապա համապատասխան հատկանիշների առկայության դեպքում հանցավորի արարքը պետք է համակցությամբ որակել նաև որպես հոգեկան ներգործություն, ֆիզիկական ներգործություն, առողջությանը համապատասխան ծանրության վնաս պատճառել և այլն:

Հետամտելու երրորդ դրսևորումը տուժածի անձնական իրերի վրա հետքեր թողնելն է: Նման գործողությունները, որպես կանոն, ցուցադրական բնույթ են կրում և ուղղված են հոգեբանական ազդեցությանը, տուժածի խոցելիության և վտանգի զգացողության ձևավորմանը: Այդպիսի գործողությունները ցույց են տալիս տուժածի անձնական տարածքում հանցավորի ներկայությունը՝ առանց տուժածի իմացության և համաձայնության:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է որոշակիորեն ընդլայնել հետամտելու այս դրսևորման օրենսդրական ձևակերպման շրջանակները:

Նախ՝ հանցավորը կարող է հետքեր թողնել ոչ միայն տուժածի անձնական իրերի (հագուստ, պայուսակ, հեռախոս, գիրք, օրագիր և այլն), այլև օրինակ, բնակարանի դռան, պատուհանների, պատերի, հողամասի, ցանկապատի, ավտոտնակի վրա: Հայերենում «իր» բառը նշանակում է որևէ կարգի առարկա (առավելապես կենցաղային, աշխատանքի ոլորտում, նաև ճամփորդության ժամանակ հետը վերցվող զգեստներ, անձնական գործածության առարկաներ և այլն)⁷: Եթե տուժածի բնակարանը, հողամասը կամ ավտոտնակը հետամտելու հանցակազմի համատեքստում դիտարկենք որպես անձնական իրեր, ապա, կարծում ենք, կկատարենք քրեաիրավական նորմի տարածական մեկնաբանում, ինչն անթույլատրելի է: Ուստի առաջարկում ենք քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում «անձնական իրեր» ձևակերպումը փոխարինել

⁶ Տե՛ս <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին այցելության ամսաթիվ 11.02.2026 թ.):

⁷ Տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 506:

“անձի տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույք” ձևակերպմամբ:

Բացի այդ, հանցավորը տուժածի գույքի վրա կարող է թողնել ոչ միայն հետքեր (կենսաբանական ծագում ունեցող՝ թուփ, մեզ, արյուն և այլն, մեխանիկական՝ քերծվածքներ, կտրվածքներ, կոտրվածքներ և այլն)⁸, այլև որոշակի առարկաներ (նվեր, բացիկ և այլն): Հայերենում “հետք” բառը նշանակում է ոտքի թողած դրոշմը գետնի, հատակի վրա, որևէ բանի շարժման կամ հարվածի հետևանքով որևէ մակերեսի վրա բացված փուս, ակոս, գիծ, մատների, ձեռքի և այլնի թողած դրոշմը որևէ բանի վրա, որևէ բանի մնացորդ⁹: Իհարկե փոխաբերական իմաստով “հետք”՝ նշանակում է նաև որևէ գործունեության, իրադարձության մնայուն հետևանք՝ արդյունք¹⁰, և հանցավորի կողմից տուժածի հողամասում թողնված առարկան՝ որպես այդ վայրում հանցավորի այցելության հետևանք, կարող է դիտարկվել որպես հետք, սակայն իրավական նորմերը մեկնաբանելիս բառերի փոխաբերական իմաստների վրա հիմնվելն անթույլատրելի է: Ուստի առաջարկում ենք քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում “հետքեր թողնել” ձևակերպումը փոխարինել “հետքեր կամ առարկաներ թողնել” ձևակերպմամբ:

Ներկայացված առաջարկությունները միտված են նրան, որ հետամտելու համար սահմանված քրեաիրավական արգելքի շրջանակները համապատասխանեն այդ հանցանքի՝ գործնականում հնարավոր վտանգավոր դրսևորումներին, և իրավակիրառողը քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն իրագործելու համար ստիպված չլինի, օրինակ, փորձել հիմնավորել, որ հետամտողի կողմից տուժածի բնակարանի դռան մոտ դրված ծաղկեպսակը տուժածի անձնական իրի վրա թողնված հետք է:

Հետամտելու վերջին՝ չորրորդ դրսևորումն անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելն է: Դա կարող է ուղղված լինել տուժածի անձի նմանակմանը, նրա վարկաբեկմանը կամ նրա անունից կամ նրա հետ հաղորդակցությանը: Հետամտելու այս ձևի հանրային վտանգավորությունը պայմանավորված է առանց անձի համաձայնության նրա անձնական տվյալներն օգտագործելու և նրա հոգեբանական ու սոցիալական անվտանգության համար լրացուցիչ վտանգ ստեղծելու, նրա պատվին ու արժանապատվությանը հնարավոր վնաս պատճառելու փաստով: Եթե անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը գուցարդվել է տուժածի անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելով, ապա հանցավորի արարքը համակցությամբ պետք է որակել նաև քր. օր-ի 204-րդ հոդվածով:

Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայության համար պարտադիր է, որ հանցավորը վերոնշյալ երկրնորելի արարքները կատարի

⁸ Տե՛ս **Թումայան Դ.Ա., Գրիգորյան Գ.Թ.**, ՀՀ քրեական իրավունք. Հատուկ մաս երեք հատորներում. Հատոր առաջին (հոդվածներ 133-251). – Երևան: Լիմուշ հրատարակչություն, 2025, էջ 449:

⁹ Տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 865:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

պարբերաբար: Քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ պարբերաբար նշանակում է նույնաբնույթ արարքը երկու կամ ավելի անգամ կատարելը: Կարծում ենք՝ պարտադիր չէ, որ հանցավորը պարբերաբար կատարի հենց միևնույն երկրնորելի արարքը, օրինակ՝ երկու կամ ավելի անգամ այցելելով տուժածի բնակության վայր՝ անցանկալի հաղորդակցության մեջ մտնի նրա հետ: Օրենսդիրը քրեականացրել է հետամտելու հավասարազոր դրսևորումներ, որոնց միավորում է դրանց օբյեկտիվ բնույթը՝ տուժածի անձնական տարածք ներխուժելը և սուբյեկտիվ ուղղվածությունը՝ տուժածի վրա հոգեբանական ազդեցություն գործելը: Հետևաբար, “պարբերաբար” հատկանիշն առկա կլինի քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հետամտելու երկու կամ ավելի երկրնորելի դրսևորումների ցանկացած համադրության դեպքում:

Ընդ որում՝ եթե հանցավորը միևնույն անձի նկատմամբ հետամտելու նույն կամ տարբեր դրսևորումները կատարում է միասնական դիտավորությամբ, ապա, անկախ այդ դրսևորումների քանակից, արարքը պետք է որակել որպես մեկ շարունակվող հանցագործություն (քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետ): Այսպես օրինակ՝ ԵԴ1/0812/01/25 դատական գործով կայացված դատական ակտում նկարագրված են Վ.Ն.-ի կողմից իր հետ համատեղ չբնակվող կնոջը՝ Ա.Ս.-ին հետամտելու տարբեր դրսևորումների յոթ դրվագ, որոնք կատարվել են 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում, և նշված բոլոր դրվագները՝ որպես մեկ շարունակվող հանցագործություն, որակվել են քր. օր-ի 196.1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով¹¹:

Հանրորեն վտանգավոր հետևանքները և պատճառական կապը: Հետամտելու հանցակազմը նյութական է. հանցանքն ավարտված համարելու համար բավարար չէ, որ հանցավորը պարբերաբար կատարի հոդվածում նշված երկրնորելի արարքները, անհրաժեշտ է նաև, որ դրանց կատարման արդյունքում վրա հասնի հոդվածով նախատեսված երկրնորելի հետևանքներից առնվազն մեկը: Մասնավորապես, անհրաժեշտ է հաստատել, որ հանցավորի արարքը՝

անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար, կամ

անձին ստիպել է էապես փոխել իր կենսակերպը, կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել:

Վերոնշյալ հետևանքները թույլ են տալիս սահմանազատել հետամտելու քրեորեն պատժելի դրսևորումներն այնպիսի արարքներից, որոնք թեև միջանձնային փոխհարաբերությունների և սոցիալական նորմերի տեսանկյունից անընդունելի են, սակայն հանցավոր չեն:

Հոգեբանական գրականության մեջ վախը բնորոշվում է որպես հուզական վիճակ, որն արտացոլում է մարդու պաշտպանական կենսաբանական արձագանքը սեփական

¹¹ Տե՛ս <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին այցելության ամսաթիվ 11.02.2026 թ.):

կյանքի կամ բարեկեցության համար իրական կամ կարծեցյալ վտանգ զգալու ժամանակ: Ի տարբերություն վախի, որն առաջանում է որպես տվյալ պահին առկա վտանգին հուզական արձագանք, անհանգստությունը՝ որպես հուզական վիճակ, կապվում է ապագայում կանխատեսվող վտանգի, անհաջողության սպասման հետ, որին բնութագրական է անորոշությունը¹²:

Ընդ որում՝ հանցավորի արարքների հետևանքով կարող է տուժածի անհանգստությունն առաջանալ ոչ միայն իր, այլև իր մերձավորի անվտանգության համար: Թեև քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում նշված չէ տուժածի մերձավոր ազգականների մասին, սակայն քննարկվող հանցակազմի համատեքստում տուժածի մերձավոր ազգականներն ընդգրկվում են նրա մերձավորների շրջանակի մեջ:

Այսպես, քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ մերձավոր ազգական է համարվում, անկախ համատեղ բնակության հանգամանքից, ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեգավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

Քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ մերձավոր է համարվում յուրաքանչյուր ոք, որի կյանքը, առողջությունը, շահերը կամ բարեկեցությունը կարևոր են անձի համար՝ պայմանավորված այդ անձի հետ ունեցած անձնական հարաբերություններով:

Ինչպես տեսնում ենք, «մերձավոր ազգական» հասկացությունն օրենսդիրը սահմանել է օբյեկտիվ չափանիշի (ազգակցական կապի) հիման վրա, իսկ «մերձավոր» հասկացության հիմքում դրվել է սուբյեկտիվ չափանիշը (անձի համար կարևորությունը): Եվ եթե հանցավորի արարքների հետևանքով առաջացել է տուժածի անհանգստությունն իր մերձավոր ազգականի (օրինակ՝ երեխայի կամ ծնողի) անվտանգության համար, ուրեմն տուժածի համար կարևոր են նրա կյանքը, առողջությունը և շահերը: Հետևաբար՝ հետամտելու հանցակազմի համատեքստում տուժածի երեխան և ծնողը նրա համար ոչ միայն մերձավոր ազգականներ են, այլև մերձավորներ:

Հարկ է նշել, որ տուժածի մեջ վախի կամ անհանգստության առաջացման փաստը հաստատելիս իրավակիրառողը պետք է հաշվի առնի ոչ միայն տուժածի սուբյեկտիվ ընկալումը, այլև օբյեկտիվ չափանիշները՝ հանցավորի գործողությունների բնույթը,

¹² Վախի և անհանգստության տարբերությունների, պատճառների և արտահայտման ձևերի մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ, **Павлович И.Е.** Эмоции и чувства. СПб., Питер, 2001, էջեր 142-159, **Романов В.В.** Юридическая психология: Учебник. – М., Юрист, 1988, էջեր 138-148:

ինտենսիվությունը, տևողականությունը և այլն:

Տուժածի կողմից իր կենսակերպի էական փոփոխությունը նրա առօրյա վարքագծում կատարված այն կայուն և էական շտկումներն են, որոնք պայմանավորված են հետամտողի հետագա արարքներից խուսափելու անհրաժեշտությամբ: Դրանց թվին կարող են դասվել տեղաշարժման երթուղիների, օրվա գրաֆիկի փոփոխումը, սովորական առօրյա շփումներից հրաժարումը, բնակարանից դուրս չգալը, տարբեր միջոցառումներին մասնակցելուց հրաժարվելը, բնակության, աշխատանքի վայրի կամ ժամանցի ձևերի փոփոխությունը, հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխումը, սոցիալական կայքի անձական էջի փակումը, անձնական անվտանգության լրացուցիչ միջոցների ձեռնարկումը և այլն: Օրինակ՝ ըստ ԵԴ1/0812/01/25 դատական գործով կայացված դատական ակտի՝ Վ.Ն.-ն, ում մեղսագրվել է քր. օր-ի 196.1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանքի կատարում, ի թիվս այլ արարքների, այցելել է իր հետ համատեղ չբնակվող կնոջ՝ Ա.Ս.-ի աշխատանքի վայր, շինության պատուհանից երեխաների ներկայությամբ հնչեցրել է վիրավորանքներ, սպառնացել, որ շինության պատուհանները կկոտրի, մշտապես գտնվել է Ա.Ս.-ի աշխատանքի վայրի հարակից տարածքում՝ առաջացնելով Ա.Ս.-ի վախն ու անհանգստությունն իր և իր մերձավորի անվտանգության համար, և 2024 թ. օգոստոսին Ա.Ս.-ն ստիպված փոխել է իր կենսակերպը՝ դադարեցնելով իր աշխատանքային գործունեությունը նշված աշխատավայրի հասցեում¹³:

Հատկանշական է, որ օրենսդիրը կենսակերպի փաստացի փոփոխությանը հավասարեցնում է դրա իրական անհրաժեշտության առաջացումը: Սա թույլ է տալիս արձանագրել վտանգավոր հետևանքների առկայությունը նույնիսկ այն դեպքերում, երբ տուժածը, գիտակցելով սպառնալիքը, օբյեկտիվորեն հարկադրված է եղել պատրաստվել կենսակերպի էական փոփոխմանը, սակայն իրենից անկախ պատճառներով դեռևս չի իրականացրել համապատասխան միջոցառումները:

Քրեաիրավական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հետապնդող գործողությունների և առաջացած հետևանքների միջև պատճառական կապի հաստատումը: Վախը, անհանգստությունը կամ կենսակերպի փոփոխությունը պետք է լինեն հանցավորի արարքների անմիջական և օրինաչափ արդյունք, այլ ոչ թե պայմանավորված լինեն այլ կենսական հանգամանքներով: Այս առումով, հետևանքների գնահատումը պահանջում է ապացույցների համակցված վերլուծություն՝ ներառյալ տուժածի, վկաների և հանցավորի ցուցմունքները, հանցավորի գործողությունների բնույթն ու տևողությունը, ինչպես նաև տուժածի առօրյա վարքագծի փոփոխությունները հաստատող օբյեկտիվ տվյալները:

3. Հետամտելու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշները:

Հետամտելու հանցակազմի սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, ֆիզիկական

¹³ Տե՛ս <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին այցելության ամսաթիվ 11.02.2026 թ.):

մեղսունակ անձը: Հանցավորը կարող է լինել ինչպես տուժածին անձանոթ անձ, այնպես էլ նրա մերձավոր ազգականը, մերձավորը, նախկին կամ ներկա գուգրնկերը և այլն: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հետամտողների (ստալկերների) հետևյալ հինգ տիպերը՝ ստալկեր, ում մերժել են, ստալկեր, որ փնտրում է մտերմություն, ոչ ադեկվատ երկրպագու, վրեժխնդիր ստալկեր և ստալկեր-որսորդ¹⁴:

Սուբյեկտիվ կողմից հետամտելը կարող է դրսևորվել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Հետամտումը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե հանցավորը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հետամտելու հանցակազմի հատկանիշ են, և հետևանքների առաջացումը նրա նպատակն է եղել կամ նպատակին հասնելու միջոց, կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը: Հետամտումը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե հանցավորը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հետամտելու հանցակազմի հատկանիշ են, և հետևանքների առաջացումը նրա նպատակը չի եղել, սակայն նա նախատեսել է դրանց առաջացման իրական հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել՝ դրանք կառաջանա՞ն, թե՞ ոչ:

Հանցանքի կատարման նպատակը և շարժառիթը հետամտելու հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշներ չեն:

4. Արարքի հակաիրավականությունը: Եթե անձի արարքը պարունակում է հետամտելու հանցակազմի բոլոր հատկանիշները, դա դեռ բավարար չէ այդ արարքը որպես հանցանք որակելու համար: Անհրաժեշտ է նաև հավաստիանալ, որ այդ արարքը հակաիրավական է, այսինքն՝ բացակայում են քր. օր-ի 6-րդ գլխով նախատեսված՝ արարքի հակաիրավականությունը բացառող հանգամանքները:

Օրինակ՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են իրականացնել “արտաքին դիտում” և “ներքին դիտում” օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց բովանդակությունն անձանց հետևելը և առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է: Եթե վերոնշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնող պաշտոնատար անձի գործողությունները համապատասխանեն հետամտելու հանցակազմին, սակայն իրականացված լինեն օրենսդրության պահանջների պահպանմամբ, ապա այդ գործողությունները չեն կարող որակվել որպես հանցագործություն: Տվյալ դեպքում առկա կլինի քր. օր-ի 39-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը՝ օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելը:

5. Մեղավորությունը: Քր. օր-ի 23-րդ հոդվածի “Մեղքը”) 2-րդ մասը սահմանում է՝ “Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը

¹⁴ Առավել մանրամասն տե՛ս **Сторублёнкова Е. Г., Самуткин В. Л.** Сталкин: синдром навязчивого преследования // Пробелы в российском законодательстве. 2017. №6:

համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա”: Ընդ որում՝ քր. օր-ը հիմնվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա “23-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եթե հանցավորը, օրինակ, պնդի, թե չի իմացել, որ հետամտելն արդեն քրեականացված է, միևնույն է, նրա արարքը կհամարվի մեղավորությամբ կատարված, քանի որ նա կարող էր գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը. հետամտելը քրեականացնող օրենքը եղել է սահմանված կարգով հրապարակված և հասանելի:

6. Հետամտելու ծանրացնող հանգամանքները:

Քր. օր-ի 196.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետամտելու ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ կատարելը,

3) անչափահասի նկատմամբ կատարելը կամ

4) մերձավոր ազգականի, զուգրնկերոջ կամ նախկին զուգրնկերոջ կողմից կատարելը:

Առաջին ծանրացնող հանգամանքը հանցավորին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատել, որ հանցավորը տուժածին կամ նրա մերձավոր ազգականին հետամտել է հենց տուժածի պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման կապակցությամբ: Ընդ որում՝ ժամանակային առումով հետամտելը կարող է կատարվել տուժածի նշված գործունեությունից առաջ, ընթացքում կամ հետո:

Հղի կնոջ և անչափահասի նկատմամբ կատարելը, որպես ծանրացնող հանգամանքներ, հանցավորին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատել ոչ միայն տուժածի՝ համապատասխանաբար հղի կամ անչափահաս լինելը, այլև այն, որ հանցավորը գիտակցել է դա: Եթե հանցավորը կարծել է, թե տուժածը հղի է կամ անչափահաս, սակայն իրականում դա այդպես չէր, ապա հանցավորի արարքը քր. օր-ի 28-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պետք է որակել որպես համապատասխանաբար հղի կնոջը կամ անչափահասին հետամտելու փորձ (փաստական սխալ):

Չորրորդ ծանրացնող հանգամանքի կապակցությամբ պարզաբանման կարիք ունի “զուգրնկեր” եզրույթը, որի սահմանումը քր. օր-ում տրված չէ: Զուգրնկերոջ հասկացությունը տրված է “Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին” օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:

7. Եզրակացություն:

Սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներով կարող ենք ներկայացնել հետևյալ առաջարկությունն ու հիմնական եզրահանգումները:

Առաջարկում ենք քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում “անձնական իրերի վրա հետքեր թողնելը” բառերը փոխարինել “անձի տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքի վրա հետքեր կամ առարկաներ թողնելը” բառերով:

Հետամտելու հանցակազմի համար պարտադիր՝ “պարբերաբար” հատկանիշն առկա է ոչ միայն հանցավորի կողմից հենց միևնույն երկրնտրելի արարքը երկու կամ ավելի անգամ կատարելու դեպքում, այլև քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հետամտելու երկու կամ ավելի երկրնտրելի արարքների ցանկացած համադրության դեպքում:

Թեև քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում նշված չէ տուժածի մերձավոր ազգականների անվտանգության համար տուժածի անհանգստության մասին, սակայն քննարկվող հանցակազմի համատեքստում տուժածի մերձավոր ազգականներն ընդգրկվում են նրա մերձավորների շրջանակի մեջ:

Կարծում ենք, որ ներկայացված օրենսդրական առաջարկության իրագործումը, այն է՝ ընդլայնել հետամտելու հանցակազմի օբյեկտիվ կողմի շրջանակները, իրավակիրառողին հնարավորություն կտա արարքը որակելիս ձեռնպահ մնալ քրեական օրենքի տարածական մեկնաբանումից, իսկ ներկայացված հիմնական եզրահանգումներն ու որակման առանձնահատկությունները հաշվի առնելը թույլ կտա դատաքննչական պրակտիկայում ապահովել հետամտելու վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ և միատեսակ կիրառումը:

CRIMINAL AND LEGAL CHARACTERISTICS OF STALKING

MARKOSYAN MISAK

Vice Rector for Academic Affairs,

Educational Complex of the Ministry of

Internal Affairs of the Republic of Armenia,

PhD in Law, Associate Professor

Abstract. The article is devoted to a comprehensive analysis of the criminal and legal characteristics of the offense of stalking as prescribed in Article 196.1 of the Criminal Code of the Republic of Armenia.

The author examines the objective and subjective elements of the corpus delicti of stalking and interprets specific terms employed by the legislator.

Particular attention is paid to the issues concerning the legal qualification of stalking in conjunction with other offenses, and the aggravating circumstances of stalking are clarified. Based on the research findings, the author puts forward a legislative proposal, as well as presents his own positions on certain issues related to the legal qualification of stalking.

Key words: stalking; domestic and family violence; psychological violence; repeatedly; cyberstalking; information or communication technologies.

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРЕСЛЕДОВАНИЯ

ՄԱՐԿՕՅԱՆ ՄԻՏԱԿ

Проректор по учебной работе
Образовательного комплекса МВД РА,
кандидат юридических наук, доцент

Статья посвящена всестороннему анализу уголовно-правовой характеристики преступления, предусмотренного статьёй 196.1 Уголовного кодекса Республики Армения, - преследования (сталкинга).

Автор анализирует объективные и субъективные признаки состава преступления преследования, осуществляет толкование отдельных терминов, использованных законодателем. Отдельным предметом рассмотрения становятся вопросы квалификации преследования в совокупности с другими преступлениями, разъясняютсяотягчающие обстоятельства преследования.

По результатам проведённого исследования автор представляет законодательное предложение, а также излагает собственные позиции по отдельным вопросам квалификации преследования.

Ключевые слова: преследование, семейное и бытовое насилие, психологическое насилие, систематически, сталкинг, киберсталкинг, информационные или коммуникационные технологии.

Գրականության ցանկ

1. Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976,
2. Թումաշյան Դ.Ա., Գրիգորյան Գ.Թ. ՀՀ քրեական իրավունք. Հատուկ մաս երեք հատորներում. Հատոր առաջին (հոդվածներ 133-251). – Երևան: Լիմուշ հրատարակչություն, 2025
3. Орлянская Н.П., Нагоев А.В. Проблемы проектирования и внедрения информационной системы // Научный электронный журнал КубГАУ . № 01(9), 2014
4. Павлович И.Е. Эмоции и чувства. СПб., Питер, 2001
5. Романов В.В. Юридическая психология: Учебник. – М., Юрист, 1988
6. Сторублёнкова Е. Г., Самуткин В. Л. Сталкинг: синдром навязчивого преследования // Пробелы в российском законодательстве. 2017. №6
7. <http://www.arlis.am>
8. <http://www.parliament.am>
9. <https://datalex.am>
10. <https://rm.coe.int>
11. <https://dictionary.cambridge.org>

Հոդվածը գրախոսվել է 19.02.2026
Ներկայացվել է տպագրության 23.02.2026

**ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՇԱՀԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԵՀ Իրավագիտության ամբիոն Հայցորդ,
DOI: 10.63925/18294847-2026.bl21-13

Ամփոփագիր. Հոդվածը նվիրված է «անվտանգություն» հասկացության վերլուծության արդյունքում պետական անվտանգության և նրա մաս կազմող բնապահպանական անվտանգությանը: Ներկայացվել է ազգային անվտանգության ծագումնաբանությունը և զարգացումը, որի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում բնապահպանական անվտանգությունը: Վերլուծության մեջ ներառվել է «շահ» հասկացության, պետության շահի և բնապահպանական շահի իրավական հիմնավորումները: Ներկայացվել է գործող օրենսդրության և պետական ռազմավարության մեջ, բնապահպանական շահով պայմանավորված, «բնապահպանական անվտանգություն» հասկացության ինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը: Կատարվել են համապատասխան հետևություններ օրենսդրական բացերի վերաբերյալ, և ներկայացվել են բնապահպանական շահի հայեցակարգումը և պաշտպանության մեթոդները:

Հիմնաբառեր. անվտանգություն, ազգային անվտանգություն, բնապահպանական անվտանգություն, շահ, ազգային շահ, բնապահպանական շահ, բնապահպանական ռազմավարություն, բնապահպանական ինքնիշխանություն:

Ներածություն

Հոդվածում հետազոտվող հիմնախնդրի **արդիականությունն** այն է, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս բնապահպանական իրավական քաղաքականությունը բնութագրվում է մի շարք էական թերություններով, որոնք ընդգծում են բնապահպանական անվտանգությունն ապահովող ինստիտուցիոնալ և իրավական շրջանակի հետագա զարգացման անհրաժեշտությունը:

Օբյեկտը` պետության ազգային և բնապահպանական անվտանգության սահմանումը:

Առարկան` բնապահպանական շահի հիման վրա բնապահպանական անվտանգության առաջնահերթությունները:

Նպատակը` ձևակերպել Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերի հայեցակարգումը և պաշտպանության իրավական մեթոդները:

Մարդու կենսագործունեության անվտանգության հարցերը միշտ համարվել են հասարակական կյանքի առաջնահերթություն: Անվտանգությունն սկզբնապես հասկացվել է որպես վտանգի բացակայության վիճակ՝ պայմանավորված համապատասխան միջոցներով: Այն մարդուն հասարակության մեջ միավորելու հիմնական պատճառներից մեկն էր, այդ թվում՝ «մարդկանց և համայնքների գործունեության առաջնահերթ դրդապատճառներից»¹:

Անվտանգության առաջին հայեցակարգային վերլուծությունը, թերևս, ձեռնարկել է Թոմաս Հոբսը, ով ուսումնասիրել է անվտանգության ծագումը՝ զուտ ֆիզիկական երևույթից մինչև հասարակական, և ցույց է տվել անհատի, հասարակության և պետության անվտանգության փոխկապակցվածությունն ու փոխկախվածությունը: Անվտանգությունը դիտարկելով որպես սոցիալական երևույթ՝ Թ.Հոբսը հաստատել է դրա ինստիտուցիոնալ բնույթը և անվտանգության ապահովման արդյունավետությունը կապել է հասարակության կողմից ձևավորված վարքագծի նորմերի հետ:

Երկար ժամանակ անվտանգությունը համարվում էր պետության բացառիկ իրավասությունը: Այս առումով ուշագրավ է Հայաստանի Հանրապետության օրինակը. պետության ձևավորումից անվտանգությունը պետության բացառիկ գործառույթն էր: Այսպես, դեռ Հին Հայաստանում կարևորվել են հետախուզական բնույթի գործառույթները, որոնց արդյունավետության հետևանքով հնարավոր է եղել ապահովել երկրի պետական անվտանգության համակարգի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը: Պատմական փաստերը վկայում են, որ դեռ հայկական պետականության արշալույսին՝ Արարատյան պետականության ժամանակաշրջանում, լուրջ քայլեր են արվել հետախուզության կազմակերպման բնագավառում, ինչը հնարավոր է դարձրել արդյունավետորեն հակազդել Ասորեստանի և այլ երկրների հետախուզական կառույցների կողմից ձեռնարկված հակահայկական գործողություններին, ինչի մասին են փաստում առկա սեպագիր արձանագրությունները²:

Դեռևս 12-րդ դարի վերջերին Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում ներկայացնում է պետական իշխանության հայեցակարգը, օրենքների ժողովածուում մեծ տեղ է հատկացնում պետական ինքնիշխանությանը, ինչպես նաև պետության ձևավորման հայեցակարգին, ինչն արտահայտվում է նրա օրենքներով: Գոշն այս օրենքներով ձգտում էր հայ իշխաններին և ժողովրդին դրդել պետական անկախության վերականգնման: Նա պետության գլուխ համարում էր թագավորին, որը պետք է ունենար միանձնյա կառավարման բոլոր լծակները: Երկրորդ օրենքն իրավամբ ամենից հետաքրքիրներից է, քանի որ Գոշը խոսում է այլ երկրներից հարկ վերցնելու և այլ ժողովուրդներ հպատակեցնելու և ոչ թե հպատակվելու մասին, և սա այնպիսի ժամանակներում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր օտարերկրյա պետությունների

¹ Свободная мысль. 1994. №4. С. 16.

² Տե՛ս Վ.Հ.Վիրաբյան, ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920թթ., Երևան ԵՊՀ 2015թ., էջ 15-16:

ազդեցության տակ: Գոչն ինքնիշխանության կարևոր հատկանիշներից է համարում պետության գերիշխանությունը հպատակ ժողովուրդների հանդեպ և արտաքին հարաբերություններում լիակատար ինքնուրույնությունը: Պետությունը պետք է ունենա ամբողջական հսկողություն ներքին կյանքի վրա³:

Անվտանգության խնդրի նկատմամբ այս հայեցակարգային մոտեցումը հանգեցրել է համապատասխան պետական ինստիտուտների զարգացմանը: Դժբախտաբար, այս մոտեցումը շարունակվեց խորհրդային ժամանակաշրջանում, ինչը բացատրում է անվտանգության բնագավառի գիտելիքների չափազանց թույլ զարգացումը: Հետաքրքիր է, որ նույնիսկ այնպիսի հիմնարար հանրագիտարանային հրատարակություններում, ինչպիսիք են «Խորհրդային ռազմական հանրագիտարանը» և «Ռազմական հանրագիտարանային բառարանը», «անվտանգություն» հասկացությունը բացակայում է: Անվտանգության խնդիրը հանգեցվել է զուտ տեխնիկական ընթացակարգի: Հենց այսպես է «անվտանգությունը» մեկնաբանվում Ս.Բ. Օժեգովի հեղինակավոր «Ռուսաց լեզվի բառարանում», մինչդեռ Է.Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» և «Հանրագիտարանային փիլիսոփայական բառարանում» այդ հասկացությունն ընդհանրապես չի ներառվել, ինչը պարզապես նշանակում է, որ այս երևույթը չի համարվել գաղափարախոսական ենթատեքստ ունեցող սոցիալական երևույթ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում անվտանգության նկատմամբ տեսական հետաքրքրությունը կտրուկ աճել է: Ակնհայտ է, որ անվտանգության և դրա ապահովման հայեցակարգային մոտեցման փոփոխությունը, որը հիմնված է լիբերալ հումանիզմի սկզբունքների վրա, անվտանգության շրջանակներում ներառում է ոչ միայն պետությունը, այլև քաղաքացիական հասարակությունը և անհատներին: Այս ամենն արդիական է դարձրել անվտանգության սոցիալական, քաղաքական և իրավական ասպեկտներին նվիրված տեսական հետազոտությունները: Նշված ասպեկտները հետաքրքրել են այնպիսի հետազոտողների, ինչպիսիք են Ա. Վ. Վոժեննիկովը, Յու. Ի. Դերյուզինը, Վ. Լ. Մանիլովը, Վ. Ի. Միտրոխինը, Գ. Վ. Օսիպովը, Վ. Ս. Փիրումովը, Ա. Ա. Պրոխոմեր, Վ. Ա. Ռուբանովը, Լ. Ի. Շերշենը և ուրիշներ: Արդյունքում, «անվտանգություն» հասկացությունը փոխվել է: Հաճախ այն հասկացվում է որպես «իրավիճակ, որտեղ ապահովվում է պետության և քաղաքացիական հասարակության կենսական կարևոր շահերի պաշտպանությունը տնտեսական, քաղաքական, ռազմական, բնապահպանական, մարդասիրական և այլ ոլորտներում»⁴: Ոմանք անվտանգությունը սահմանում են որպես «անհատների, սոցիալական խմբերի, պետության, հասարակության և քաղաքակրթության կենսական միջավայրի, պատվի, արժանապատվության և արժեքների պաշտպանության միջոց»⁵:

³ Տե՛ս Մ.Մ.Թելունց, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (93), Երևան 1997թ., էջ 177-185:

⁴ Տե՛ս Словарь специальных терминов. М., 1994.

⁵ Տե՛ս Митрохин В.И. Национальная безопасность России // Интеллектуальный мир. 1995. №6.

«Անվտանգության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքն անվտանգությունը սահմանում է որպես «անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանության վիճակ արտաքին և ներքին սպառնալիքներից»:

Մեր կարծիքով, անվտանգությունը՝ որպես սոցիալ-քաղաքական երևույթ, նշանակում է ոչ այլ ինչ, քան պաշտպանության վիճակ, որն իրացվում է բարոյականության, քաղաքականության, իրավունքի, տնտեսագիտության և այլնի մեջ ինստիտուցիոնալ կերպով ամրագրված սոցիալական հարաբերությունների համակարգի միջոցով: Այսպես, այսօր անհատը, հասարակությունը և պետությունը դիտարկվում են որպես անվտանգության հիմնական օբյեկտներ: Միևնույն ժամանակ, անվտանգության սուբյեկտը կարող է փոխվել՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով: Անվտանգության սոցիալական էությունը նրա հիմնարար տարրի՝ շահի մեջ է, որը դիտարկվում է որպես գիտակցված սոցիալական կարիք, որը ձևավորվում է անվտանգության սուբյեկտի կողմից իր սոցիալական գոյության արտացոլման արդյունքում: Միևնույն ժամանակ, շահի սոցիալական բնույթը որոշում է դրա իրականացման սոցիալական մեթոդները: Պետության մեջ շահի պաշտպանությունը դառնում է համակարգված, ապահովվում է ինստիտուցիոնալ համակարգի ձևավորմամբ՝ տնտեսական համակարգ, քաղաքական համակարգ և իրավական համակարգ: Ակնհայտ է, որ «շահը» վերաբերում է հասարակական գիտակցության ոլորտին, անվտանգության համակարգի առաջացման մեջ հիմնարար դեր է խաղում հայեցակարգային գաղափարախոսական գործոնը, որը տարբեր դարաշրջաններում ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, ինչպիսիք են բարոյականությունը, կրոնը, փիլիսոփայությունը և քաղաքական գաղափարախոսությունը:

Ըստ էության, անվտանգության համակարգի ձևավորումն սկսվում է անվտանգության ուսմունքից կամ անվտանգության տեսությունից, որը սահմանում է անվտանգության օբյեկտներն ու սուբյեկտները, անվտանգության սուբյեկտների կենսական կարևոր շահերին սպառնացող հիմնական սպառնալիքները և դրանք պաշտպանելու միջոցները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ անվտանգության տեսությունն ինքնին որոշվում է հասարակական հարաբերությունների ձևավորվող համակարգով, այս կամ այն սոցիալական սուբյեկտների համապատասխանությամբ: Քանի որ հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների շահերը չեն կարող հավասարապես լիարժեք իրացվել, բնականաբար, ի հայտ են գալիս այլընտրանքային անվտանգության ուսմունքներ, որոնք տարբեր կերպ են վերլուծում անվտանգության համակարգի հիմնարար պարադիգմատիկ բաղադրիչները: Համապատասխանաբար, հասարակական հարաբերությունների համակարգի փոփոխությունը նշանակում է նաև անվտանգության ուսմունքի և համակարգի փոփոխություն:

Այս մեթոդաբանական սկզբունքների շրջանակներում պարզ է դառնում, որ գոյություն չունի համընդհանուր անվտանգության համակարգ: Ազգային, տարածաշրջանային և միջազգային անվտանգության համակարգերը, իրենց սոցիալական բնույթին համապատասխան, գտնվում են քաղաքական, տնտեսական և իրավական

գործընթացների զարգացման մեջ, հետևաբար, ենթակա են մշտական ինստիտուցիոնալ փոփոխությունների՝ ապահովելով իրադրության նոր պայմաններում անհատների, հասարակության և պետության (ազգային անվտանգություն), տարածաշրջանային շահերով միավորված պետությունների խմբերի (տարածաշրջանային անվտանգություն) և համաշխարհային հանրության (միջազգային անվտանգություն) կենսական կարևոր շահերի պաշտպանությունը: Քանի որ անվտանգության համակարգի ներդրումն ու գործունեությունն ապահովվում են համեմատաբար պահպանողական կայունություն ունեցող համապատասխան հաստատությունների և ինստիտուտների կողմից, ապա այն կարող է հետ մնալ հարաբերությունների իրական զարգացումից: Ավելին, նոր հաստատությունների և ինստիտուտների ի հայտ գալն անվտանգության համակարգի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկն է: Այն սովորաբար տեղի է ունենում պատմական շրջադարձային պահերի ընթացքում:

Ձևավորված տեսական հասկացությունների համաձայն՝ ազգի կենսագործունեությունն ունի բազմաթիվ ասպեկտներ, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է ազգային անվտանգության առարկան: Այս իմաստով անվտանգության տեսակը ոչ այլ ինչ է, քան ազգային անվտանգության տեսակ կամ ասպեկտ: Ազգային անվտանգության ժամանակակից դասակարգումն ըստ կենսագործունեության ոլորտի ներառում է հետևյալ տեսակները՝ ռազմական անվտանգություն, սոցիալ-քաղաքական անվտանգություն, տեղեկատվական անվտանգություն, տնտեսական անվտանգություն և բնապահպանական անվտանգություն⁶:

Բնապահպանական քաղաքականության բովանդակությունը որոշվում է պետության ազգային շահերով, հետևաբար, մտնում է երկրի ազգային անվտանգության շրջանակի մեջ: Միննույն ժամանակ, քանի որ բնապահպանական ճգնաժամը գլոբալ բնույթ է կրում, ուստի բնապահպանական հարաբերությունները կարգավորվում են միջազգային ինստիտուտների կողմից, որոնցում ՄԱԿ-ը և այլ միջազգային կազմակերպություններ զգալի դեր են խաղում: Միջազգային իրավունքում բնապահպանական անվտանգության իրավական ինստիտուցիոնալացումը՝ համապատասխան միջազգային նորմատիվ իրավական փաստաթղթերն ստորագրած պետությունների իրավունքների, ազատությունների և պարտավորությունների նորմատիվ արտացոլման տեսքով, սահմանափակում է պետական բնապահպանական քաղաքականության շրջանակը՝ ամրագրելով հիմնական բովանդակությունը: Սակայն միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումը, բնապահպանական գործընթացները կարգավորող միջազգային կոնվենցիաներին միանալը և այլն, հիմնականում թելադրվում են ազգային շահերով: Հետևաբար, բնապահպանական քաղաքականությունը, չնայած դրա ձևավորման վրա ազդող գլոբալ գործոններին, հիմնականում որոշվում է ազգային շահերով, որն էլ էկոլոգիան դարձնում է ազգային անվտանգության տարրերից մեկը:

⁶ Sté u *Общая теория национальной безопасности: Учебник / Под ред. А.А. Прохожева. М., 2002. С. 40.*

Հետևաբար, որոշակի պատմական ժամանակաշրջաններում հասարակական կյանքի այս երևույթի արդիականությունով և պահանջարկով պայմանավարված՝ բնապահպանությունը կարող է տարբեր կերպ դիտարկվել ազգային անվտանգության առաջնահերթությունների շարքում: Ակնհայտ է, որ այս առաջնահերթությունների իրացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե դրանք ինստիտուցիոնալ կերպով արտահայտվեն օրենքներում և իրավակիրառ գործունեությունում: Այս իմաստով, բնապահպանական անվտանգությունը կարելի է դիտարկել որպես ազգային անվտանգության ինստիտուտ, որը նախատեսված է երկրի ազգային անվտանգության դրկտրինում արտահայտված, ազգային անվտանգության ապահովման նպատակներին համապատասխան, բնապահպանական գործընթացները կարգավորելու համար:

Կարծում ենք, որ այս համատեքստում գլխավոր հարցը «ազգային շահ» կատեգորիայի սահմանումն է, որը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության հիմնարար ինստիտուտ, որը ձևավորում է ամբողջ համակարգի նորմատիվ-իրավական ապահովումը: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության ազգային շահերը որպես «պետության ներքին և արտաքին կարիքների ամբողջություն՝ անհատի, հասարակության և պետության անվտանգությունն ու կայուն զարգացումն ապահովելու համար»⁷: Ռազմավարության սկզբունքների ինստիտուցիոնալացումը տեղի է ունենում այդ շահերի իրացմանն սպառնացող իրական և պոտենցիալ սպառնալիքների ճանաչման միջոցով: Ազգային շահերը և դրանց սպառնալիքները հայեցակարգվում են պետության ազգային անվտանգության պահպանման և զարգացման ռազմավարական նպատակներն ու խնդիրները սահմանող փաստաթղթում, որը գաղափարապես հիմնված է ձևակերպված շահերի և սպառնալիքների վրա: Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունում այս փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն է: Ազգային շահերի ինստիտուցիոնալացումը տեղի է ունենում համապատասխան նորմատիվ-իրավական փաստաթղթերի ընդունման և ազգային շահերը պաշտպանելու, սպառնալիքներն ու դրանց ռիսկերը կանխելու համար ուժերի ու միջոցների ստեղծման միջոցով: Ժողովրդավարական հասարակություններում նման ինստիտուցիոնալացումը տեղի է ունենում նաև տեղական ինքնակառավարման մարմինների այս գործընթացում ներգրավման միջոցով:

Անորյա գործածության մեջ «օգուտ», «շահ» բառերն արտացոլում են որևէ բանի նկատմամբ հատուկ ուշադրություն, դրա էության մեջ խորանալու, սովորելու կամ հասկանալու ցանկություն՝ հետաքրքրություն, նշանակություն, կարիքներ, պահանջներ, օգուտ կամ շահ⁸: Այնուամենայնիվ, վաղուց է նշվել, որ ժամանակակից գիտական խոսույթում. «Սկսած 17-րդ դարից՝ Եվրոպայում ազգային պետությունների ձևավորման

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, 2007թ., Արլիս.ամ

⁸ Տե՛ս Է.Բ.Աղայան Արդի հայերենի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ. 1976թ.,

ժամանակներից մինչ օրս թվում է, թե չկա որևէ այլ հասկացություն, որն այդքան հաճախ օգտագործվի դիվանագիտական խոսույթում... Միաժամանակ, որքան էլ պարադոքսալ թվա, չկա ավելի անորոշ, ավելի մշուշոտ և ցրված, ավելի երկիմաստ և հակասական հասկացություն»⁹:

Ազգային շահի սահմանման բազմաթիվ տեսակետներից հատկապես ուշագրավ է Բ. Ռակիցկիի դիրքորոշումը, ով կարծում է, որ ազգային շահն ունի սոցիալ-մշակութային հիմք: Ընդգծելով Ռուսաստանի մշակույթի, կենսակերպի և պետականության յուրահատկությունը՝ նա գրում է, որ ազգային շահը արմատավորված է ռուսական մշակույթում, միաժամանակ՝ եվրոպական և ո՛չ եվրոպական, արևելյան և ո՛չ արևելյան: Սակայն նա կարծում է, որ սխալ կլինի փորձել ռուսական ազգային մշակույթից որպես արմատ սահմանել Ռուսաստանի ազգային շահը, այդ թվում՝ ժամանակակից Ռուսաստանի: Նա կարծում է, որ ազգային շահը շատ ավելի պարզ է, քան ազգային մշակույթը: Ռուս ժողովուրդը միասնական է, բայց ոչ միաձույլ, ունեն կառուցվածք, սակայն ժողովրդի մշտական մասնատումն ակնհայտ է: «Ռուսաստանի ժողովուրդ» կոչվող միասնության տարբեր մասերի շահերն իրականություն են: Սակայն նա առաջարկում է այլ մակարդակներում փնտրել այն հարցերի պատասխանները, թե արդյո՞ք այս բազմազան շահերից այն կողմ գոյություն ունի ընդհանուր շահ, որը կարող է մեկնաբանվել որպես ամբողջ Ռուսաստանի, նրա բոլոր ժողովրդի ազգային և պետական շահ¹⁰:

Մեր կարծիքով, ազգային շահերը պետք է սահմանվեն ավելի լայն համատեքստում՝ որպես մարդկանց հասարակական համայնքի կենսագործունեության նյութական, հոգևոր և բարոյական հիմքերի պահպանում և կատարելագործում, տնտեսական բարգավաճման և ներքին արտադրողների պաշտպանության համար բարենպաստ պայմաններ ապահովելու անհրաժեշտություն, ինչպես նաև երկրի աշխարհաքաղաքական դիրքով և տնտեսական կապերի ու հարաբերությունների համակարգում նրա զբաղեցրած տեղով թելադրված գործառույթների և պարտավորությունների կատարում:

Պետական իրավական քաղաքականության հիմքն ազգային շահն է, համապատասխանաբար, բնապահպանական իրավական քաղաքականությանը՝ բնապահպանական շահը: Առանց հայեցակարգային, պաշտոնապես ընդունված բնապահպանական շահի սահմանման՝ դժվար է խոսել բնապահպանական ոլորտում պետական իշխանության մարմինների, հանրային ինքնակառավարման և քաղաքացիների գործունեության համակարգված բնույթի մասին, իսկ այս ոլորտը կարգավորող օրենսդրությունն օբյեկտիվորեն օժանդակող նշանակություն ունի՝ ապահովելով այլ տեսակի շահերի իրացումը:

Ակնհայտ է, որ բնապահպանական շահի սահմանումը պետք է հիմնված լինի Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում բնապահպանական իրավիճակի

⁹ Sté u Поздняков Э. Национальные интересы: теория и практика. М., 1991. С. 3.

¹⁰ Sté u Ракитский Б. Культура и интерес нации // Вопросы экономики. 1994. №2.

համապարփակ համակարգային վերլուծության, բնապահպանական սպառնալիքներն ու ռիսկերը ձևավորող տեխնածին, սոցիալական և քաղաքական գործոնների ամբողջության, ինչպես նաև բնապահպանական իրավիճակի քաղաքական գնահատման վրա, որի արդյունքում պետք է մշակվի երկրի բնապահպանական շահի պետական հայեցակարգային մոդել, որն այս ոլորտում պետական ռազմավարության հիմքն է:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը չի սահմանում բնապահպանական շահերը: Վերոնշյալ փաստաթղթի 2-րդ հոդվածը սահմանում է ազգային անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, որոնք ներառում են՝ **«Պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում.**

* ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը,

* բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը»:

Որպես ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիք՝ ամրագրվել են բնապահպանական խնդիրները և բնական պաշարների անարդյունավետ կառավարումը. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրագետ օգտագործումը¹¹:

Մինևույն ժամանակ, փաստաթուղթում, որպես ներքին անվտանգության ռազմավարություն, ամրագրվել են մաքուր **ջրջակա միջավայրի**, բնական պաշարների, այդ թվում նաև՝ ջրային պաշարների ու Սևանա լճի բնահամակարգի վերականգնմանը, պահպանությանը և օպտիմալ օգտագործմանը, անտառածածկույթի պահպանմանն ու վերականգնմանը, ատոմային էներգիայի անվտանգ օգտագործմանը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների պահման համապարփակ վերահսկմանը, բնական և տեխնածին աղետների կանխատեսմանն ու վաղ ազդարարմանը, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացմանը, արտակարգ իրավիճակների բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծմանը, բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովմանը վերբերող խնդիրներ¹²:

Հատկանշական է, որ նախորդ փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, բնապահպանական շահերը սահմանում էր հետևյալ կերպ. «Հայաստանի ազգային շահերը բնապահպանական ոլորտում կայանում են ջրջակա միջավայրի պահպանման և բարելավման մեջ»: Հայեցակարգում

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատված ՀՀ Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով:

¹² Տեսնել նույն տեղում:

նան մանրամասն նկարագրված էին այդ շահերին սպառնացող սպառնալիքները. «Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրագետ օգտագործումը»:

Դրան համապատասխան, փաստաթուղթը սահմանում է նաև բնապահպանական ոլորտում պետական գործունեության ուղղությունները՝ բնական պաշարների, այդ թվում նաև՝ ջրային պաշարների ու Սևանա լճի բնահամակարգի վերականգնումը, պահպանությունը և օպտիմալ օգտագործումը, անտառածածկույթի պահպանումն ու վերականգնումը, ատոմային էներգիայի անվտանգ օգտագործումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների պահման համապարփակ վերահսկումը, բնական և տեխնածին աղետների կանխատեսումն ու վաղ ազդարարումը, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացումը, արտակարգ իրավիճակների բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծումը, բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովումը:

Այս դրույթների էության վերաբերյալ պետք է նշել հետևյալը՝ փաստաթուղթը տալիս էր Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերի ընդհանուր և վերացական սահմանում, ինչը թույլ չէր տալիս առանձնացնել պետության ռազմավարական կարևոր նշանակության գործունեության ուղղությունները՝ դրանք պաշտպանելու համար: Տեխնածին գործոնները՝ որպես բնապահպանական շահերի սպառնալիքներ, իրական նշանակություն ունեն երկրի բնապահպանական շահերի իրացման համար, ինչպես նաև բնակչության բնապահպանական մշակույթի զարգացումը: Սակայն սա չի սպառում սպառնալիքների ամբողջ շրջանակը: Այսպես, երկրի բնապահպանական շահերի ավելի էական սպառնալիքը բնապահպանական ճգնաժամն է, որը կարող է սահմանվել որպես մոլորակի էկոլոգիական հավասարակշռության պահպանում, որն ունի տեղական, տարածաշրջանային և գլոբալ առանձնահատկություններ, որը, համաձայն հատուկ ուսումնասիրությունների, ունի ոչ միայն տեխնածին, այլև բնական ներուժ: Բնապահպանական ճգնաժամի գլոբալ բնույթը երկրի բնապահպանական շահերի այս մեկնաբանությունը դարձնում է ավելի ու ավելի արդիական: Ակնհայտ է, որ այս ոլորտի թույլ զարգացումը, ինչպես նշված է Հայեցակարգում, բացատրում է այն փաստը, որ այն չի կարողացել դառնալ Հայաստանի Հանրապետության բնապահպանական իրավական քաղաքականության արդյունավետ հիմքը:

Ուշագրավ են փաստաթղթի հակիրճությունը և միջոցառումների հստակությունը, որոնք հռչակում են որպես գործունեության ոլորտների ռազմավարություն: Ռազմավարության այս անկասկած դրական առանձնահատկությունն ունի նաև իր հակառակ կողմը, այսինքն՝ հակիրճ ներկայացված հայեցակարգային բաժինը, որը կարող է բաց թողնված լինել կամ պարզապես վատ մշակված լինել: Ազգային

բնապահպանական շահի սահմանման գործնական բացակայությունը բացատրում է փաստաթղթում մշակված ռազմավարական սկզբունքը՝ արձագանքել երևույթի հետևանքներին, այլ ոչ թե պատճառներին: Ռազմավարությունում բնապահպանական ճգնաժամի գլոբալ համատեքստի լիակատար բացակայությունը թույլ է տալիս ենթադրել բնապահպանական սպառնալիքներից պաշտպանությանն առնչվող բոլոր միջոցառումների թույլ դոկտրինալ մշակում՝ պայմանավորված դրանց նեղ տեղայնացված ընկալմամբ:

Կարևոր հանգամանք և նույնիսկ եզրակացություն պետք է ճանաչել այն, որ փաստաթուղթը որևէ դրույթ չի պարունակում բնապահպանական իրավունքների ամբողջականության վերաբերյալ, ինչը լիովին իրավաչափ է՝ բնապահպանական հայեցակարգային անորոշության պայմաններում: Իր հերթին, այն կասկածի տակ է դնում էկոլոգիական սպառնալիքի հայեցակարգային հասկացությունը, քանի որ փաստաթուղթում չենք գտնում իմաստային համատեքստը: Այսպես, բնապահպանական անվտանգության ինստիտուցիոնալ ատրիբուտները ձևակերպելով՝ ռազմավարությունն անտեսում է բնապահպանական իրավունքը:

Այս համատեքստում կարևոր է նշել այն հանգամանքի մեթոդաբանական կարևորությունը, որ բնապահպանական անվտանգության ինստիտուտը պետք է ավելի լայն լինի, քան բնապահպանական իրավունքը, քանի որ այն ներառում է ոչ միայն բնապահպանական գործընթացների կարգավորման հետ անմիջականորեն կապված նորմեր, այլև էկոլոգիայի հետ անուղղակիորեն կապված նորմեր, որոնք վերաբերում են տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, միգրացիոն և այլ հարաբերությունների կարգավորմանը: Այս դրույթի մեթոդաբանական կարևորությունն այն է, որ երբ բնապահպանական անվտանգությունը հավասարեցվում է բնապահպանական իրավունքին, ապա ազգային շահերի սպառնալիքների ամբողջ շրջանակն անխուսափելիորեն կհանգեցնի բնապահպանական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի խախտումների: Հետևաբար, այդ շահերի իրացման ռազմավարությունը պետք է սահմանափակվի գործող օրենսդրության խախտումների համար պատժիչ միջոցների խստացմամբ, մինչդեռ իրավիճակը կարող է պահանջել համարժեք քաղաքական գնահատական և նոր իրավական կարգավորումների ներդրում: Բացի այդ, բնապահպանական իրավունքի խնդիրները կհամընկնեն բնապահպանական անվտանգության խնդիրներին, որոնք անխուսափելիորեն կհակասեն ազգային անվտանգության շահերին:

Հայաստանի Հանրապետության գործող բնապահպանական հայեցակարգը (ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր), որը հաստատվել է կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ, շրջակա միջավայրը հռչակում է որպես պետության առաջնահերթություններից մեկը ազգային շահերի ապահովման գործում: Այնուամենայնիվ, արված մեկնաբանությունների լույսի ներքո պետք է նշել, որ Ծրագրի բնապահպանական անվտանգության վրա շեշտադրումը նվազեցնում է փաստաթղթի հայեցակարգային

նշանակությունը և հակասում է դրա հիմնական սկզբունքին՝ ստեղծել անհատի, հասարակության և պետության շահերի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, ինչն առավել կոնկրետ արտահայտվում է Հայաստանի Հանրապետությունում կայուն սոցիալ-տնտեսական զարգացման վրա կենտրոնացմամբ:

Սակայն փաստաթուղթը չի սահմանում ազգային պետական շահերը բնապահպանական ոլորտում: Հետևաբար, «Էկոլոգիական անվտանգություն» հասկացությունը գուրկ է ամուր հայեցակարգային հիմքից:

Կարծում ենք, որ բնապահպանական ազգային-պետական շահի հասկացությունն ինքնին որպես էկոլոգիական հայեցակարգ ձևավորող չէ, որը բնապահպանական ոլորտի Հայաստանի Հանրապետության կողմից պաշտոնապես ընդունված տեսակետների համակարգն է: Հայեցակարգում դժվար է գտնել բնապահպանական իրավիճակի ազգային-պետական հատկանիշներ և գնահատականներ: Փաստաթուղթը հիմնված է գլոբալ գնահատականների և արժեքների վրա, ինչը հստակ բացատրվում է ոչ միայն էկոլոգիական ճգնաժամի գլոբալ բնույթով, այլև բնապահպանական օրենսդրության և, իհարկե, բնապահպանական հայեցակարգի ընկալունակությամբ:

Այս հանգամանքների պատճառով պետական բնապահպանական քաղաքականության տարածաշրջանային ասպեկտը, որը, անկասկած, ավելի կարևոր դեր է խաղում բնապահպանական անվտանգության ապահովման գործում, քան գլոբալը, թվում է թերզարգացած: Ավելին, բնապահպանական ոլորտում ազգային-պետական շահերի թույլ արտահայտվածությունն ստիպում է երկրին հետևել գլոբալ բնապահպանական ռազմավարության՝ ի վնաս կայուն զարգացման: Օրինակ՝ շրջակա միջավայրի համար վնասակար արդյունաբերությունն անխուսափելի է զարգացման պատմական այս փուլում, որտեղ գտնվում է ժամանակակից Հայաստանը, և դրանից արմատապես հրաժարվելը կնշանակի տնտեսական աճի տեմպի զոհաբերում: Այս համատեքստում հիշատակվում են այն երկրների բնապահպանական քաղաքականության օրինակները, որոնց ազգային-պետական շահերն առաջնահերթ են զարգացման ռազմավարությունների մշակման գործում: Հայտնի է, որ այդ երկրների թվում են ոչ միայն Չինաստանը, Հնդկաստանը և Բրազիլիան, այլև ամենահզոր տնտեսություններ ունեցող երկրները: Օրինակ՝ Միացյալ Նահանգները դեռևս չի միացել օզոնային շերտը քայքայող նյութերի արտանետումների սահմանափակման մասին միջազգային կոնվենցիային:

Ինքնիշխանությունը պետական քաղաքականության ամենակարևոր սկզբունքն է, և դրա իրավական ինստիտուցիոնալացումը ենթադրում է ազգային շահերի իրականացում: Բնապահպանական ոլորտի ինքնիշխանությունն անհատի, հասարակության և պետության ինքնիշխանության դրսևորման ձևերից մեկն է, և, ունենալով սահմանադրական հիմք, այն օրինականացվում է օրենսդրությամբ՝ ապահովելով անհատների և քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները բնապահպանական ոլորտում: Բնապահպանական ինքնիշխանությունը քաղաքական-իրավական կատեգորիա է, որը արտացոլում է բնապահպանական գործընթացի առկա ինստիտուցիոնալ քաղաքական և իրավական պայմանների ու բնապահպանական ոլորտի միտումներով

երկրի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքով պայմանավորված բնապահպանական շահի միջև կապը: Բնապահպանական ինքնիշխանության իրացումն իրականացվում է բնության օգտագործման և պաշտպանության ինստիտուցիոնալ-իրավական կարգավորման ձևով: Բնապահպանական ինքնիշխանության պաշտպանությունը պահանջում է ինստիտուցիոնալ աջակցություն՝ ներառելով պետական բնապահպանական քաղաքականության մշակումը, ինստիտուցիոնալ-իրավական դաշտը և կազմակերպությունների համակարգը՝ որպես բնապահպանական քաղաքականության ինտեգրված սուբյեկտ:

Հայաստանի Հանրապետության բնապահպանական ինքնիշխանությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է հստակ ձևակերպել երկրի ազգային-պետական բնապահպանական շահերը՝ առանց որի անհնար է հստակ և ճշգրիտ բնապահպանական քաղաքականության, արդյունավետ բնապահպանական օրենսդրության և, համապատասխանաբար, կայուն սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը:

Այսպիսով, անհրաժեշտ է կատարել հետևություն, որ.

բնապահպանական ոլորտում Հայաստանի Հանրապետության շահերի հայեցակարգային ձևակերպումն իրականացվում է ծրագրային փաստաթղթերում նպատակների և խնդիրների հոչակման միջոցով, որոնք սահմանում են բնապահպանական գործընթացների պետական-իրավական կարգավորման ռազմավարությունը և ապահովում են Հայաստանի Հանրապետության էկոլոգիական հայեցակարգի սկզբունքների և նորմերի հստակեցումն ու զարգացումը:

Բնապահպանական գործընթացների կարգավորման պետաիրավական ռազմավարությունը, լինելով բնապահպանական հայացքների համակարգ, ձևակերպում է բնապահպանական գործընթացների պետական-իրավական ձևավորման հիմքերը, որոնք ծառայում են որպես իրավական սկզբունքներ էկոլոգիական իրավունքի նորմերի և ինստիտուտների ձևավորման գործում: Հետևաբար, բնապահպանական անվտանգության ինստիտուտի ձևավորման համար անհրաժեշտ է ազգային անվտանգության ընդհանուր խնդիրներին համարժեք բնապահպանական քաղաքականության հայեցակարգ: Ցավոք, այսօր պետք է ընդունել, որ պետությունը չունի Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերի հստակ ըմբռնում:

Բնապահպանական շահերը մենք դիտարկում ենք որպես անհատների, հասարակության և պետության համակցված կարիքներ՝ պահպանելու էկոլոգիական հավասարակշռությունը գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում՝ մոլորակի վրա կենսոլորտի մաս կազմող բարենպաստ մարդկային բնակավայրերը պահպանելու համար: Այն նաև քաղաքական-իրավական կատեգորիա է, որն արտացոլում է բնապահպանական քաղաքականության առաջնահերթությունները՝ հիմնված բարենպաստ միջավայրի և կայուն զարգացման իրավունքի իրականացման վրա: Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերը բաղկացած են իր տարածքում և դրանից դուրս էկոլոգիական հավասարակշռության պահպանումից և կայուն զարգացման ապահովումից:

**NATIONAL AND ENVIRONMENTAL SECURITY.
THE CONCEPTUALIZATION OF THE ENVIRONMENTAL
INTERESTS OF THE REPUBLIC OF ARMENIA
AND THE LEGAL METHODS OF THEIR PROTECTION**

MNATSAKANYAN VAHAGN

*PhD student, Applicant at the Chair of Law,
European University of Armenia*

Abstract. The article is devoted to the analysis of the concept of security, focusing on state security and its component, environmental security. It presents the origin and the development of national security, within which environmental security holds a significant place. The analysis includes the legal foundation of the concept of “interest,” as well as the legal justification of state interest and environmental interest. It highlights the necessity of institutionalizing the concept of environmental security in current legislation and state strategy, conditioned by environmental interest.

Relevant conclusions are drawn regarding legislative gaps, and the conceptualization of environmental interest along with methods for its protection are presented.

Key words: security, national security, environmental security, interest, national interest, environmental interest, environmental strategy, environmental sovereignty.

**ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

ՆԱԶԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ

Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական

առարկանների ամբիոնի պետ, հոգեբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ

DOI: 10.63925/18294847-2026.bl21-14

Համառոտագիր. Հաշվի առնելով ոստիկանության առջև ծառայած արդի մարտահրավերներին հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը՝ խիստ արդիական է ոստիկանության ծառայողների գործունեության հոգեբանական ապահովման աշխատանքների կազմակերպումը: Դա թույլ կտա լուծել ոստիկանությունում մարդկային ռեսուրսներին առնչվող տարաբնույթ խնդիրներ, կնպաստի անձնակազմի մասնագիտական լիարժեք ինքնիրացմանը և ոստիկանի անձի հոգեբանական ներուժի ակտիվացմանը, ընդհանուր առմամբ կլավարկվի ոստիկանական գործունեության արդյունավետությունը և հուսալիությունը:

Բանալի բառեր. գործունեություն, հոգեբանական ապահովում, հոգեբանական ծառայություն, հոգեբանական ուղեկցություն, անձնային ներուժ, ինքնիրացում:

Լայնածավալ բարեփոխումները, որ ներկայումս ընթանում են ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգում, ենթադրում են էական փոփոխություններ ոստիկանության գործունեության կազմակերպման ու իրականացման գործում: ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ընթացող շարունակական բարեփոխումների համատեքստում կարևոր նշանակություն ունի հոգեբանական ծառայության կայացման հիմնախնդիրը՝ որպես ոստիկանության ծառայողների մասնագիտական-հոգեբանական պատրաստականության և գործունեության հոգեբանական ուղեկցության կարևոր նախապայման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս իրողություններն ավելի են բարդացրել ոստիկանական՝ առանց այն էլ բարդ գործունեությունը, ոստիկանության ծառայողների հոգեբանական ուղեկցության ապահովման հիմնախնդիրը դարձել է խիստ արդիական և պահանջված ուղղություն:

Ինչպես ցույց է տալիս ոստիկանի մասնագիտական գործունեության առանձնահատկությունների վերլուծությունը, այդ գործունեությունը տարբերվում է արտահայտված հոգեբանական յուրատիպությամբ՝ գործունեության օբյեկտով, առարկայով, նպատակներով, խնդիրներով, լուծման միջոցներով և եղանակներով, աշխատանքային պայմաններով, հոգեբանական դժվարություններով, ժամանակային և այլ չափորոշիչներով, որոնք կանոնակարգվում են ոչ միայն տվյալ մասնագիտության պահանջներով, այլև

որոշվում են տվյալ հասարակության զարգացման միտումներով¹:

Ավելին, ոստիկանի գործունեությանը հատուկ են նաև տարաբնույթ իրարամերժ գործոններ, որոնք, լինելով մասնագիտական միկրոմիջավայրի և հասարակական սոցիալ-հոգեբանական մակրոմիջավայրի պահանջների անհամատեղելիության արդյունք, խոչընդոտներ են առաջացնում ոստիկանի մասնագիտական կայացման գործընթացում և հանգեցնում են մասնագիտական ձևախեղումների՝ որոշակիորեն ազդելով ոչ միայն ոստիկանի գործունեության արդյունավետության, այլև նրա մասնագիտական ինքնիրացման գործընթացի վրա²:

Ոստիկանության արդի մարտահրավերներին համահունչ՝ կատարողական իշխանության նոր տիպի կայացման գործընթացը, հիմնվելով հասարակության հետ գործընկերային հարաբերությունների հաստատման և հանրության «սպասարկման» հայեցակարգի վրա, էական փոփոխություններ է ենթադրում ոստիկանության գործելակերպում՝ բոլորովին այլ պահանջներ ներկայացնելով ոստիկանին: Վերոնշյալն առավել քան հիմնավորում է ոստիկանության ծառայողների գործունեության հոգեբանական ապահովման կազմակերպման արդիականությունը: Հաշվի առնելով ոստիկանության առջև ծառայած արդի մարտահրավերներին հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը՝ փորձենք ուրվագծել ոստիկանության կարիքների համար հոգեբանական ապահովման աշխատանքների կազմակերպման հեռանկարները:

ՆԳՆ ոստիկանության ծառայողների գործունեության հոգեբանական ապահովման աշխատանքները կարելի է ներկայացնել իբրև որոշակի համակարգված միջոցառումների ամբողջություն՝ ուղղված այդ գործունեության արդյունավետության և հուսալիության բարձրացմանը, հոգեբանական տեխնոլոգիաների կիրառման միջոցով անձի և ծառայողական թիմի հոգեբանական ներուժի ակտիվացմանը, գործունեության սուբյեկտների մոտիվացիայի և աշխատանքից բավարարվածության, ինքնիրացման և ինքնադրսևորման, մասնագիտական գործունեության պայմանների և կազմակերպակառավարչական գործընթացների լավարկմանը:

Ծառայողական գործունեության հոգեբանական ապահովումը ենթադրում է այդ գործունեության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ հոգեբանական ռեսուրսների որոնման, ուսումնասիրության, ստեղծման, պահպանման և վերականգնման տեխնոլոգիաների /մեթոդների, հնարքների, ալգորիթմների ամբողջություն/ կիրառում³:

Ծառայողական գործունեության հոգեբանական ապահովման գերակա նպատակը պետք է լինի անձնակազմի հոգեբանական պատրաստականության օպտիմալ մակար-

¹ Տե՛ս Նազարյան Ն.Ս., Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները: Ուսումնական ձեռնարկ.- Եր.:«Արման Ասմանգուլյան» ԱԶ տպարան, 2015 թ. – 230 էջ

² Տե՛ս Նազարյան Ն.Ս. Ոստիկանի անձնային առանձնահատկությունների և գործունեության անհամատեղելի գործոնների հարաբերակցությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2016, №2 (647), էջ 109-113:

³ Տե՛ս Психологическая работа в органах внутренних дел : учебное пособие / [В. В. Вахнина и др.] ; отв. ред. В. И. Долинко. – М. : Академия управления МВД России, 2019. – 108 с., էջ 8

ղակի ապահովումը մասնագիտական-ծառայողական խնդիրների որակյալ և արդյունավետ իրականացման համար, ամենօրյա և արտակարգ իրավիճակում մասնագիտական հուսալիության պահպանումը՝ մոբիլիզացնելով յուրաքանչյուր ծառայողի և ծառայողական թիմի հոգեբանական ներուժը⁴:

Ասվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ և նպատակահարմար կլինի ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգում կազմավորել համակարգված և հետևողական աշխատանքներ իրականացնող հոգեբանական ծառայություն, որը կգրադվի ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական ապահովման և ուղեկցման արդի խնդիրների հետազոտության և լուծման հարցերով:

Հոգեբանական ծառայության ստեղծումը թույլ կտա ոստիկանության կարիքների համար հոգեբանական գիտելիքն ի նպաստ օգտագործել ոչ միայն ծառայողական տարաբնույթ խնդիրները լուծելու, ծառայության իրականացման ամենօրյա և արտակարգ իրավիճակներում հոգեբանական պատրաստականությունն ապահովելու համար, այլև բարելավել աշխատանքին հարմարվածության մակարդակն ու աշխատանքից գոհունակությունը, ապահովել կայուն և բարեհարմար հոգեվիճակ, նպաստել ծառայողների ներուժի լիարժեք իրացմանը մասնագիտական գործունեության ոլորտում, լավարկել գործունեության հուսալիությունն ու արդյունավետությունը և այլն:

Ի թիվս բազմաթիվ խնդիրների, որ կոչված է լինելու լուծել հոգեբանական ծառայությունը, առանձնահատուկ նշանակություն ունի ոստիկանությունում մարդկային ռեսուրսների համալրման, կրթության և որակավորման շարունակական բարձրացման հիմնախնդիրը, որը պահանջում է այդ ուղղությամբ հոգեբանական հիմնավոր և հետևողական աշխատանքների իրականացում: Հոգեբանական ծառայությունը կարող է նպաստել այնպիսի կարևոր խնդիրների լուծմանը, ինչպիսիք են ոստիկանությունում կադրերի ընտրությունն ու առաջխաղացումը, մասնագիտական պիտանելիության գնահատումը, մասնագիտական կարևոր որակների, կարողությունների ու հմտությունների զարգացումը, հղկումն ու կատարելագործումը և այլն:

Հոգեբանական ծառայության գործառնության տեսանկյունից կարելի է նախանշել աշխատանքների մի շարք հիմնական ուղղություններ.

1. Մասնագիտական ընտրության արդի համակարգի մշակում և ներդնում, որը ենթադրում է կատարելագործել ոստիկանությունում պաշտոնի հավակնող թեկնածուների հետազոտման, հավաքագրման, ուսուցման և առաջխաղացման ընթացակարգերը: Նման ընտրության համակարգը թույլ կտա արդյունավետ գնահատել պաշտոնի հավակնող թեկնածուների մասնագիտական-հոգեբանական պիտանելիությունը՝ որոշելու կոնկրետ պաշտոնի պահանջներին տվյալ անձի հոգեբանական համապատասխանությունը:

2. Գործունեության հոգեբանական ապահովում, որը ենթադրում է աշխատանքի

⁴ Стé u Кобозев И.Ю. Психологическое обеспечение служебной деятельности: Учебное пособие. — М.: ДГСК МВД России, 2015. — 144 с. /21/

հոգեբանական ուղեկցում և աջակցություն՝ նպաստելով աշխատանքում ուստիկանի անձի հոգեբանական ներուժի բարձրացմանը և լիարժեք իրացմանը: Մասնագիտական գործունեության հոգեբանական ուղեկցումը ենթադրում է ախտորոշել և բացահայտել աշխատակիցների հոգեբանական ինքնազգացողությունը, անձնային-մասնագիտական ձևախեղումները, աշխատանքին հարմարման նորմալ գործընթացի խաթարումները, աշխատունակության և նյարդահոգեկան լարվածության մակարդակները և այլն: Այդ ամենի ախտորոշման հիման վրա հնարավոր կլինի հարկ եղած դեպքում աշխատակիցներին մասնագիտական հոգեբանական օգնություն ցուցաբերել՝ հոգեշտկողական աշխատանքներ տանելով հնարավոր հոգետրավմատիկ և սթրեսային իրավիճակների հաղթահարման, հոգեբանական կայունության մակարդակի բարձրացման, հոգեկան առողջության պահպանման և վերականգնման և այլ ուղղություններով:

3. Հոգեբանամասնագիտական պատրաստականության ապահովում, ինչը թույլ կտա որակապես բարձրացնել ուստիկանության ծառայողների մասնագիտական ձեռնահասության և արհեստավարժության մակարդակը վերապատրաստումների և որակավորման շարունակական բարձրացման դասընթացներով՝ հաղորդելով այնպիսի գիտելիքներ, մշակելով ու հղկելով հմտություններ և կարողություններ, որոնք թույլ կտան աշխատանքում կիրառել հոգեբանական գիտելիքի վրա հիմնված միջամտության հնարքներ՝ հաշվի առնելով սոցիալական իրողությունները և հոգեբանական իրականությունը: Հոգեբանամասնագիտական պատրաստականությունը ենթադրում է նաև մասնագիտական կարևոր որակների ախտորոշում և մարզում, որոնցից են հատկապես իմացական, հուզականային, արժեքադրդապատճառային, հաղորդակցական ոլորտների որակները: Գործնական մեծ նշանակություն ունեն արտակարգ պայմաններում ծառայություն իրականացնելու հոգեբանական պատրաստականության, հոգեբանական կայունության, հոգեհուզական ինքնակառավարման և ինքնակարգավորման, մասնագիտական ձևախեղումների կանխարգելման և շտկման, հաղորդակցական բանիմացության և այլնի ձևավորման և զարգացման խնդիրները:

4. Կառավարակազմակերպչական բնույթի աշխատանքների իրականացում՝ ուղղված աշխատանքի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը և հոգեբանորեն անվտանգ մասնագիտական միջավայր ստեղծելուն, ինչը կնպաստի գործունեության սուբյեկտների անձնային և մասնագիտական ներուժի լիարժեք իրացմանը: Այստեղ մեծ նշանակություն ունեն ծառայողական առաջընթացի հեռանկարների ապահովումը, մասնագիտական դրական մոտիվացիայի ձևավորումը, սոցիալապես հասուն դիրքորոշումների և արժեքային կողմնորոշումների ձևավորումը և այլն:

Այսպիսով, հոգեբանական աշխատանքներն ուղղված են այնպիսի խնդիրների համալիր լուծմանը, որոնք կապված են ծառայողների՝ մասնագիտական կարևոր

⁴ Ст' у Кобозев И.Ю. Психологическое обеспечение служебной деятельности: Учебное пособие. — М.: ДГСК МВД России, 2015. — 144 с. /21/

որակների, հոգեբանական կայունության և մասնագիտական խնդիրների արդյունավետ իրականացման պատրաստականության ձևավորման հետ ինչպես առօրյա, սովորական, այնպես էլ արտակարգ իրավիճակներում:

Հոգեբանական աշխատանքները պետք է իրականացվեն տարբեր մակարդակներում՝

* անձնային-անհատական մակարդակում՝ շեշտադրվելով աշխատակիցների հոգեբանական որակները և առանձնահատկությունները, այդ թվում՝ իմացական, հուզական, կամային, մոտիվացիոն ոլորտների,

* սոցիալական և միկրոխմբային մակարդակում՝ հաշվի առնելով ադապտացիոն գործընթացները, համատեղ գործունեության իրականացման առանձնահատկությունները, կոնֆլիկտային վարքի կանխումը թիմի ներսում և այլն⁵:

Ընդհանուր առմամբ, հոգեբանական աշխատանքն օգնելու է լուծել հետևյալ հիմնախնդիրները.

1. Անձնային խնդիրներ, որոնք դժվարացնում են աշխատակիցների անձնային աճը, բացասաբար են ազդում նրանց հոգեկան առողջության, ինքնագգացողության, մասնագիտական հնարավորությունների վրա: Այդպիսիք կարող են լինել անհատների սոցիալ-հոգեբանական ադապտացիայի դժվարությունները ծառայողական գործունեության պայմաններին:

2. Ներխմբային խնդիրներ, որոնք ազդում են անձնակազմի, թիմի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վրա: Այդպիսիք են ներթիմային գործնական ու անձնային կապերի խաթարումն ու ձևախեղումը, թիմի դրական արժեքների ու կողմնորոշիչների անկումը, աշխատակիցների և ծառայողների պառակտումը, որ դրսևորում է մասնագիտական ու կենցաղային կոնֆլիկտներում, հոգեբանական անհամատեղելիության տարբեր ձևերը, կեղծ, ասոցիալ նպատակներ հետապնդող միկրոխմբերի առկայությունը և այլն:

3. Գործունեական բնույթի խնդիրներից են ծառայողական գործունեության ոչ ադեկվատ իրականացումը, որ պայմանավորված է աշխատակիցների անձնային-անհատական առանձնահատկությունների անհամապատասխանությամբ մասնագիտական գործունեության օբյեկտիվ պահանջների հետ: Նման խնդիրներն արտացոլվում են ծառայողական գործունեության արդյունավետության, հուսալիության անկման և այլ անցանկալի դրսևորումներով⁶:

Այսպիսով՝ հոգեբանական ապահովման ծառայության ստեղծումը թույլ կտա լուծել ՆԳՆ ուստիկանությունում մարդկային ռեսուրսներին առնչվող տարաբնույթ արդի

⁵ St' u Ульянина О. А. Психологические подходы к реализации компетентностной модели подготовки специалистов в образовательных организациях высшего профессионального образования МВД России: монография. Омск, 2017. С. 146

⁶ St' u Марьин М. И., Петров В. Е., Ульянина О. А. Особенности психологического обеспечения в подготовке специалистов в образовательных организациях МВД России // Труды Академии управления МВД России. 2016. № 1 (37). С. 85–90.

խնդիրներ, լավարկել ոստիկանական գործունեության արդյունավետությունը և հուսալիությունը, նպաստել անձնակազմի մասնագիտական ինքնիրացմանը, ավելի ամրապնդել դրական բարոյական դիրքորոշումներն ու արժեհամակարգը:

Նախանշված հիմնախնդիրների հետագա գիտական մշակումը և գործնականում կիրառումը, հիմնվելով հոգեբանական գիտության արդի նվաճումների և համաշխարհային առաջատար փորձի ուսումնասիրության, տեղայնացման և ներդրման վրա, հնարավորություն կտա ապահովել ոստիկանի աշխատանքի գիտահեն և արդյունավետ կազմակերպումը, բարձրացնել աշխատանքից բավարվածության և գոհունակության մակարդակը, կօգնի ձևավորել մասնագիտական դրական կերպար, նպաստել ոստիկանի անձի հոգեբանական ներուժի ակտիվացմանը, մասնագիտական գործունեության մեջ լիարժեք և բազմակողմանի ինքնիրացմանը և իբրև վերջնարդյունք՝ բարձրացնել ոստիկանի գործունեության հուսալիությունը:

PROSPECTS FOR ORGANIZING PSYCHOLOGICAL SUPPORT
FOR THE ACTIVITIES OF POLICE OFFICERS OF THE MINISTRY
OF INTERNAL AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

NAZARYAN NAIRA

Head of the Chair of General Humanities and

Socioeconomic Disciplines,

Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

PhD in Psychology, Associate Professor

Abstract. Taking into account the urgent need to respond to the contemporary challenges faced by the police, the organization of psychological support for the activities of police officers has become highly relevant. Properly structured psychological support enables the effective management of human resources within the police system, promotes the full professional self-realization of personnel, and contributes to the activation of officers' psychological potential. Overall, it enhances the effectiveness and reliability of police activities.

Key words: activity, psychological support, psychological service, psychological assistance, personal potential, self-realization.

ПЕРСПЕКТИВЫ ОРГАНИЗАЦИИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДДЕРЖКИ ДЕЯТЕЛЬНОСТИ СОТРУДНИКОВ ПОЛИЦИИ МИНИСТЕРСТВА ВНУТРЕННИХ ДЕЛ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՆԱԶԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ

*Начальник кафедры общих гуманитарных
и социально-экономических дисциплин,
кандидат психологических наук, доцент*

Аннотация. Учитывая необходимость быстрого реагирования на современные вызовы, с которыми сталкивается полиция, крайне актуальна организация работы по психологическому обеспечению деятельности сотрудников полиции. Это позволит решить различные проблемы, связанные с человеческими ресурсами в полиции, будет способствовать полноценной профессиональной самореализации персонала и активизации психологического потенциала личности полицейского, повысит эффективность и надежность полицейской деятельности в целом.

Ключевые слова: деятельность, психологическое обеспечение, психологическая служба, психологическое сопровождение, личностный потенциал, самореализация.

Օգտագործված գրականության ցանկ

1. Նազարյան Ն.Մ. Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները: Ուսումնական ձեռնարկ.- Եր.:«Արման Աստանգույան» ԱԶ տպարան, 2015թ. – 230 էջ
2. Նազարյան Ն.Մ. Ոստիկանի անձնային առանձնահատկությունների և գործունեության անհամատեղելի գործոնների հարաբերակցությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2016, №2 (647), էջ 109-113:
3. Кобозев И.Ю. Психологическое обеспечение служебной деятельности: Учебное пособие. — М.: ДГСК МВД России, 2015. — 144 с. /21/
4. Марьин М. И., Петров В. Е., Ульянина О. А. Особенности психологического обеспечения в подготовке специалистов в образовательных организациях МВД России // Труды Академии управления МВД России. 2016. № 1 (37). С. 85–90.
5. Психологическая работа в органах внутренних дел : учебное пособие / [В. В. Вахнина и др.] ; отв. ред. В. И. Долинко. – М. : Академия управления МВД России, 2019. – 108 с., էջ 8
6. Ульянина О. А. Психологические подходы к реализации компетентностной моде ли подготовки специалистов в образовательных организациях высшего профессионального образования МВД России: монография. Омск, 2017. С. 146

*Հոդվածը գրախոսվել է 18.02.2026
Ներկայացվել է տպագրության 24.02.2026*

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային
համագործակցության և հանրային կապերի բաժնի գլխավոր մասնագետ,
Փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման
ուսումնական ստորաբաժանման ընդհանուր
հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական
առարկաների ամբիոնի համատեղման կարգով անգլերենի դասախոս*

ԳԵՆՋՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

*ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական
ստորաբաժանման միջին մասնագիտական կրթության
«Ոստիկանական գործ» մասնագիտության
երկրորդ կուրսի սովորող*

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐՅԱ

*ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական
ստորաբաժանման միջին մասնագիտական կրթության
«Ոստիկանական գործ» մասնագիտության
երկրորդ կուրսի սովորող
DOI: 10.63925/18294847-2026.bl21-15*

Համառոտագիր: Հոդվածում քննության են առնվում այն համալիր և բազմաշերտ գործընթացները, որոնք սահմանում են անգլերենի դերի ընդլայնումն իրավապահ մարմիններում՝ այն վերածելով ոչ միայն հաղորդակցման գործնական միջոցի, այլև ինստիտուցիոնալ զարգացման կարևոր գործոնի: Սույն համատեքստում կարևոր է ընդգծել, որ անգլերենը ծառայողների համար աստիճանաբար ձևավորվում է որպես կարևոր նշանակություն ունեցող լեզու՝ ազդելով իրավապահ համակարգի կառուցվածքային և բազմաշերտ մակարդակների վրա:

Հոդվածում քննության են առնվել այն հիմնարար գործոնները, որոնք նպաստում են անգլերենի գործառնության դերի ընդլայնմանը՝ ներառյալ միջազգային համագործակցության ընդլայնումը, համատեղ գործողությունների և հետաքննությունների ծավալումը, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը և գլոբալ հաղորդակցման միասնական ստանդարտների կիրառումը:

Հոդվածում ուսումնասիրվում են այն կարևոր և բազմակողմանի խնդիրները, որոնք վերաբերում են անգլերենի դերին և կիրառությանը իրավապահ մարմիններում, մասնավորապես՝ ոստիկանական գործում:

Դասավանդման առանձնահատկություններն ուսումնասիրելիս պարզ է դարձել, թե ինչպես են մշակվել կրթական ծրագրերը՝ ապահովելով ծառայողների պատրաստվածությունն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում՝ միաժամանակ հաշվի առնելով գործնական պահանջները և իրավաբանական առանձնահատկությունները: Կարևոր է ընդգծել, որ անգլերենի կիրառումը ոչ միայն բարձրացնում է ոստիկանության աշխատանքի արդյունավետությունը, այլև նպաստում է իրավապահ մարմինների արդիականացմանը և միջազգային գործընկերների հետ հաղորդակցման որակի բարելավմանը:

Հոդվածում ներկայացվում է մասնագիտական անգլերենի դերն իրավապահ համակարգում՝ ընդգծելով դասավանդման պահանջները, միջազգային փորձը, կիրառման առանձնահատկությունները, լեզվական և մեթոդական մարտահրավերները:

Հիմնաբառեր: Մասնագիտական անգլերեն, ոստիկանական գործ, իրավապահ մարմիններ, հեռանկարներ, լեզու, օպերատիվ հաղորդակցություն, հրամաններ:

Ներածություն: Իրավապահ մարմինների գործունեության ակտիվացումը, միջազգային համագործակցության ընդլայնումն անգլերենի իմացությունը դարձնում են ոչ միայն մասնագիտական հմտություն, այլև համակարգային անհրաժեշտություն¹:

Ժամանակակից իրավապահ համակարգում անգլերենի կիրառությունը պայմանավորված է ինչպես օպերատիվ հաղորդակցության արագությամբ և ճշգրտությամբ, այնպես էլ իրավական փաստաթղթերի, հրահանգների, համագործակցության ձևաչափերի և միջազգային մեխանիզմների նկատմամբ աճող պահանջներով²:

Անգլերենի իմացությունն իրավապահ ոլորտում ընդգրկում է տերմինաբանական ճշգրտություն, իրավական լեզվի վերլուծություն, օպերատիվ-մեթոդական հաղորդակցություն և միջմշակութային հաղորդակցման հմտություններ³:

Թույլատրվող գործոններից են ինչպես լեզվական պատրաստվածության մակարդակը, այնպես էլ համապատասխան կրթական ծրագրերի կառուցվածքը, որոնք պետք է համադրեն տեսական գիտելիքը գործնական իրավիճակների հետ:

Ուսումնասիրված են նաև այն լեզվաբանական և մեթոդական մարտահրավերները,

¹ Sté u Hall D., International Cooperation and Language Competence in Law Enforcement //Journal of Police Studies, Vol. 14(2), London, 2020, էջ 45–62.

² Sté u Fountoulakis M. St., English Language Proficiency and its Impact on Professional Identity, Operational Skills, and Gender Dynamics among Police Cadets in Greece, Athens // Journal of Advanced Research in Social Sciences, Vol. 7(3), 2024, էջ 89–102.

³ Sté u García A., Morton L., Terminology Management and Language Training in Modern Police Forces //International Journal of Applied Linguistics in Public Safety, Vol. 9(1), Madrid, 2019, pp. 33–57.

որոնք հանդիպում են ոստիկանության ծառայողներին. մասնագիտական բառապաշարի յուրացման բարդությունը, իրավական փաստաթղթերի բովանդակության ճշգրիտ փոխանցման պահանջը, անհապաղ իրավիճակներում արագ արձագանքման և համարժեք հաղորդակցման անհրաժեշտությունը⁴: Այս պայմաններում անգլերենի դասավանդումը պահանջում է համակարգված մեթոդական մոտեցում՝ ներառյալ աստիճանաբար խորացող հմտությունների զարգացում, սիմուլյացիոն վարժություններ, իրավիճակային մոդելավորում և գնահատման բազմաշերտ մեթոդներ⁵:

Ուշադրություն է դարձվում նաև անգլերենի սոցիալական և ինստիտուցիոնալ ազդեցությանը, որն արտահայտվում է ոստիկանության համակարգի արդիականացման, միջազգային գործընկերների հետ արդյունավետ համագործակցության, ինչպես նաև հանրային վստահության բարձրացման մեջ⁶:

Այսպիսով, հողվածում գնահատվում է անգլերենի դերը իրավապահ մարմիններում՝ ներկայացնելով նրա կրթական, գործնական, լեզվաբանական և մեթոդական բաղադրիչները, ինչպես նաև այն հիմնախնդիրները, որոնք պայմանավորում են անգլերենի արդյունավետ կիրառումը ոստիկանության ծառայողական գործունեության մեջ:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն ընդհանուր պատկերացում ստանալ անգլերենի դերի մասին իրավապահ համակարգում, այլև բացահայտել այն մեխանիզմները, որոնց միջոցով անգլերենի կիրառումն իրական ազդեցություն է ունենում ծառայողական արդյունավետության վրա:

Հողվածի **նպատակն է** ներկայացնել անգլերենի դերի բազմաբնույթ նշանակությունն իրավապահ մարմիններում՝ գնահատելով դրա ազդեցությունը ոստիկանության ծառայողական արդյունավետության, օպերատիվ հաղորդակցության, միջազգային համագործակցության և մասնագիտական պատրաստվածության վրա: Մասնավորապես բացահայտել՝ ինչպես է լեզվական պատրաստվածությունը նպաստում ոստիկանության աշխատանքում հիմնարար գործընթացների որակավորման բարձրացմանը և ինչպիսի մեթոդական լուծումներ կարող են ապահովել դրա արդյունավետությունը:

Իրավապահ համակարգում լեզվական պատրաստվածությունը վաղուց դուրս է եկել «օժանդակ» հմտության սահմաններից և դարձել է մասնագիտական կարողությունների առանցքային բաղադրիչ: Ոստիկանության կառույցներում անգլերենի ուսուցման արդիական ռազմավարությունները հիմնվում են երկու գլխավոր սկզբունքի վրա՝ գործնական կիրառելիություն և իրավիճակային ճշգրտություն: Այն աշխատակիցը, որը տիրապետում է օտար լեզվի գործառնական շերտին, կարողանում է ապահովել ինչպես միջազգային հաղորդակցության անխաթար ընթացքը, այնպես էլ ներպետական ծառայողական գործընթացների լեզվաբանական ճշտությունը:

⁵ Sté u Harper S., Innovative Language Teaching Technologies for Law Enforcement //Journal of Public Safety Pedagogy, Vol. 11(4), New York, 2021, էջ 120–141.

⁶ Sté u Larsen P., The Role of English in Police Modernization and Public Trust Building //Journal of Security and Social Communication, Vol. 6(1), Copenhagen, 2022, էջ 14–28.

Լեզվական պատրաստվածության բարձրացման արդյունավետ մոտեցումներից առանձնանում է սիմուլյացիոն ուսուցումը: Իրավապահ միջավայրին բնորոշ սցենարներով («Էլեկտրոնային նամակագրություն միջազգային գործընկերների հետ», «օտարերկրյա քաղաքացիների հետ հաղորդակցություն», «միջազգային տվյալների փոխանակման գործընթաց») կատարվող վարժությունները ձևավորում են լեզվի գործառնական օգտագործման պրակտիկ հմտություններ: Այս մեթոդը հաղթահարում է այն դասական խնդիրը, երբ լեզուն սովորեցվում է տեսական, այլ ոչ իրավիճակային տրամաբանությամբ:

Կարևոր տեղ ունի նաև համակարգային շարունակական ուսուցումը, որտեղ լեզվի տիրապետման մակարդակը դիտարկվում է որպես կարիերային առաջխաղացման գործոն: Նման մոտեցումը ձևավորում է ինստիտուցիոնալ մոտիվացիա. յուրաքանչյուր աշխատակցի համար լեզուն դառնում է ոչ թե պարտադիր ուսումնական բեռ, այլ մասնագիտական հզորացման գործիք: Սրան գումարվում է թվային տեխնոլոգիաների ներդրումը՝ շտեմարաններով, ձայնային վարժություններով, տերմինաբանական բազաներով և առցանց հարթակներով, որոնք ապահովում են ինքնուրույն սովորելու հնարավորությունը:

Ուստիկանության ծառայողների մասնագիտական անզլերենի ուսուցման արդյունավետությունն անմիջականորեն կախված է ESP (English for Specific Purposes) մոտեցումների ընտրությունից, մասնավորապես՝ սցենարային մշակումներից, դերաբաշխված վարժություններից և իրավապահ միջավայրին համարժեք իրական գործունեության մոդելավորումներից⁷:

Անզլերենի դասավանդումը պահանջում է հստակ համակարգվածություն, տեխնոլոգիաների ինտեգրում, ինչպես նաև իրավիճակային որոշումների կայացման վրա հիմնված ուսումնառություն, որը համարվում է արդյունավետ մեթոդ իրավապահ կրթական համակարգում⁸:

Հետազոտությունները ցույց են տվել, որ քննադատական մտածողության, հաղորդակցական ճկունության և օպերատիվ արձագանքման համադրված զարգացումն անզլերենով անհրաժեշտ է ոչ միայն միջազգային համագործակցության, այլև ներքին ծառայողական հաղորդակցության մակարդակում: Այս համատեքստում լեզվական պատրաստվածության բարելավման ռազմավարությունները պետք է ներառեն շարունակական վերապատրաստումներ, գնահատման բազմամակարդակ մեխանիզմներ և իրականին մոտարկված սցենարային ուսուցում, որը հնարավորություն է տալիս ծառայողին կիրառել լեզուն ոչ թե տեսական, այլ գործնական միջավայրում:

Այսպիսով՝ լեզվական պատրաստվածության բարելավման արդյունավետ ռազմա-

⁷ Sté u Fountoulakis M., Standardizing ESP Pedagogy: A Critical Evaluation of Language Training for Law Enforcement Cadets // International Journal of Higher Education Pedagogies, Vol. 6(1), 2023, էջ 45-59

⁸ Sté u Pielmus C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Society. Integration. Education., 2021, Vol. 3, 2018, էջ 566-579.

վարությունը պահանջում է ինտեգրված մոտեցում, որտեղ դասավանդման բովանդակությունը հաստվում է ծառայողական խնդիրների, տեխնոլոգիական գործիքակազմի և մշտական որակավորում ապահովող ինստիտուցիոնալ քաղաքականության հետ:

Անգլերենն ունի կիրառական նշանակություն կիրեռահանցագործությունների դեմ պայքարում: Կիրեռահանցագործությունների շարժընթացն այնպիսի բնույթ ունի, որ ազգային իրավապահ համակարգերը փաստացի գործում են համաշխարհային ցանցի տրամաբանության մեջ: Այս իրողությունն անգլերենը վերածում է ոչ միայն հաղորդակցական միջոցի, այլ նաև տվյալների վերլուծության, գործիքների կիրառման և միջազգային համագործակցության հիմնական լեզվի: Դաշտը ձևավորված է այնպես, որ կիրեռանվտանգության վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերի մեծ մասը, ծրագրային միջավայրերը, հրահանգները, կիրեռ սպառնալիքների նկարագրությունները և անգամ «dark web»⁹–ում շրջանառվող նյութերի գերակշիռ մասը սահմանվում են անգլերենով:

Այստեղ անգլերենի կիրառական նշանակությունը խմբագրվում է երեք առանցքների շուրջ: Առաջինը տեխնիկական կոմպլեքսությունն է: Ոստիկանը, որն զբաղվում է կիրեռահանցագործությունների բացահայտմամբ, անխուսափելիորեն բախվում է ծրագրավորման, ցանցային անվտանգության կամ վերլուծական գործիքների այն շերտին, որը ներկայացված է միայն անգլերենով: Լեզվի ոչ բավարար տիրապետումն անմիջապես խոչընդոտում է գործի ընթացքը՝ դանդաղեցնելով ինչպես տվյալների վերլուծությունը, այնպես էլ տեխնիկական արձանագրությունների ըմբռնումը:

Երկրորդ առանցքը միջազգային համագործակցությունն է: Կիրեռահանցագործությունը պետական սահմաններ չի ճանաչում և տեղեկատվության փոխանակումը «Interpol», «Europol» կամ այլ միջազգային մարմինների հետ իրականացվում է բացառապես անգլերենով:

Աշխատակցի անգլերենի ոչ բավարար իմացությունը կարող է խաթարել գործուն փոխգործակցության ամբողջ շղթան՝ սկսած դիմումների մշակման արագությունից, մինչև համատեղ գործողությունների ճշգրտությունը:

Երրորդ առանցքն առցանց հետախուզությունն է՝ OSINT (Open-source Intelligence¹⁰) մեթոդներով: Բաց աղբյուրային հետախուզության մեծ մասը, հատկապես սոցիալական ցանցերում և ֆորումներում, մոդերացվում է անգլերեն միջավայրում: Քննիչն ու վերլուծաբանը պիտի կարողանան կարդալ, վերլուծել, համադրել ու որևէ անգամ գտնել լեզվական նրբերանգներ, որոնք ցույց են տալիս հնարավոր հանցավոր գործողությունների նախանշանները:

Այս դաշտում անգլերենն օժանդակ հմտությունից վերածվում է տեխնիկական ներգործության, տեղեկատվական գերակայության և միջազգային վստահելիության հիմքի, ինչը թույլ է տալիս պետությանը լինել ոչ թե հետևող, այլ նախաձեռնող դերակատար:

⁹ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Dark_web, մուտք՝ 20.01.2026

¹⁰ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Open-source_intelligence, մուտք՝ 20.01.2026

Կիբեռահանցագործությունների դեմ պայքարում անգլերենի դերն առավել քան լեզվական գործիք է. այն միջազգային հետազոտությունների, թվային հետախուզության, միջազգային իրավական տվյալների բազաների և օպերատիվ տեղեկատվության հասանելիության հիմնական նախապայման է: Կիբեռահանցագործությունների հետաքննչական աշխատանքների մեծ մասը հիմնված է անգլերեն աղբյուրների, համաշխարհային CERT/CIRT¹¹ գրառումների և միջազգային համագործակցության վրա, ուստի անգլերենի վարժ իմացությունն ուղղակիորեն ազդում է տեղեկատվության վերլուծության որակի վրա¹²:

Բացի դրանից, կիբեռանվտանգության միջազգային ուղեցույցների, NIST չափորոշիչների, EUROPOL-ի և INTERPOL-ի տեխնիկական հաշվետվությունների գերակշիռ մասը հատկապես անգլերենով է, ինչի հետևանքով իրավապահ մարմինների ծառայողները պետք է ոչ միայն կարդան, այլև վերլուծեն և կիրառեն այդ նյութերը պրակտիկայում: Այս տեսանկյունից անգլերենը դառնում է ռազմավարական գործիք՝ ապահովելով հանցագործությունների հայտնաբերման, կանխման, և բացահայտման արդյունավետություն:

Անգլերենի ազդեցությունն օպերատիվ հաղորդակցման արդյունավետության վրա շատ խորն է: Ոստիկանության օպերատիվ հաղորդակցումը մի համակարգ է, որտեղ արագությունը, ճշգրտությունը և տեղեկատվության անխափան փոխանցումը որոշիչ են: Երբ այս շղթայում ներգրավվում են բազմազգ քաղաքացիներ, միջազգային գործընկերներ կամ օտարերկրյա կառույցներ, անգլերենը դառնում է միակ համընդհանուր լեզուն, որն ապահովում է հաղորդակցության գործուն շարունակականությունը: Ցանկացած խմբագրված, անձշտորեն փոխանցված կամ թերի ընկալված հաղորդագրություն կարող է ազդել գործողության որակի, միջոցառման արդյունքների կամ նույնիսկ քաղաքացիների անվտանգության վրա:

Օպերատիվ հաղորդակցությունում անգլերենի ազդեցությունը դրսևորվում է երեք մակարդակով: Առաջին մակարդակը հաղորդագրության կառուցվածքն ու բովանդակային հստակությունն է: Անգլերենում կիրառվող տերմինաբանությունը, հրամանային ձևերը և գործառնական բառակապակցությունները պարտադիր է, որ փոխանցվեն առանց իմաստային աղավաղման: Մա վերաբերում է ինչպես հրահանգներին («stand by», «secure the perimeter»), այնպես էլ իրավիճակային հաղորդագրություններին («possible threat detected», «suspect fleeing eastbound»), որոնք անհրաժեշտ է ճիշտ ընկալել մեկ վայրկյանում:

Երկրորդ մակարդակը միջմշակութային հաղորդակցությունն է: Օգտվելով անգլերենից՝ աշխատակիցը ոչ միայն փոխանցում է տեղեկատվություն, այլև ձևավորում է վստահության լեզվամշակութային հարթություն: Մա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ գերլարված իրավիճակներում քաղաքացու իրազեկումը պահանջում է ոչ միայն ճիշտ բառեր, այլ նաև դրանց կիրառման հոգեբանական նրբերանգներ:

¹¹ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Computer_emergency_response_team, մուտք՝ 20.01.2026

¹² Տե՛ս Holt T. J., *Cybercrime and Digital Forensics: An Introduction*, Routledge, 2022, Chapter 4, էջ 87-110.

Երրորդ մակարդակը տեղեկատվական համակարգերի օգտագործումն է: Արտակարգ հաղորդակցման հարթակները, միջազգային արտակարգ տվյալների բազաները, արտակարգ դեպքերի արձագանքման համակարգերը և նույնիսկ արտակարգ հաղորդագրությունների ծրագրերը նախագծված են անգլերեն միջավայրում: Լեզվի իմացության պակասը կարող է դառնալ ոչ թե տեխնիկական, այլ անվտանգային խնդիր:

Այս ամենը ցույց է տալիս, որ անգլերենն օպերատիվ հաղորդակցման մեջ հանդես է գալիս որպես միջանկյալ, բայց իրականում որոշիչ գործոն: Այն ապահովում է արագություն, ճշգրտություն և փոխադարձ հասանելիություն՝ դարձնելով ոստիկանության արձագանքն ավելի համակարգված և կանխատեսելի:

Անգլերենի իմացության բաց իրավապահ համակարգում այն խնդիրներից մեկն է, որը ժամանակակից իրավապահ գործունեության արդյունավետությունն զգալիորեն կարող է սահմանափակել: Այս հարցը կարևոր է ոչ միայն օպերատիվ գործընթացների տեսանկյունից, այլև իրավական, կրթական, տեխնոլոգիական և միջազգային համագործակցության ոլորտներում: Աշխատակիցների սահմանափակ լեզվական կարողությունը կարող է ազդել մի շարք գործառույթների վրա՝ սկսած փաստաթղթերի ճշգրիտ մշակումից, մինչև թրաֆիքինգի, կիրեռհանցագործությունների, ահաբեկչության և այլ հանցագործությունների բացահայտման:

Խնդրի հաղթահարման ուղիներ

Անգլերենի կարողության բացի հաղթահարման համար անհրաժեշտ է համալիր մոտեցում, որը ներառում է.

*** Հատուկ ուսուցում և վերապատրաստում**

Իրավապահ մարմինները պետք է ներդնեն ուսուցողական ծրագրեր, որոնք կենտրոնացած կլինեն անգլերենի իրավաբանական, հաղորդակցական և մասնագիտական հմտությունների վրա: Դրանք պետք է շարունակական լինեն և մատչելի ողջ աշխատակիցների համար՝ սկսած նոր ընդունվածներից, մինչև պաշտոնյաներ:

*** Լեզվական կարողության գնահատում և պահանջներ**

Աշխատակիցների համար պետք է սահմանել անգլերենի նվազագույն մակարդակ հատկապես նրանց համար, ովքեր ներգրավված են միջազգային գործերի, տվյալների վերլուծության կամ հետաքննության մեջ:

*** Միջազգային փորձի ինտեգրում**

Կարևոր է ապահովել Մասնակցություն միջազգային կոնֆերանսներին, փոխանակման ծրագրերին և վարժանքներին, որտեղ աշխատակիցները հնարավորություն կունենան կիրառել իրենց լեզվական հմտությունները և ձեռք բերել պրակտիկ փորձ:

*** Տվյալների բազմալեզու հասանելիություն և տեխնոլոգիական աջակցություն**

Թարգմանիչ գործիքների, բազմալեզու տվյալների բազաների և վերլուծական ծրագրերի ներդրումը կարող է լրացնել լեզվական բացը:

*** Պարբերաբար ստուգումներ և գնահատումներ**

Փորձնական հարցազրույցներ և վարժություններ՝ աշխատակիցների կարողությունները պահպանելու և բարելավելու համար:

Իրավապահ համակարգում անգլերենի մասնագիտական բառապաշարի և տեխնիկական տերմինաբանության տիրապետումը կարևոր դեր ունի ինչպես օպերատիվ, այնպես էլ վերլուծական գործունեության արդյունավետության բարձրացման մեջ:

Ժամանակակից իրավապահ մարմինները լայնորեն ներդնում են միջազգային չափորոշիչների վրա հիմնված տեխնոլոգիական հարթակներ՝ տվյալների բազաներ, կիրառական տեխնոլոգիաներ, հաղորդակցության ծրագրեր և միջսահմանային իրավական համագործակցության գործիքներ, որոնց մեծ մասը գործում է անգլերեն միջավայրում: Այս պայմաններում իրավապահ ծառայողը հաճախ բախվում է մասնագիտական տերմինների՝ իրավաբանական, կրիմինալիստիկական, տեղեկատվական անվտանգության, գործառնական կառավարման և միջազգային իրավունքի ոլորտների: Դրանց ճշգրիտ և համարժեք ըմբռնումը նվազեցնում է թարգմանական սխալների հավանականությունը, ապահովում է փաստաթղթերի, հաղորդագրությունների և օպերատիվ հաղորդումների ճիշտ մեկնաբանումը, ինչպես նաև նպաստում է միջգործակալական և միջազգային համագործակցության որակի բարձրացմանը:

Բացի պրակտիկ կիրառությունից, անգլերենի տերմինաբանության իմացությունը կարևոր է իրավապահ ծառայողի մասնագիտական զարգացումը շարունակելու համար, քանի որ ոլորտի գիտական հետազոտությունների, մեթոդաբանական ձեռնարկների, հրահանգների և նորարարական մոտեցումների զգալի մասը հասանելի է հենց անգլերենով:

Տերմինաբանական ճշտագրությունը դառնում է ոչ միայն լեզվական, այլ նաև մեթոդաբանական հմտություն, որն անմիջականորեն ազդում է օպերատիվ որոշումների կայացման, քրեական հետախուզության, հանրային անվտանգության գնահատման և տեղեկատվության վերլուծության վրա:

Հետևաբար, անգլերենի մասնագիտական բառապաշարի ընդլայնումը պետք է դիտարկվի ոչ թե ձևական պահանջ, այլ իրավապահ համակարգի արդյունավետության և մասնագիտական կոմպետենտության բարձրացման հիմնարար բաղադրիչ:

Անգլերենի դերն իրավապահ համակարգում շարունակելու է մեծանալ՝ պայմանավորված ինչպես գլոբալ անվտանգության մարտահրավերների խորացման, այնպես էլ ոստիկանության գործունեության միջազգային ինտեգրումով: Ապագա զարգացումները ցույց են տալիս, որ իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքն առավել կախված կլինի այն կարողությունից, որով նրանք կարող են գործել բազմալեզու տեղեկատվական միջավայրերում, համագործակցել միջազգային գործընկերների հետ և արձագանքել անդրսահմանային հանցագործությունների նոր ձևերին:

Այս համատեքստում անգլերենի տիրապետումը ձեռք է բերում ռացմավարական նշանակություն՝ դառնալով այդ հենասյուններից մեկը, որը թույլ է տալիս ընդլայնել ծառայողների մասնագիտական կարողությունները և ապահովել ժամանակակից պահանջներին համապատասխան գործառնական ճկունություն:

Ապագայում ակնկալվում է, որ անգլերենը կդառնա ոչ միայն հաղորդակցման միջոց, այլ իրավապահ կրթության առանցքային բաղադրիչ՝ ընդգրկված ուսումնական

ծրագրերում, վերապատրաստումների համակարգում և մասնագիտական վերլուծական գործունեության մեջ:

Տեխնոլոգիական նորարարությունները՝ Արհեստական բանականությունը, կիրառական տեղեկատվության լուծումները, միջազգային հարթակները, պահանջելու են ավելի խորքային լեզվական գիտելիքներ, քանի որ դրանց մեծ մասը գործում է անգլերեն միջավայրում:

Այս պայմաններում իրավապահ մարմինները պետք է մշակեն երկարաժամկետ ռազմավարություններ՝ ուղղված ծառայողների լեզվական կարողությունների շարունակական զարգացմանը, մեթոդական նյութերի տեղայնացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը և գիտական հետազոտությունների ինտեգրմանը:

Այսպիսով՝ անգլերենի կիրառման ընդլայնումը դառնում է ոչ միայն ներկայիս խնդիրների արձագանքող մոտեցում այլ նաև իրավապահ համակարգի ապագա կայունության, ինստիտուցիոնալ աճի և միջազգային մրցակցության ապահովման ռազմավարական ուղղություն:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկանության սպա» որակավորման օրինակելի ուսումնական պլանում անգլերենի համար հատկացված 72 ժամը, որն ավարտվում է երկու կիսամյակների ընթացքում, առաջարկում ենք ավելացնել այնքան, որ երրորդ և չորրորդ կիսամյակներում ևս հնարավոր լինի ուսումնասիրել, սովորել և հմտանալ անգլերենի կիրառման մեջ:

Ինչու՞ ենք առաջարկում անգլերենի դասաժամերն ավելացնել. ավելացված դասաժամերի ընթացքում դասախոսը կարող է անցկացնել այնպիսի թեմաներ, որոնք կվերաբերեն՝

Ոստիկանության միջազգայի համագործակցությանը,

Միջազգային իրավունքի հիմնական անգլալեզու տերմիններին,

Արտաքին աղբյուրներից ինֆորմացիայի կարդալուն:

Այս կարիքները պահանջում են, որ սովորողները շարունակեն անգլերենն ամբողջ չորս կիսամյակների ընթացքում:

ՆԳՆ համակարգում օգտագործվող սարքերի մեծ մասը՝ տեսաձայնագրիչներ, ծրագրեր, հաղորդակցության համակարգեր, արտասահմանյան արտադրության սարքեր, ունեն միայն անգլերեն ինտերֆեյս և համակարգեր, որոնք օգտագործելու համար պետք է ունենալ անգլերենի վարժ իմացություն, բայց հատկացված երկու կիսամյակը չի նախատեսում դա, և սա ևս մեկ շարժառիթ է անգլերենի դասաժամերի ավելացման:

Ուստի սովորողները պետք է ունենան բազային հաղորդակցման անգլերենի իմացություն, որպեսզի հետագայում կարողանան մասնակցել միջազգային ուսումնական ծրագրերին:

Նպատակահարմար է, որ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ներդրվի միասնական և ինստիտուցիոնալացված մասնագիտական անգլերենի հավաստագրման (սերտիֆիկացիոն) համակարգ, որը կդառնա ուստիկանության ծառայողների լեզվական պատրաստվածության պետական ստանդարտ:

Սերտիֆիկացիոն մոդելը պետք է կառուցված լինի բազմաշերտ գնահատման մեթոդաբանությամբ՝ ներառելով լսողական ընկալում, մասնագիտական տերմինաբանության տիրապետում, իրավիճակային արձագանքման կարողություն և փաստաթղթավորման ճշգրտություն:

Տվյալ համակարգի շրջանակում ՆԳՆ կրթահամալիրը կարող է ներմուծել միավորային առաջընթացի չափորոշիչներ (benchmarking), ինտերակտիվ սիմուլյացիաներ, կիրեռահանցագործությունների բնագավառի լեզվական մոդուլներ և օպերատիվ հաղորդակցման հմտությունների գործնական գնահատում:

Այս ձևաչափը հնարավորություն կտա համակարգայնորեն բարձրացնելու ծառայողների լեզվամշակութային պատրաստվածությունը, ապահովելու լեզվական կարողությունների համահունչ զարգացում օպերատիվ ծառայության պահանջներին և նպաստելու ՆԳՆ-ի միջազգային գործընկերային ներգրավվածության որակական աճին:

Սերտիֆիկացիոն համակարգը պետք է ունենա բազմաշերտ կառուցվածք, որը կներառի լեզվական ընդհանուր կարողությունների ստուգում, մասնագիտական տերմինաբանության տիրապետում, օպերատիվ հաղորդակցման հմտությունների գնահատում, ինչպես նաև իրավական փաստաթղթերի կազմման և միջազգային համագործակցության շրջանակներում կիրառվող մասնագիտական լեզվի իմացության ստուգում: Նման համակարգը հնարավորություն կտա ապահովել, որ ուստիկանության յուրաքանչյուր ծառայող ձեռք բերի այնպիսի լեզվական կարողություններ, որոնք համարժեք են նրա գործառույթների բարդությանը, հատկապես կիրեռահանցագործությունների դեմ պայքարի, միջազգային համագործակցության և օպերատիվ հաղորդակցման ոլորտներում, որտեղ անգլերենի կիրառությունը համատարած և աճող պահանջ է:

Միջազգային կրթական ինստիտուտներում ավելի քան մեկ տասնամյակ մշակված փորձը փաստում է, որ իրավապահ մարմիններում օտար լեզվի, հատկապես՝ անգլերենի, համակարգված սերտիֆիկացիան բարձրացնում է ծառայության որակը, արագ արձագանքման արագությունը և միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը: CEPOL-ի կողմից իրականացվող «Law Enforcement English» ծրագրերն ընդգծում են, որ բազմամակարդակ գնահատման համակարգն առավել արդյունավետ է, քանի որ այն տարբերակում է ընդհանուր լեզվական գիտելիքը մասնագիտական կիրառությունից՝ ապահովելով ծառայողի պատրաստվածության իրական չափման հնարավորությունը¹³:

¹³ Sté u Pielmuş C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Rezekne: Society. Integration. Education., Vol. 3, 2018, էջ 566–579.

Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ իրավապահների մասնագիտական լեզվային հմտությունների պակասը նվազեցնում է օպերատիվ որոշումների ճշգրտությունն ու արագությունը, իսկ սերտիֆիկացման ներդրումը կտրուկ բարձրացնում է միջամտությունների որակական ցուցանիշները¹⁴:

Հայաստանի համար խնդիրն առավել հրատապ է, քանի որ ՆԳՆ կրթահամալիրն արդեն մի քանի տարի գտնվում է կրթական արդիականացման փուլում և զարգացնում է ծառայողների վերապատրաստման ոլորտային ծրագրեր, որտեղ անգլերենի դերը գնալով մեծանում է ինչպես միջազգային իրավակարգավորման, այնպես էլ համաշխարհային անվտանգության միջավայրում ինտեգրման պահանջների հետևանքով: Ուստի սերտիֆիկացիոն համակարգի ներդրումը թույլ կտա կրթահամալիրին գործել միջազգային չափանիշներին համընթաց՝ ապահովելով ոչ միայն լեզվական, այլև մասնագիտական հմտությունների վերահսկելի և չափելի զարգացում:

Այսպիսով, առաջարկվող սերտիֆիկացիոն ինստիտուտը կդառնա ՆԳՆ կրթահամալիրի կրթական բարեփոխումների հիմնասյուններից մեկը՝ ամրապնդելով իրավապահ համակարգի պրոֆեսիոնալ կարողությունները, այդ թվում՝ համայնքային ոստիկանության, քրեական ոստիկանության, պարեկային ծառայության և ոստիկանության գվարդիայի ծառայողների կարողությունները, բարձրացնելով նրանց լեզվական կրթական մակարդակը և ապահովելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխանությունը տարածաշրջանային և միջազգային համազործակցության արդի չափանիշներին:

¹⁴ Sté u Levashov O. S., Orlova O. O., Ways to Improve Foreign Language Teaching in Police Officers' Training, Law and Safety, Vol. 80(1), 2021, էջ 49–54.

ENGLISH IN LAW ENFORCEMENT: EXPANDING THE ROLE OF LANGUAGE IN POLICING

POGHOSYAN LEONARD

*Chief Specialist of the International Cooperation and Public Relations Department
of the Educational Complex of MIA of the Republic of Armenia,
Lecturer at the Chair of General Humanities and Socioeconomic Disciplines,
Rescue Service and Crisis Management Educational Unit*

GENJOYAN GRIGOR

*Second-Year Cadet of Vocational Education Division Specialized in Policing,
Police Educational Unit of the Educational Complex of MIA
of the Republic of Armenia*

MATEVOSYAN VARYA

*Second-Year Cadet of Vocational Education Division Specialized in Policing,
Police Educational Unit of the Educational Complex of MIA
of the Republic of Armenia*

Abstract. The problem of effective communication within law enforcement systems has become increasingly significant, especially as operational tasks, international cooperation, and cybercrime investigation demand higher linguistic competence. It is known that the integration of English into policing practices enhances both professional efficiency and institutional adaptability. In modern conditions, where security threats often transcend national borders, English proficiency functions not merely as a communicative tool but as a strategic component of institutional capacity-building.

This research work is dedicated to examining the multifaceted role of English in law enforcement, with a specific focus on its expanding function within the police sector. The article explores the methodological, operational and educational dimensions of the English language application in policing. The article provides an in-depth analysis of language training strategies for police officers, emphasizing the need for structured, competency-based, and profession-oriented English instruction. Furthermore, the study presents the applicability of English in cybercrime investigation, where access to international databases, cross-border information exchange and cooperation with foreign agencies require specialized linguistic preparedness. In its turn, the article also highlights the impact of the English language skills on the effectiveness of operational and crisis communication and rapid information processing during field operations.

The methodological basis of this research is a comparative and analytical approach supported by thematic literature review, synthesis of international standards, and examination of best

practices in police education. The authors examine the evolution of linguistic policies within law enforcement institutions and the mechanisms through which the English language competencies influence professional decision-making and situational responsiveness.

The article also analyzes theoretical approaches to the professionalization of linguistic training in police education, identifying core structural elements necessary for curriculum modernization. Taking into account the growing demand for specialized communication skills, the study substantiates the argument that English has transformed into an operational resource for improving investigative accuracy, coordination and institutional transparency.

Given these facts, the article justifies the point of view that the English language competence must be institutionalized as a mandatory and measurable component of law enforcement training. The solution to the problem is developing multilayer certification mechanisms, integrating applied English modules into investigative and cyber units, and ensuring systemic cooperation between national and international training centers. The article also offers several policy-oriented recommendations aimed at enhancing the linguistic capacity of police personnel.

Therefore, the conclusions and the above-mentioned proposals are aimed at reinforcing the professional readiness of law enforcement officers, strengthening international cooperation and modernizing the language-teaching ecosystem within policing institutions. The study demonstrates that the expansion of the English language functions in policing is not only relevant but strategically essential for the effective performance of law enforcement agencies in the contemporary security environment.

Key words: English for specific purposes (ESP), policing, law enforcement bodies, future perspectives, language, operational communication, commands.

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ЗНАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В ПОЛИЦЕЙСКОЙ СЛУЖБЕ

ПОГОСЯН ЛЕОНАРД

*Главный специалист отдела международного сотрудничества и
связям с общественностью Образовательного комплекса МВД РА,
Преподаватель английского языка кафедры общих гуманитарных
и социально-экономических дисциплин
Образовательного комплекса МВД РА*

ГЕНДЖОЯН ГРИГОР

*Курсант 2 курса среднего профессионального образования
по специальности «Полицейское дело»
полицейского учебного подразделения
Департамента базового и офицерского образования
Образовательного комплекса МВД Республики Армения*

МАТЕВОСЯН ВАРЯ

*Курсант 2 курса среднего профессионального образования
по специальности «Полицейское дело»
полицейского учебного подразделения
Департамента базового и офицерского образования
Образовательного комплекса МВД Республики Армения*

Аннотация. В статье рассматриваются комплексные и многослойные процессы, определяющие расширение роли английского языка в деятельности правоохранительных органов, в результате чего он превращается не только в практическое средство коммуникации, но и в важный фактор институционального развития. В данном контексте важно подчеркнуть, что английский язык постепенно формируется для сотрудников как язык, имеющий существенное значение, оказывая влияние на структурные и многоуровневые аспекты функционирования правоохранительной системы.

В статье анализируются ключевые факторы, способствующие расширению функциональной роли английского языка, включая развитие международного сотрудничества, расширение совместных операций и расследований, стремительное развитие информационных технологий, а также внедрение единых глобальных стандартов коммуникации. Также в работе исследуются важные и многоплановые вопросы, связанные с ролью и применением английского языка в правоохранительных органах, в частности в полицейской деятельности.

При изучении особенностей преподавания становится очевидным, каким образом разрабатываются образовательные программы, обеспечивающие подготовленность

сотрудников как на национальном, так и на международном уровнях, с одновременным учетом практических требований и правовых особенностей. Важно отметить, что использование английского языка не только повышает эффективность работы полиции, но и способствует модернизации правоохранительных органов и улучшению качества коммуникации с международными партнерами.

В статье представлена роль профессионального английского языка в системе правоохранительных органов с акцентом на требования к преподаванию, международный опыт, особенности применения, а также языковые и методические вызовы.

Ключевые слова: профессиональный английский, полицейское дело, правоохранительные органы, перспективы, язык, оперативная связь, приказы.

Օգտագործված գրականության ցանկ

1. Hall D., International Cooperation and Language Competence in Law Enforcement //Journal of Police Studies, Vol. 14, No. 2, London, 2020, pp. 45–62:
2. Fountoulakis M. St., English Language Proficiency and Its Impact on Professional Identity, Operational Skills, and Gender Dynamics among Police Cadets in Greece, Athens, Journal of Advanced Research in Social Sciences, Vol. 7, No. 3, 2024, pp. 89–102:
3. García, A., Morton, L., Terminology Management and Language Training in Modern Police Forces, Madrid, International Journal of Applied Linguistics in Public Safety, Vol. 9, No. 1, 2019, pp. 33–57:
4. Carton, A., The Process of Dictionarisation in English for Police, Moscow, Linguistics and Security Journal, No. 75, 2019, pp. 79–95:
5. Harper, S., Innovative Language Teaching Technologies for Law Enforcement, New York, Journal of Public Safety Pedagogy, Vol. 11, No. 4, 2021, pp. 120–141:
6. Larsen, P., The Role of English in Police Modernization and Public Trust Building, Copenhagen, Journal of Security and Social Communication, Vol. 6, No. 1, 2022, pp. 14–28:
7. Fountoulakis M., Standardizing ESP Pedagogy: A Critical Evaluation of Language Training for Law Enforcement Cadets // International Journal of Higher Education Pedagogies, Vol. 6, No. 1, 2023, pp. 45–59:
8. Pielmus C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Society. Integration. Education., Vol. 3, 2018, pp. 566–579:
9. Holt T. J., Cybercrime and Digital Forensics: An Introduction, London, New York, Routledge, 2022, Chapter 4, pp. 87–110:
10. Rantatalo O., Intercultural Competence in the Training and Daily Professional Lives of Police Officers, Socrates. RSU Law Faculty// E-Journal of Law, Issue 26, 2023, pp. 91–95:
11. Pielmuş C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Rezekne, Society. Integration. Education., Vol. 3, 2018, pp. 566–579:
12. Levashov O. S., Orlova O. O., Ways to Improve Foreign Language Teaching in Police Officers' Training // Law and Safety, Vol. 80, No. 1, 2021, pp. 49–54:
13. https://en.wikipedia.org/wiki/Dark_web , մուտք՝ 20.01.2026
14. https://en.wikipedia.org/wiki/Open-source_intelligence , մուտք՝ 20.01.2026
15. https://en.wikipedia.org/wiki/Computer_emergency_response_team , մուտք՝ 20.01.2026

Հոդվածը գրախոսվել է 20.02.2026
Ներկայացվել է սուպագրության 25.02.2026

**ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ,
ԵՎ ԴՐԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՄԱՂՈՅԱՆ ԵՎԱ

ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական,

Երևանի պետական համալսարանի իրավագիտության

ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

DOI: 10.63925/18294847-2026.bl21-16

Համառոտագիր. Հոդվածը նվիրված է զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական բնույթի, ինչպես նաև այդ պայմանագրի առարկային առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությանը: «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում ամրագրված՝ զբոսաշրջային փաթեթի պայմանագրի իրավական բնորոշման վերլուծության արդյունքում հեղինակը շեշտում է, որ զբոսաշրջային փաթեթը՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ, ծառայությունների ամբողջություն է, ուստի դրա վերաբերյալ «իրացում» կամ «վաճառք» եզրույթների կիրառումն արդարացված չէ: Միաժամանակ հոդվածում հիմնավորվում է, որ այս պայմանագրի առարկան ոչ միայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից մատուցվող զբոսաշրջային ծառայությունը կամ այդ ծառայությունների համալիրն է, այլև երրորդ անձանց կողմից մատուցվող զբոսաշրջային ծառայություններից բաղկացած զբոսաշրջային փաթեթի կամ տուրի շրջանակներում սպառողների ճանապարհորդությունը կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու ծառայությունը, ուստի առաջարկվում է կողմերի միջև կնքվող պայմանագրի այնպիսի համապարփակ բնորոշում, որը համահունչ կլինի սպառողներին մատուցվող ծառայությունների ցանկացած շրջանակին:

Բանալի բառեր. զբոսաշրջային փաթեթ, զբոսաշրջային ծառայություն, ճանապարհորդության կազմակերպում, զբոսաշրջիկ, զբոսաշրջային օպերատոր, զբոսաշրջային պայմանագիր:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը¹, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի իրավական կարգավորմանը նվիրելով առանձին գլուխ, ամրագրում է, որ այդ գլխի կանոնները, ի թիվս Օրենսգրքում թվարկված այլ ծառայությունների, կիրառվում են նաև զբոսաշրջիկության ծառայության պայմանագրի նկատմամբ (Քաղ. օր., հոդված 777, մաս 3):

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50); այսուհետ նաև՝ Օրենսգիրք, Քաղ. օր.:

Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով մի կողմը՝ կատարողը, պարտավորվում է մյուս կողմի՝ պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար (Քաղ. օր., հոդված 777, մաս 1):

Քաղաքացիներին մատուցվող տարատեսակ ծառայությունների համար ընդհանուր այս կանոնը զբոսաշրջային ծառայությունների դեպքում ունի մի շարք առանձնահատկություններ: Դա է պատճառը, որ զբոսաշրջության իրավահարաբերությունները կարգավորվում են առանձին օրենքով՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով²: Ի տարբերություն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ նախկին օրենքի³, որը միայն հպանցիկ էր անդրադառնում այս բնագավառում պայմանագրային հարաբերություններին՝ նոր Օրենքով փորձ է արվել առավել մանրամասնել դրանց կանոնակարգումը:

Այսպես, Օրենքը, սպառողի հետ կնքվող պայմանագիրն անվանելով **զբոսաշրջային փաթեթի պայմանագիր**, այն բնորոշում է որպես մեկ միասնական կամ առանձնացված պայմանագրեր, որոնք ներառում են միևնույն այցելության ընթացքում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների պայմանները (հոդված 3, մաս 1, կետ 13): Այս բնորոշումից դժվար է պատկերացում կազմել նշված պայմանագրի տեսակի մասին, իսկ դրա անվանումից բխում է, որ այդ պայմանագրի շրջանակներում կողմերի իրավահարաբերությունների օբյեկտը զբոսաշրջային փաթեթն է, այսինքն՝ միևնույն այցելության ընթացքում առնվազն երկու տարբեր տեսակի զբոսաշրջային ծառայությունների համալիրը, եթե դրանք համակցվում են (ներառյալ զբոսաշրջիկի ընտրությամբ) զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտի կողմից նախքան զբոսաշրջային փաթեթի մեկ միասնական պայմանագիր կնքելը, կամ առանձնացված պայմանագրեր կնքելու դեպքում այդ զբոսաշրջային ծառայությունները՝

ա. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտից և համակցվում են մինչև գործարքի վճարման համար համաձայնություն տալը կամ

բ. առաջարկվում, իրացվում են, կամ դրանց դիմաց վճարումը կատարվում է պայմանագրի ամբողջական գնով, իսկ առանձնացված պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերի հանրագումարով (ներառական գին), կամ

գ. գովազդվում կամ իրացվում է «զբոսաշրջային փաթեթ», կամ նմանատիպ այլ եզրույթի կիրառմամբ, կամ

դ. զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելուց հետո համակցվում են զբոսաշրջիկի ընտրությամբ կամ

² Տե՛ս «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023 թ., ուժի մեջ է մտել 01.09.2024 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21, այսուհետ նաև՝ Օրենք:

³ Տե՛ս «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-11-Ն, ընդունվել է 17.12.2003 թ., ուժի մեջ մտել՝ 08.02.2004 թ., ուժը կորցրել է 01.09.2024 թ., ՀՀՊՏ 2004.01.29/6(305) Հոդ.106:

ե. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության տարբեր սուբյեկտներից միմյանց հետ կապված առցանց ամրագրման ընթացակարգերով⁴, երբ զբոսաշրջիկի հետ առաջին պայմանագիրը կնքած անձի կողմից զբոսաշրջիկի անձնական տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն և վճարման պայմանները փոխանցվում են ծառայություններ մատուցող երրորդ անձանց, իսկ ծառայություններ մատուցող երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվում են առաջին զբոսաշրջային ծառայության ամրագրման հաստատումից հետո՝ 24 ժամվա ընթացքում (Օրենք, հոդված 3, մաս 1, կետ 12):

Առաջին հայացքից խրթին այս հասկացությունը զբոսաշրջային փաթեթի՝ «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվով⁵ սահմանված բնորոշման վերաբարտադրությունն է, ուստի այն անհրաժեշտ է վերլուծել ԵՄ օրենսդրի տրամաբանության լույսի ներքո: Այսպես, Դիրեկտիվը մեկնաբանող եվրոպացի հեղինակներն ընդգծում են, որ նոր դիրեկտիվը, ի տարբերություն իր իրավանախորդի, զգալիորեն ընդլայնել է զբոսաշրջային փաթեթի հասկացությունը՝ ավանդական ստատիկ փաթեթներից բացի ընդգրկելով նաև այսպես կոչված «դինամիկ փաթեթները»⁶:

Ինչպես կարելի է նկատել զբոսաշրջային փաթեթի օրենսդրական բնորոշումից, օրենսդիրը, ԵՄ դիրեկտիվին համապատասխան, ամրագրել է, որ առանձին ծառայություններ մատուցողների հետ պայմանագրեր կնքելու դեպքում նույնպես զբոսաշրջային ծառայությունների համալիրները կարող են կազմել զբոսաշրջային փաթեթ: Այսպիսով զբոսաշրջային փաթեթի բնորոշումը թույլ է տալիս առանձնացնել փաթեթների երկու տեսակ՝ նրանք, որոնք ձեռք են բերվել շուկայի մեկ պրոֆեսիոնալ մասնակցի հետ կնքված պայմանագրի հիման վրա, և նրանք, որոնք ձևավորվել են առանձին պայմանագրերի հիման վրա⁷, եթե դրանք բավարարում են Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով թվարկված պայմաններից որևէ մեկին:

Միևնույն ժամանակ, Օրենքը, սահմանելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի հասկացությունները, նրանցից առաջինին բնորոշում է որպես իրավաբանական անձ, որը ձևավորում և անմիջականորեն կամ զբոսաշրջային գործունեության այլ սուբյեկտի միջոցով կամ զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի հետ համատեղ

⁴ Միջազգային պրակտիկայում այս փաթեթները հայտնի են Click-through packages անվամբ:

⁵ Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of November 25, 2015 “**On Package Travel and Linked Travel Arrangements**”, Amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and Repealing Council Directive 90/314/EEC, (այսուհետ նաև՝ Դիրեկտիվ կամ ԵՄ դիրեկտիվ):

⁶ Իսպանական գրականության մեջ դինամիկ փաթեթները բնորոշվում են որպես զբոսաշրջային արդյունք, որն իրենից ներկայացնում է միևնույն ճանապարհորդության նպատակով համակցված ծառայություններ, որոնք համակցում է զբոսաշրջիկն ինքը՝ մեկ կամ մի քանի կայքերի միջոցով, որոնց նա հղում է ստանում հիմնական կայքէջից, (տե՛ս **Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others**, Collective Commentary about New Package Travel Directive, ESHT, 2020, էջ 137):

⁷ Տե՛ս **Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others**, Collective Commentary about New Package Travel Directive, ESHT, 2020, էջեր 120:

հանդես գալով **իրացնում կամ առաջարկում է զբոսաշրջային փաթեթ, տուր կամ այլ առանձին զբոսաշրջային ծառայություններ** կամ փոխանցում է զբոսաշրջիկի տվյալները զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի, իսկ երկրորդին՝ զբոսաշրջային օպերատոր չհանդիսացող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն անհատ զբոսաշրջիկին կամ զբոսաշրջիկների խմբին **տրամադրում է զբոսաշրջությանը վերաբերող խորհրդատվություն կամ առաջարկում, կամ վաճառում է** զբոսաշրջային օպերատորի ձևավորած զբոսաշրջային փաթեթ կամ առանձին զբոսաշրջային ծառայություններ (հոդված 3, մաս 1, կետեր 19 և 20):

Այս բնորոշումներից ակնհայտ է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեությունն զբոսաշրջային փաթեթներից բացի ընդգրկում է նաև առանձին զբոսաշրջային ծառայությունների, իսկ օպերատորի գործունեությունը՝ նաև տուրերի առաջարկը կամ «իրացումը», որի կապակցությամբ կողմերի միջև կնքվող պայմանագրի վերաբերյալ Օրենքում որևէ անդրադարձ չկա: Փաստորեն, քաղաքացիական իրավունքների այս օբյեկտների կապակցությամբ առաջացող պայմանագրային հարաբերություններն Օրենքով կարգավորման չեն ենթարկվել, ինչը նշանակում է, որ դրանք կարգավորվելու են բացառապես Օրենսգրքի՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նորմերով: Օրենսգիրքը, սակայն, միայն ընդհանուր գծերով է կանոնակարգում ծառայությունների մատուցման իրավահարաբերությունները, որոնք զբոսաշրջային ծառայությունների դեպքում ունեն առանձնահատուկ կարգավորման կարիք:

Մյուս կողմից՝ Օրենքի վկայակոչված նորմերի և Օրենսգրքի 777-րդ հոդվածի համադրման արդյունքում քննարկվող պայմանագրի իրավական բնույթի առնչությամբ կարելի է նկատել որոշ անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ Օրենքը զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեությունը բնութագրում է զբոսաշրջային փաթեթի, տուրի կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների **իրացման** կամ **վաճառքի** (զբոսաշրջային գործակալի դեպքում՝ նաև զբոսաշրջությանն առնչվող խորհրդատվություն տրամադրելու) գործունեություն այն դեպքում, երբ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի՝ Օրենսգրքով սահմանված ու նաև զբոսաշրջիկության ծառայության նկատմամբ կիրառելի հասկացությունից բխում է, որ այդ պարտավորության առարկան **ծառայություն մատուցելն է**, այսինքն՝ որոշակի գործողություններ կատարելը կամ գործունեություն իրականացնելը:

Նման պայմաններում, երբ Օրենսգրքը կողմերի հարաբերությունները դասում է ծառայությունների վճարովի մատուցման իրավահարաբերությունների թվին, իսկ Օրենքը՝ սահմանում այդ հարաբերությունները միջնորդավորող պայմանագրի բոլորովին այլ բնորոշում՝ «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր», որի իրավական բնույթն օրենսդրորեն բացահայտված չէ, միաժամանակ, տուրերի և առանձին զբոսաշրջային ծառայությունների մասին կնքվող պայմանագրի վերաբերյալ որևէ կարգավորում Օրենքով նախատեսված չէ, կողմերի պայմանագրային հարաբերությունների բնույթի առնչությամբ առաջանում է անորոշություն: Մասնավորապես,

հարց է ծագում՝ արդյո՞ք Օրենքով նախատեսված զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը հենց Օրենսգրքում հիշատակվող զբոսաշրջիկության ծառայություն մատուցելու պայմանագրի տարատեսակ է, թե՞ խոսքն այլ՝ Օրենսգրքով չնախատեսված պայմանագրի տեսակի մասին է: Այս պայմանագրի իրավական բնույթի շուրջ անորոշությունն էլ ավելի է ընդգծում Օրենքում ավանդաբար առուվաճառքի պայմանագրին բնորոշ «վաճառք» և «իրացում» եզրույթների օգտագործումը:

Հարկ է նշել, որ քննարկվող պայմանագրի իրավական բնույթի վերաբերյալ թե՛ միջազգային փաստաթղթերում⁸, թե՛ տարբեր երկրների օրենսդրություններում, թե՛ իրավաբանական գրականության մեջ միասնական մոտեցում գոյություն չունի: Ընդ որում՝ տեսակետների բազմազանությունը պայմանավորված է ոչ թե սուկ պայմանագրի անվանման շուրջ դիրքորոշումների տարբերությամբ, այլ այս պայմանագրի իրավական բնույթի վերաբերյալ լուրջ իրավական բանավեճերով:

ԵՄ դիրեկտիվի ընդունմամբ Եվրոպական միության երկրների համար նախատեսվել է դրա իմպլեմենտացման պարտականություն, ինչի արդյունքում այդ երկրներն իրենց ներպետական օրենսդրությունն աստիճանաբար համապատասխանեցրել են Դիրեկտիվի պահանջներին՝ կողմերի միջև կնքվող պայմանագիրը բնորոշելով որպես «փաթեթային ճանապարհորդության պայմանագիր» (package travel contract)⁹: Մինչդեռ հետխորհրդային երկրները որդեգրել են եվրոպականից որոշակիորեն տարբերվող մոտեցում¹⁰:

Այս առնչությամբ գրականության մեջ առկա տեսակետները ևս իրարամերժ են. ռուս հեղինակների տեսակետները կարելի է դասակարգել երեք խմբի. առաջին խումբ հեղինակների կարծիքով այս պայմանագիրն առուվաճառքի պայմանագրի տարա-

⁸«Ճանապարհորդության վերաբերյալ գործարքի մասին» Բրյուսելի կոնվենցիան օգտագործում է «Ճանապարհորդության գործարք» և «Ճանապարհորդության վաճառքի միջնորդային գործարք» եզրույթները, (տե՛ս **International Convention on Travel Contracts, Brussels, April 23, 1970, կետ 1**): Եվրոպական Միության «Համալիր ճանապարհորդությունների, տուրերի և հանգստի մասին» դիրեկտիվն այս պայմանագիրը բնորոշում էր սպառողին կազմակերպչի և/կամ միջնորդի հետ կապող համաձայնություն (տե՛ս **Council Directive 90/314/EEC of June 13, 1990 On Package Travel, Package Holidays and Package Tours**, հոդված 2): «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական Միության 2015 թվականի նոյեմբերի 25-ի նոր դիրեկտիվը կիրառում է «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» եզրույթը (տե՛ս ԵՄ դիրեկտիվ, հոդված 3):

⁹http://www.travlaw.co.uk/blog_posts/implementation-package-travel-directive-2015-1st-july-2018:

¹⁰ Օրինակ՝ **Ուկրաինայի** օրենսդրությամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և սպառողի միջև կնքվող պայմանագիրն անվանվում է «զբոսաշրջային սպասարկման պայմանագիր» (Закон Украины «О туризме» от 15.09.1995 г., հոդված 20); **Բելառուսի** զբոսաշրջային օրենքում՝ «զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր» (Закон Республики Беларусь «О туризме» от 11.11.2021 г., № 129-3, հոդված 22); **Ռուսաստանի Դաշնության զբոսաշրջային օրենքում**՝ «զբոսաշրջային արդյունքի իրացման պայմանագիր» (Федеральный закон “Об основах туристской деятельности в Российской Федерации” от 24.11.1996 г., N 132-ФЗ, հոդված 10), իսկ **ՌԴ քաղաքացիական օրենսգրքում**՝ «զբոսաշրջային սպասարկման ծառայության մատուցման պայմանագիր» (Гражданский кодекс Российской Федерации, Ч. 1, N 51-ФЗ, принят Государственной Думой, 21 октября 1994 года, вступление в силу 1 января 1995 года, հոդված 779); **Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում**՝ «զբոսաշրջության գործարք, որով ճանապարհորդության կազմակերպիչը պարտավորվում է ճանապարհորդին մատուցել համաձայնեցված ծառայությունները» (Civil Code of Georgia, N786, 26/06/1997, հոդված 657):

տեսակ է¹¹, ըստ երկրորդ խումբ հեղինակների՝ ծառայությունների մատուցման պայմանագիր¹², և վերջապես երրորդների կարծիքով՝ այն իր մեջ պարունակում է մի քանի պայմանագրերի տարրեր, ուստի՝ խառը պայմանագիր է¹³: Որոշ հեղինակներ էլ զբոսաշրջիկի հետ կնքվող պայմանագրի տեսակը պայմանավորում են նրանով, թե ով է հանդես գալիս վերջինիս կոնտրագենտի դերում՝ զբոսաշրջային օպերատորը, թե՛ գործակալը¹⁴:

Զբոսաշրջային պայմանագիրն առուվաճառքի պայմանագիր համարող հեղինակներն իրենց տեսակետը հիմնավորում են նրանով, որ զբոսաշրջային փաթեթն ապրանք է¹⁵ կամ զբոսաշրջիկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվող երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ՝ վերջինիս փոխանցվող պահանջի իրավունք, քանի որ զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելիս զբոսաշրջային գործունեության սուբյեկտը ոչ թե մատուցում է զբոսաշրջային ծառայությունները, այլ փոխանցում է դրանց նկատմամբ իրավունքներ (երաշխիքներ)¹⁶:

Հեղինակների՝ մեծամասնությունն կազմող մյուս խումբը՝ ի դեմս Մ. Բրազինսկիի, Վ. Վիտրյանսկիի, Օ. Սադիկովի, Ա. Իվանովի, Ա. Կաբալկինի, Յա. Պարցիյի, Ե. Պիսարևսկու, Յա. Վովաչի, Ի. Օտչեսկու, Պ. Բարաբանովայի և այլոց, հերքում է զբոսաշրջային փաթեթն ապրանք համարելու թեզն այն հիմնավորմամբ, որ այն ծառայությունների ամբողջություն է¹⁷:

Անգլալեզու գրականության մեջ կա տեսակետ, որ քննարկվող պայմանագիրը ոչ թե դասական իմաստով ծառայությունների մատուցման պայմանագիր է, այլ խառը պայմանագիր, որը պարունակում է մի քանի պայմանագրերի, այդ թվում՝ ծառա-

¹¹ Տե՛ս օրինակ՝ **Балаганская М.**, Роль этнокультурного компонента в формировании туристического продукта http://tourlib.net/books_tourism/balaganskaya.htm: **Сергеев В.**, Договор об оказании международных туристских услуг: Теоритические проблемы и практические аспекты правоотношений туриста и туристской фирмы в процессе заключения договора//Право и экономика, 1998, N 4, էջ 18:

¹² Տե՛ս **Писаревский Е.**, Еще раз о правовой природе договора на туристическое обслуживание //Юрист. 2000. № 8, էջեր 5-6.; **Барабанова П.**, Гражданско-правовое регулирование договорных отношений в сфере туризма в России и Англии, Дисс., М. 2017, էջ 100; **Отческий И.**, Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туристских услуг, М., «Юстицинформ», 2017, էջ 25; Гражданское право, Учебник, Том 2, под ред. **А. Сергеева, Ю. Толстого**, М., «Проспект» 2005, էջ 636:

¹³ Հղումն ըստ **Ган Н.** Правовое регулирование деятельности по оказанию туристских услуг в Российской Федерации, Дисс, М. 2008, էջեր 125-126:

¹⁴ Տե՛ս **Ломакина Е.**, Содержание туристских правоотношений//Европейские перспективы, N 4, 2013, էջեր 138-139, **Абдурахманов А., Пикущая О.**, К вопросу о договорных отношениях в туризме//Вестник ассоциации вузов туризма и сервиса 2010 / № 1, էջ 44:

¹⁵ Տե՛ս օրինակ՝ **Балаганская М.** նշված աշխատ., http://tourlib.net/books_tourism/balaganskaya.htm, **Гордеева М.**, Юридическая природа договора о реализации туристского продукта, <http://www.yurclub.ru/docs/civil/article350.html>; **Устюгова Е., Попова Т.**, Туристский продукт и туристские услуги//Транспортное дело России, N 10, 2009, էջ 59:

¹⁶ Տե՛ս **Сергеев В.**, նշված աշխատ., էջ 18:

¹⁷ Տե՛ս Гражданское право России: Обязательственное право: Курс лекций, отв. ред. Садииков О., «Юристь» 2004, էջ 326 <https://legalns.com/download/books/lib/civil-law/book-001.pdf>; **Вольвач Я.**, Туристские услуги как объект гражданских правоотношений, М. «Норма-Инфра», 2012, էջ 44; **Брагинский М., Витрянский В.**, Договорное право, Книга третья, Договоры о выполнении работ и оказании услуг, 2-ое изд., М., «Статут», 2011, էջ 227, **Барабанова П.**, նշված աշխատ., էջ 34; **Писаревский Е.**, նշված աշխատ., նույն տեղում:

յությունների մատուցման, փոխադրման, անգամ՝ աշխատանքային պայմանագրի տարբեր, ինչպես նաև միայն իրեն բնորոշ այնպիսի տարբեր, ինչպիսիք են ճանապարհորդությունն իրականացնելիս սպառողի անվտանգությունն ապահովելու պարտականությունը¹⁸: Միաժամանակ, ժամանակակից արևմտյան հեղինակների աշխատություններում առավել հաճախ կարելի է հանդիպել տեսակետ առ այն, որ քննարկվող պայմանագիրը քաղաքացիական իրավունքին մինչ այժմ անհայտ պայմանագրի հատուկ տեսակ է (sui generis):

Ինչպես հայտնի է, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գույքը¹⁹ (ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները) և ծառայություններն առանձնացնում է որպես քաղաքացիական իրավունքի տարբեր օբյեկտներ (հոդված 132): Այս տարանջատումն ինքնանպատակ չէ, այլ ունի կարևոր իրավաբանական նշանակություն. դա հետապնդում է քաղաքացիական իրավունքների օբյեկտներից յուրաքանչյուրի համար որոշակի քաղաքացիաիրավական ռեժիմ սահմանելու նպատակ: Մինչդեռ պրակտիկայում հաճախ տեղի է ունենում այդ օբյեկտների իրավական ռեժիմների չհիմնավորված շփոթ²⁰: Ընդամին, ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները նույնպես հաճախ սխալ են որակում զբոսաշրջային ծառայությունների մատուցման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունները՝ դրանց նկատմամբ կիրառելով մատակարարման պայմանագրից մինչև անգամ արտապայմանագրային պարտավորությունների կանոնակարգմանն ուղղված նորմեր²¹:

Նման պայմաններում հարց է առաջանում՝ ի վերջո, ո՞ր պարտավորական հարաբերությունների խմբին պետք է դասել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջիկների միջև, այդ թվում՝ զբոսաշրջային փաթեթների շրջանակներում ծագող իրավահարաբերությունները:

Քաղաքացիական օրենսդրությամբ՝ գույքը (գույքային իրավունքները) և ծառայությունները քաղաքացիական շրջանառության մի մասնակցից մյուսին հատուցման դիմաց «փոխանցելը» տեղի է ունենում տարբեր իրավահարաբերությունների

¹⁸ Sł u **Czekaj R., Kulig K.**, Contract for Package Travel, Package Holidays and Package Tours, ISSN electronic version 2353 – 9119 Central and Eastern European Journal of Management and Economics, Vol. 6, No. 2, 109-124, June 2018, էջեր 120-121:

¹⁹ Ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում, որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ՝ առանձնացնելով գույքը, օրենսդիրը նկատի ունի գույքը՝ որպես իր (այս մասին տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, չորրորդ հրատ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 182):

²⁰ Sł u Гражданское право: учебник: в 4 т., Т. 1, Общая часть, отв. ред. **Е. А. Суханов**, 2-е изд. перераб. и доп., М., Изд. «Статут», 2019, էջ 336:

²¹ Օրինակ՝ **թիվ ԵՂ/8212/02/19** գործով 25.10.2019 թ. վճռով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը զբոսաշրջային գործակալության և հյուրանոցի միջև կնքված՝ հոգուտ զբոսաշրջիկի հյուրանոցային ծառայությունների մատուցման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառել է մատակարարման պայմանագրին վերաբերող նորմեր; թիվ **ԱԸԴ/1131/02/09** գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 24.06.2010 թ. որոշմամբ կողմերի միջև ծագած ճանապարհորդությունը կազմակերպելու իրավահարաբերությունից բխող վնասի հատուցման պահանջի նկատմամբ կիրառելի է համարել արտապայմանագրային պարտավորություններին վերաբերող նորմերը՝ միաժամանակ նշելով, որ այդ հարաբերությունների նկատմամբ «Մպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը կիրառելի չէ:

շրջանակներում: Եթե որոշակի վճարի դիմաց գույքը (ապրանք) մի անձից մյուսին որպես սեփականություն հանձնելն առաջացնում է առուվաճառքի իրավահարաբերություն, ապա այն բոլոր պարտավորությունները, որոնց առարկան որոշակի ծառայություն մատուցելն է, օրենսդրի կողմից առանձնացվել են որպես քաղաքացիաիրավական պարտավորության ինքնուրույն տեսակ՝ ծառայությունների մատուցման պարտավորություն²²: «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ զբոսաշրջային փաթեթն առնվազն երկու տարբեր զբոսաշրջային ծառայությունների համալիր է: Այս բնորոշումից ակնհայտ է, որ զբոսաշրջային փաթեթը՝ որպես ծառայությունների ամբողջություն, չի կարող համարվել գույք՝ «իր» իմաստով:

Ինչպես նշվեց, այս պայմանագիրն առուվաճառքի պայմանագրի տարատեսակ համարող հեղինակների շարքում առանձին խումբ են կազմում նրանք, որոնց կարծիքով՝ դրա առարկան զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից զբոսաշրջիկին փոխանցվող՝ իր և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների միջև կնքված պայմանագրերից բխող պահանջի իրավունքն է: Այս տեսակետը նույնպես վիճելի է թվում. մասնավորապես՝ Օրենսգիրքը «գույք» կատեգորիայի մեջ ներառում է նաև գույքային իրավունքները, որոնց թվին են դասվում որոշակի տնտեսական արժեք ունեցող, այդ թվում նաև՝ աշխատանքների և ծառայությունների նկատմամբ պահանջի իրավունքը: Իսկապես, պահանջի իրավունքը՝ որպես որոշակի նյութական բարիքի դրսևորման իրավաբանական ձև, կարող է համարվել գույք²³:

Չանդրադատնալով իրավաբանական գրականության մեջ մինչ օրս վեճի առարկա դարձած այն հարցին, թե պահանջի իրավունքի՝ որպես գույքային իրավունքի փոխանցումը կարող է արդյոք տեղի ունենալ առուվաճառքի պայմանագրի շրջանակներում, թե՞ ոչ, և վերադատնալով զբոսաշրջային փաթեթի էությունը՝ կարծում ենք, որ այն չի կարող դիտարկվել որպես երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ զբոսաշրջիկին փոխանցվող՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի պահանջի իրավունք ևս: Ասվածը հիմնավորելու համար անհրաժեշտ է քննարկել, թե զբոսաշրջային ծառայության նկատմամբ զբոսաշրջիկի պահանջի իրավունքն ինչ իրավահարաբերությունից է բխում:

Նախևառաջ, երրորդ անձանց կողմից մատուցվող որոշ ծառայությունների, օրինակ՝ ավիափոխադրման համար զբոսաշրջիկի պահանջի իրավունքը միշտ բխում է հենց զբոսաշրջիկի և ավիափոխադրողի միջև կնքված պայմանագրից, և դա միանգամայն արդարացված է, քանի որ անհնար է թոշել ինքնաթիռով՝ առանց ավիափոխադրողի հետ փոխադրման պայմանագիր կնքելու²⁴: Զբոսաշրջային ծառայության մատուցում

²² Տե՛ս **Բարսեղյան Տ., Հայկյանց Ա., Ղարախանյան Գ., Մեղրյան Ս.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, երկրորդ հրատ., «Երևանի պետական համալսարանի հրատարակչություն», Երևան, 2008, էջ 276:

²³ Տե՛ս **Тархов В.**, Гражданское право, Общая часть, Чебоксары, Чув. кн. изд-во, 1997, էջ 37:

²⁴ Տե՛ս **Шевчук Д.**, Договорные отношения применительно к туризму// Финансовая газета. Региональный выпуск, 2009, N 21, <https://wiseeconomist.ru/poleznoe/54110-dogovornye-otnosheniya-primenitelno-turizmu>:

պահանջելու իրավունքը ծագում է անմիջականորեն սպառողի մոտ նաև այն դեպքում, երբ այդ զբոսաշրջային ծառայությունը վերջինիս մատուցվում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և այդ ծառայությունը մատուցողի միջև գործակալման, կոմիսիայի կամ հանձնարարության պայմանագրերի հիման վրա համագործակցության շրջանակներում: Իսկ այն դեպքում, երբ զբոսաշրջային ծառայությունն սպառողին է մատուցվում զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և զբոսաշրջային ծառայություն մատուցողի հետ հոգուտ երրորդ անձի կնքված ծառայության մատուցման պայմանագրի հիման վրա, այսինքն՝ երբ սպառողը ծառայություն մատուցողի հետ անմիջականորեն պայմանագրային հարաբերությունների մեջ չի մտնում, մինևույն է, այդ պայմանագրից բխող՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի պահանջի իրավունքն իր բովանդակությամբ, կարծում ենք, չի նույնանում նույն անձի հանդեպ սպառողի պահանջի իրավունքի հետ:

Այսպիսով՝ զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագրի իմաստն այն է, որ ծառայությունների մատուցման պահանջ ներկայացնելու իրավունքը զբոսաշրջիկին չի փոխանցվում, այլ ծագում է հենց վերջինիս մոտ և հենց զբոսաշրջային գործունեության սուբյեկտի նկատմամբ: Օրինակ՝ Վ. Վիտրյանսկին և Մ. Բրագինսկին որևէ տարբերություն չեն տեսնում զբոսաշրջային և դիցուք՝ աուդիտորական ընկերության և վերջիններիս ծառայությունների պատվիրատուի միջև առաջացող հարաբերությունների միջև: Ըստ հեղինակների՝ երկու դեպքում էլ պայմանագրի էությունը կողմերից մեկի (զբոսաշրջիկ, աուդիտորական ընկերության հաճախորդ) իրավունքն է մյուս կողմից պահանջելու որոշակի ծառայությունների մատուցում²⁵:

Վերոշարադրյալի լույսի ներքո անդրադառնալով զբոսաշրջային փաթեթի՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի էությանը, կարելի է փաստել, որ այն՝ որպես զբոսաշրջային ծառայությունների համալիր, չի կարող դասվել ո՛չ նյութական իրերի շարքին, ո՛չ էլ համարվել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջիկին փոխանցվող պահանջի իրավունք:

Օրենքը, զբոսաշրջային գործունեությունը բնորոշելով զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործունեություն, կարծես ելնում է հենց այդ կանխավարկածից: Սա նշանակում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության բովանդակությունը որոշակի ծառայություն մատուցելն է, ինչը, բնականաբար, պետք է իրականացվի ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում: Այդ մասին ուղղակիորեն ազդարարում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Սակայն Օրենքում այդ մասին հստակ կարգավորումների բացակայությունը, փոխարենը՝ «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր», «վաճառք», «իրացում» եզրույթների օգտագործումը թույլ չի տալիս կնքվող պայմանագիրը միանշանակ բնորոշել որպես

²⁵ См. у Брагинский М., Витрянский В., Договорное право, Книга третья, Договоры о выполнении работ и оказании услуг, 2-ое изд., М., «Статут», 2011, էջ 226:

ծառայությունների մատուցման պայմանագիր: Եթե հարկային օրենսդրության²⁶ տեսանկյունից «իրացում» եզրույթը կիրառելի է ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների նկատմամբ, ապա նույնը չի կարելի ասել քաղաքացիական պայմանագրային հարաբերությունների մասին: Քաղաքացիաիրավական տեսանկյունից «իրացում» և «վաճառք» եզրույթները կիրառելի են ապրանքների նկատմամբ, իսկ ծառայությունների վերաբերյալ Օրենսգիրքն օգտագործում է «մատուցում» եզրույթը, ինչն ինքնանպատակ չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ, անկախ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում օգտագործվող եզրութաբանությունից, զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագիրը ծառայության մատուցման պայմանագիր է:

Միանշանակ չէ նաև քննարկվող պայմանագրի առարկայի հարցը: Ինչպես հայտնի է, ծառայությունների վճարովի մատուցման պարտավորության առարկան նյութականացված արտահայտություն չունեցող՝ ոչ նյութական ծառայություններն են²⁷: «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքը, սպառողի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագիրն անվանելով զբոսաշրջային փաթեթի պայմանագիր և վերջինս բնորոշելով միևնույն այցելության ընթացքում առնվազն երկու տարբեր տեսակի ծառայությունների համալիր, հաջորդիվ թվարկում է զբոսաշրջային ծառայությունները. դրանք են՝ ուղևորափոխադրման, հյուրանոցային, էքսկուրսային, ավտոտրանսպորտային միջոցի վարձույթի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկին մատուցվող կամ առաջարկվող որևէ այլ ծառայություն, որը նշված ծառայությունների անբաժանելի մաս չի կազմում (հոդված 3):

Զբոսաշրջային փաթեթների կազմում ավանդաբար ներառվող՝ զբոսաշրջային ծառայությունների այս տիպային շրջանակը հիմք է հանդիսացել գրականության մեջ այն տեսակետի լայն տարածման համար, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և սպառողի միջև կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան հենց զբոսաշրջիկին մատուցվող տեղափոխման (փոխադրման), տեղաբաշխման, հյուրանոցային, սննդի, էքսկուրսային և այլ ծառայությունները կամ դրանց համալիրն է²⁸:

Զբոսաշրջության ոլորտն ուսումնասիրող ռուս հեղինակների ճնշող մեծամասնության աշխատություններում կարմիր թելի նման անցնող այս թեզն էլ հենց հիմք է

²⁶ ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի համաձայն՝ իրացում է համարվում մեկ անձից մեկ այլ անձի ապրանքի և (կամ) աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կամ ծառայության մատուցումը՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի): Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, ընդունվել է 04.10.2016 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.2018 թ., ՀՀՊՏ 2016.11.04/79(1259):

²⁷ См. у Гражданское право, Учебник, Том 2, под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого, М., «Проспект», 2005, էջ 633:

²⁸ См. у орինակ՝ Брагинский М., Витрянский В., Договорное право, Книга третья, Договоры о выполнении работ и оказании услуг, 2-ое изд., М., «Статус», 2011, էջ 226; Накушнова Е.В., Кириченко О.В., Вопросы гражданско-правового регулирования оказания туристских услуг в Российской Федерации, Туризм: право и экономика//№ 2, М., 2016, էջ 9, Гражданское право России: Обязательственное право: Курс лекций, отв. ред. Садиков О. «Юристы» 2004, էջ 326 <https://legalns.com/download/books/lib/civil-law/book-001.pdf> :

դարձել քննարկվող պայմանագիրը «**զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր**» անվանելու համար: Ընդ որում՝ այդ հեղինակներից շատերի կարծիքով՝ այս դեպքում գործ ունենք քաղաքացիական շրջանառության մեջ լայն տարածում ունեցող՝ պարտապանի կողմից պարտավորության կատարումը երրորդ անձի վրա դնելու իրավական մեխանիզմի հետ: Օրինակ՝ Մ. Բրագինսկու և Վ. Վիտրյանսկու կարծիքով՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի նկատմամբ այդ մոդելի կիրառման հնարավորությունն ուղղակիորեն բխում է քաղաքացիական օրենսգրքից՝ հենց միայն այդ իրավահարաբերության սուբյեկտային կազմի ուժով. զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտապան է, զբոսաշրջիկը՝ պարտատեր, իսկ ծառայություններ մատուցողներն այն երրորդ անձինք են, որոնք կապում են պարտապանին և պարտատիրոջը²⁹:

Պարտապանի կողմից պարտավորության կատարումը երրորդ անձի վրա դնելու իրավական մեխանիզմը՝ որպես զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև առաջացող հարաբերությունների կառուցման հիմնական իրավական ձև, ընդգծում են նաև այլ հեղինակներ՝ կարևորելով այն, որ այդ դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտը ծառայություններ մատուցողների գործողությունների համար պատասխանատվություն կկրի զբոսաշրջիկի առջև³⁰:

Կարծում ենք՝ այս տեսակետին դժվար է համաձայնել: Առավել հիմնավոր է թվում Օ. Վիկուլովալի տեսակետը, ով նշում է, որ ճանապարհորդությունը կազմակերպելուն ուղղված գործունեությունն անհրաժեշտ է տարբերել զբոսաշրջային ծառայություններ մատուցելու գործունեությունից, քանի որ զբոսաշրջային ծառայությունը գործունեություն է, որն ուղղված է անմիջականորեն ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկի պահանջմունքների բավարարմանը: Մինչդեռ զբոսաշրջային գործունեությունն անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց պրոֆեսիոնալ գործունեությունն է՝ ուղղված ճանապարհորդությունը (կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների մատուցումը-Ե.Մ.) կազմակերպելուն, որտեղ զբոսաշրջային ընկերությունը հանդես է գալիս որպես ճանապարհորդության կազմակերպիչ, բայց ոչ որպես այդ ճանապարհորդությունն ապահովող ծառայությունները մատուցող³¹: Նշված տեսակետին հակված են նաև այլ հեղինակներ³²:

Եվ իրոք, Օրենքում թվարկված զբոսաշրջային ծառայությունների թվարկումից ակնհայտ է, որ դրանց մեծ մասը գործնականում չեն կարող մատուցվել ո՛չ զբոսաշրջային օպերատորի, ո՛չ գործակալի կողմից: Ակնհայտ է, որ օրինակ՝ առանձին

²⁹ Տե՛ս **Брагинский М., Витрянский В.**, նշված աշխատ., նույն տեղում:

³⁰ Տե՛ս **Накушнова Е., Кириченко О.**, նշված աշխատ., նույն տեղում, **Писаревский Е.**, նշված աշխատ., նույն տեղում, *Гражданское право России: Обязательственное право: Курс лекций, отв. ред. Садиков О, М.* «Юрист» 2004, էջ 326 <https://legalns.com/download/books/lib/civil-law/book-001.pdf>:

³¹ Տե՛ս **Викулова О.**, նշված աշխատ., էջեր 12-13:

³² Տե՛ս **Багищев Е.А.** «О правовом положении субъектов туристской деятельности»//Пробелы в российском законодательстве, N 4, 2011, էջ 56:

տեսակի տրանսպորտային միջոցներով (օրինակ՝ ավիափոխադրում) զբոսաշրջիկների տեղափոխման ծառայություն կարող են մատուցել միայն փոխադրողները, հյուրանոցային ծառայություն՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտները և այլն: Իհարկե, որոշ դեպքերում (հիմնականում ներքին զբոսաշրջության շրջանակներում) առանձին ծառայություններ կարող են մատուցել հենց զբոսաշրջային գործունեության սուբյեկտները (օրինակ՝ տուրերի շրջանակներում սեփական փոխադրամիջոցներով զբոսաշրջիկների տեղափոխումը): Ավելին, այլ սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հիման վրա ձևավորված զբոսաշրջային փաթեթների շրջանակներում սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելիս որոշ լրացուցիչ ծառայություններ ևս կարող են մատուցվել անձամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից (օրինակ՝ վիզա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և այլն):

Այս ամենը թույլ է տալիս եզրահանգել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեությունը ոչ միշտ է հանգում զբոսաշրջային ծառայություններ մատուցելուն, ճիշտ հակառակը՝ այդ գործունեությունը մեծամասամբ ուղղված է ոչ թե ինքնին այդ ծառայությունները մատուցելուն, այլ երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների համադրման միջոցով սպառողի համար միասնական, ամբողջական արդյունք ապահովելուն:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով քննարկվող պայմանագրի առարկային՝ պետք է ընդունել, որ դրան միանշանակ բնորոշում տալը բավականին բարդ է, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված սպառողի պատվերից, մատուցվող ծառայությունների շրջանակը կարող է միանգամայն տարբեր լինել. կարող են պատվիրվել ինչպես զբոսաշրջային փաթեթում կամ տուրում ընդգրկված, այնպես էլ առանձին զբոսաշրջային ծառայություններ. զբոսաշրջային գործունեության սուբյեկտը կարող է ինչպես սոսկ կազմակերպել ծառայություններ մատուցող այլ անձանց կողմից համապատասխան ծառայության մատուցումը, այնպես էլ՝ անձամբ մատուցել որոշ զբոսաշրջային ծառայություններ: Այսինքն՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության բովանդակությունը շատ ավելի լայն է, քան զբոսաշրջային ծառայությունների մատուցումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ, չնայած միջազգային իրավական փաստաթղթերով, տարբեր երկրների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սպառողի հետ կնքվող պայմանագրի իրավական բնույթի հարցում առկա տարբեր մոտեցումներին, դրանից զբոսաշրջային պարտավորության էությունը չի փոխվում. դա պատվիրատուի պատվերի հիման վրա և դրան համապատասխան սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելուն ուղղված գործունեություն է, որը կարող է ներառել ինչպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից անմիջականորեն զբոսաշրջային ծառայություն/ներ մատուցելը, այնպես էլ երրորդ անձանց կողմից նման ծառայության/ծառայությունների մատուցումը կազմակերպելը: Կարծում ենք՝ հենց այս ծառայությունն է սպառողի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող

ծառայության մատուցման պայմանագրի առարկան: Մինչդեռ Օրենքով սահմանված՝ «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» եզրույթը և այդ պայմանագրի իրավական բնորոշումը չեն արտացոլում զբոսաշրջային ծառայությունների մատուցման կապակցությամբ կողմերի միջև առաջացող պայմանագրային հարաբերությունների օբյեկտը, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել կողմերի հարաբերությունները միջնորդավորող պայմանագրի այնպիսի համապարփակ բնորոշում, որը համահունչ կլինի սպառողներին մատուցվող ծառայությունների ցանկացած շրջանակի կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների էությանը³³:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք «Զբոսաշրջության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) զբոսաշրջային պայմանագիր-ծառայությունների մատուցման պայմանագիր, որով կատարողը՝ զբոսաշրջային օպերատորը և/կամ գործակալը, պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով սպառողին մատուցել զբոսաշրջային ծառայություն կամ այդ ծառայությունների համալիր և/կամ կազմակերպել երրորդ անձանց կողմից զբոսաշրջային ծառայության կամ այդ ծառայությունների համալիրի մատուցումը, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար:»:

³³ Օրենսգիրքը քննարկվող պայմանագիրն անվանում է «զբոսաշրջիկության ծառայության մատուցման պայմանագիր»: Թեև արդի հայերեն բացատրական բառարաններում բացակայում է «զբոսաշրջիկություն» բառի բացատրությունը, սակայն դրա լեզվաբանական իմաստը հուշում է, որ այն շեշտադրում է զբոսաշրջիկ լինելու, նման կարգավիճակ ունենալու հանգամանքը, ինչը նույնպես խնդրո առարկա ծառայության մատուցման պայմանագիրը բնորոշող համարժեք եզրույթ չի թվում:

Հետևաբար, կարծում ենք, որ օրենսդրորեն անհրաժեշտ է ամրագրել այս պայմանագիրը բնորոշող այնպիսի եզր, որը կընդգրկի զբոսաշրջային գործունեության ոլորտում մատուցվող ծառայությունների ողջ համակարգը՝ ներառելով ոչ միայն բուն զբոսաշրջային ծառայությունները, այլև զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից ապահովվող կազմակերպչական, միջնորդական և օժանդակ բաղադրիչները: Այլ կերպ կունենա առավել լայն սեմանտիկ ծավալ, քան «զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր» կամ «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» եզրույթներն են:

THE CONTRACT FOR THE PROVISION OF TOURISM SERVICES AS A CIVIL CONTRACT AND CERTAIN FEATURES OF ITS SUBJECT MATTER

SAGHOYAN YEVA

*Advisor to the Prosecutor General of the
Republic of Armenia,
Lecturer at the Chair of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University*

Abstract. The article examines the legal nature of the contract for the provision of tourist services and issues related to its subject matter. Analysis of the legal qualification of the package travel contract under the RA Law “On Tourism” reveals inconsistencies between the objects of contractual obligations in the Civil Code of the RA and the sectoral law, showing that a package travel, as an object of civil rights, constitutes a **set of services**. Consequently, conclusions about its proprietary nature and the use of terms such as “realization” and “sale” regarding the statutory object are **unjustified**. The analysis also indicates that the subject matter of the contract includes not only tourist services provided by tourism activity entities themselves but also the organization of consumer travel within a package or tour composed of services from third parties, or the organization of individual tourist services. Therefore, the article proposes a **comprehensive definition of the contract**, applicable to the full range of services provided to consumers.

Key words: package travel, travel service, travel organization, tourist, tour operator, tourism contract.

ДОГОВОР ОКАЗАНИЯ ТУРИСТИЧЕСКИХ УСЛУГ КАК ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ДОГОВОР И НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ЕГО ПРЕДМЕТА

САГОЯН ЕВА

*Советник Генерального прокурора РА,
Преподаватель кафедры гражданского права
юридического факультета
Ереванского государственного университета*

Аннотация. Статья исследует правовую природу договора об оказании туристических услуг и вопросы, связанные с его предметом. Анализ договора туристического пакета по Закону РА «О туризме» выявляет несоответствия с Гражданским кодексом РА и показывает, что туристический пакет, как объект гражданских прав, представляет собой совокупность услуг, что делает необоснованным использование терминов «реализация» и «продажа». В то же время в статье обосновывается, что предмет настоящего Договора является не только туристическая услуга или комплекс этих услуг, предоставляемых субъектами туристской деятельности, но и услуга по организации путешествий потребителей или отдельных туристических услуг в рамках туристического пакета или тура, состоящего из туристических услуг, предоставляемых третьими лицами, поэтому предлагается такое всеобъемлющее определение договора между сторонами, которое соответствовало бы любому кругу услуг, предоставляемых потребителям.

Ключевые слова: туристический пакет, туристическая услуга, организация путешествия, турист, туристический оператор, туристический договор.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
2. «Ջրուսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023 թ., ուժի մեջ է մտել 01.09.2024 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21:
3. «Ջրուսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-11-Ն, ընդունվել է 17.12.2003 թ., ուժի մեջ մտել՝ 08.02.2004 թ., ուժը կորցրել է 01.09.2024 թ., ՀՀՊՏ 2004.01.29/6(305) Հոդ.106:
4. Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of November 25, 2015 “On Package Travel and Linked Travel Arrangements”, Amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and Repealing Council Directive 90/314/EEC.
5. Civil Code of Georgia, N786, 26/06/1997.
6. Федеральный закон «Об основах туристской деятельности в Российской Федерации» от 24.11.1996 г., N 132-ФЗ.
7. Гражданский кодекс Российской Федерации, Ч. 1, N 51-ФЗ, принят Государственной Думой, 21 октября 1994 года, вступление в силу 1 января 1995 года.
8. Закон Украины «О туризме» от 15.09.1995 г.
9. Закон Республики Беларусь «О туризме» от 11.11.2021 г., № 129-3.
10. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, չորրորդ հրատ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014.
11. Բարսեղյան Տ., Հայկյանց Ա., Ղարախանյան Գ., Մեղրյան Ա., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, Երկրորդ հրատ., «ԵՊՀ հրատարակչություն», Երևան, 2008
12. Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others, Collective Commentary about New Package Travel Directive, ESHTTE, 2020.
13. Czekaj R., Kulig K., Contract for Package Travel, Package Holidays and Package Tours, ISSN electronic version 2353 – 9119 Central and Eastern European Journal of Management and Economics, Vol. 6, No. 2, 109-124, June 2018.
14. Абдурахманов А., Пикущая О. К вопросу о договорных отношениях в туризме//Вестник ассоциации вузов туризма и сервиса 2010 / № 1.
15. Балаганская М., Роль этнокультурного компонента в формировании туристического продукта http://tourlib.net/books_tourism/balaganskaya.htm.
16. Барабанова П., Гражданско-правовое регулирование договорных отношений в сфере туризма в России и Англии. Дисс., М. 2017.
17. Батищев Е.А. О правовом положении субъектов туристской деятельности //Пробелы в российском законодательстве, N 4, 2011.
18. Брагинский М., Витрянский В., Договорное право, Книга третья, Договоры о выполнении работ и оказании услуг, 2-ое изд., М., «Статут», 2011.
19. Ган Н. Правовое регулирование деятельности по оказанию туристских услуг в Российской Федерации, Дисс, М. 2008.
20. Гражданское право России: Обязательственное право: Курс лекций, отв. ред. Садиков О., «Юристь» 2004.
21. Гражданское право России: Обязательственное право: Курс лекций, отв. ред. Садиков О. «Юристь» 2004.
22. Гражданское право, Учебник, Том 2, под ред. А. Сергеева, Ю. Толстого, М., «Проспект» 2005.
23. Гражданское право: учебник: в 4 т., Т. 1, Общая часть, отв. ред. Е. А. Суханов, 2-е изд. перераб. и доп., М., Изд. «Статут», 2019.
24. Ломакина Е., Содержание туристских правоотношений//Европейские перспективы, N 4, 2013.
25. Накушнова Е.В., Кириченко О.В., Вопросы гражданско-правового регулирования оказания туристских услуг в Российской Федерации, Туризм: право и экономика//№ 2, М., 2016.
26. Отгеский И., Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туристских услуг, М., «Юстицинформ», 2017.
27. Писаревский Е., Еще раз о правовой природе договора на туристическое обслуживание //Юрист. 2000. № 8.
28. Сергеев В., Договор об оказании международных туристских услуг: Теоритические проблемы и практические аспекты правоотношений туриста и туристской фирмы в процессе заключения договора//Право и экономика, 1998, N 4.
29. Тархов В., Гражданское право, Общая часть, Чебоксары, Чув. кн. изд-во, 1997
30. Устюгова Е., Попова Т., Туристский продукт и туристские услуги//Транспортное дело России, N 10, 2009.
31. Шевчук Д., Договорные отношения применительно к туризму// Финансовая газета. Региональный выпуск, 2009, N 21.
32. Թիվ ԵՂ/8212/02/19 գործով 25.10.2019 թ. վճռով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:
33. Թիվ ԱԳՂ/1131/02/09 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 24.06.2010 թ. որոշումը:

Հոդվածը գրախոսվել է 02.02.2026
Ներկայացվել է տպագրության 04.02.2026

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

ՄԱՐԴԱՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական

ստորաբաժանման ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի ավագ դասախոս

DOI: 10.63925/18294847-2026.bl21-17

Համառոտագիր: Հաշվի առնելով ողջ երկրագնդի վրա տեղեկատվական պատերազմների և միջազգային հանցագործությունների ահագնացող վտանգները՝ հեղինակը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և շահերի պաշտպանության նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում, ինչպես նաև լրագրության գործունեության ասպարեզում առկա խնդիրները, որոնք կարող են հանգեցնել պետական գաղտնիքի տարածմանը: Յուրօրինակ ուսումնասիրության է ենթարկվել հատկապես պետական գաղտնիքի պաշտպանության միջազգային փորձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային ռազմավարությունը և գործող օրենսդրական դաշտը: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը ներկայացրել է առաջարկություններ, որոնք ունեն կարևոր նշանակություն ՀՀ օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև պետական գաղտնիքի պաշտպանության գործնական քայլերում:

Ակնկալվող արդյունքներն են՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց, կազմակերպություններին, իրավաբանական անձանց և հատկապես զանգվածային լրատվության միջոցներին փոխանցել այնպիսի գիտելիքներ՝ ըստ որի հնարավորություն կստեղծվի ունենալ ավելի պաշտպանված և անվտանգ պետություն:

Բանալի բառեր՝ պետական գաղտնիք, պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակում, պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հոսակորուստ, պետական գաղտնիքի պաշտպանություն:

Պետական գաղտնիքը պետական անկախության կարևոր հատկանիշներից է և ինքնիշխան պետության պարտադիր տարրերից մեկը: Ունենալ պետական գաղտնիք՝ նշանակում է ունենալ այնպիսի պետություն, որը մտածում և գործում է հանուն իր անվտանգության, իր քաղաքացիների և հանրության կենսական կարևոր շահերի պաշտպանության:¹

¹ Տե՛ս «Պետական գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսության սեղմագիր, Ենգիբարյան Գոռ Նորիկի, ԵՐԵՎԱՆ, 2012 թ.

Պետական գաղտնիքը (պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ)՝ Հայաստանի Հանրապետության ռազմական կամ արտաքին հարաբերությունների կամ տնտեսության, գիտության և տեխնիկայի, կամ հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, արտադրանքը կամ նյութերը, որոնք պահպանվում և պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին:

Պետական գաղտնիքի պաշտպանությունը լիազոր մարմնի համակարգմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց ուժերի ու միջոցների կիրառումն է՝ ուղղված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների, արտադրանքների և նյութերի հրապարակումը և հոսակորուստը կանխելուն:

Պետական գաղտնիքի պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման գործընթացում մենք հաճախ բախվում ենք մարդկանց սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման խնդրին: Մի կողմից՝ անհրաժեշտ է բավարարել ժամանակակից հասարակության պահանջմունքները. լինել բաց և մատչելի, ապահովել սահմանադրությամբ՝ որպես բարձրագույն արժեք հռչակված մարդու իրավունքներն ու ազատությունները, մյուս կողմից՝ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանառության օրենսդրական կարգավորմամբ ապահովել ինքնիշխան պետության, անհատի և հասարակության անվտանգությունը:²

Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի ընդունումը և ընդհանրապես գաղտնիքին վերաբերող օրենսդրական ձևավորումներն ուղղված են հենց այդ նպատակի իրականացմանը: Վերոնշյալ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման նպատակով տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու, գաղտնագրելու, պետական գաղտնիքը պահպանելու, պաշտպանելու, օգտագործելու, գաղտնագերծելու կամ ոչնչացնելու գործընթացների հարաբերությունները: Այն թույլ է տալիս գաղտնագերծել և շրջանառության մեջ դնել նախկինում գաղտնի համարվող տեղեկատվության մի հսկայական ծավալ և դրանով իսկ իրական նախադրյալներ ստեղծել ժամանակակից բաց հասարակության հաստատման, հասարակություն-պետություն իրավահարաբերությունների նորովի ձևավորման համար: Մասնավորապես, մի կողմից՝ ապահովել պետական իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության որոշակի կողմերի մասին քաղաքացիների տեղեկացվածության սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մյուս կողմից՝ օրենքի դաշտ բերել այն իրավական կառուցակարգերը, որոնց հիման վրա պետությունը որոշակի խումբ

² Տե՛ս Ռազմավարության և անվտանգության հարցեր» հոդվածների ժողովածու, ԵՐԵՎԱՆ, 2007, էջ 28
Հարությունյան Գ., «Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները», ԵՐԵՎԱՆ 2003, էջ 34, 35.

տեղեկությունները դասում է պետական գաղտնիքի շարքը, սահմանում դրանց գաղտնագերծման կարգը և պայմանները, ինչպես նաև պատժամիջոցներն այնպիսի դեպքերում, երբ քաղաղացին պաշտպանվող տեղեկությունը տարածում է հակաօրինական ձևով:

Անդրադառնալով պետական գաղտնիքի պահպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով մարդկանց սահմանադրական իրավունների և ազատությունների սահմանափակման խնդիրներին՝ ներկայացնենք ՀՀ սահմանադրության 2-րդ գլխի 33 և 42-րդ հոդվածները:

ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով սահմանված է՝ «Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը»:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի՝ ազատության և գաղտնիության իրավունք:

Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված է «Կարծիքի արտահայտման ազատությունը»:

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:³

³ Տե՛ս ՀՀ սահմանադրության 2-րդ գլխի 33 և 42-րդ հոդվածներ.

Իհարկե, առաջին հայացքից կարծես թե պետություն – հասարակություն թնջուկը լուծված է, կան օրենքով սահմանված կարգավորումներ, որով ապահովվում է մարկանց սահմանադրական իրավունքները, միևնույն ժամանակ, առկա է նաև պետության կողմից, օրենքով սահմանված, մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները, սակայն մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատության երաշխավորումը երբեմն իրականության մեջ հանդես է գալիս բոլորովին այլ դրսևորմամբ: Այսպիսով՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հասարակության տարբեր շերտերում, ինչպես նաև մեդիադաշտում լուսաբանվող այնպիսի տեղեկություններին, որոնք երբեմն պարունակում են պետական գաղտնիքի մաս, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին: «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն արգելում է պետական գաղտնիքի հրապարակումը՝ որպես քրեորեն պատժելի արարք: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասը նույնպես արգելում է տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը պարունակում է պետական գաղտնիք:

Իհարկե, վերոնշյալ օրենսդրական կարգավորումները կարծես թե գծում են այն սահմանները, որոնք անհրաժեշտ է պահպանել պետական գաղտնիքի հետ առնչվելիս, սակայն, մեր կարծիքով, պետք է ավելի քան հստակեցնել այն՝ ելնելով ազգային անվտանգության և պետական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Ուստի, առաջարկում ենք ազգային անվտանգության ռազմավարության ծրագրերում պլանավորել և իրականացնել միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ուսուցանելու կամ վերապատրաստելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց և հատկապես լրատվամիջոցները ներկայացնող այն աշխատակիցներին, որոնք, աշխատանքի բերումով ուղղակիորեն առնչվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին:

Պետական գաղտնիքի պաշտպանությունը գրեթե անհնար է դառնում այն դեպքերում, երբ, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման լայն հնարավորություններով հանդերձ, մեդիադաշտ են ներթափանցում ինքնակոչ լրագրողները՝ բլոգերները, որոնք երբեմն տարրական գիտելիքների մակարդակում չեն առնչվում պետական գաղտնիքի կարևորագույն ինստիտուտին:

Ներկայացնենք, դիցուք, Ռուսաստանի դաշնությունում պետական գաղտնիքի պաշտպանության բնագավառում իրականացվող գործընթացները: ՌԴ «Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության լիցենզավորման» կանոնակարգի 7-րդ կետով «ՌԴ կառավարության 1995 թվականի ապրիլի 15-ի թիվ 333 որոշում» սահմանված է պետական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու լիցենզիա ստանալու կարգը: ՌԴ քաղաքացիները կարող են ծանոթանալ տարբեր կայքերում հրապարակված կրթական կազմակերպությունների ցանկերին, որոնք իրականացնում են խորացված վերապատրաստում՝ պետական գաղտնիքի պաշտպանություն ծրագրով: Կազմակերպություններին լիցենզիաները տրվում

են համապատասխան փորձաքննությունների արդյունքների և դրանց ղեկավարների պետական հավաստագրման հիման վրա, որոնք պատասխանատու են պետական գաղտնիք կազմող տեղեկատվության պաշտպանության համար:

Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից սահմանված ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունն ավարտելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ ունեցող ձեռնարկությունների ղեկավարները համարվում են պետական ատեստավորում անցած, եթե ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո անցել է ոչ ավել, քան 5 տարի:

Պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում կրթական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցանկը հաստատում է պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովը:

Պետական գաղտնիք պարունակող և տեղեկատվական անվտանգության ոլորտում լրացուցիչ մասնագիտական ծրագրեր պարունակող լրացուցիչ մասնագիտական ծրագրերի մշակման կարգը սահմանում է դաշնային գործադիր մարմինը, որն իրականացնում է կրթության ոլորտում պետական քաղաքականության մշակման և իրավական կարգավորման գործառույթները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ ոչ բոլոր կրթական կառույցներն են օժտված պետական գաղտնիքի պաշտպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ ուսումնական գործընթացի կազմակերպման իրավունքով:⁴

Ռուսաստանի Դաշնությունում դեռևս 1998 թվականից Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանի տարածաշրջանային ուսումնագիտական կենտրոնում «РУНИЦ «Безопасность» МГТУ им. Н.Э. Баумана» «Ինֆորմացիայի պաշտպանություն» ծրագրի շրջանակներում կազմակերպությունների ղեկավարների և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների հետ իրականացվում են պետական գաղտնիքի պաշտպանության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ: Դասընթացը նպատակ ունի բարձրացնելու նրանց որակավորումը պետական գաղտնիքի պաշտպանությանն առնչվող մասնագիտական գործունեության մեջ և բարելավելու այդ բնագավառում առկա գիտելիքներն ու հմտությունները:

Ռուսումնական ծրագրով նախատեսված է անցկացնել գործնական պարապմունքներ՝ «Պետական գաղտնիքի հասանելիության կազմակերպում» և «Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպում հիմնարկում, կազմակերպությունում կամ ձեռնարկությունում» թեմաներով: Գործնական դասընթացների ժամանակ սովորողներն ուսուցչի ղեկավարությամբ լուծում են գաղտնիության ռեժիմի կազմակերպման և ապահովման, այն վերահսկելու և քաղաքացիներին պետական գաղտնիքների տրամադրման հասանելիության բարդ իրավիճակային խնդիրներ:⁵

⁴ <https://centr.expert/v-kakih-obrazovatelnyh-organizatsiyah-mozhno-proyti-povyshenie-kvalifikatsii-po-programme-zashchita>

⁵ <https://runsec.ru/study/qualification/zgt/егности, контролю его состояния, допуску граждан к государственной тайне.>

Իհարկե, օրենսդրությամբ կարգավորվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման նպատակով տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու, գաղտնագրելու, պետական գաղտնիքը պահպանելու, պաշտպանելու, օգտագործելու, գաղտնագերծելու կամ ոչնչացնելու գործընթացներին առնչվող հարաբերությունները, սահմանվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող հարաբերություններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց լիազորությունները, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն ունեցող անձանց պարտականությունները, նրանց աշխատանքի համար սահմանված պայմանները և սահմանափակումները, ինչպես նաև սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության վերաբերյալ հարաբերությունները, սակայն պետական գաղտնիքի պաշտպանության նպատակով կարծես թե բացակայում են վերոնշյալ օրինակով բերված պետական գաղտնիքին առնչվող կոնտինգենտի՝ այդ բնագավառում գիտելիքների հաղորդման, վերապատրաստման, առավելևս որակավորման, գործընթացների կարգավորումները:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվությունը ձևակերպվում է կարծես թե բավարարվելով միայն իրականացվող ստուգողական՝ օրենսդրությամբ սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով:

«Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի երկրորդ գլխի 8-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասվում են՝ ըստ դրանց բնագավառի կամ գերատեսչական պատկանելության:

Տեղեկությունների գաղտնագրման բնագավառում միասնական պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով Կառավարությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը՝ ըստ գերատեսչական պատկանելության ««Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 10»: Հարկ է նշել, որ պետական մարմինները, օգտվելով վերոնշյալ ցանկի դրույթներից, ստեղծում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկեր: Գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերում ներառված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի և դրանցում կատարվող փոփոխությունների ու լրացումների նախագծերը ներկայացվում են ազգային անվտանգության լիազոր մարմնի «ԱԱԾ» համաձայնեցմանը: Գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի և դրանցում կատարվող փոփոխությունների ու լրացումների նախագծերը հաստատում են պետական մարմինների համապատասխան պաշտոնատար անձինք: Գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի, դրանցում կատարված

փոփոխությունների և լրացումների մեկ օրինակն ուղարկվում է լիազոր մարմին:

Գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական գաղտնիք:⁶

Այսպիսով՝ առաջարկում ենք, որ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանության և պահպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք, կազմակերպությունները, իրավաբանական անձինք տեղեկությունների գաղտնագրման գործընթացում առաջնորդվեն բացառապես գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի պահանջներով, այլ ոչ թե ավանդույթի ուժով կամ աշխատանքային ընկերների խորհուրդներով, կամ փոխաբերական իմաստով արտահայտված՝ վառ երևակայությամբ:

Ազգային անվտանգության տեսանկյունից անհամեմատ դրական արդյունք կարձանագրվի, հատկապես, երբ մեդիա աշխատակիցների համար պատրաստվի հատուկ ուղեցույց, որը կօգնի վերջիններիս իրենց գործունեության շրջանակներում չխախտել պետական գաղտնիքի պաշտպանության պահանջները:

Վերոնշյալ գործընթացը, ըստ էության, իր մեջ պարունակում է մեծ ռիսկեր մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման տեսանկյունից, որը կարող է հասարակության մեջ որոշակի դժգոհությունների առիթ դառնալ, հետևաբար, այս գործընթացում պահանջվում է կոմպետենտության բարձր մակարդակ:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է տեղեկությունների պետական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումները, ըստ որի՝ արգելվում է պետական գաղտնիքի շարքին դասել մարդկանց անվտանգությանը և առողջությանն սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև՝ տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները, տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները և պետության կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները:⁷

⁶ Տե՛ս «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, գլուխ 2., հոդված 8.

⁷ Տե՛ս «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, գլուխ 2., հոդված 9.

Ըստ էության՝ վերոգրյալ բնագավառների տեղեկությունների պետական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումները երբևէ չեն հանգեցրել և, մեր կարծիքով, ապագայում չեն կարող հանգեցնել պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածման:

Ուստի առաջարկում ենք, պետական գաղտնիքի պաշտպանությունից ելնելով, ղեկավարվել բացառապես օրենքով սահմանված տեղեկությունների պետական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումների վերոնշյալ դրույթներով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից պետական գաղտնիքի տարածումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Որպես վերջաբան՝ ներկայացնենք Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների բաժնի 42 գլխով սահմանված, սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, այն է՝ պետական դավաճանությունը «ՀՀ քր. օր., հոդված 418», լրտեսությունը՝ «ՀՀ Քր. օր., հոդված 424», պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, ապօրինի ձեռք բերած անձի կողմից դրանք հրապարակելը «ՀՀ քր. օր., հոդված 426», պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը «ՀՀ քր. օր., հոդված 427», պետական գաղտնիք պարունակող տեղեկություններն անզգուշությամբ հրապարակելը ՀՀ քր. օր., հոդված 428»:⁸

Այսպիսով՝ ամփոփելով հոդվածում ներկայացված նյութը՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ունենալով պետական գաղտնիքի պաշտպանության և պահպանության բավականին արդի օրենսդրական դաշտ և գործիքակազմ՝ այնուամենայնիվ, այս ոլորտում առկա են թերություններ, որոնք ենթակա են շտկման:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների բաժնի, գլուխ 42.

STATE SECRET AS A CORNERSTONE OF THE NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

VAHAGN SARDARYAN

*Senior Lecturer at the Chair of Operational Search Activity and Criminalistics,
Police Educational Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia*

Abstract. Taking into account the escalating threats of information warfare and international crime, the article examines some issues at state governance and local self-government levels related to the protection of national security and the interests of the Republic of Armenia. Particular attention is paid to a range of challenges in the field of journalism that may contribute to the dissemination of state secrets.

The research includes a focused analysis of international practices in the protection of state secrets, as well as the national security strategy and the current legislative framework of the Republic of Armenia. Based on these findings, the author proposes a set of recommendations aimed at improving the national legislation and enhancing practical measures for the protection of state secrets. The expected outcomes include increasing awareness and knowledge among state and local self-government bodies, officials, organizations, legal entities, and, in particular, media representatives, thereby contributing to a more secure and resilient state.

Keywords: state secret, publication of information containing state secrets, leakage of information containing state secrets, protection of state secrets.

ГОСУДАРСТВЕННАЯ ТАЙНА КАК ОСНОВА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ВААГН САРДАРЯН

старший преподаватель

кафедры ОРД и криминалистики

полицейского учебного подразделения

Образовательного комплекса МВД Республики Армения

Аннотация. Учитывая возрастающую опасность информационных войн и международных преступлений по всему миру, автор представляет проблемы, существующие на уровнях государственного управления и местного самоуправления в целях защиты национальной безопасности и интересов Республики Армения, а также в сфере журналистской деятельности, которые могут привести к распространению государственной тайны.

В частности, был изучен международный опыт защиты государственной тайны, а также Национальная стратегия Республики Армения и действующее законодательное поле. В результате проведенных исследований автором были представлены предложения, которые имеют важное значение для совершенствования законодательства РА, а также практических шагов по защите государственной тайны.

Ожидаемые результаты заключаются в передаче государственным органам и органам местного самоуправления, а также должностным лицам, организациям, юридическим лицам и, особенно, средствам массовой информации таких знаний, которые позволят создать более защищенное и безопасное государство.

Ключевые слова: государственная тайна, опубликование сведений, содержащих государственную тайну, утечка сведений, содержащих государственную тайну, защита государственной тайны.

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն.
2. «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք.
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք.
4. «Պետական գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսության սեղմագիր, Ենգիբարյան Գոռ Նորիկի, ԵՐԵՎԱՆ, 2012 թ.
5. «Ռազմավարության և անվտանգության հարցեր» հոդվածների ժողովածու, ԵՐԵՎԱՆ, 2007 թ.
6. Հարությունյան Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, ԵՐԵՎԱՆ, 2003 թ.

Հոդվածը գրախոսվել է 20.02.2026
Ներկայացվել է տպագրության 25.02.2026

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության
գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված
հանցագործությունների քննության վարչության
ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ
DOI: 10.63925/18294847-2026.bl21-18

Ամփոփագիր. Համաշխարհային տնտեսական համագործակցության և ինտեգրման աննախադեպ ծավալներն օբյեկտիվորեն խթանեցին միջազգային (անդրազգային) խոշոր տնտեսական (առևտրային) կազմակերպությունների ձևավորման և զարգացման գործընթացը: Այս գործընթացների արդյունքում ձևավորվել են բազմաշերտ և փոխկապակցված տնտեսական հարաբերություններ, որոնք էական ազդեցություն են ունենում ազգային տնտեսությունների վրա: Այդ գործընթացային հարաբերություններում խաչաձևվում են պետության ինքնիշխանությունը, ինքնիշխան իրավունքները, ինչպես նաև միջազգային տնտեսական (առևտրային) կազմակերպությունների և անդրազգային կորպորացիաների գործառնական լիազորությունները: Վերջիններիս աճող դերը հաճախ առաջացնում է իրավական և ինստիտուցիոնալ հակասություններ՝ կապված պետական կարգավորումների, տնտեսական քաղաքականության և ազգային շահերի պաշտպանության հետ:

Այդ բարդ և բազմակողմանի խնդրի վերլուծությանն է նվիրված սույն հետազոտական աշխատանքը՝ նպատակ ունենալով բացահայտել միջազգային տնտեսական համագործակցության պայմաններում պետության ինքնիշխանության պահպանման հնարավոր ուղիներն ու սահմանափակումները:

Քանալի բառեր. պետության ինքնիշխանություն, ինքնիշխան իրավունքներ, միջազգային տնտեսական (առևտրային) կազմակերպություն, գործառնական լիազորություններ միջազգային իրավունք, միջազգային պրակտիկա:

Ներածություն

Ժամանակակից միջազգային տնտեսական հարաբերությունների բարդ և բազմաշերտ համակարգում, երբ արագ տեմպերով աճում է տրանսազգային ընկերությունների (ՏԱԸ), կորպորացիաների և միջազգային առևտրային կազմակերպությունների (ՄԱԿ) թիվը և ազդեցությունը, առավել հրատապ է դառնում պետությունների ինքնիշխանության հարցը: Քանի որ նշված, ինչպես նաև մի շարք այլ

միջազգային տնտեսական կազմակերպությունների գործունեությունն իրականացվում է ինքնիշխան պետությունների տարածքում, առաջանում են իրավական և գործառնական բնույթի բարդ հարաբերություններ: Այս համատեքստում առերեսվում են, մի կողմից, ինքնիշխան պետության իրավասությունները և կարգավորիչ լիազորությունները, իսկ մյուս կողմից՝ միջազգային տնտեսական (առևտրային) կազմակերպությունների և անդրազգային կորպորացիաների գործառնական իրավունքներն ու հնարավորությունները: Հենց այս փոխհարաբերությունների ուսումնասիրությունն է կազմում սույն հոդվածի հետազոտության առարկան:

Հիմնական հետազոտություն

Համաշխարհային տնտեսության նշանակության մասշտաբներով երկրների տնտեսական փոխկապվածության աճը ներքաղաքական շահերի ազդեցության աճի հետ համակցությամբ ստիպեցին ժամանակակից երկրներին հրաժարվել տարածքային էքսպանսիայից և տնտեսական նպատակների համար ձեռքբերման ռազմական մեթոդներից: Դրա փոխարեն առևտրային պետությունները կենտրոնացվեցին համաշխարհային տնտեսությունում ներդրումների աճին: Միայն այն երկրներն են պահպանում տարածքային հավակնությունները, որոնց տնտեսական առավելությունը հենվում է գյուղատնտեսական մթերքների արտադրության վրա: Այն պետությունները, որոնցում կապիտալը, աշխատանքային ռեսուրսները, տեխնոլոգիաները մոբիլ են, որտեղ գերակայում է շուկայական փոխանակության զարգացման պահանջները, ըստ Ռ. Ռոզեկրանցի սահմանման, վերածվեցին «վերացական պետությունների», քանի որ դրանցում քիչ է ֆիզիկական (աշխարհագրական) տարածությանն առնչվող արտադրությունը¹: Արտադրական բազմաթիվ ոլորտներում տեխնոլոգիական գործընթացի բարդությունը, արժեքի և ռիսկի աստիճանի հետ զուգահեռ, հանգեցրին իրացման շուկաների ոլորտների ընդլայնման և մեկ ազգային պետության սահմաններից դրանց տարածման երևույթին: Ազգային պետությունների տարածքային սահմանները ծառայեցին նոր ապրանքների, մրցունակ արտադրության կազմակերպման և նոր տեխնոլոգիաների զարգացման համար: Կարելի է ասել, որ գլոբալ տնտեսությունը հենվում է արդյունաբերական գործունեության, աշխարհագրորեն գործառնական ինտեգրման նպատակահարմարությանը:

Առևտուրը համաշխարհային տնտեսության ինտեգրման հիմնական միջոց է: 1960-ական թվականներից սկսած՝ ծագեցին անդրազգային կորպորացիաներ, որոնք դարձան արտադրական միջոցների ինտերազգայնացման արդյունքում առևտրային պետության ծագման գործոն: Հետագայում այդ կորպորացիաները փոխարինվեցին միջազգային առևտրային կազմակերպությունների ցանցի, որոնք դրսևորվում էին որպես կորպորատիվ այլանսներ կամ կոլեկտիվ գործողությունների հիման վրա զարգացող

¹ Sté u **Rosecrance R.**, The Rise of the Virtual State // Foreign Affairs. Vol. 75 (4) July-August, 1996, p. 45.

ուղղակի տարբեր ֆիրմաների միջև համագործակցության վերաբերյալ համաձայնություններ: Անհատական նպատակի ձեռքբերման պահանջը ձևափոխվեց կոլեկտիվ նպատակների ձեռքբերման պահանջի: Հետևաբար, ըստ իրենց բնույթի՝ նման ցանցերը փոխկապակցված են և որոշակի չափով հանգեցնում են առանձին սուբյեկտների կողմից իրականացվող անհատական վերահսկողության մակարդակի նվազման:

Ներկայումս համաշխարհային շուկան չի ձևավորվում որպես միասնական և ամբողջական գլոբալ շուկա. այն, ըստ էության, բազմաթիվ տարածաշրջանային շուկաների համակցություն է, որոնք ներառում են սեփական ներքին շուկաները, ինչպես նաև անդրազգային ընկերությունների (ԱԸ) և միջազգային առևտրային կազմակերպությունների (ՄԱԿ) գործունեության ոլորտները: Այս կորպորացիաները կարելի է գնահատել որպես փոխանակման սկզբունքի ինստիտուցիոնալ օրինակներ, քանի որ դրանք գործում են որպես համաշխարհային ցանցեր:

ՏԱԸ և ՄԱԸ կազմակերպել են արտադրության և բաշխման գլոբալ ցանցեր, ունեն ազգային հիմքեր: Ըստ Ա.Մարտինելլի տվյալների՝ համաշխարհային առևտրի դրանց մասնաբաժինը կազմում է 70% և համաշխարհային արտադրության մինչև 30%-ը: Դրանցից ամենախոշոր հարյուրն ունեն մոտ վեց միլիոն աշխատակիցներ ամբողջ աշխարհով մեկ, իրականացնում են տրանսազգային և մուլտիազգային ֆիրմաների համաշխարհային վաճառքի 30%-ը, հսկում արտերկրյա գլոբալ ներդրումների 20%-ը, գերակայում այնպիսի ոլորտներում, ինչպես գազը, նավթը, ավտոմեքենաները, էլեկտրոնիկան, հեռահաղորդակցությունը, քիմիան, դեղագործությունը²: Երկրի պաշտոնապես հայտարարված արտահանման և ներկրման էական հատվածը փաստացի կարող է կազմված լինել տեղական և արտերկրյա ՏԱԸ մասնաձյուղերի միջև արտադրության, ծառայություններին այլ շրջանառությունների հետ կապված բաղադրիչների, կիսաֆաբրիկատների տրանսսահմանային շարժից: Դրանք ձևավորվել են տեղական կամ ազգային ֆիրմաների հիմքի վրա և ժամանակի ընթացքում վերածվել գլոբալ դերակատարների՝ համաշխարհային շուկաներում մրցակցային առավելություններ ձեռք բերելու նպատակով: Այդ վերափոխումը հնարավոր է դարձել արտերկրյա ուղղակի ներդրումների արդյունավետ կիրառման, ինչպես նաև նյութական և սիմվոլիկ հաղորդակցության ոլորտներում գրանցված տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ:

ՏԱԸ գործում են ըստ մրցակցային կանոնների և այն երկրների օրենքներով, որտեղ աշխատում են: Շուկայական մրցակցության նկատմամբ դրանց վերաբերմունքը միանշանակ չէ: Դրանք շարունակում են կիրառել շուկայի հատվածավորման առավելությունների աշխատաշուկան (ցածր աշխատավարձեր և արհմիությունների բացակայություն) և բնական ռեսուրսների շուկան (կարելի է չձախսել շրջակա միջավայրի պաշտպանության վրա այնտեղ, որտեղ բացակայում է էկոլոգիական քաղաքականությունը):

² Տե՛ս **Мартинелли А.** Рынки, правительства, сообщества и глобальное управление // Социс.2003.№1. С.11.

Երկրների հասարակության տնտեսության վրա ՏԱՀ ազդեցությունը, որտեղ վերջիններս կապիտալ են ներդրում, միանշանակ չէ: ՏԱՀ ներածում են առաջընթաց տեխնոլոգիաներ, կորպորատիվ ռազմավարության և կազմակերպման մոդելներ, աշխատակիցներին միջինում վճարում են ավելին, քան տեղական ֆիրմաները: Դրանք կիրառում են բնական ռեսուրսների շուկայի և աշխատաշուկայի հատվածավորվածությունը, իսկ դրանց տեխնոլոգիաները, մարտավարությունը և կառուցվածքը կարող են չհամապատասխանել տեղական տնտեսության և հասարակության պահանջներին, հատկապես պակաս զարգացած երկրներում Հակազլոբալացման ակտիվիստները համարում են, որ բոլոր ՏԱՀ վարվում են միանման և հավասար մեղավոր են չարիքի վերաբերյալ, որը կապված է գլոբալացման հետ: Իրականում կարելի է տարբերություններ առանձնացնել առանձին ՏԱՀ դրույթներում և կորպորատիվ վարքագծում: «Որոշ ՏԱՀ ընդունող երկրների մարդկային և բնական ռեսուրսներին վերաբերվում են որպես թշնամիներ: Մյուսները փորձում են զարգացնել առավել կայուն և հավասար հարաբերություններ, ինչն առավել հավանական է, երբ դրանց հակադրվում են արդյունավետ կառավարություն, ակտիվ արհմիություն և քաղաքական շարժում: Որոշ մասն օրինական բազա համարում է միայն իրենց բաժնետերերին՝ մերժելով կարգավորման ցանկացած այլ տեսակ: Մյուսները պատրաստ են պատասխանատվություն ստանձնել շատ շատերի վերաբերյալ՝ բացի իրենց բաժնետերերից և ներդրողներից, այսինքն՝ աշխատողներ, սպառողներ, մատակարարներ, տեղի հանրայթ, ազգային կառավարություն, բնապահպանական ասոցիացիաներ և այլն³: Այս դեպքում մշակվում են ինքնակարգավորման գործիքակազմեր, օրինակ՝ վարքագծային կանոնակարգեր, համաշխարհային մասշտաբի մարմինների գնահատումային ընթացակարգերին ենթարկվող սոցիալական և տնտեսական զեկույցներ: Այսպիսով՝ ՏԱՀ և ՄԱՀ, ըստ գործող տնտեսական շրջանառության սկզբունքի, ստեղծում են գլոբալ մակարդակի համակարգային ինտեգրում, ավելացնում տնտեսվարող սուբյեկտների փոխկապվածությունը:

Տնտեսական համագործակցության նման ձևերի զարգացման արդյունք դարձավ առևտրային պետությունների կողմից իրենց ինքնավարության սահմանափակումը: Արտաքին քաղաքական տեսանկյունից խնդիրը, որի հետ ընդհարվում են նման պետությունները, ամփոփվում է նրանում, որ ձեռք բերեն որքան հնարավոր է մեծ շահույթ միջազգային առևտրից և համագործակցությունից, միաժամանակ պահպանեն այնքան ինքնիշխանություն, ինքնավարություն, որքան դա հնարավոր է:

Գլոբալ տնտեսական տարածության ծագումն էապես փոփոխեց պետության հանրային և մասնավոր ոլորտների միջև փոխգործունեության պատկերը: Գլոբալացումը նշանակում է, որ պետությունը չի մենաշնորհում իր տարածքում օրենսդրական իշխանության գործառույթը: Այդ տարածությունն ընդգրկում է բազմաթիվ

³ Տե՛ս **Мартинелли А.** Рынки, правительства, сообщества и глобальное управление // Социс. 2003. №1. С. 11-12.

տարածքներ և պահանջում վերաբերական կանոնների, նորմերի ստեղծում: Բազմամակարդակ առևտրային համաձայնությունների իրականացման գործընթացում պետությունները, որպես կանոն, իրենց ազգային օրենսդրությունը համապատասխանեցնում են միջազգային իրավական նորմերին և հաստատված միջազգային գործնականին: Իսկ դա նշանակում է, որ պետություններն առավել են վերածվում միջազգային ինստիտուտների և կառավարման մարմինների այսպես կոչված «պետություն-անդամների»: Եվ դրանք կարծես փոխանակում են իրենց ինքնիշխանությունը կոլեկտիվ ապրանքարտադրության նկատմամբ հասանելիության հնարավորության հետ: Անդամ-պետությունների ձևավորումն առավել վառ նկատելի է Եվրոպայում: Ինչպես նշում է Մ. Կալերը, եթե սահմանենք Եվրոպայի ժամանակակից ազգային պետությունները համակցված ինքնիշխանության կամ պրոտո-դաշնության տերմիններով, ապա Եվրոպական միության ընդհանուր ինստիտուտների ստեղծումն առավել կարևոր խնդիր է, քան իշխանության տարածաշրջանային մարմինների զարգացումը⁴: Եվրոպայում այս գործընթացն ընդգրկել է ոչ միայն տնտեսական ոլորտը, այլ նաև անվտանգության ընդհանուր համակարգի ստեղծման մակարդակը, որում էլ ընդհանուր նպատակների ձեռքբերման համար ազգային պետությունները հրաժարվեցին իրենց ինքնիշխանության մի հատվածից:

Վերազգային տնտեսական և քաղաքական կազմակերպության ձևավորումը տեղի է ունենում պետական իշխանության և դրա նույնականության կորստի հաշվին: Այս ընդհանուր տենդենցի արտահայտումը և միաժամանակ դրա իմաստավորումը **կառավարում** կատեգորիան է: Անգլիական «governance» բառը թարգմանվում է որպես կառավարում, հսկողություն, հասարակության հանրային ոլորտում կառավարության իշխանություն կամ գործառույթ: «Governance» Հասկացությունը տարբերվում է «government» հասկացությունից: Այստեղ նկատի է առնվում կառավարությունը՝ որպես պետության ֆորմալ ինստիտուտների համակարգ, որն իրականացնում է քաղաքական կառավարում և օժտված է բռնության օրինական կիրառման մենաշնորհով: Միջազգային հանրության անդամ-պետությունն իր ինքնիշխան շահերը ենթարկում է միջազգային նորմերին և կանոններին՝ ջանալով ներդաշնակեցնել ներքին և միջազգային օրենսդրությունները: Ներդաշնակեցման պահանջը կարող է հանգեցնել նրան, որ միջազգային օրենքները կինստիտուցիոնալացվեն որպես ազգային օրենքներ: Նման ինստիտուցիոնալացումը կարող է իրականացվել երկու ուղիներով: Առաջինը՝ միջազգային կանոնները և նորմերը կարող են վերածվել պետության ներսում տարբեր սուբյեկտների արժեքների և իդեալների: Պետության ներսում քաղաքացիները և կազմակերպությունները կարող են կիրառել միջազգային նորմերը սեփական գործողությունների սահմանման համար՝ այլ քաղաքացիների և կազմակերպությունների գործողությունների հիմնավորվածությունը կասկածի տակ առնելու նպատակ-

⁴ Տե՛ս **Kahler M.**, Regional Futures and Transatlantic Economic Relations. NY, 1995, p.4.

ներով: Կառավարությունը ևս կարող է հղում կատարել միջազգային նորմերին այն նպատակով, որ արդարացնի, օրինականացնի հանրության մերժած որոշումները: Երկրորդը՝ միջազգային կանոնները և նորմաները կարող են ներկառուցվել ներպետական մակարդակում ընթացող քաղաքական գործընթացներում, եթե դրանց հիմքով կառուցվի նոր ներքին օրենսդրություն:

Մեկ պետության ներսում սուբյեկտների միջազգային իրավունքից օգտվելու ունակությունն անդամ-պետության գլխավոր առավելություններից մեկն է⁵: Մեփական ինքնիշխանության սահմանափակման փոխարեն՝ նրանք ստանում են էական մեծ հասանելիություն առարկաներին, որոնք տրամադրվում են միջազգային ինստիտուտների կողմից: Այսպիսով՝ միջազգային ռեժիմի շրջանակներում ծագում է վարքագծային փոփոխման պահանջ: Արևմտյան Եվրոպայում և հետագայում Եվրոպական Միությունում «Ընդհանուր շուկայի» տնտեսական ռեժիմը գործել է միայն տնտեսական կոոպերացիային աջակցելու նպատակներով: Սակայն հետագայում ծագեցին իրավական նորմեր, որոնք դուրս էին գալիս շուկայական հարաբերությունների սահմաններից և շոշափում քաղաքականության, հասարակության, պետական անվտանգության ոլորտները, և այս կառույցի գործունեությունն սկսեց տարածվել ոչ միայն անդամ-պետությունների տնտեսական աճի, այլ նաև ընդհանուր պլանի անվտանգության ապահովման խնդիրների լուծումների վրա:

Եվրոպական Միության նմանությամբ կազմակերպությունները գերադրապես զբաղվում են առանձին պետությունների համագործակցման ընթացքում անարդյունավետ կորուստների նվազեցմամբ և ձևավորում այդ համագործակցման եղանակները⁶: Բացի դրանից, նրանք բոլոր մասնակիցների համար հասանելի են դարձնում անհրաժեշտ տեղեկությունների հսկայական ծավալներ՝ ավելացնելով միջազգային համակարգի թափանցիկությունը: Վերազգային կառավարման մարմիններն աջակցում են անդամ պետություններին՝ ներքին բնույթի խնդիրների, այդ թվում՝ միգրացիայի և սոցիալական քաղաքականության հարցերի լուծման գործում՝ դրանք տեղափոխելով միջազգային կարգավորման հարթություն և սահմանելով վարքագծի ու խնդիրների լուծման ընդհանուր ընդունված չափանիշներ: Սակայն այս ամենը պահանջում է պետության ավանդական դերի վերանայում: Ռ.Ռոլեկրանցն այս դերի փոփոխությունը դիտարկում է հետևյալում⁷: Պետությունը վերածվում է միջազգային շուկայի դերակատարներից մեկին և ստիպված է հաշվի առնել ապրանքների արտադրության գործընթացում օտարերկրյա ազդեցության գործոնը նույնիսկ ներքին տնտեսական հարցերի լուծման ժամանակ: Այն ստիպված է լինում ընդունել ավանդական իր

⁵ Մանրամասն տե՛ս **Чиркин В.Е.** Современное государство. М., 2001, **Керимов А.Д.** Современное государство. Вопросы теории. М., 2007, **Марченко М.Н.** Государство и право в условиях глобализации. М., 2008.

⁶ Տե՛ս **Raymond G.A.**, Problems and Prospects in the Study of International Norms // *Mershon International Studies Review*. Vol. 41 (2) November, 1997, p. 214.

⁷ Տե՛ս **Rosecrance R.**, The Rise of the Virtual State // *Fareing Affairs*. Vol. 75 (4) July-August, 1996, p. 60.

ազդեցության ոլորտներում արտերկրյա կապիտալի ազդեցությունը, քանի որ պետությունը պետք է գրավի արտերկրյա ներդրումները՝ իր հաջող գործառնության համար: Սակայն արտերկրյա ներդրումների ձեռքբերման համար պետությունը պետք է ակտիվ լուծի արժեզրկման մակարդակի նվազեցման, աշխատանքի արտադրողականության աճի, սեփական դրամի ուժեղացման, աշխատուժի կրթվածության և ճկունության աճի խնդիրները: Այս խնդիրների լուծումները հաճախ կապված են միջազգային տնտեսական ռեժիմի և պետության ներքին շահերի միջև կոնֆլիկտների ծագման հետ, որոնց բավարարումն էլ հանգեցնում է բյուջետային էական ծախսերի, բյուջետային դեֆիցիտի աճի և այլն:

Կառավարման ոլորտում հետինդուստրիալ երկրներում դրանց հարմարեցման պոտենցիալի տեսանկյուններից դիտարկվող հիմնական տենդենցների շարքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ ասպեկտին. Արևմուտքում հարմարեցման պոտենցիան կողմնորոշված է ոչ թե հասարակության կյանքում պետության դերի և նշանակության բարձրացմանը, այլ նախկին գործառույթներում դրանց կրճատումներին և նվազեցմանը: 20-րդ դարի 80-ական թվականներին տեղի է ունենում ազգային պետության դերի նվազեցում, մի կողմից՝ համաեվրոպական մակարդակում դրա գործառույթների հանձնման ուղով, իսկ մյուս կողմից՝ առավել ցածր մակարդակում՝ սկսած կառավարական գործակալներից, ավարտելով մունիցիպալիտետից: Մի շարք լիբերալ ինստիտուցիոնալիստների կարծիքով՝ պետության ապակենտրոնացումը ծնում է վարչական-քաղաքական կառավարման նոր մեթոդներ, ստեղծվում են հասարակության կազմակերպման և դրա կառավարման նոր պայմաններ:

Կառավարման խնդիրների՝ անգլիացի հետազոտող Ջեսսոնը նշում է, որ կառավարման գործընթացները կողմնորոշվում են «հետհիերարխիայի» հայեցակարգին՝ շեշտադրելով հորիզոնական փոխգործակցությունը և ինքնակազմակերպման դերը փոխկապակցված դերակատարների համակարգում⁸: Այն, ինչը տեղի է ունենում կառավարման ոլորտում Արևմուտքում, անվանում են մասշտաբային հեղափոխություն պետության, հանրային կառավարման և հասարակության հարաբերություններում: Իհարկե, դա պահանջում է իր հատուկ գիտական ուշադրությունը նշված գործընթացների նկատմամբ, որոնք էլ ցուցադրում են մարդկային հասարակության որոշակի հատվածի ինքնակազմակերպման որակական տեղաշարժերը:

Այսպիսով՝ ներկայում ազգային պետություններն էապես սահմանափակված են ներքին խնդիրների ինքնուրույն լուծման մեջ, քանի որ նրանց գործունեությունն ընդգրկված է միջազգային կազմակերպությունների և կառավարման մարմինների գործունեության համատեքստում: Կարծում եմ, որ ազգային պետությունը կարող է չնպաստել գլոբալացման գործընթացին, կարող է այն հապաղել, սակայն տվյալ գործընթացը կասեցնել հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով կարևոր նշանակություն

⁸ St u Jessop B., Cavemance failure. The New Politics of Bittish Local Governance L., 2000, p. 15.

ունի, թե ինչպես պետք է տվյալ խնդիրը լուծվի: Ենթադրվում է, որ պետական մարմինների և նոր տնտեսական կառույցների միջև իշխանության վերաբաշխման գործընթացն արդեն ընթանում է: Ավանդական պետական քաղաքական ինստիտուտները թույլ են հարմարեցված իրականությանը, այդ իսկ պատճառով խոսք կարող է լինել նոր պայմաններին մշտական հարմարեցման համար հատուկ ինստիտուտներով օժտված պետության պատմական նոր տիպին անցնելու մասին: Պետությունն ազգայինից անշեղ վերածվում է միջազգային հանրույթի պետության: «Պետություն՝ միջազգային հանրույթի անդամ երկիրը նշանակում է պետության մասնակցություն համազգային ինստիտուտներում և ռեժիմներում: Անդամ-պետությունը տնտեսապես առավել հզոր է, որին հասանելի են գլոբալացված տնտեսության տնտեսական ռեսուրսների (կապիտալ, աշխատանք, տեխնոլոգիաներ և շուկա) առավել մեծ քանակություն, քան նախկին քաղաքական միավորումներին՝ բացառությամբ կայսրության: Ի տարբերություն կայսրության՝ անդամ-պետությունն ունակ է պահպանել իր քաղաքացիների չեզոքությունը: Պետությունների կոռպերատիվ ջանքերը նվազեցնում են դրանց քաղաքական մրցակցությունը և մեղմացնում քաղաքական անվտանգության խնդիրները: Միջազգային ինստիտուտներում ներգրավված պետությունը պաշտպանում է իր շահերը և ապրում տեղական հետաքրքրություններին չհակասող նորմերի, կանոնների սահմանմամբ: Այն պետություններն են բարդություններ ունենում, որոնք ջանում են պահպանել իրենց լիարժեք ինքնիշխանությունը: Գլոբալ աշխարհում իրավական և ժողովրդավարական պետությունը պետք է շրջահայաց և ողջամիտ քաղաքականություն վարի, մի կողմից՝ պահպանելով ինքնիշխանության որակական հատկանիշները, մյուս կողմից՝ հետ չմնալ միջազգային տնտեսական, առևտրային, բանկային և քաղաքական գործընթացներից: Իսկ դրա համար անհրաժեշտ է լեգիտիմ իշխանություն և հասարակության վստահությունը վայելելով կառավարություն:

Եզրակացություն

Ներկայիս միջազգային տնտեսական համագործակցությունը ոչ միայն խորացնում է պետությունների միջև փոխկապվածությունը, այլև էականորեն վերափոխում է պետության ավանդական դերակատարումը համաշխարհային համակարգում: Միջազգային տնտեսական (առևտրային) կազմակերպությունների, անդրազգային ընկերությունների և վերազգային կառավարման մեխանիզմների աճող ազդեցությունն օբյեկտիվորեն շոշափում է պետական ինքնիշխանության բովանդակությունը և ինքնիշխան իրավունքների իրականացման սահմանները: Ինքնիշխանությունն աստիճանաբար դադարում է ընկալվել բացառապես տարածքային և լիակատար վերահսկողության կատեգորիաներով՝ վերածվելով փոխկապակցված, բազմամակարդակ և պայմանական գործառույթի:

Այս համատեքստում պետությունները կանգնած են բարդ ընտրության առաջ. մի կողմից՝ անհրաժեշտ է ակտիվ ներգրավվել միջազգային տնտեսական համագործակ-

ցության և գլոբալ շուկաների մեջ՝ ապահովելու տնտեսական աճ, ներդրումների ներհոսք և տեխնոլոգիական զարգացում, մյուս կողմից՝ պահպանել ինքնիշխանության այն որակական հատկանիշները, որոնք երաշխավորում են ազգային շահերի պաշտպանությունը, սոցիալական կայունությունը և հանրային վստահությունը պետական կառավարման նկատմամբ: Հենց այս հակասական պահանջների համադրումն է ձևավորում ժամանակակից «առևտրային պետության» գործունեության առանցքը:

Մինևույն ժամանակ, ակնհայտ է, որ, առանց արդյունավետ պետական կառավարման, լեզիտիմ իշխանության և հասարակության վստահության միջազգային տնտեսական համագործակցությունը կարող է խորացնել սոցիալ-տնտեսական անհավասարությունները և սահմանափակել ազգային քաղաքական ընտրության հնարավորությունները: Հետևաբար, իրավական և ժողովրդավարական պետության հիմնական խնդիրն է մշակել հավասարակշռված քաղաքականություն, որը միաժամանակ կապահովի միջազգային տնտեսական գործընթացներին մասնակցությունը և կպահպանի պետական ինքնիշխանության հիմնարար բովանդակությունը:

